

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՇԱՀԵՆ ԽԿՏՅԱՆ

ԱՐՅԱՆՈՒՄ ԵՍ ՈՒՐԻՇ  
ՊԱՏԵՐԱՋՍ ՏԵՍԱ

3  
18  
ՃՆՀԵՆ ԽԿՐՏՉՅԱՆ

# ԱՐՑԱԽՈՒՄ ԵՍ ՈՒՐԻՉ ՊԱՏԵՐԱԶՄ ՏԵՍԱ

ԵՐԵՎԱՆ, 1996, «ԱՄԱՐԱՍ»

Նվիրվում է Արցախյան հզոր շարժման նվիրյալների՝ Հարություն Փռնչյանի, Սերգեյ Ասլանյանի, Լեոնիդ Հուրունցի, Ժան Անդրյանի, Հնարիկ Մուսալեղյանի, Սուրեն Բաղդասարյանի և Հրանտ Եպիսկոպոսյանի պաշտոն հիշատակին:

### ՄԿԲՏՁՅԱՆ Շ. Մ.

Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա: /Մմբ. Հր. Արբանամյան, Եր.: 1996, 176 էջ:

Ժողովածուն ընդգրկող տարաբնույթ նյութերը, սուսչին անգամ հր-րապարակվող վավերագրերը սերտորեն աննչվում են Արցախի ազ-գային-ազատագրական մեծ պայքարի հետ: Բավական էական նյութ է տրամադրում ինչպես Արցախի, այնպես էլ լայն առումով արցախյան շարժման, ԼՂՀ անկախության և հայոց երկրորդ պետականության կա-յացման պատմության համար:

Այն արդիական ճնշելություն ունի, Արցախի շուրջը ծավալված գի-տագաղտափարսաբաղաբական անողոք պայքարին նպաստ բերելու, հայա-դավ քարոզչության ստի պարկերը պատերու հունար ունի:

Սույն ժողովածուն, միաժամանակ, միտված է ազնիվ նպատակի՝ ախտահանել «Ավգյան պատերը», քանզի ՊԱԿ-ի երեկվա գործակալ-ները, խտնակիչները, պատեհասլաշտները և Արցախի օրհասական պահին մկան ծակեր մտածները այսօր իրենց համարում են Արցախյան շարժման կեղծ ու պատիր սուսչնորդներ, ԼՂ հանրապետության կեր-տողներ:

### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արցախի անկախության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-թյան հռչակման իրողությունը՝ նրա հերոսական ժողովրդի անզիջում պայքարի համազնապատկերի վրա, այսօր հիրավի զարմացնում է աշ-խարհին: Սակայն մեր դարավերջի այդ զարմանահրաշ ֆենոմենը ուճեցել է պայքարի իր ոչ պակաս կարևոր նախապատմությունը: Հատ ոյում, այն անցել է մի քանի տասնամյակների դժվարին պերախու-րյունների գողգոթայով և այդ ճանապարհին էլ կոսիել իր իսկական նվիրյալներին:

Այսօր սուսնց վարանելու կարելի է սակ, որ այդ խիզախների շարքում մշտապես եղել է Ծահեն Մկրտչյանը:

Մեր ժողովուրդը և օտար ընթերցողները Ծահեն Մկրտչյանին ավե-լի շատ գիտեն որպես Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապե-տական հուշարձանների մասին գրված մի շարք գրքերի հեղինակի:

Անվերապահորեն ընդունելով, որ այն ժամանակներում այդ գոր-ծերի հրատարակումը ինքնին սխրանք է, չենք կարող չընդօժել, այն վիթխարի հավատը, անձնագոհությունը, համառությունը, որ ցուցա-բերել է հեղինակը՝ մեզ՝ հայերիս, ծանոթացնելու Արցախի բազմաթիվ հրաշագործ հուշարձանների պատմությանը: Մշմարիտ կլիներ սակ, որ Ծահեն Մկրտչյանը ուղղակի ողջ երիտասարդությունը կաթիլ ստ կաթիլ նվիրաբերեց Արցախի պատմությանը վկայաբերող այդ հնությունների վերակենդանացման սուրբ առաքելությանը:

Խոնարհվելով այդ վաստակի առջև, միաժամանակ մենք պատմու-թյան առջև մեղանչած կլիենք, եթե եկող սերունդներին չհայտնենք այն նշարտությունը, որ կապված է Ծահեն Մկրտչյանի մինչ-դարա-րադյան շարժումների ոգորումների հետ՝ սրանից դեռ երկուսուկես-երեք տասնամյակ սուսչ:

Իհարկե, այդ ճշմարտության մասին բարձրաճայն կարելի էր խո-սել նաև ավելի վաղ կամ գոնե 1988-ին, սակայն դա անհարիր կլիներ Ծահեն Մկրտչյանի հավատամքին: Չէ որ ոչ մի ժամանակ, առավել ևս՝ 88-ին, նա չէր մտածում փառքի դավանելու մասին, որովհետև Ծահենը մշտապես ոչ թե փնտրել է այդ փառքը, այլ մշտապես խուսափել ն-

1372

րանից: Թերևս այդ էր պատճառը, որ նա երբեք չհրապուրվեց ոչ դարաբաղչան շարժման հաշտության ամբոխավարությամբ և ոչ էլ արցախյան շարժման պատմության վերարժեքավորման պատվախնդրությամբ: Նրան Լեոնային Ղարաբաղի անկախության իրական արդյունքները կարող էին զբաղեցնել և ոտնահարված արդարության վերականգնման հեռանկարը:

Ուրեմն այս ժողովածուի լույս աշխարհ գալու նպատակն էլ հենց այդ անկախության ու արդարության իմաստավորման ձգտումն է, որով այսօր էլ ապրում է հեղինակը: Ապա փորձեք հետադարձ հայացք նետել և մտովի վերականգնել 60—70-ական թվականների իրականությունը: Ի՞նչ կնշանակեր, Լեոնային Ղարաբաղի մարզային պատմա-էրկրագիտական թանգարանի երիտասարդ տնօրենի ընդվզումը սկսված և փարթամորեն բողբոջող ալիկան նորագոյացումների դեմ, երբ ամեն հայկականն ու հաշտականն այստեղ ազգայնամոլություն էր դիտվում, ամեն դարաբաղչանը՝ ծայրահեղականություն: Եվ որքան էլ մարզի ղեկավարների մեջ իրատես մարդիկ հայտնվեին, միևնույն է՝ Ադրբեջանին ցույց տալու համար «թշնամիներ» պիտի կաղապարեին և «ուրջ կազմակերպական հետևություններ» անեին:

Ահա թե ինչու Ղարաբաղը հյուժող այդ մշտահողով արշավանքներից մեկի ժամանակ էլ Ծահեն Մկրտչյանի համար պիտի խաչելության սյուն պատրաստեին, որը նաև դատավճիռ էր լինելու Արցախից նրան ֆիզիկապես հեռացնելու մասին:

Ծահեն Մկրտչյանը այս տարի բոլորում է իր 60-ամյակը: Թող այս ժողովածուն իր ժողովրդի հանդեպ նրա անուրանալի վաստակի առհավատչյան լինի, թեև, ինչպես ասացինք, նա որպես գիտնական-հետազոտող վաղուց է կառուցել իր վաստակի ձեռակերտ կոթողները:

Ուրեմն ինչ էլ որ կատարվի աշխարհում, ինչ գաղափարներ էլ, որ որդեգրենք քաղաքագետներն ու կառավարողները, ինչքան էլ որ խոսվի անկախության ու ազատության մասին, Ծահեն Մկրտչյանի ոգին մշտապես Արցախի գերին է մնալու՝ որպես հավերժական առեղծված:

ՇՈՐՍ ԳԱՎԹՅԱՆ

«ԿԱՐՄԻՐ ՔՐԳՍՏԱՆԻ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ ԳՈՂԱՅԱԾ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻ ԱՌԵՂԵՎԱԾԸ

Հայտնի է, որ Խորհրդային Ադրբեջանի առաջին ղեկավարները՝ «Արևելքում համաշխարհային հեղափոխության ջանակիբները», 1920-ական թթ. սկզբներին բալականին հասնող ակտիվություն ցուցաբերեցին և արգահատելի մեթոդներով հանդես եկան Հայաստանի Հանրապետության տարածքների վերաձևման արհամարհներով: Մոսկվայի և «կարմիր հեղափոխության բոցերից շատագուցած» Անկարայի գործը աջակցությամբ նրանց հաջողվեց Հայաստանից սրկել նրա երկու կարևոր մարզերը՝ Արցախը և Նախիջևանը: Մակայն առ քիչ համարելով, Ադրբեջանի բուշևիկ-մուսավաթիստները ՀԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից նոր տալածքներ գալթելու նոր փորձեր ձեռնարկեցին: Նորաստեղծ ԼՂԻՄ-ի վարչատարածքային վերաձևումներ կատարելիս նրանից սրհեստակա-նորեն անջատեցին գրեթե կեսը՝ ամբողջ Հյուսիսային Արցախը՝ աջմ-ջան Ծահունյանի, Խանյարի, Դաշքեսանի (Քարհատի), Գետաբեկի և Ծամխորի շրջանները, իրենց 107 հայկական գյուղերով հանդերձ: Անդամահատումը կատարվեց անհավատալի թեթևությամբ, քաղաքա-կան խարդախ խաղով: Ծակատագրի դառը տնօրինությամբ, այն, ինչ հնարավոր չէր անցչալում զենքի ուժով, իրագործվեց խորհրդային կար-գների հաստատումից հետո, այն էլ հալ բուշևիկների լուրջան, շատ դեպքերում՝ նրանց «եղբայրական» օգնության շնորհիվ:

Հայկական տարածքները հեշտությամբ «մարսելու» ժամանակ ավելի էր գրգռվում ադրբեջանցիների ախորժակը: Հերթական թիրախը դարձավ Այունյաց աշխարհը: Եթե ուշադիր նայենք խորհրդային իշխա-նության տարիներին հրատարակված Անդրկովկասի քարտեզներին և դրանք իրար հետ համեմատենք, ապա անզեկ աչքով կնկատենք, որ 20-ական թթ. Հայաստանի Հանրապետությունը և Լեոնային Ղարաբաղի ինքնավարությունն ընդհանուր սահման են ունեցել: Բայց ամա 1930 թվականից ի վեր քարտեզներում Հայաստանը և Լեոնային Ղարաբա-ղը իրարից արդեն անջատված են մի անդ շերտով: Ե՞րբ և ի՞նչ պարա-

գաներում են փոփոխվել հայկական երկու պետական կազմավորումների սահմանները: Ինչքան էլ ցավալի է խոստովանել, այս հարցերի պատասխանը չես գտնի հայ պատմագրության մեջ: Ինչկիցե: Ակնհայտորեն զգացվում է, որ 20-ականների վերջերին ինչ-որ ուժեր շոշափելի հարված են հասցրել Հայաստանին և հայ ժողովրդին: Ապշեցուցիչ է հայ բոլշևիկների ցուցաբերած հավկորությունը: Նրանք վաստորեն, շացած հայ-ադրբեջանական-բրդական «անխախտ քարեկամությամբ», խոր ընթռնումով աշակցեցին սեփական տարածքների կորստի գործընթացին: Միանգամից ասենք, որ 1929 թ. ՀԽՍՀ-ն կորցրել է իր կենսական տարածքների ավելի քան 13,5 տոկոսը: Այս անգամ հետևում էրք մեզանում 1929 թիվն արձանագրվել է որպես «մեծ բեկման», ասել կուզի՝ հայ ժողովրդի կյանքում խոշոր նվաճումների տարի, բոլոր կարգի «հակահեղափոխական» իզմերին հարող «տակալեքներին ու ինսուրիալիզմի գործակալներին» ջախջախելու տարի, «եղբայրությամբ ու ինտերնացիոնալիստական քարեկամությամբ ցեմենտավորված» տարի: Եվ զավեշտի հասնող այս դատարկախոսությունների տասնչակ տարիներ շարունակ մատուցվեցին իբրև պաշտոնական տեսակետներ:

Ավելի հիմնավոր լինելու համար վկայակոչենք բազմաթիվ քարտեզներից մի քանիսը: Առաջինը՝ 1926 թ. հրատարակված Խորհրդային մեծ հանրագիտարանի 3-րդ հատորի 414 էջում գետեղվածն է, երկրորդը՝ 1928 թ. Մոսկվայում տպագրված ԽՍՀՄ ատլասի Հայաստանի վարչաքաղաքական քարտեզը, իսկ երրորդը՝ 1926-1928 թթ. Դոնի Ռոստովում հրատարակված Կարսի քանակի գլխավոր շտաբի ուղեգրերի վեցամսյա վարչության բարեկերտ են: Բոլոր այս քարտեզներում միանշանակ ցույց են տրված ՀԽՍՀ-ն և ԼՂԽՄ-ի՝ իրար հետ կիսկ կլամ մի ընդհանուր սահմանով: Այն անցնում է Հազարի գետով, Լաչինից (Ճափկնուտ՝ Աքրայլար) մոտավորապես 8 կմ հարավ, Գորիսի շրջանի Տեղ և Կոռնիձոր գյուղերի տարածքով: Նշված քարտեզներից առաջին երկուսի լուսանկարները հրատարակվել են միայն վերջերս: Մեկը՝ «Երկիր» օրաթերթում (17. 07. 92 թ.), մյուսը՝ Մոսկվայում «Արմյանսկի վեստնիկ» ամսաթերթի հունիսի համարում: Սակայն երևանյան հրատարակման հեղինակ Անահիտ Սարգսյանը և քարտեզը մեկնաբանող պատմական գիտությունների թեկնածու Կլիմենտ Հարությունյանը ուշադրություն չեն դարձրել այդ կարևոր փաստի վրա: Դրա անհրաժեշտությունն այսօր ստավել քան ակնհայտ է, քանզի թուրք-ադրբեջանցիները վերջին ամիսներին (կասված Լաչինի միջանցքի ազատագրման նկատ) մեծ ազմուկ

քարձրացնելով՝ «միամիտ» աշխարհին հավատացրին, թե իբր հայերը ոտնձգություն են անում Լաչինի շրջանի տարածքների վրա, որոնք երբեք չեն եղել ԼՂՀ կազմում: Մինչդեռ փաստերը միանշանակ վկայում են, որ այդ հողերը ոչ հեռու անցյալում պատկանում էին մի մասը՝ Հայաստանին, մյուսը՝ Արցախին:

Հիշատակված քարտեզներից բացի, գոյություն ունեն այլ քարտեզներ ու այլ բնույթի նյութեր, որոնցում դարձյալ նշված են Հայաստանի և Լեռնային Դարաքաղի ընդհանուր սահմանները: Սակայն 1930 թ. «ԽՍՀՄ վարչաքաղաքական քարտեզում», որտեղ հանրապետությունների և ինքնավարությունների սահմանները ցույց են տրված նույն թվականի հունվարի 10-ի դրությամբ, ԼՂԽՄ-ի և ՀԽՍՀ սահմանները զգալի շափով փոփոխված են: Նրանց միջև արդեն գոյացել էր Լաչինի շտաբատիկ միջանցքը: Դիտարկելով այս փաստերը, Ա. Արսենովը «Արմյանսկի վեստնիկի» նշված համարում գրում է. «Այստեղ կարևոր է նկատել, որ սահմանների փոփոխումն անմիջականորեն կապված էր Քրդական ինքնավարության, այսպես կոչված Կարմիր Քրդաստանի հետ»: Որ դա իրոք այդպես է, ընդհանուր գծերով ցույց կարվի քիչ հետո:

Շատ քչերը գիտեն, որ քրդական մշակութային ինքնավարությունը (պաշտոնական անունն էր Քրդական ուեզը, այլ ոչ թե «Քրդական ազգային օկրուգ», ինչպես փորձում են ներկայացնել որոշ հեղինակներ) գոյություն է ունեցել 1923—1929 թթ. (այլ ոչ թե «ստեղծվել է 1926 թ.» ու «հարստեղ է մինչև 1930-ական թվականների կեսերը»), բայց չի ունեցել ընդգծված սահմանով տարածք: Դեռ չի գտնվել մի որևէ քարտեզ, որտեղ սահմանագծերի մեջ ներառված լինի բոլշևիկավարի անվանված «Կարմիր Քրդաստանը»: Ավելին, գոյություն չունեն նաև պաշտոնական վաստաթղթեր, որոնցով վերադաս առջաններում հաստատված լինեն Քրդական ուեզի՝ գավառի՝ Կարմիր Քրդաստանի ստեղծման հռչակագիրը կամ նրա լուծարման որոշումը: Քաղաքական ինչ-ինչ խարդալանքներով շղարշված անորոշ, անօրինական ինքնավարության ստեղծման ստեղծվածը ժամանակին շատերի մեջ կասկածներ էր հարուցել: Եղել են դժգոհություններ, բողոքներ: Անգամ մոսկվաբնակ անվանի ազգագրագետ Ա. Բուկչյանը, որը ղեկավարել է «Կարմիր Քրդաստան» մեկնած գիտական արշավախումբը և տեղում հավաքած նյութերի հիման վրա գրել ու 1932 թ. հաքվում տպագրել է «Ադրբեջանի քրդերը», գիրքը, նկատել է, որ Քրդական մշակութային ինքնավարությունը, որպես այդպիսին, գոյություն չի ունեցել: Ինչ-որ ստեղծվածային քան է հետապնդվել, եզրակացրել է գիտնականը:

Իրոք, ինչպե՞ս կարելի է հռչակել «Քրդական ինքնավարության ուեզը», բայց չհստակեցնել նրա սահմանները, իրավաբանորեն չձևակերպել կարգավիճակը: Արդո՞ւք այդ չի նշանակում, որ «Կարմիր Քրդոլլստանի» սցենարի հեղինակների մտահոգությունը բնավ քրդերի համար ինքնավարության կազմակերպման գործընթացը չէր, այլ ծավալապաշտական հետո գնացող նպատակներ, այն է՝ հայկական հողատարածքներ պոկելով տարանջատել, իրարից հեռացնել Արցախ-Հայաստան պետական միավորումները: Եթե իրոք նրանց նկրտումները այդ չէին, ապա ինչ կարիք կար Արցախ-Հայաստանի արանջում ստեղծել «Կարմիր Քրդստան» և ապա որոշ ժամանակ անց գաղտագողի լուծարել այն: Եթե դա իրոք արվել էր Սյունիք-Արցախ երկրամասերից «գողացած» միջանցքում քրդերի բնակեցնելու մտադրությամբ, ապա ինչու վերացրին նրանց մշակութային ինքնավարությունը: Եթե վերացրին, ապա ինչո՞ւ իրենց տերերին չվերադարձրին քաղաքական խարդավանքներով զավթած տարածքները, չվերականգնեցին Հայաստան-Արցախ ընդհանուր սահմանը:

Տվյալ դեպքում, սակայն, կարևոր է իմանալ, թե ինչ եղանակներով իրականացվեց հայադավ ծրագիրը, քանզի դրանք աղերս ունեն և հոգեհարազատ են մեր օրերում կատարվող իրադարձությունների հետ: Չէ որ առաջ էին քաշված բախկանին լուրջ ու դժվար լուծելի տարածքային հարցեր, որոնք առանց քաղաքական, գաղափարախոսական ծանրակշիռ պատճառաբանության գրեթե անհնար կլինեք կյանքի կոչել: Այդ ամենը նախապես հաշվարկված, նախատեսված էր: Դրա համար էլ մանրադրամի պես ասպարեզ նետվեց «Կարմիր Քրդստանը»: Բնավ պատահական չէ, որ քաղաքական մեծ սղմուկով լայնորեն այն ներկայացվել, գնահատվել է որպես «Արևելքում Ադրբեջանի բոլշևիկների տարած պրոլետարական հեղափոխության հերթական հաղթանակ»: Այն ժամանակվա չարամիջներով սա գաղափարաքաղաքական ասպարեզում ձեռք բերած լուրջ հաղթանակ էր: Մնացածը, ինչպես ասում են, տեխնիկական առաջադրանքներ էին, որոնք և վարպետորեն իրագործվեցին: Դրա պերճախոս վկայությունը Անդրֆեդերացիայի ԿԳԿ նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի միստի որոշումն է, որի համաձայն Հայաստանի Հանրապետության 34,539 հազար քառ. կմ տարածքից 4,739 հազար քառ. կմ պոկվեց և նվիրաբերվեց «եղբայրական» Ադրբեջանին: Արդյունքում առաջացավ Արցախը Հայաստանից անջատող հողաշերտը, Արցախն ու Արծվաշենը

հայտնվեցին Ադրբեջանի ներքին տարածքում, որպես կոզիացած անկալվներ: Ադրբեջանի պետական սահմանի սյուները բերին տնկեցին Կապանի քաղաքային կայանի դիմաց:

Երբ այս ամենը, ինչպես արդեն նշեցինք, հայ բոլշևիկների խորը ըմբռնման պայմաններում իր ավարտին հասավ ու իրավական կերպարանք ստացավ, գործի դրվեց քրդերի հետ հաշիվ մաքրելու մեքենան: Վերջիններս այլևս պետք չէին: Անմիջապես վերացվեց Քրդական ուեզը, փակվեցին նոր բացված ազգային դպրոցները, հաղածվեցին առավել աչքի ընկած մտավորականները: Խաբված ու հուսահատված քրդերը փորձեցին դիմադրել, բայց արդեն ուշ էր: Քրդական ինքնավարությունը շահարկելու քաղաքական խաղն ավարտված էր, իսկ «քրդասիրությունը»՝ մոռացված: Ուստի շտապեցին վերջ տալ քրդերի հետ ծրագրված սիրավեպին: Բաքուն իրեն հատուկ նենգամիտ քարոզչության տոնը փոխելով, նորովի հարություն տվեց «պրոլետարական ինտերնացիոնալիզմին», ասել է՝ փոքր ազգերին ճնշելու, մորթելու ավանդույթներին: Քրդերի իրավացի դժգոհությունները ներկայացվեցին որպես ահաբեկչություն, հակահեղափոխական, հակախորհրդային դավադրություն: Մոսկվայի և Անդրֆեդերացիայի ԿԳԿ-ի գործում աջակցությամբ պատժիչ ջոկատներ մտցվեցին «Կարմիր Քրդստան»: Հաշված ամիսների ընթացքում քրդերին ոչ միայն «բոլշևիկյան դասեր» տվեցին, այլև «Կարմիր Քրդստանը» դարձրին «Դժոխքի Քրդստան»: Տեղերում առանց դատ ու դատաստանի գնդակահարվեցին բոլոր ներանք, ովքեր խոսում էին քրդերեն, ովքեր ցանկանում էին, որ իրենց զավակները սովորեն մայրենի լեզվով, ովքեր հույսեր էին կապել Քրդական ինքնավարության հետ:

Տասնյակ հազարավոր քրդեր թողեցին տուն ու տեղ և քաշվեցին անտառների խորքերը, ապաստան գտան հայկական բնակավայրերում: Քրդերից դատարկված գյուղերը արտոնյալ պայմաններով բնակեցրին ադրբեջանցիներով: Հակաքրդական մարտական գործողությունները անձամբ ղեկավարում էր հանրահայտ մարդատյաց Մ. Բաղիրովը:

Հետևանքները ավելի քան ցնցող էին: Եթե մինչև «Կարմիր Քրդստանի» հռչակումը Ադրբեջանում ապրում էր 41368 քուրդ, ապա ուղիղ տասը տարի անց մնացել էր ընդամենը 18183-ը: Մոտավորապես այսպիսին է «Կարմիր Քրդստանի» ստեղծվածի տխուր պատմությունը:

Քրդերի ողբերգությունը սոսկ մեկ օրակն էր շարունակվող այն զգալի քաղաքական երկար շրթայի, որն սկսվել էր 20-րդ դարի սկզբներին Բաքվում և Շուշում՝ հայերի զանգվածային կոտորածներով,

և երկարում է Սումգայիթից՝ Բարու, Կամո-Ազատից՝ Կետաշեն, Ծա-  
հունյանից՝ Մարտակերտ, Արծվաշենից՝ Գառավաքար:

Այսօր գրեթե քրդեր չեն մնացել երբեմնի Քրդական ուեզրում: Հ.  
Ալիևի իշխանապետության օրոք սի հրահանգով քրդերը միանգամից  
ազգապիսիս եղան և վերածվեցին աղբյուրանցիների: Ահա թե ինչու  
1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում այլևս քուրդ ընկա-  
չություն չկար: Աջունանդերձ, դեռ հրաշքով մնացել էին ոչ մեծ խմբերով  
քրդեր: Վերջին պատերազմական իրադարձությունների ժամանակ  
քրդերին, իբրև անվտանգների, աքսորեցին Մուղանի տափառտան,  
որ նրանց պահում են գինված պահակախմբի հսկողության տակ: Սա-  
կայն քրդերը, որոնք մեծ ծառայություններ ունեն ներկայիս Ադրբեջանի  
տարածքները ընդարձակելու գործում, չեն հաշտվում իրենց բաժին  
հասած դառը ճակատագրի հետ:

Այսպիսով, բաղաբանական խորամանկ խաղերի, քրդերի ազգային  
զգացմունքները շահարկելով, պետական մակարդակի բարձրացված  
ատի ու կեղծիքի, թճճանքի ու կաշառքի միջոցով Ադրբեջանին հաշողվեց  
տիրանակ Հայաստանի և Արցախի տարածքներին, հայաթափել նախ-  
շխանը, Հայաստանից անջատել Արցախը, բնաջնջել «Կարմիր Քրդըս-  
տանը»: Այժմ էլ նա աչքը տնկել է Արցախի Հանրապետությանն ու  
Սյունիքին: Արդյո՞ք ժամանակը չէ, որ հարկ եղածի պես պաշտպանենք  
Հայրենիքը, նրա ամեն մի թիզ հողը: Արդյո՞ք ժամանակը չէ, որ Հայրե-  
նիքի փրկության համար ուրքի հանենք ողջ հայ ժողովրդին:

«Ուրբաթ», № 33, 28 08 92 թ.

«Голос Армении», 13. 07. 93 г.

Մ ա ն ո թ ո ի թ յ ո լ ն . — Սույն հոդվածը արտատպվել է աշխարհի 17 թերթերում,  
8 լեզուներով:

### ԹԱՆԿԱԳԻՆ ԾԱՀԵՆ

Ձեր «Կարմիր Քրդստանի և Հայաստանից գողացած Լալինի միջանց-  
քի ստեղծվածը» ուզվաբաղաբանական բնույթի հոյակապ հոդվածը պատ-  
կառագրու է: Այն ունի վերին աստիճանի արդիական հնչելություն և,  
անշուշտ, վճռական դեր կհատար Արցախի շուրջը տեղի ունեցող գա-  
ղտնարաքաղաքական և դիվանագիտական պայքարում:

Մրտանց շնորհակալություն եմ հայտնում թեզ, այդքան արդյունավետ  
գիտա-հայրենասիրական մեծ գործունեության համար:

Մոսկվա, 15 06 94 թ.

Պրոֆեսոր՝ Հ. Եպիսկոպոսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱԽԱԳԱՀ Գ.Ն.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պրն. փոխնախագահ

Թեև անցերեկի ուշացումով, բայց, այնուամենայնիվ, Ձեր անմի-  
ջական ղեկավարությամբ փորձ է կատարվում ստեղծել պետական  
քարոզչության մեխանիզմ: Իրա անհրաժեշտությունն առավել քան ան-  
հրաժեշտ է: Առանց դրա կյանքի ոչ մի բնագավառում շոշափելի ձեռք-  
բերումներ չենք ունենա:

Իբրև քարոզչության բնագավառի փորձառու մարտիկ պատրաստ եմ  
ուժերիս ներածի չափ աջակցել Ձեզ: Ես կարող եմ լուրջ գործ կատարել  
հատկապես Ադրբեջանի քաղաքական բանաբարկությունը, սադրանքը և  
ամեն կարգի հաշտարվ նենգափոխությունները մերկացնելու բնագա-  
վառում:

Ասե՛ք, ինչ անեմ:

Երկտողիս կցվում է իմ «Քարոզչական պարտություն» հոդ-  
վածը:

Հարգանքներով

ԾԱՀԵՆ ԵԿՐՏՉՅԱՆ

28. 08. 92 թ.

### ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Այսօր արդեն կարելի է ամենայն որոշակիությամբ ասել, որ Ար-  
ցախյան հուժկու շարժումն այնպիսի անակնկալի բերեց Հայաստանի  
գիտական, գաղափարախոսական և լրատվական համակարգի հատա-  
տությունները, որ մինչև օրս ուշքի չեն գալիս: Հարկավ, հենց էն գլխից  
երևաց, որ այդ կենտրոնները, բոլորովին պատրաստ չեն և ոչ էլ կարո-  
ղություն ու հաճախ նաև մտադրություն ունեն հակազդելու ու խափա-  
նելու հակառակորդի սանձազերծած լրատվական ագրեսիան, ճեղքելու



խարդավանքները երեսպատող ինֆորմացիոն շրջափակումները: Այն-  
ինչ ակնհայտ էր՝ առանձին անհատների կամ հատուկեմո կազմակեր-  
պությունների ազնիվ փորձերը շոշափելի արդյունք տալ չեն կարող,  
զգացվում էր համատեղ, ուժեղ, պետականորեն կազմակերպված պա-  
քարի անհրաժեշտություն: Մի շատ էական հանգամանք, որ մինչև այժմ  
հաշվի չի առնվում: Եվ ով պիտի հաշվի առնի, երբ պետական գաղա-  
փարախոսությանը զբաղվող գործիչները նահանջի զանգեր են հնչեց-  
նում, ստեղծված դրությունից դուրս գալու էլքը տեսնում ծունկ չոքելու  
մեջ:

Բոլորն ընդունում են նպատակասլաց, օպերատիվ քարոզչության  
անհրաժեշտությունը, բայց, ցավոք, և՛ իշխանությունները, և՛ մասնագետ-  
ները, որոնք ի պաշտոնե պարտավոր էին ակտիվորեն հանդես գալ,  
վերջին 4—5 տարվա ընթացքում, սպասողական դիրք գրավեցին, կար-  
ծես ուզում էին, որ կարևոր աշխատանքը կատարեն ուրիշները:

Բոլորովին անհասկանալի է, օրինակ, ՀՀ ԳԱ Պատմության ինստի-  
տուտի կրավորական դիրքը: Արցախյան պայքարի ընթացքում մեր  
հարգարժան սրտմարանները, մի պակասավոր, լղարիկ տեղեկանքից  
(1988 թ.) զատ, այլ բան չեն ձեռնարկել, չեն ներկայացրել որևէ լուրջ,  
կեղծարարներին մերկացնող գաղափարաքաղաքական հնչելության  
ուսույնասիրություն կամ թեկուզ արխիվային փաստաթղթերի ժողովա-  
ծու: Սա այն դեպքում, երբ հարվում նույնատիպ ինստիտուտը բազմա-  
թիվ լեզուներով հրատարակել ու աշխարհով մեկ տարածել է 14 անուն  
գիրք և այլոս: Իսկ ընդհանուր առմամբ 1988—1992 թթ. Արցախի հիմ-  
նահարցի վերաբերյալ արդրեջանցիների «դգամ-փչած» մեկնաբանու-  
թյուններով (մեծ տպաքանակով, ավելի քան 10 լեզվով) հրատարակվել  
է 18 գիրք, 5 այլոս, նկարահանվել է 9 վավերագրական տեսաժամապա-  
վեն, իսկ Հայաստանում լույս է տեսել ընդամենը 6 գիրք, սն էլ միայն  
հայերեն և ռուսերեն:

Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ մեր գիտնականներն այսչափ աննարակ  
գտնվեցին: Մի՞թե նրանք պայքարի իրենց ողջ զինանոցը ամբողջովին  
սպառել են նախորդ տասնամյակներում դաշնակցականների և «ներանց  
հովանավորող միջազգային իմպերիալիզմի» դեմ անողոք մարտնչելիս  
կամ թե մեզանում խորապես արմատավորված տխուր բարքերի, տխու-  
րուներ, պաշտոններ, կենցաղային իրեր թոցնելու անբարո քրոջախա-  
ղում: Ըստ երևույթին դեր չի խաղացել պլան-տառաչարանքներով, հրա-  
ման-կարգադրություններով աշխատելու կանոնակարգված գործելա-

կերպը: Ինչ է, արցախյան թեմաներով հանդես գալու հրահանգներ,  
ցուցումներ «վերևներից» չէ՞ն եղել և այս պարագայում հայագիտական  
հիմնարկությունները հին ինքնցիայով գերադասել են լու՞ն: Լավագույն  
դեպքում ինչ-որ բան անելու տպավորություն ստեղծելու համար որո-  
շումներ են ընդունել, պլաններ կազմել, սակայն ինչպես երևում է թեր-  
վող օրինակից, դրանք մնացել են թղթի վրա:

ՀՀ ԳԱ նախագահության 1990 թ. սեպտեմբերի 4-ի նիստի (տե՛ս  
թիվ 18 արձանագրության 109 կետի 3—4 ենթակետերը) որոշմամբ  
հանձնարարված է «ՀԳԱ-ի նախագահության անդամ Գ. Ա. Գալոյանին,  
որպես հեղինակային կոլեկտիվի ղեկավար մինչև ս. թ. նոյեմբերի 1-ը  
ներկայացնել «Լեռնային Ղարաբաղ» գրքի (խոսքը վերը հիշատակ-  
ված տեղեկանքի մասին է— Օ. Մ.) վերամշակված և լրացված  
տեքստը, իսկ մինչև նոյեմբերի վերջը ապահովել գրքույկի անգլերեն  
տարբերակի պատրաստումը»: Միաժամանակ հանձնարարվել է ակա-  
դեմիայի «հրատարակչության տնօրեն Խ. Բարսեղյանին մինչև 1990 թ.  
տարեվերջը ապահովել «Լեռնային Ղարաբաղ» գրքույկի (ռուսերեն և  
անգլերեն) տպագրությունը»: Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այս-  
պիսի որոշումներ, որ կայացրել էին ակադեմիայի մի շարք ինստիտուտ-  
ներ և Հայաստանի հրատարակչությունները, ցավոք, չեն կատարվել և  
չկատարելու համար ոչ ոքի չեն կշտամբել:

Իբրև հայագիտության բնագավառի շարքային զինվոր, պարզապես  
ամաչում են հայագիտության ապիկար հրամանատար ակադեմիկոս Գ.  
Գալոյանի փոխարեն: Հավանաբար նա չի զգում իր հաշվեկկատ արմ-  
վածքի և ձախողած լուրջ գործի հետևանքները: Այնտեղ՝ Արցախում  
(ինչո՞ւ միայն Արցախում), հայոց ամեն մի թիզ հողի համար արյուն է  
թափվում, իսկ այստեղ՝ Երևանում՝ հայոց գիտության կաճատում բարձր  
տիտղոսավոր մարդիկ մտահոգված են միայն իրենց պաշտոնները ցմահ  
պահելու հոգսերով: Արդյունքում գիտալրատվական խաչատուսակ պար-  
տություն... Այսքանից հետո օրինական հարց է ծագում. ո՞ւմ է պետք  
այն ակադեմիկոսը, որ իր ժողովրդի ճակատագրական պայքարին չի  
մասնակցելու: Արդյոք վերջապես ժամանակը չէ՞, որպեսզի լուրջ պա-  
հանջներ ներկայացվեն մեր աննարակ ակադեմիկոսներին: Եթե նրանք  
սպառվել են, ազգանպաստ աշխատանք կատարելու կարողություն ու  
մտադրություն չունեն, ապա պետք է ասպարեզը թողնեն ու հեռանան:

Մեր թերացումներից, անվճարականությունից և անկազմակերպվա-  
ծությունից ճարպկորեն օգտվեցին կեղծարարները: Նրանք արագորեն  
վերախմբավորեցին ուժերը՝ իրենց ցանցի մեջ օգնելով հազար ու մի

հանցանք գործած, բայց միշտ անպատիժ մնացած բազմաթիվ մեծ ու փոքր իշխանավորների, որոնք չարամտորեն օգտագործեցին իրենց մութ կապերը: Հավահայկական ռուսացող քարոզչության ասպարեզ նետեցին կեղծիքի, շանտաժի և խարդախությունների մեջ որոշակի փորձություն ունեցող վարձու գրչակների: Սուվալյիթի ջարդերից հետո արդեն որ-վագծվել էր, որ մենք պիտի գործ ունենանք պետական մակարդակով հովանավորվող բանասերկուների հետ: Սակայն ո՛չ գիտությունների ակադեմիան, ո՛չ ստեղծագործական միությունները, ո՛չ լրատվական գործակալությունները և ոչ էլ հին ու նոր իշխանությունները այդպես էլ չկարողացան կազմակերպել, համախմբել գիտական ստեղծագործական կարող ուժերին, օգտագործել ներքին ու արտաքին կույերը և միասնական ճակատով հանդես գալ հայ ժողովրդի շահերը և նրա պայքարը խեղաթուրող քարոզչության դեմ: Մինչդեռ տրամաբանական կլիներ ստեղծել (ինչպես դա արվել է Ադրբեջանում) համահայկական լրատվական կենտրոն՝ բազմաթիվ մասնաճյուղերով հանդերձ, նրան տալով արտակարգ լիազորություններ, ընդգրկելով միայն ու միայն բարաբա-ցիական պարտքի զգացում ունեցող, ազգի համար անձնուրացությամբ աչքի ընկնող մասնագետների, գործնական հայրենասերների: Դժբախ-տաբար դա չարվեց: Դեռ ավելին, Արցախյան շարժման պոթելման առաջին ամիսներին ստեղծագործական միությունները, մեկը մյուսին հերթ շտալով, վերանորոգման պատրվակով փակեցին իրենց դահլիճ-ները, որպեսզի այնտեղ հանդիպումներ ու խորհրդակցություններ չկա-յանան: Դա Կենտկոմին ու ՊԱԿ-ին հաճուսնալու մի նոր անբող կեց-վածք էր, որով մեր մի շարք ստեղծագործական միությունների ղեկա-վարներ մեկ անգամ ևս դրսևորեցին իրենց հավատարմությունը:

Ուղղակի ասենք, որ Հայաստանի, մասնավորապես Արցախի հա-մար բախտորոշ պահին հայկական քարոզչության բնագավառի սպա-սավորները մի բոունք չդարձան, արդյունավետ չափատեցին: Եթե սկզբում մեղքի առյուծի բաժինը Հայկոմկոսի Կենտկոմի գլխավոր գաղափարախոսներին էր (Ռ. Արզումանյան, Գ. Գալոյան), որոնք ան-հեռատես, վախկոտ ու անվճռական գտնվեցին և ոչ մի բարի գործ չա-րեցին, ապա վերջին շրջանում պակաս խափանարար դեր չխաղաց Կտրին Սարդարյանը՝ նոր իշխանության նորաթուխ գաղափարախոսը: «Մեծարգո փոխվարչապետը» այդպես էլ ժամանակ չգտավ ու փաստո-րեն չբարեհաճեց հանդիպել անգամ դարաբաղյան թեմաներով հանդես եկող սակավաթիվ արցախագետների հետ: Դրանով կարծես հասկացնել

տվեց, որ վերջիններս հույսեր չփայփայեն ո՛չ իր և ո՛չ էլ կառավարու-թյան հետ: Այսբանից հետո հարկ կա՞ զարմանալու, որ «ԾՈՒԾԻ, փու-տային հին բացիկներ» հավաքածուի և «ԱՐՅԱՍ. պատմամշակութային համատոտ ակնարկ» (ռուսերեն և հայերեն) գրքույկի տպագրությունը երկար դեգերումներից հետո հաջողվեց տպագրել միայն հեղինակի մի-ջոցներով: Իսկ «ԱՐՅԱՍ-ՂԱՐԱԲԱՂ» պատկերագրող մեծադիր ալ-բոմը, որն ունի հայերեն, ռուսերեն, անգլերեն ու ֆրանսերեն առաջա-բան, ընդարձակ բացատրություններ և ընդգրկում է 508 գունավոր, սև-սպիտակ լուսանկարներ, բազմաթիվ քարտեզներ, գրչանկարներ, մակե-տավորված, ձևավորված վիճակում շուրջ երկու տարի է չի տպագրվում միայն այն պատճառով, որ հրատարակչական ծախսերի մի մասը իր վրա վերցնող հովանավորներ չունի: Մինչդեռ պարոն Կ. Սարդարյանի «հանճարեղ» մտքերի ու դատողությունների արգասիքը՝ «Պատմու-թյուն և իրականություն» գիրքը, տպագրվեց մի հարվածով, պատշաճ պոլիգրաֆիական մակարդակով, իր իսկ անմիջական եկթուսկությամբ գտնվող տպարանում: Հարցն այստեղ բնավ այն չէ, թե Կ. Սարդար-յանն իրավունք չունի գրել, տպագրվել, այլ այն, որ ինչպես երևում է օրինակներից, Արցախի գոյամարտին նպաստ բերող գրականության հրատարակման գործը բարձրթողի վիճակում է: Չէ որ հիշյալ ալբոմը իր տեսակի մեջ բացառիկ է և լուսապատկերներով գալիս է միանշա-նակ հաստատելու, որ Արցախը հնուց ի վեր եղել է հայկական՝ Հայաս-տանի անբաժան մասը և այնտեղ ստեղծված մշակույթը պատկանում է հայ ժողովրդին:

Եթե փորձենք հակիրճ գնահատականով ամփոփել, առաջին հերթին պիտի ընդգծենք, որ գաղափարախոսության ու տեղեկատվության բը-նագավառում Հայաստանը ցավալիորեն հեշտությամբ դիրքերը զիջել է ադրբեջանցիներին՝ դրանով իսկ լայն ճանապարհ բացելով ամեն կարգի հակահայկական հերյուրանքների տարածման համար: Սա փաստ է, տխուր իրողություն, որի մասին դատությամբ են խոսում նաև օտարազգի մեր բարեկամները, սփյուռքահայ գործիչները: Մինչդեռ հայանպաստ քարոզչական բավարար գործունեություն ծավալելու մեր հնարավորություններն ավելի մեծ էին, ինչից էլ անթաքույց զգուշանում էին Բաքվի կեղծարարները: Սակայն ավագ, դրանք չօգտագործվեցին:

«Երկիր», 28 05 1992 թ.  
«Ուրբաթ», 14 06 1992 թ.

Ստեփանակերտում ներկայացա ուր որ հարկն էր, հայտնեցի մտադրությունս և մեկնեցի Ադդամ, Մարտունի, Ֆիզուլի ռազմաճակատի առաջին գիծը: Կեսօրին մոտ հասանաք պայմանականորեն Հարավ կոչվող պահակակետը: Այստեղ արդեն կուտակվել էր Ֆիզուլու և Ջեբրայիլի շրջաններից խուճապահար փախուստի դիմած մի սուլար բազմություն: Մենք ակամատես տղանք ցնցող տեսարանների, որոնց մասին անկարելի է չգրել: Հայ ազատամարտիկը վարժ ադրբեջաներենով տեղեկացնում է, որ ինքը և իր զինակից ընկերները վրեժ չեն լուծելու խաղաղ բնակիչներից: Բոլորովին ձեռք չեն տալու ոչ երեխաներին, ոչ կանանց և ոչ էլ ծերերին: Իրենք միայն ու միայն գործ ու խոսակցություն ունեն հանցագործների՝ նախկին սանձարձակ օտնակականների և վայրագությունների չափն անցած ասկյարների հետ, որոնք զազանաբար հոշոտել են հայերին, ավերել և հրդեհել բազմաթիվ հայկական բնակավայրեր:

Արդեն հայտնի է, որ ադրբեջանցի զինվորներից շատերը փախուստի դիմելիս լրիվ դիմակավորվում, կերպարանափոխված թաքնվում և տարալուծվում են ամբողջի մեջ: Այնուհանդերձ մեր ազատամարտիկներին հաջողվում է փտանգագեթծել նրանց: Դրա պերճախոս վկայությունն են փախստականերին տեղափոխող հարյուրավոր մեքենաներում դասավորված անկողիների, այլուր պարունակող տակառների մեջ պահ մտած մեկ տասնչակից ավելի ասկյարները: Կային և այնպիսիները, ովքեր իրենց զինվորական համազգեստի վրա հագել էին կանացի գույնգույն գգեստ (նույնիսկ հոյ կնոջ կերպարանք էին անել): Բայց իզուր, գոնե այս անգամ աննկատ չմնացին: Դեռ ավելին, յուրաքանչեքի աչքի առաջ սոգրաված, ավելի ստույգ՝ ներքնաշորերի միջից, հայտնաբերված թանկարժեք զարդերը, խոշոր չափի դրամը վկայում էին, որ այդ նողկալի երիտասարդները զբաղված են եղել կողոպուտով: Նույնիսկ չեն խորշել և կատարել են սպանություններ: Միայն թե ինչպես ասում էին նրանք, կարողանան իրենց հետ մի բան տանել, որպեսզի կաշառք ստալով փրկեն գլուխները:

Պետք է տեսնել, թե ինչպես էին թուրք-ազերի կառնները զարմացրից թե գայրույթից ձեռքները վեր պարզած, աղահի՛ն՝ վկայակոչելով ինքնամոռաց մոլագարությամբ խիտում երեսներից, կրծքներից, վայնասուն բարձրացնում, իրենց ազգին հատուկ ստորաբարձությամբ

մոտենում և «պաշարում են» ազատամարտիկին: Մեկը գրպանից, մյուսը ծոցից, երրորդը ողողակի մատից հանում էր սուլյա զարդերը և իբրև «ընծա» համառորեն խոթում զինվորի գրպանը: Վայրկենապես, կիրթ շարժումով ազատամարտիկը գրպանից հանում է «նկերների» ողջ պարունակությունը, մի պահ պահում բոլի մեջ, ապա շարտում դեպի «նվիրատուները»: «Մենք սրանց կարիքը բնավ չունենք: Վերցրեք: Իրականք ավելի շատ ձեզ պետք կգան»: Այդ պահին ուզում էի ծնկաչոք մոտենալ զինվորին և համբուրել նրան, արցախցուն վայել նրա քահվածքի և ժողովրդի արժանապատվությունը ամեն ինչից թանկ գնահատելու համար: Միայն կարողացա իմանալ, որ ազատամարտիկը քաջ Ավդի՛ Մոնթե Մեքրոնյանի խիզախ զինվոր Աշոտն է, ազնիվ, գեղեցիկ, անկարտելի Աշոտը, որը ապշեցրեց ազերիներին, հոդս ցնդեցրեց «ընչաքաղց» հայի մասին նրանց գլուխները լցրած պատկերացումները:

Կեցցե՛ս Աշոտ, դու ոչ պակաս կարևոր նակատում մի փայլուն հաղթանակ ևս տարար: Ափսոս, շատ ափսոս, որ հնարավորություն չունենք այդ դրվագները նկարահանելու: Մինչդեռ դրա կարիքը, աննրաժեշտությունն անվիճելի էր:

Երբ արդեն պատրաստվում էինք հրաժեշտ տալ պահակակետի մեր տղաներին, նկատեցի, որ քիչ հեռվում կանգնած մի կին փորձում է «ճեղքել» մեկ այլ ազատամարտիկի դիմադրություն և մոտենալ ինձ: Ասաց, թե ով է: «Ֆիզուլի քաղաքից եմ, ուսուցչուհի: Անունս Ֆաթիմա է: Այս ամենի համար մենք ենք մեղավոր: Բաքվում ապահով անկյուններ մտած պատերազմի իսկական հրաձիգները ինչքան աղետ բերեցին ոչ միայն հայերին, այլև ամենից շատ մեզ՝ ադրբեջանցիներին: Սիրտս վկայում է՝ այլա՛նք պատժելու է նրանց»: Սակայն նրա անելիքը սա չէր: Պատմեց, Ֆիզուլիում բնակվող հայերի նկատմամբ գործած, բայց մինչև այժմ մեզանում անհայտ մնացած մի ցնցող ոճրագործության մասին, որն ամբողջացնում է Սումգայիթում, Բաքվում և այլ բնակավայրերում կազմակերպված հայկական ջարդերի եղերական պատկերները: «Արդեն հինգ տարի է ցնորված եմ»: Հուզմունքը մի կերպ զսպելով շարունակեց. «1988 թ. հունիսի 22-ին ֆիզուլեցիներին հրավիրում են Գլխավոր պողոտա՝ Սումգայիթի «հերոսների» պատվին կազմակերպած համաբաղաբային խրախճանքին մասնակցելու համար: Այնտեղ ես իմացա, որ մեր քաղաքում ապրող հայերից հավաքագրել են մի բազմություն, վայրագաբար ծեծել, խոշտանգել, մերկացրել և ապա ազգությամբ հայ երածիշտների նվաճակությամբ նրանց լցրած շարժափ փո-

դրոցներով, բերել հասցրել է ենթին պողոտա, որտեղ կերուխումի եռուզեռի մեջ էին մի քանի հազար մարդիկ: Հայտնեցին, որ վայելում ենք հայերից գողացած բարիքները և մեր առջևով անցնող մերկ հայերին պետք է ոսկրակոծենք, որպեսզի մյուս գյավորները (հայերը — Օ. Մ.) իմանան, թե ում հետ գործ ունեն և օր առաջ թողնեն հեռանան, մեր «ազիզ վաթան Գարաբախից» այլապես բոլորի հետ կվարվեն այնպես, ինչպես արանց հետ: Անամոթաբար հրճվում, հոհում էր գիտով-ցած ամբողջը, լկտիաբար անպատվում, կտտանքի ենթարկում տանջահար հայերին, որոնց մեջ կային ծերեր, երեխաներ և նույնիսկ հղի կանայք:

Համաձայն վաղօրոք կազմած սցենարի, նրանց պետք է տանեին Ֆիզուլիից դուրս, Տող գնացող ճանապարհին խաչաձև ձողերից կախեին: Սակայն, բարեբախտաբար, ինչ-ինչ հանգամանքներ խափանեցին նիվադների հրեշավոր մտադրության իրականացումը: Այսուհանդերձ նրանց հաջողվել էր մորթազերծ անել մի հայ պատանու: Այդ օրվանից էս քուն ու հանգիստ չունեն: Միշտ էլ զգում էի, որ պատժվելու ենք»: Եվ այդ պատիժը շատ չուշացավ:

Առաջ անցնելով ասեմ, որ Ստեփանակերտ վերադառնալուց անմիջապես հետաքրքրվեցի և միանգամից պատահական դիպվածով հանդիպեցի նախկին ֆիզուլեցի կոչկակար (ծագումով Ջիրակուսեցի) Ալերտ Նավասարդյանին: Նա ոչ միայն տեղյակ, այլև իրազեկ է ծաթինայի պատմածին, և ուներ հավաստի փաստեր: Պարզվում է, որ 1988 թ. հունիսի 1-ի տվյալներով Ֆիզուլի քաղաքում ապրում էր 856 հայ բնակիչ կամ 126 ընտանիք: Միաժամանակ նա ցույց տվեց շրջանային «Արագ» թերթի 1988 թ. հունիսի 18-ի համարը, որում «Մենք կհաղթենք» վերտառությամբ գետեղված է Գորբաչովին հասցեագրված հակահայկական բովանդակությամբ մի ծավալուն նամակ, որի տակ գրված է Ֆիզուլիաբնակ 12 հայերի անուն, ազգանուն: Նշված են վերջիններիս պաշտոնները: Թուրքի ծանոթ ձեռագիր է, որ, ավաղ, շատերն այդպես էլ չհասկացան:

Կեսգիշերին մոտ հասանք հաջորդ պահակակետ: Այստեղ անպատասխան լռություն էր տիրում: Ազատամարտիկները վարանդեցու արժանապատվությամբ ուզում էին հավոր պատշաճի դիմավորել մեզ: Այստեղ հանդիպեցինք ծանոթ դեմքերի, քաջակորով մարտիկների, քաղաքականության ու գեղարվեստի բնագավառի գիտունների, որոնց իմացության ու իրազեկության համազօր մարդիկ երևանում անվազն գիտության դոկտորներ են:

Բայց դաշտում, Արաքսամերձ տափաստանում եղեգնից պարտապատված դիտակետում մեզ հյուրասիրեցին, ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ... Արաքսի ափին որսած վայրի խոզի խորովածով: Սակայն ինձ՝ սրբիկոտարան-պատմաբանիս համար իսկական անակնկալը թերևս սրտից կախված, ձեռքով արված գծանկարներն էին: Նույնիսկ գրքեր էլ լույս տվեցին: Նկարներից մեկում պատկերված են դիրքերը թողած, սակավուն փախուստի դիմած ադրբեջանցի բացքանակ ակադեմիկներ, որոնք բնթանում են քսակե կապոցներով «զինված» հալ կանանց առջե-վից: Տեղեկացրին, որ մի խումբ ճարտարեցի անհամբեր կանայք իրենց բազազուն ամուսիններին տեսակցության էին գնացել: Սակայն Ֆիզուլու հաստվածում մոլորվել, շեղվել, անցել են ռազմաճակատի գիծը և նախանվել էին թշնամու ճամբարում: Մեր առյուծասիրտ տիկիները կարողացել են հնարամտորեն ճեղքել թշնամու դիրքերը և ազատագրել չորս գյուղ: Հոգիներդ է լույս Խաչենի չքնաղ դուստրեր՝ Ռուզան (13-րդ դ.), Վարանդայի անզուգական հերոսուհի Գայանե (18-րդ դ.), Ռուշիի պարծանք Խաթայի (19-րդ դ.), Ջեր հերոսական ոգին, հայրենիքին անմնացորդ նվիրումի սխրանքը, իբրև պատգամ ու ավանդույթ շարունակվում է նաև 20-րդ դարի վերջին: Մյուս նկարում ազատամարտիկը Արցախից դուրս է շարտում անփառունակ Էլչիբեյին, որի՝ Ստեփանակերտում «ցայ» խնելու երազանքն այդպես էլ մնաց երազանք: Այլ պակաս տպավորիչ է «ժամապահի» նկարի տակ դրված մակագրությունը. «Հանգիստ քնիր Հայրենիք-Արցախ, քո հավատարիմ զավակները միշտ արթուն են»:

Տղաները պատմեցին, որ պահակակետին շատ մոտ են Արցախի պատմական Մոխանք գավառի Վարդանակերտ գյուղաքաղաքի ավերակները: Հետախուզության ժամանակ Գենան հասցրել է անել մի քանի անվարժ մատիտանկարներ: Ինչպես հայտնի է, թուրք-ազերիները նուշարձանի հայկական պատկանելությունը թաքցնելու համար այն նորջորջում են Օրան կալա, թեև հնավայրի տարածքում դեռ նշվարվում են հայկական հնագույն գերեզմանատան տապանաքարերը՝ դժվար բնթեռնելի գրերով հանդերձ: Առհասարակ հայկական պատմամշակույթային հուշարձանների բուն գոյությունը, որտեղ էլ դրանք գտնվելիս լինեն, նեղսիրտ են դարձնում մեր հարևաններին, քանզի էլ ի՞նչ թուրքի հայրենիք, երբ նրա բոլոր հին հուշարձանները հայկական են: Այստեղ, ինչպես Ադրբեջանի մյուս շրջաններում, մշակութային մի կատարյալ չարդ է իրականացվել, ոչնչացվել է մի ամբողջ պատմու-

թուն, ավերվել են հայկական բազմաթիվ կոթողներ:

«Ռիչանում ենք,— տեղից բարձրանալով ասաց ինձ ուղեկցող պարեռը,— քանի դեռ լույսը չի բացվել, պիտի հասնենք, և մեկ անգամ ևս համոզվենք, որ մեր տղաները պատվով են կատարում իրենց ծառայությունը նաև «Հյուսիս» ուղեկալում»: Ամենակարող հրաաչյը պովկեց տեղից՝ ետևում թողնելով փոշու ամպ: Առջևում երկնքի պատտառի վրա նշմարվում էին արևածագից շտապումած արցսխական հալաշխարհի ծանոթ լեռնագագաթները: Աջ թևում Աղդամն է, երբեմնի գոռոզ, ամբարտաւիան Աղդամը, որն իրաւամբ համարվում էր ազրբեջանական մափիայի, հազար ու մեկ հանցանք գործած, բայց միշտ անպատիժ մնացած կրանների մայրաքաղաքը: Այն Աղդամը, որտեղ աշխարհի բոլոր օրենքներից գործում էր միայն մեկը՝ փողի օրենքը: Գրա համար էլ նրա դեմ անգոր էր անգամ սարսափազդու ՊԱԿ-ը՝ բուշեիկյան բռնապետության հզոր հրեշը: Այն Աղդամը, որին հատուկ վերապահված էր լինելու արցսխահայությանն իր պատենական հողից դուրս մղելու տմարդի քաղաքականության իրականացման հավաքատեղի՝ շտաք: Այն Աղդամը, որտեղից երկու տարի անընդմեջ մահաբեր արկերի ու հրթիռների կարկուտ էին թափում Արցախի, նրա մայրաքաղաք՝ Ստեփանակերտի վրա: Այն Աղդամը, որտեղ միայն 1989—1991 թթ. բռնագրավվել և թալանվել են Արցախի համար ողարկված շուրջ 1000 վագոն բեռներ, այդ թվում նաև տասնյակ հազարավոր հայերեն գրքեր: Ազատամարտիկ Ծ. Վանյանը Աղդամում գտել է Րաֆֆու «Խենթը» և «Խաչագողի հիշատակարանը» (1978 թ. հրատարակություն) գիրքը, որի շապիկի վրա կարմիր թանաքով գրված է. «Հիշատակ իր սիրելի դասուկ ընկեր Բաղդասարյանին՝ իր սուաքին դասարանի աշակերտ Ա. Թ. Արզումանյանից: 15. 12. 79 թ.» ընծայագիրը: Գիրքն անկասկած կվերադարձվի տիրոջը, միայն թե իր տեղը հալոսնի ընկեր Բաղդասարյանը:

Մեռած քաղաքում անդորր է, դատարկված, կենդանությունից գուրկ նրա շրջակա տարածքները հսկող մեր փառապանծ ազատամարտիկները հաստատել են կարգ ու կանոն, ռազմական օպերատիվ վիճակ: Եթե հրաշքով կենդանանար մեծն Հյուզոն ու տեսներ Աղդամը, անշուշտ, կասեր, որ այստեղով թուրքից խոցվածն է անցել: Ինչևիցե: Մնաք բարով, հայրենիքի արթուն արծիվներ... Թեքվում ենք դեպի Մարտունի:

Ուրախուսի է, որ այսօր Արցախում սապարեզ են գալիս ոչ միայն

Այաննաստարներ, հերոսներ, այլև նրանց հերոսականությունն անմահացնող արվեստագետներ, քանիմաց մտավորականներ: Ես շտապում եմ հանդիպելու դրանցից մեկի, երգասուհի-բանաստեղծ Գրիգոր Ուլուբաբյանին՝ հալածանքներ մի արվեստագետի հետ, որի երկու գրքերը մեկը մյուսի ետևից տպագրվել են վերջին տարիներին: Նրա մշակած դարաբաղյան հորովելի Վարսանդայի նոր տարբերակն արդեն հաստատուն տեղ է գտել Հայաստանի ուղիղի և հեռուստատեսության երգացանկում:

Ռեռ ժամը 6-ը չկար, երգահանի տան շեմին տեսածս գերագանցեց իմ երևակայությունը: Գիտեի, որ ոչխար խուզկը դժվար գործ է, և ամեն գյուղում հատուկենտ մարդկանց էր վերաբարկված կատարելու այդ պատասխանատու աշխատանքը: Իսկ այստեղ, դարպասի մոտ երկու երեխա, մեկը Գ. Ուլուբաբյանի թոռը՝ 7 ամյա Սամոն, իսկ մյուսը՝ 5 ամյա ընկերը՝ Արաիկը, մեկի ձեռքին սովորական, մյուսի՝ անսովոր մրկրատներով (չորս ոտները մի տեղ կապկպած, մեջքի վրա պատկեցրած) ոչխար են խուզում: Այս պարագայում դարաբաղցին կարամոխի՝ չէ-չէ մի: Իմ այն հարցին, թե երեխաներ, ինչու այս ժամին չեք թնում, նրանք մեծավարի՝ բա որ մենք թնենք, մեր տները ոլքեր պիտի պահեն: Իմացա, որ երեխաներից մեկի հայրը վիրավոր է, մյուսինը գտնվում է ռազմաճակատում:

Տեր Աստված, այս ի՞նչ ժողովուրդ ենք: Ամբողջ Արցախը նման է մի մեծ փեթակի: Աշխատում են բոլորը՝ 4 տարեկանից մինչև 100 և ավելի տարիքի պատիկները և տատիկները: Այստեղ գոյություն չունի ռազմաճակատ և թիկունք դասական հասկացությունը: Այստեղ ամեն մեկն իր գործն է անում, նվնվացող, անպտող փիլիսոփայող, պարսպ-սարսպ, հաստամաշկ ջահելներ չկան: Մարդիկ իրենցից վանել են վախի զգացումը և բնավ ժամանակ չունեն անձնական բարեկեցության մասին մտածելու: Բոլորի մտահոգությունը, փափազը Արցախի հուսալի պաշտպանության կազմակերպումն է: Այս առումով հատկանշալանակ է «Վաշինգտոն պոստ» թերթի (12. 09. 93 թ.) գնահատականը. «Վարաբաղն այսօր հիշեցնում է հունական Սպարտան, որտեղ հերոսականության ոգին, ինքնագոհողությունը և կարգապահությունն ամեն ինչից վեր են գնահատվում»: Կարծում եմ՝ սպառիչ է ավելած:

Ահա թե որտեղ պետք է փնտրել Գ. Ուլուբաբյանի ներշնչանքի ակունքները, նրա ստեղծագործության հայրենասիրական երանգները: Ամեն անգամ լսելով նրա անզուգական հորովելի «Իմ արա, հո.. արևն էսա տոսա կեսա... ապան մտտաղ, ապուն կունի հոտաղ» բառերը,

ինքս ինձ հարց եմ տալիս՝ որտեղից է սկիզբ առել այս երգը, որից վիշտ ու հավատ է ծորում: Ո՞ր է գնացել ու ետ չի եկել պապու բալան, որ նա իր թոռան մեծանալով է ուրախանում: Արդյո՞ք պարսիկները տարան, արարները, թաթար-մոնղոլները, սելջուկ-թուրքերը, թե բուլշևիկ թուրք-ազերիները: Արդյո՞ք հոկտեմբերի, հաքվի կոմունայի խախտու բարիկադների վրա գոհվեց, հայրենականի մարտերում ընկավ, թե՞ Ալթայի երկրամաս աքտրվեց: Արդյոք հայակուլ հաքվի, Սուբգայիթի ճիրաններում մորթվեց, պարտքերը փակելու համար խոպան գնաց, թե կամայականորեն զրպարտվեց ու հայրենի օջախից արտաքսվեց: Արդյո՞ք Մարտակերտի ճակատում խփվեց, Ծուշիի, Քաշաթաղ-Լաչինի, Ծար-Քել-բաջարի ազատագրման ժամանակ գոհվեց, թե Ադդասի, Ֆիզուլու կրակակետերը լուցնելիս անմահացավ: Հազար տարի, թե հինգ, երկու հարյուր, յոթանասուն, հիսունհինգ, թե մեկ տարի առաջ է եղել ու մուրով էլ են թվերը ժամանակների մեջ: Մնում են պապը և թողը, հայը իր հայկական հողի վրա, արմատով ու ճյուղով, բայց միշտ հուշով ու հավատով:

Քանի որ խոսք եղալ ստեղծագործող մտավորականության մասին, ապա անհրաժեշտ է հիշատակել ևս մի խոստումնալից անուն: Խոսքը՝ նկարչուհի Լիանա Քոչարյանի մասին է: Մեզանում վերջին տարիներին, երբ ժողովրդի բուն գոյության համար պայքար է մղվում, գեղանկարչության մեջ ոչ ոք այնքան ուժգնությամբ, ճշմարտությամբ և գաղափարական հնչեղությամբ չի պատկերել արցախահայության անկոտրում կամքը, նրա հզոր բռունցքը, ազատատենչ տենչանքները, որքան դա հաջողվել է անել երիտասարդ նկարչուհուն: Փորձենք ծանոթանալ նրա, հիրավի դարակազմի «Շրջափակում» գծանկարչական աշխատանքի հետ, որն արդեն մեզանում և արտասահմանում ունեցել է մի քանի հրատարակություն: Մտեք Ստեփանակերտի ծայրամասում՝ դեպի Կարկառ գետը իջնող թեքության վրա գտնվող բարձրահարկի նկուղը, որտեղ հրետակոծության և հրթիռակոծության ժամանակ պատսպարվել է հան Լիանան, և ձեր առջև կբացվի հերասականության ոգեղենի մի եզակի պատկերասրահ: Նրա խոնավ ու կոշտ պատերի որմնանկարները, սրտաճնիկ մակագրությունները մոմի լույսի տակ, կյանքի և մահվան պարագծում հայտնված մարդկանց սևեռում հայացքի առաջ արարել է մարտիկ-նկարչուհի Լիանա Քոչարյանը: Բեռոնե ցուրտ բլոկների վրա կանացի ջերմությամբ նկարագարդած, հաղթանակի և ապագայի նկատմամբ անասան հավատի խոսուն պատկերները ասելիքի իմաստով, անշուշտ, տպավորիչ են և ունեն ներգործելու մեծ

ուժ: Ահա թե ինչու Լիանայի պատկերասրահը պետք է դառնա Ստեփանակերտի պետական պատկերասրահի մասնաճյուղ, և այնտեղ պիտի գան այցելուների խմբեր, մանավանդ օտարերկրացիներ: Նկուղ-պատկերասրահի միջոցով մարդիկ շատ նոր բան կիմանան Արցախի և արցախցիների մասին: Այն առավել արդիական է, համահունչ է մեր, բարոզչության տառին ու ոգուն:

Ամփոփենք: Ռազմաճակատում տարած փայլուն հաղթանակի շնորհիվ արցախահայությունը ձեռք է բերել որակական նոր հատկանիշներ: Առաջին հերթին՝ ազգային պետականության կայացման համար անհրաժեշտ պետական մտածողություն: Երկրորդ՝ հայրենիքի պաշտպանության համար անձնագրի նվիրվածության և հերոսականության վսեմ ոգի: Ամենուրեք հաստատվում է կարգուկանոն: Մարդիկ վաղվա օրվա նկատմամբ հավատով ու հաստատականությամբ վերադառնում են գերությունից ազատագրված գյուղերը, վերաշինում կողոպտված և ավերված բնակավայրերը, կառուցում և բարեկարգում ճանապարհները, նոր ակոս բացում խամ դարձած անմշակ հողերում: Որոշակի աշխուժություն է նկատվում մշակույթի և կրթական օջախներում: Մի խոսքով՝ արցախահայությունը վայելում է ոչ միայն իր կրած հաղթանակի բերկը-բանքը, այլև նրա պտուղները:

«Ազատամարտ», № 88, 10 1998 թ.

Մ ա ն ո թ ո լ թ յ ո Ւ Ա.— Սույն հոդվածը արտատպվել է աշխարհի 7 երկրներում, 5 լեզուներով: Ֆրանսիական «Յունանիտեն» այն համարել է կինոսցենարի հրաշալի նյութ:

## ԵՐԵՍՊՍՏՎԱԾ ԵՎ ՆԵՆԳԱՓՈՒՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի պատմաբանասիրական գիտությունը երկար ժամանակ է, ինչ աչքի է ընկնում իր հակագիտական, հակահայկական անբարո հրատարակումներով: Ադրբեջանցի հեղինակները փնթի մասվաճառի պես կացնաբարում են Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի (այդ թվում նաև Արցախի) պատմությունը: Վերջին տարիներին, Արցախի ազատագրական հզոր շարժման հետ կապված հաքվում հաճախակի լույս տեսնող աշխատությունները, ըստ էության բարբարոսական հարձակումներ են Հայաստանի և հայերի վրա: Այստեղ խոսքը հիվանդագից հայատլացության, անազնվության կամ բացահայտ նենգափոխության մասին չէ, այլ պատմական փաստերի՝ իշխանությունների

կողմից հովանավորող սղավաղումների, սեփական հայեցողությամբ դրանք «դգել-փշելու» անսքող քայաքականության:

Որպես կանոն, նրանք ոչինչ չեն հիշատակում Արցախ-Ղարաբաղի՝ հայկական երկրամասի դարավոր անցյալի ու փոթորկահոուց հերկափ իրական սրատմության և նրա հարուստ մշակույթի մասին: Ասես չկան և չեն եղել: Մինչդեռ պատմությունը ստորադաս՝ եսասրշտ եղանակով ձևափոխելով անհասող փորձեր են կատարում անիրազեկ ընթերցողներին ներշնչելու, հավատացնելու, որ Արցախ-Ղարաբաղը, անհիշելի ժամանակներից ի վեր եղել է ադրբեջանական հող, որ «ինտերնացիոնալիստ» ազերիները հյուրընկալել են «ընչագորկ փախտական հայերին և նրանց համար ստեղծել զարգացման, բարգալանման հրաշալի պայմաններ»: Եվ որ «հայերը միայն Ադրբեջանի կազմում են ծաղկել, ազգային արժանապատվություն ձեռք բերել և հասել բարձր կենսամակարդակի»: Բայց ահա «երսխտամոո հայերը ոտքի են ելել և ուզում են զավթել ադրբեջանական տարածքները»: Չեն մոռացել զգուշացնել, որ «հայ ազրեսորները մտադիր են զավթելու Անդրկովկասը, Հարավային Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան» և ապա «Մեծ Հայաստան ստեղծելով հասնել Միջերկրական ծով», ոչ այն, ոչ պակաս: Այստեղ են աւել՝ մաշալլան, էֆենդի... Խեղաթուրված, երբեմն քնծիծաղ հարուցող առաջադակրատանքը նետված է ադրբեջանական քարոզչական մեքենայի երախը և անդադար կրկնվում է տարբեր ստղաններում ու տարբեր լեզուներով:

Իրա պերճախոս վկայությունը մեր ձեռքի տակ եղած գրքերն են, որոնք, իբրև «ուսզմակար», ազատագրված բնակավայրերից վերցրել են Արցախի ազատամարտիկները և նվիրել ինձ: Նշենք դրանցից մի քանիսը, քանզի բոլորի քննարկումը մեծ տեղ կզբաղեցնի: «Դաշնակները», «Սրոնիկա. ԼՂԽ. փետրվար 1988. փետրվար 1990», «Լեռնային Ղարաբաղ», «Կոնֆլիկտ Լեռնային Ղարաբաղում», «Հրակուրսիս դեպի Ղարաբաղի անցյալը», «Չհայտարարված պատերազմ», «Ծուշի քաղաքի ճարտարապետությունը» և այլն: Այս և այլ երկերի հիմնական առանձնահատկությունը այն է, որ դրանց մեջ իմի է բերված Ադրբեջանում ծավալված հակահայկական ոռնացող քարոզչության համար մոզոնված կեղծիքների և ստերի ամբողջ «պատկերասրահը»: Մյուս, ոչ պակաս կարևոր առանձնահատկությունը այն է, որ հսկայական քանակությամբ այսօրինակ գրականությունը տպագրված է ոռուերեն և այլ լեզուներով, այն էլ մեծ (յուրաքանչյուրը 50—100 հազար) տպաքանակով:

Թեև դժվարությամբ ու սրտխառնուքով կարողացի վերոհիշյալ

գրքերը, սակայն դյուրին «յուրացվող» նյութը բավարար և միանշանակ հիմք է տալիս, առանց վարանելու կատարել հետևյալ եզրահանգումները. ա) Ադրբեջանի նորագույն քարոզիչները կատարի թշնամությամբ ու չարամիտ ստեղծությամբ են տրամադրված հայ ժողովրդի հանդեպ: Այս հանգամանքը բոլորովին չի թաքցված կամ քողարկված: Այն արտահայտված է անաբեկչական անզուսպ, անպատկառ սպառնալիքներով, հայերին չինովնիկական խրատներ տալու դասերով: Ասես հայ ժողովրդին վարկաբեկելու, նրա պատմությունը, մշակույթը յուրացնելու, լլկելու հասնար սրցանակ է նախատեսված եղել, և նրանք ամեն կերպ ջանացել են այն շահելու առիթը ձեռքից բաց չթողնել. բ) Ադրբեջանցի նեղիհակների մեջ արմատավորվել է այնպիսի մի դատասպարտելի մեթոդ, կրք իրենք հորինում են ցանկալի փաստեր, դեպքեր, դեմքեր, թվեր և նետո, որպես հաստատող ալլջուրի հենվում դրանց վրա և ապա հորթային ներժակերով հիմնավորում, շարադրում իրենց իսկ հորինած սուտ պատմությունները: Ուղղակի ասենք, որ Արցախյան հզոր շարժումը նրանց դարձրել է ավելի մոլագար: Ոչնչից չեն խորշում, հորինում են ալն, ինչ կասենում են: Մեր հարևանները դատում են տեղի և ժամանակի պարագայից դուրս: Նրանք բառացիորեն ոռոնահարում են անզամ հանրահայտ նշարտությունները: Ասենք փաստերը ինչ նշանակություն ունեն այս պարագայում, երբ չկա ո՛չ տարրական քարեխրդճություն, ո՛չ գիտական մոտեցում և ո՛չ էլ ամոթի զգացում: Ամեն ինչ արվում է թորբավարի՝ կողոպտել, յուրացնել ուրիշների ոչ միայն տարածքները, այլև պատմությունը, մշակույթը: դ) Ադրբեջանցի կեղծարարները անարգանքի սյուն են գամում հին ու նոր բոլոր հեղինակներին, որոնք Արցախ-Ղարաբաղի մասին գրելիս անկողմնակալ մոտեցնում են ցուցաբերել և օգտագործել են «հայ», «հայկական» որոշիչ բառեր: Նրանք կատարում և չեն հանդուրժում, որ արցախահայությունն ունի անհամեմատ ավելի շատ հուշարձաններ, նշանավոր մարդիկ և, իհարկե, նաև իիզախ ու տոկուն հայրենասերներ: Ծնարարոյ վարքագիծ են դրսևորում և բոլորովին չեն հաշտվում այն մտքի հետ, որ Արցախի հիմնահարցի վերաբերյալ կարող է գոյություն ունենալ նաև այլ, թուրքականից տարբերող կարծիք: գ) Եվ որ պատմության բացահայտ նեհգափոխումը ոչ միայն առանձին հեղինակների գրչի գործ, սուրջեկտիվ կարծիք կամ վրիպում է, այլ կրում է ընդգծած պաշտոնական բնույթ, որոշակի քարոզչական նպատակով պարտադրած գիտաքաղաքական ուղղություն: Օգուվելով մեր աններելի պատիվությունից ու երկչուտ քարոզչությունից, կեղծարարները խոտան «արտադրանքը»

առաքում են տարբեր երկրներ և միաժամանակ ինքնագոհ կեցվածքով հայտարարում. «Դե՛ մենք մերն արեցինք», այսինքն՝ քարո ջրհորը գլորեցինք, «թող հալերը հոգի մաշելով ապացուցեն հակառակը»՝ քարը ջրհորից հանեն: Տվյալ փուլում գլխավորը (նրանց կարծիքով) հաշտ-րիս ուշադրությունը շեղելն է, անպտող վիճարանության մեջ ներքաշելը, հաշկական տարածքները վիճահարույց խնդիր դարձնելը: Ահա, այս կեղտոտ «հաղթանակի» մեջ է դրսևորում աղբբեջանցի հեղինակների և նրան թիկունքում կանգնած քաղաքական ու պետական գործիչների ողջ սաղիզվը:

Լրագրային մեկ հոդվածի սահմաններում անհնար է հանգամանորեն ներկայացնել բաբվեցի հեղինակների «հաշտնագործությունները»: Դրա կարիքը, հարկավ, չկա էլ, քանզի թվարկած գրքերի զգալի մասը գրված են 30-ական թվականների ոգով ու ոճով, բոլշևիկների չափա-նիշներով: Դարգապես դրանցից քաղաքական շաղխտանության ու զագրելի գրսարտության գարջահոտություն է փչում: Այսուհանդերձ հարկ են համարում ընթերցողների դատին հանձնել որոշ տիպական նմուշներ: Դրանք կօգնեն որոշակի պատկերացում կազմելու Ադրբեյ-ջանում մոլեգնող հակահայկական վարսահաշությունների խոհանոցի մասին: Նաև այն մասին, թե ինչպես կարելի է պատվերով երեսարտել սեփական ժողովրդի պատմությունն հնացնելու, քաղաքակիրթ դարձ-նելու տեղագոհն մարմնաջով ուշ միջնադարի բարձունքներից իջեցնել և հասցնել Նոյի, Ստրաբոնի դարաշրջանները, կամայականորեն սրբա-գրել, խմբագրել աղբբորագիտական նյութերը, մկրատախաղով պոչա-տել, գլխատել, բովանդակագրկել և «բարեփոխված ձևով» ներկայացնել մեջբերած տեղեկությունները: Թե ինչպես կարելի է խցկվել իրենց ազ-գային և ռեգիոնալ տարածաշրջանի մշակութի պատմության մեջ և դասական հեղինակներին քաշքշել ազգային մի «գաղութից», մյուս և դրանով նրանց համարել իրենց ազգի «սրբությունները»՝ մոռանալով, որ Դավթակ Զերթոդի, Մովսես Կաղանկատուցու, Նիզամու կամ Գան-ձակեցու դարաշրջաններում դեռ չկային աղբբեջանցիները որպես ստանձին ժողովուրդ: Այս առումով բնավ պատահական չէ, երբ մեր օրերում Բաբվում գլուխ են ջարդում աղբբեջանականության մասին, առաջ քաշում այնպիսի իրարամերժ, ախտահ տեսակետներ, երբ ոչ ոք դեռևս չգիտի, թե ինչպես պետք է կոչել իր ազգային լեզուն:

Աղբբեջանի ստախոս, նեզամիտ ու կեղծարար հեղինակների մեջ որպես «առաջին մեծության աստղ» փայլում է գաղափարաքաղաքա-կան արկածախնդրության դոկտոր Դ. Գուլիևը: Այս գեղծարարը, միա-

ժամանակ եղել է ՍՄԿԿ կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստի-տուտի մասնաճյուղի՝ Ադր. ԿԿ կենտկոմին կից կուսակցության պատ-մության ինստիտուտի տնօրեն: Ի պաշտոնե նրան վերապահված է եղել աշքի լույսի պես պահպանել մարքսիզմ-լենինիզմի դասականնե-րի գրական ժառանգությունը և ամենայն բժախնդրությամբ ուսումնասի-րել ու հրատարակել նրանց երկերը: Սակայն, ինչպես ցույց կտրվի քիչ նետո, նա իր «սիրելի Գարաբաղը» ձեռքից բաց չթողնելու համար (Հեղար Այլիկ բառերով), չարաշահել է կենտկոմի վստահությունը և կամաչական մարզանքներ կատարել կուսարխիվում պահվող փաստա-թղթերի հետ: Տեղի տրության պատճառով հարյուրավոր օրինակներից բերենք միայն մեկը:

«Ինտերնացիոնալիզմի դիրքերից» ճոճուն հոդվածում, Դ. Գուլիևը գլուտ արածի պես հաշտնում է. «Լեոնային Ղարաբաղի բնակչությունը վճռականորեն արտահայտվել է երկրամասը Ադրբեջանի սահմաններում պահելու համար»: Իբր թե այդ մասին 1919 թ. մայիսի 22-ին Ա. Ի. Միկոյանը ՌԿ(բ) կենտկոմին և Վ. Ի. Լենինին հաղորդել է. «Դաշնակ-ները՝ Հայաստանի կառավարության գործակալները, ձգտում են Ղարա-բաղը միացնել Հայաստանին, բաց դա Լեոնային Ղարաբաղի բնակչու-թյան համար կնշանակի զրկվել իր կյանքի աղբբորից՝ Բաբվից և կապ-վել Երևանին, որի հետ երբեք և ոչնչով չի եղել կապված: Հայկական գու-րագիության (պետք է լինի Ղարաբաղի հայության — Ծ. Մ.) 5-րդ համա-գումարը որոշել է վճռականորեն ճանաչել և կցվել նույնպես Սովետա-կան Ադրբեջանին»: Որպես սկզբնաղբբոր Դ. Գուլիևը վկայակոչում է Ա. Կիրովի 1919 թ. հունիսի 3-ի հեռագիրը: Նախ, մեջբերված տեքստի ոճը 21-րդ դարի շեմին հասած թուրք գիտնականի մտածողության և ցանկության արդյունք է: Հետո էլ՝ Ղարաբաղի հայության նշված հա-մագումարի ոչ որոշման մեջ և ոչ էլ Կիրովի՝ Վ. Լենինին հղած հեռա-գրում այդպիսի բան չկա և լինել չի կարող: Անկասկած, Ա. Միկոյա-նը 1919 թ. մայիսին չէր կարող գրել «Սովետական Ադրբեջան» կամ «Լեոնային Ղարաբաղ» բաղադրյալ անունները, քանզի այդ ժամանակ Ադրբեջանը դեռ սովետական չէր, Լեոնային ածական-որոշիչը գործա-ծական չէր: Դրանք շրջանառության մեջ են դրվել մեկը 1920 թ. ապրի-լի 28-ից՝ Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատելու, իսկ մյուսը՝ 1923 թ. հուլիսի 7-ից, ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո:

Բացի այդ, 1919 թ. ապրիլի 23-ին տեղի ունեցած «Ղարաբաղի հայության համագումարը, քննելով «Ադրբեջանի կառավարության մի-շակված և անգլիական հրամանատարության կողմից ընդունված և



հաստատված ծրագիրը՝ Ղարաբաղի վարչական կազմակերպության մասին առաջարկությունը. «անընդունելի է համարում սմեն մի վարչական ծրագիր, որը որևէ կապ է հաստատում Ադրբեջանի հետ»: Այս է համագումարի որոշումը: Ընդհանրապես համագումարի նյութերում չկա. «վճռականորեն ճանաչել» կամ «կցվել սովետական Ադրբեջանին» բառերը: Մնում էս ապա՞ծ, թե ինչպես է մոզոնել այսպիսի եռատրիանգ ստոր և այն վերագրել Ա. Միկոյանին: Իսկ ինչ վերաբերում է Ա. Կիրովի հեռագրին, ապա այստեղ էլ կեղծիքը չափ ու սահման չունի: Կիրովը, ընդհակառակը, Լենինին հաղորդել էր, որ «սեանկ են շուտապահների պահանջները»: Հայկական մարզերը՝ Ղարաբաղը և Ջանգեզուրը չեն ճանաչում Ադրբեջանի կառավարությունը: Սա դեռ բոլոր չէ: Տրպեակի իր հերթական ստոր ճշմարտության տեղ անցկացնի, պրոֆետր Դ. Գուլիևը նման մի կեղծիք էլ հորինել և վերագրել է Ա. Օրտոնիկին: Իր վերջինս հեռագրել է Գ. Չիչերինին, որ «Ղարաբաղն ու Ջանգեզուրը... իրենց համարում են սովետական սոցիալիստական Ադրբեջանի մասը»: Իրականում, այդպիսի հեռագիր դարձել չի եղել:

Զգացվում է, որ յուրաչ Գուլիևը կեղծիքներին «խնտերնացիոնալ բնույթ» տալու բնագավառում արհեստավարժ խաբեքա է: Հավանաբար հույս է փայփայել, որ մարդիկ կհավատան, չեն կարող չհավատալ տիտղոսակիր հեղինակին: Առավել ևս, որ նրա հերյուրանքները «համեմված, փաստված» են ալազգի ճշանակոր քաղաքական ու պետական գործիչների կարծեցյալ ստույթներով:

Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Քոչարյին ստացել էր հերթական առաջարկանք ԽՍՀՄ Ժողովրդական պատգամավորներ՝ Հրանտ Ոսկանյանի, Վիկտոր Համբարձումյանի, Հենրիկ Պողոսյանի, Բորիս Դադամյանի և Չորի Բալայանի ելույթների «անհրաժեշտ ճշգրտումների» ու ուղղումների մասին: Ի՞նչ է ճշգրտել Քոչարյին: Արցախի պրոբլեմի մասին ասված ճշմարտությունը: Այն դատը և վաղուց սպասվող ճշմարտությունը, որը արցախյան շարժման շնորհիվ, հարուցվել է լույս աշխարհում: Այն ճշմարտությունը, որը Քոչարյու «Անհրաժեշտ ճշգրտումներ» հոդվածի համաձայն (էջ 30—42) գեղարարների համար դարձավ սոր դանակ: Եվ ահա, ապագա ակադեմիկոսը կուսակցության շրջկոմի ազիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի մակարդակով ճարտասանում է, թեև ճշմարտության խոսքն արդեն հնչել է: Եթե Քոչարյուն մի ինչ-որ բան հաջողվել է ճշգրտել, դա Ա. Միկոյանի մեջբերումն է, որը փոփոխվել է Դ. Գուլիևի կողմից և գործողության մեջ դրվել: Եթե Գուլիևը չափազանցորեն այժմեականացրել

է Միկոյանի բառերը, ապա Քոչարյին ընդհակառակը, դրել է դեռևս 20-ական թվականներին բնորոշ ոճական և լեզվական նորմերի տակ: Նախորդ հեղինակից փոխարինելով մեջբերումը Քոչարյին այն դրել է չակերտներում, ընդորում, դուրս մղելով մի շարք բառեր. «հեռագիր», «վճռական» և «հայկական կառավարության գործակալները»: Սակայն վաչգիտականները դրանով էլ չբավարարվեցին: Ա. Միկոյանին պատկանող մեջբերումը միանգամայն նեմգափոխել է (և դա որերորդ անգամ) մեկ ուրիշ հեղինակ, պատմական գիտությունների դոկտոր՝ Ե. Տոկարժևսկին: Եվ ահա մեզ հայտնի մեջբերումը, արդեն Ե. Տոկարժևսկու մոտ այսպես է հնչում. «Հայկական գյուղացիության 5-րդ համագումարի որոշումը մնալ (այստեղ արդեն «միանալ» բառի փոխարեն օգտագործվում է «մնալը») Ադրբեջանի կազմում նույնպես ընդունվել է Ղարաբաղի կոմունիստների կողմից»: (Ե՞րբ և որտեղ:— Ե, Մ.):

Մի քանի խոսքով էլ անդրադառնանք մեկ այլ կեղծարարի՝ ակադեմիկոս Ի. Ալիևի «Լեոնային Ղարաբաղ» գրքին: Մյուսներից այն տարբերվում է նրանով, որ այստեղ սակա են (Արցախի պատմության և աշխարհագրության հետ կապ չունեցող) կիսաճշմարտություններ: Աշխատության խորքը՝ ֆունը, Ադրբեջանի բարեփոխված, քայց իրականում կուսեռիկայի ենթարկված պատմության խճանկարն է: Հեղինակն սմեն կերպ ջանացել է Արցախ-Ղարաբաղի մերձավոր և հեռավոր հարևան մուսուլմանական երկրների դարերի տարեգրությունից վերցնել սուկ այն, ինչ կարող է որևէ կերպ հարմարեցնել իրենց նեղ, ազգային ծավալապաշտական նկրտումներին: Սակայն, դրանով նա չի հագեցել: Վերցրածը, սվեյի ճիշտ՝ գողացածը, էժանագին հնարքներով տեղադնացրել և բերել-փաթաթել է Արցախի պատմության վզին ու կատարել սխալ եզրահանգումներ: Եվ ահա թե ինչպես է Ի. Ալիևին հաջողվել նեմգափոխել Արցախի (ինչու միայն Արցախի) պատմությունը և այն դիտարկել միակողմանի, ադրբեջանական պատմագրության տեսանկյունից: Դուրս է գալիս, որ հայ ժողովուրդը ընդհանրապես գոյություն չի ունեցել, հայկական մշակութային արժեքներն էլ հայկական չեն: Հարկավ, Ի. Ալիևի մեթոդաբանությամբ կարելի է աշխարհի ցանկացած երկրամաս հալտարարել ադրբեջանական: Եվ արդյո՞ք այդ ձևով չեն ադրբեջանցի հեղինակները իրենց վերագրում «մահմեդական աշխարհի սրտում» գտնվող պատմական բեմից վերացած և նաև չվերացած, հին ժողովուրդների պատմությունը, մշակույթը: Բոլորովին էլ պատահական չէ, որ ադրբեջանցի պատմաբանների այս արշավը ոգևորությամբ պաշտպանում, խրախուսում են պանթուրքիզմի ջատագովները:

Ի դեպ, Ի. Ալիևի գիտական փետրագարդիված աշխատության մասին մեր մամուլում գրախոսություններ են երևացել: Սակայն դրանք անբավարար են: Հուսանք, որ պրոֆեսոր Ի. Ալիևի ուսումնասիրությունը կգրավի մեր պատմաբանների սենտուն ուշադրությունը:

Քելբաջարի գործառնության մեկում Արցախի ազատամարտիկները հանդիպել են թերթերի և գրքերի կայացուցիչների: Դրանց մեջ էր նաև ոմմ Խ. Խալիլովի «Էքսկուրս դեպի Ղարաբաղի անցյալը» գիրքը: Նախատեսված էր «Հետադարձ ճանապարհ չկա» ընծայագրով նվիրաբերել Ղարաբաղում կռվող ադրբեջանցի զինվորներին: Սակայն, բարեբախտաբար, սյարզվեց, որ հետադարձ ճանապարհ կա և նրանով ճողոպրած զինվորները «մոռացել» էին հետները տանել թանկագին նշվերները: Գիրքը «աշխարհի ամենամեծագույն ու տաղանդավոր» ադրբեջանական ժողովրդի անգուսպ գովքն է: Մի ժողովուրդ, որ (հեղինակի կարծիքով) իր տարածքները բաշտար պաշտպանել է հունա-հռոմեական լեգեոններից, կարողացել է Տիգրան Մեծի, Ալեքսանդր Մակեդոնացու և Սասանյանների պորտերը տեղը դնել, փառապանծ հաղթանակներ է տարել արաբների, հայերի, վրացիների, լեռնականների դեմ և այժմ էլ ջարդում է հայ ֆաշիստներին»: Այսպիսի դեպքում արցախցին հեգնանքով ասում է. Դե՛ արի էլը ցեխից հանիր:

Խ. Խալիլովը երևակայության թևերով ճախրում է դեպի Ղարաբաղի հեռավոր ու մոտիկ անցյալը, իրար խառնում դարերն ու ժամանակները, դեմքերն ու դեպքերը և իր իսկ պոտորած ջրում որս անում, մըտացածին արյունակցական կայեր ու հարաբերություններ է հաստատում թուրքացել ուսումնական պետական գործիչների և Արցախում 18-րդ դարի երկրորդ կեսում թաթարական-ադրբեջանական քոչվոր ավազակապետների միջև և անհաշիվ անհերթություններ ասպարեզ հանում:

Հանրահայտ կեղծարար Զիա Բուրիպոյլը պիտի որ շատ գոհ լինի, քանզի իր ստեղծած պատմագիտական դպրոցի սանիկները մի քանի գլխով առաջ են անցել իրենից:

Ամփոփենք: Այսբանից հետո մեզ մնում է հիշեցնել կեղծարարներին, որ պատմությունը չի կարող հանդուրժել, որ ստոր եղանակով խեղաթյուրեն, աղավաղեն, նեղափոխեն պատմական իրողությունները: Բանգի ճշմարտությունը վաղ թե ուշ դուրս է գալու մակերես, իսկ կեղծիքը մետվելու է անդունդ: Այս գործընթացն արդեն սկսված է: Մնում

է, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան և հալագիտական մյուս կենտրոնները ուշքի գան, դուրս գան լեթարգիական վիճակից և հարկ եղածի պես հակահարված տան զեղծարարներին:

«Ազատամարտ», № 22, 06 1998 թ.

Մ ա ն ո թ ո թ յ ո ՛ ճ .— Սույն հոդվածը տպագրվել է 4 լեզուներով:

## ՄԵՆՔ ԼՈՒՌՄ ԵՆՔ, ՆՐԱՆՔ՝ ԼԿՏԻԱՆՈՒՄ

Վերջերս Հայաստանի արտգործնախարարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի քարտուղարությունից ստացել է մի գրություն, որտեղ մտահոգություն է հայտնվում «Ծուշիի մշակութային նշանակություն ունեցող» ադրբեջանական հուշարձանները հայերի կողմից ավերածության ենթարկելու կապակցությամբ: Բողոքագրում բերված են Աջիկուլի (18-րդ դ.), (չի նշվում, թե ինչ հուշարձան է), Գովհարաղա մզկիթը (1768—1769), (համաձայն շինարարական արձանագրության այն կառուցվել է 1874—1875 թթ.), Ծաահի Գովարաղի մզկիթը (18—19-րդ դդ.), Պանան կարսի բազիլիկավարը (18-րդ դ.), Կաջի Աբբաս մզկիթը (18—19-րդ դդ.), Մեհմանդարովի բնակելի հատվածը (18-րդ դ.), (սա նույնպես ըստ շինարարական արձանագրության կառուցվել է 19-րդ դարում), Կաթլախ Բեյուկ Կարանը (18-րդ դ.), Կարվան-սարաչը (18-րդ դ.) և բերդը (18-րդ դ.) (վերջին երկուսը հայկական են, մեկը կառուցել է Ավան հարյուրապետը, մյուսը՝ մեյիք Ծահնագարը):

Այս կապակցությամբ գլխավոր տնօրենը Հայաստանի իշխանությունների ուշադրությունը հրավիրում է Հասագայի 1954 թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածի վրա, որ պարտավորեցնում է պատերազմող կողմերին հարգել մշակութային հուշարձանների անձեռնմխելիությունը:

Ծուշիում այդքան ադրբեջանական հուշարձան, այն էլ գրեթե 18-րդ դարում կառուցված... Զարմանում ես, որտեղի՞ց է այս ապատեղեկությունը հասել ՅՈՒՆԵՍԿՕ: Պարզվում է՝ ամենահաս Ադրբեջանը և նրա արտգործնախարարությունը «հայերի վայրագությունների» մասին ընդարձակ զեկուցագիր են ներկայացրել ՅՈՒՆԵՍԿՕ և պահանջել Հայաստանի նկատմամբ սրտածամիչոցներ կիրառել:

Ես ապրել եմ Ծուշիում, լավ գիտեմ քաղաքի ամեն անկյուն: Նըշված 9 հուշարձաններից 5 ընդգծվածները երբեք գոյություն չեն ունեցել: Ադրբեջանցիները, իրենց սովորության համաձայն, «ստեղծել են» դրանք

և միջազգային հեղինակավոր կազմակերպության առաջ աղմուկ-աղաղակ բարձրացրել: Մյուս չորս հուշարձաններից երկուսը, ինչպես նշեցիք, հայկական են, երկուսը՝ ադրբեջանական և բարեբախտաբար այսօր էլ պահպանվում են: Բայց 5 կեղծ հուշարձանները ինձ հանգիստ չէին տալիս: Սկսեցի քրքրել արխիվային, պաշտոնական փաստաթղթեր, թերթեցի Շուշիի հուշարձանների մասին հաքվում տպագրված գրքերը, բայց ոչ մի տեղ, կրկնում եմ, ոչ մի տեղ ոչինչ գրված չէ ստեղծվածային հուշարձանների մասին: Ահա ամենալատասեղի փաստաթղթերը՝ Ադր. ԽՍՀ՝ Նախարարների խորհրդի 1968 թ. ապրիլի 2-ի թիվ 140 և 1988 թ. ապրիլի 27-ի թիվ 145 որոշումները, որոնցում հաստատված են Ադրբեջանի ողջ տարածքի (այդ թվում՝ Շուշիի)՝ պետության կողմից պահպանվող հուշարձանների ցուցակները: Նշված են անգամ մեկ հարկանի սովորական բնակելի տները, բայց ՅՈՒՆԵՍԿՕ-ին հասցված 5 հուշարձանները չկան ու չկան: Ադրբեջանում ավերվող, քանդվող, ոչնչացվող հազարավոր հայկական հուշարձանների մասին մենք անհրաժեշտ տեղեկություններ չհավաքեցիք, ձայն-ծալումն չհանեցիք: Եվ ահա Շուշիի ազատագրումից, ընդամենը երկու օր հետո՝ մայիսի 11-ին ադրբեջանցիները արդեն ծեծում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի դռները, իսկ չորս օր հետո միջազգային այդ կազմակերպությունը հատուկ գրությամբ դիմում է Հայաստանին: Ինչպիսի նախանձելի օպերատիվություն: Եվ օրինակելի:

«Երկիր», № 125, 3 07 1992 թ.

«Армянский вестник», № 9 09 92 г

### ԳՅԼԻԾՆԵՐԻ ԽՐԱԽՃԱՆՔԸ

1993 թ. նախագահ Ա. Էլչիբեյը, Ադրբեջանում բորբոքված կրքերը մեղմելու և իր հրամանատարության տակ գտնվող «հերոսական» բանակի մարտական ոգին բարձրացնելու համար (այս էլ որերորդ անգամ) հանդիսավոր կերպով խոստացավ Ստեփանակերտում «ցայ» ըմպելու իր վաղեմի երազանքն ի կատար ածել մինչև առաջիկա սեպտեմբեր: Տըվյալ դեպքում գոհանանք, որ հարևան հանրապետության նախագահը «Գեոկչա գյուղում» (Սևանա լճում) լողանալու իր մտադրության մասին էլ չի խոսում: Քելբաչարի ազատագրումից հետո հայկանաբար հասկացել է, որ դա լինելու բան չէ:

Հրատարակվող՝ արդեն պատմություն դարձած եզակի այս լուսա-

նկարը, որ լրագրող Վարդգես Օվյանի մեկնաբանությամբ առաջին անգամ գետնովել է «Արցախ» թերթում, պիտի ինչ-որ բան հուշեր ոչ միայն վերոհիշյալ քեյին: Եվ ալլահը վկա, ինչ-որ բան կարծես թե հուշել է... Այժմ նա Ստեփանակերտի փոխարեն նակատագրի հեզանքով հայտնվել է Արաքսի ափին գտնվող իր հայրենի գյուղում և «ցայի» բաժակներ է իրար ետևից դատարկում: Չէ որ նկարում անմահացած մեծապատիվ ավազակները նույնպես ժամանակին օժտված են եղել անսահմանափակ իշխանությամբ և ոչ միայն երազել, այլև նույնիսկ քարբառել են հայերին Արցախ-Ղարաբաղից դուրս քշելու իրենց մեծ հաղթանակը եզրափակել Ստեփանակերտում՝ գինվորական շքերթով: Դրա համար նույնիսկ միջոցառումների ծրագիր է մշակվել՝ մոտալուստ «պատմական հաղթանակը» հուռնկայա (ինչպես նկարում է) նշանավորել բաժակներ կոնձելով:

Գիտի՞ պատմաբան Արուֆազ Էլչիբեյը՝ այժմ որտե՞ղ են նրանք, գինուցած դահիճները՝ 1990 թ. հունվարից մինչև 1991 թ. օգոստոսը Ղարաբաղում ուժային իշխանության պարագլուխները՝ Վ. Պոլյանիչկոն՝ Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար, Ղարաբաղում Ադրբեջանի կազմկոմիտեի նախագահ (նկարում՝ աջից առաջինը), Վ. Սաֆոնովը՝ Արցախում համակենտրոնացման ճամբարի ռեժիմ հիշեցնող արտակարգ դրության պարետային ժամի վարչապետությունների գեներալ (աջից երկրորդը), Մ. Ռադակը՝ Ադրբեջանի վարչապետի տեղակալ, Հադրոթի շրջանի աչապես կոչված միկրոկազմկոմիտեի նախագահ և, վերջապես հանրահայտ Վ. Ջաֆարովը՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, Շուշիի կուշրջկոմի առաջին քարտուղար (ձախից առաջինը): Հետաքրքիր է, իսկ որտեղ են վերոհիշյալ սադիստների թիկունքում կախված (Բերդանորի, Հադրոթի հարավ-արևմտյան ենթաշրջանի և Գետաշենի անկումը «հաղթանակի տուն» ազդարարող) գորգի ետևում կանգնած մեծ ու փոքր (ԽՍՀՄ և Ադրբեջանի) նախագահները, որոնց խղճի վրա, մեղմ ասած, նստած է արցախահայության դեմ չհալսարարված ահաբեկչական պատերազմի ողջ պատասխանատվությունը:

Նկարի անփառունակ «հերոսները», որոնց բաժակները թվում է լցված են արյամբ՝ իրենց գոհերի արյամբ, հետևողականորեն իրականացնում էին ոչ միայն Լեռնային Ղարաբաղը հայաթափելու, այն աղքատեցնելու քննադատությունը, այլև Արցախյան հուժկու շարժումը վարկաբեկելու, նրա ակտիվիստներին մեթոդաբար վերացնելու հրեշավոր քաղաքականություն: Ռոբերտ Քոչարյանի համար մահ էր նախատեսվել սեփական տան շենին, Ռազմիկ Պետրոսյանին սպասվում էր

արտի կարգած ուղղափրոսմ, ուսաստանցան բանտից տուն վերա-  
դառնալիս: Բորիս Գաղաթիւնը պետք է մահաւար Արդամում, Վի-  
գեն Գրիգորյանը՝ Ֆիզուլու մեկուսարանում, Արթուր Մկրտչյանը՝ անտո-  
վթարից, իսկ Զորի Բաղաթիւնը դիակը Ստեփանակերտից պիտի տարվեր  
Իջևան և Անուկեր Գաղաթիւնի սահմանից քիչ հեռու: Սակայն թանձ  
Արցախի կորուստները: Նրանք ստեն հնարավոր ու անհնարին ճանա-  
պարհներով իմանում, խոչընդոտում և վիճեցնում էին ռազագործների  
ծրագրերը և միաժամանակ նախապատրաստվում լինել-չլինելու գոյա-  
մարտին:

Հիշենք, որ Վ. Զափարովի իր մահը գտնւմ շտիբելի Գարաբաղում՝  
ուղղափրոսի վթարից, մի խումբ կատաղի պանթոնրիստների հետ,  
Վ. Սաֆրոնովը մխլած գեներալը անեղ դատաստանից խուսափելու  
համար փախուստի մեջ է: Գիշերում է երկարաձիտ ստեղծներով և մի  
տեղում մեկ գիշերից ավելի չի մնում: Վ. Պոլսակիչուն (որին արցախ-  
ցիները կոչում են Պոլ-լախիչկո) և Մ. Ռադանը որձեղ են իրենց երդումը՝  
մինչև կյանքի վերջը մնալ Ադրբեջանում և ուժ չիմայել որս վերջնա-  
կան հաղթանակի համար, զորույնով են Ռուսաստան: Արցախի Հանրա-  
պետության գլխավորական դատախազութիւնը հետաքրքանութուն է սկսել  
և շուտով աշխատի, այդ թվում և Ռուսաստանը կհիմնեն, թե ի՞նչ հրե-  
շակոթ հանցագործություններ են կատարել ազգությամբ ռուս, բայց  
իմաստներում ռուս ժողովրդի հետ ոչ մի կապ չունեցող Պոլ-լախիչկո-Սա-  
ֆրոնով-Ռադան արիկաները: Նրանք պանթոնրիքովի արեղն էին ԽՍՀՄ  
պիտակով պանդխտի մեջ:

Ինքն իրեն հարց տալէ՛լ է թելը՝ ո՛ր չքվեցին գիշատիչներին մեծա-  
րող, նրանց հարատւաց շնորհարո վարքագծից, մանավանդ Ստեփանա-  
կերտում նախատեսված հաղթական պարտի հրապարտությունից ան-  
սահման հրճվանքի մեջ գոյութեղը կորցնում մյուս սեղանակիցները  
(նրանց, բնականարար, Արսերում չեն երևում), օմնակալաները, պարտ-  
կրատները, պանթոնրիստները: Աստուծո կամոք, թե անսարստի, բա-  
ջակոթով արցախցիների հզոր բազկի ուժով նրանք ևս ի չիք դարձան,  
թողնելով իրենց վայրագությունների հետքերը՝ ավերված բնակավայրեր,  
սրբապղծված հուշարձաններ, անմեղ մարդկանց հեղված արյուն:

Մինչդեռ Արցախը կա, կլինի և նրա նորանաճով, բայց իր որդի-  
ների բազկի ուժին ապավինան հանրապետությունը հաղթական քայն-  
րով օր-օրի հզորանալով՝ իր տեղը, կշիռը զգալ է տալիս: Սա է նշանա-  
տությունը և այս իրողությունն հետ, որքան էլ դժգոյար է նրանց համար,  
պետք է հաշիվ նստեն: Այսպէս Ստեփանակերտում «ցար» խմելու

Ըշիբելի փառիարած երազանքը կճնա երազանք: Ստեփանակերտ նա,  
կամ նրա հետնորդները կարող են մտնել միայն ու միայն իրենց կողմից  
խաբարված բարիդրացիական հարստերությունները նորովի հաս-  
տատելու ատաբերությամբ: Տիրիշ կերպ, առաջել ևս գեներ ուժով կամ  
այլ խարդախ ճանապարհով նրանց կրքեր չի հաջողվի: Հետևապես  
ժամանակն է ուշքի գալ, իրատես լինել վերջապես և պատմական ան-  
հրաժեշտությամբ կատարված «դեֆակտոն» ընդունել որպէս «դե փոկտ»:  
«Արմաստան ԵՍՏՈՒՆ», 25 10 1998 թ.

«Армաստան ԵՍՏՈՒՆ», 25 10 98 թ.

### ՍՍՏՄԱՆԳԻ ԶՐԱԲԱՐԸ, ՀԷԿ-Ը ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԱԲՆԶՎՈՂ ԽՆԿԻՐՆԵՐԸ

Հայ (և ոչ միայն հայ) հասարակությունը Ասորականի ջրամբարի  
մասին գիտի որպէս ջրամբար, ուղղեմվարական կարևոր հանգույց,  
Արցախի տնտեսության համար ծանրակշիռ նշանակություն ունեցող  
ներում: Դա ճիշտ է, սակայն թերի է անբողջական չէ: Գործնական,  
տնտեսական, քաղաքական, դիվանագիտական և քաղաքական անու-  
մով անհրաժեշտ է իմանալ նրա կառուցման հետ կապված որոշ մանրա-  
նաւորություններ, որոնք աներկբայորեն կերակրեն Ադրբեջանի իշ-  
խանությունների կողմից ԼՂԻՄ-ի նկատմամբ որդեգրած հալադայաց  
քաղաքականության չքացահարված անուանին ցեցող դրվագներ: Ի  
դեպ, տեղեկությունների հսկայածան ուղղությամբ մեր երկարատև պոր-  
տրտումները դրական արդյունք են տալի և ձեռքի տակ եղան նյութերը  
բավարար հիմք են տալիս խնդրո՞ւ անսրկան խորին պորտլեմի բացա-  
հարտման համար: Սույն հոդվածով միաժամանակ շոշաւատության մեջ  
կորկնեմ դեռ չլիտարկված, չհրապարակված մի շարք փաստեր, տեղեկու-  
թյուններ և փաստաթղթեր, որոնք մեծ կարևորություն են ներկայացնում  
ու զայիս են անբողջացնելու Լեռնային Ղարաբաղի Առաւելյն շրջակի  
գլխատության բաց էջերը:

ԼՂԸ-ն հիմնականում գյուղատնտեսական երկիր է, որի համախառն  
արտադրանքի ստյոծի բաժինը գոյանում է այդ բնագաւախից: Բնակ  
սիււալված չենք լինի, եթե ասենք, որ Առաւելյն հանրապետության  
տնտեսության բախտը մեծապես կախված է բնության բնականութից:  
Երկրորդա դիտարկումները ցույց են տալիս, որ հողն ալաւել  
չաւարտեն վարձակաւաւոյց է լինում չորս տարին մեկ: Մնացածը լինում

է կամ չորային, կամ էլ սուկայի երաշտ: Դժբախտաբար, գյուղացու թափած քրտինքը իզուր կորչում է: Սա այն դեպքում, երբ ելկրամասի տարածքով հոսում են հարցորից ավելի ջրառատ գետեր: Այդ, ներքևում խոր ձորերով ու կիրճերով անվերջ ու անվերադարձ հոսում են Ինչաձ, Թարթառը, Խաչենագետը, Կարկառը, Խոնաշենը, Վարանդան, Իշխանագետը, Ծղպորագետը, Զինգյանակապը և այլ գետեր ու գետակներ: Իսկ վերևում, ափամերձ բարձունքներին ու լանջերին ջրակարտա տասնչակ հարկական գյուղեր են. այգիներ, հազատատիկային, կերակուրտորաների և բանջարաբոստանային ցանքերը, որոնց բույսերը ժամկետից շուտ սկսում են իրենց աշնանային երգը՝ սրտազակած շորթերով աղերսում ջուր...

Սա այն դեպքում, երբ նախկին խորհրդային ամբողջ երկրում, այդ թվում նաև Ադրբեջանում, ծավալվել էին ջրաշինարարական հսկայական աշխատանքներ: Ավելի փաստարկված ներկազայնություն մասնաբերենք կոնկրետ օրինակներ: Խորհրդային իշխանության տարիներին Ադրբեջանում ոռոգովի հողերի տարածությունը քառապատկվել է: Փաստորեն, հանրապետության մշակովի հողերի 80 տոկոսը գտնվում է ոռոգման տակ: Մինչդեռ նրան բուն կերպով ենթարկեցված, ազերի-թուրքերի հորջորջմամբ՝ «Ադրբեջանի անբաժան, անբակտեի մաս կազմող գյուղավ Գարաբաղում» 1923 թ.-ի համեմատությամբ ոռոգովի հողերի տարածքները, ինչքան էլ զարմանալի է, Սարսանգի ջրամբարի գործարկումից հետո պակասել են 21,2 տոկոսով: Բացարձակ թվերով 1923 թ.-ի 22 հազար հեկտար ոռոգովի հողերից 1978 թ. մնացել էր 16,8 հազար հեկտար: Սա այն դեպքում, երբ Արցախ-Ղարաբաղը ջրային պաշարների տեսակետից գերազանցում է Անդրկովկասի մյուս բոլոր վարչատնտեսական կազմավորումներին: Եվ բացի այդ, ինչպես նշում են ուսումնասիրողները, հայկական երկրամասում գետերը սանձելու, որոշակի քանակությամբ ջուր կուտակելու համար անհամեմատ հպատակվոր պայմաններ կան:

Գիտական, պաշտոնական (20—30-ական թթ.) տվյալների համաձայն, ԼՂՀ-ի գետերի ջրային պաշարները կազմում են 1,2 մլրդ. խոր. մետր: Փաստորեն ջրապահովվածությամբ, ինչպես իրավացիորեն գրել է պրոֆ. Ս. Մուսախեյլանը, ԼՂՀ-ում յուրաքանչյուր քառակուսի կիլոմետրին ընկնում է 244 հազար, Ադրբեջանում՝ 81 հազար, Հայաստանում՝ 215 հազար խոր. մետր ջուր: Կամ եթե այս թվերը ավելի պատկերավոր ներկայացվեն, ապա կստացվի հետևյալ պատկերը. մեկ բնակչին ընկնող ջրի քանակով ԼՂՀ-ն 6 անգամ գերազանցում է Ադրբեջա-

նին, 3 անգամ Հայաստանին, 2,5 անգամ՝ Վրաստանին: Իրոք, սա հսկայական հարստություն է, որ անհատուց հոսում, գնում, առատությամբ սալքյուր է դառնում հարթավայրերում բնակվող ազերի-թուրքերի համար:

Անժխտելի, համատ փաստերը մտորելու տեղիք են տալիս: Մի կողմից՝ արգելք էր դրված Ղարաբաղում ջրաշինարարական ծրագրերի վրա, մյուս կողմից՝ տարեցտարի ավելացվում էին գյուղատնտեսական մթերքների արտադրության և պետութեումների պլանները: Մի կողմից անբնդհատ պահանջում ուզում էին, մյուս կողմից՝ փոխարենը՝ ոչինչ չէին տալիս: Հայկական գյուղերը, տասնչակ տարիներ ի վեր չէին ստանում շինանյութեր, խոսացված կերեր, անհրաժեշտ տեխնիկա:

Ինչո՞ւ հաջում դարաբաղիների՝ այս ամենից ստաջառած արդարացի բողբոջները բարին քսելով, իբրև կանոն պիտակավորում էր ճամանակի ոգոն խորթ իզմներով: Պատտախանի համար հարկ չկա սար ու ձոր ընկնել: Այն ազգային խորական երանգ ունեցող շղարշով էր պսրոտված: Էլ ինչպես հնարավոր կլիներ «նայի քոքը» Ղարաբաղում արմատահան անել, եթե ոչ հնարավորին չափ (Սագսանգըշինի օրինակով ստորև ցույց կտրվի) արգելել Արցախի զարգացումը, ոտնահարել հայ բնակչության շահերը, տոնդծել անտանելի վիճակ և դրանով իսկ արագացնել հայերի դուրամդոմը: Ահա ազերիների՝ ԼՂԽՄ-ի հանդեպ միտված վայրենի քաղաքականության ելակետը:

Հիմա դառնանք Սարսանգի խնդրին: 60-ականների սկզբներին ԼՂԽՄ-ում երևան եկան մի խումբ համարձակ, բանհմայց երիտասարդ մասնագետներ, որոնք փորձում էին շտկել, փոխել հայրենի երկրամասի ծոված ճակատագիրը: Նրանց մեջ էր նաև գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Սերգեյ Ասլանյանը: Իր տնտեսական կարծիքները ունեցող գիտական թեզերով, մանավանդ հսկայակարկտային կաշանքների տեղադրման ժամանակ ցուցաբերած անզիջում հարցադրումներով նա գրավել էր Մոսկվայի, Մոլդովայի, անգամ Զրիի և այլ լեռնային երկրների գյուղատնտեսության հարցերով զբաղվող մասնագետների ուշադրությունը: Օգտվելով իր ունեցած լայն կապերից, Ասլանյանը մի քանի կարող մասնագետների աջակցությամբ հիմնավորում և կուտակցության մարզկոմի բյուրոյի հավանությանն է արժանացնում 18 կետից բաղկացած ջրաշինարարական մի ընդարձակ ծրագիր: Այն 8-րդ հնգամյա պլանի մեջ մտցնելու մտադրությամբ ուղարկում ԽՄԿԿ Կենտկոմ և ԽՍՀՄ գյուղնախարարություն: Կենտկոմը պահանջում է Ադրբեջանի կոմկուսի կարծիքը: Վերջինս էլ իր գեշ, թուրքավարի սովորու-

թյան համաձայն, ծրագրի բուն պատճառը, նպատակը, անհրաժեշտությունը մի կողմ թողած, սենտուն հետաքրքրություն է ցուցաբերում ծրագրի հնարավոր հետևանքների մասին: Իսկ հետևանքը Ղարաբաղի գյուղատնտեսության շեշտակի վերելքն է: Հայերը բնականաբար կապրեն մարդավարի և չեն լքի իրենց բնակավայրերը: Սա, սակայն, համահրճումն չէր «Ղարաբաղը առանց հայերի» քաղաքականությանն ոչ մի պարագրաֆի հետ: Ուստի հաքուն պահանջեց և հասավ նրան, որ Ս. Ապանյանը, որն աշխատում էր որպես ԼՂ կուսմարզկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչ, ազատվի աշխատանքից և տեղափոխվի Երևան: Այսուհանդերձ, ազերիներին հրապուրում է «դաշնակ նացիոնալիստների» ներկայացրած ծրագրի միայն մեկ կետը՝ Թարթառի՝ այժմյան Մարսանգի ջրամբարի կառուցման գաղափարը, որովհետև Թարթառի ջրերի միայն 12 տոկոսն էր օգտագործվելու ԼՂԽՄ-ում: Մնացածը հատկացվում էր Մարտակերտին հարակից աղբբեշանական շրջաններին:

հաքուն, սակայն, գտնում է, որ նույնիսկ 12 տոկոսը շատ է: Ահա թե ինչ է ստել Ադր. ԽՍՀ նախարարների խորհրդի այն ժամանակվա նախագահ Ալիխանովը ջրամբարի կառուցման հարցով, իր մոտ՝ կառավարական մակարդակով հրավիրված խորհրդակցության ժամանակ ունեցած ամփոփիչ ելույթում. «Թարթառը շիհի կառուցման գաղափարն ընդունում ենք, բայց նկատի ունեցեք, որ ԼՂԽՄ-ին ջուր կտանք կիսով չափ, այսինքն՝ ջրամբարում կուտակվածի 6 տոկոսից ոչ ավելի: Դե հիմա գնացեք կառավարության առաջարկը ինչպես հարկն է հիմնավորեցեք»: Գնացին, վերանայեցին, հիմնավորեցին, տվին-ստան և վերջում ջրամբարի նախագծում և նախահաշվում էական փոփոխություններ կատարեցին: Ինչպես հետագայում խոստովանել է նախագծի գլխավոր ինժեներ Հենրիկ Իսրայելյանը, ինքը առաջարկել էր ջրամբարի պատվարը կառուցել է Թարթառ և Թրղե գետերի միախառնման տեղում: Հսկայական ամառի խոր կիրճերում կկուտակվեր մոտավորապես այնքան ջուր, որքան այժմյան Մարսանգի ջրամբարում: Եվ, որ ամենից կարևորն է, այդտեղից ջուրն ինքնահոսի կհասներ Մարտակերտի շրջանի նախալեռնային Մաղալուզ, Մեծշեն, Մոխրաթաղ, Ներքին Հոռաթաղ և այլ գյուղերը և ոռոգովի կղաղնային ջուրը 12 հազար հեկտար վարելահողեր: Միաժամանակ հիդրոհանգույցների սպասարկման անձնակազմի համար կվերականգնվեր պատմական Խալվաթաշեն բնակատեղին: Սակայն «ինձ հանդիմանելով պարտադրեցին, որ ես պատվարի տեղը ընտրեի Մարսանգի միջնադարյան կամուրջի տեղում: Արդյունքում, — դառնությամբ հիշում է գլխավոր ինժեները, — ջրի տակ

մնացին Հաթերք-Դրմբուն ենթաշրջանի հայկական սակավահող տնտեսություններին պատկանող շուրջ 1500 հեկտար ջրովի, բերրի հողերը, 15-ից ավելի հայկական պատմամարտարապետական հուշարձաններ և տասնյակ արտադրական բնույթի շինություններ»: Դեռ ավելին, բարձր սարերի արանքում պարփակված ջրամբարից առանց հզոր պոմպակայանների անհնար է ջուրը բարձրացնել ինչպես ախամերձ, այնպես էլ Մարտակերտին հարող բնակավայրերը:

Սա դեռ բոլորը չէ: Եթե ջրանցքների սնիչ գլխամասային հանգույցը՝ «Փոքրիկ Մովսիկը», կառուցվեց Գետին գոմեր բնակավայրի մոտերքում, ապա ջրանցքներից մեկը կձգվեր դեպի Մարտակերտի մատուցները, իսկ մյուսը՝ Թալիշի ուղղությամբ, դրանով ջրովի կղաղնային ևս 7 հազար հեկտար հողեր: Բայց թմրած չէին Ադրբեյջանի ղեկավարները: Ալիխանովի գորավոր միջամտությունից հետո գլխամասային հանգույցը կառուցվեց բավականին ցածրադիր մասում, Հայրենական պատերազմի տարիներին կառուցված ՀԷԿ-ի, լուցկու ֆաբրիկայի, կաուչուկի և փայտի վերամշակման գործարանների և նրանց բանվորների բանավան Մատաղիսի տեղում: Նախ հայկական մեկ բնակավայր ևս ընդմիջտ ընկղմվեց ջրի տակ և, որ ամենից անհանդուրժելի էր, ջրանցքներն անցկացվեցին 7—8 կմ ավելի ցածրադիր աղբբեշանական շրջաններին հարող տարածքով, որի հետևանքով Մարտակերտի շրջանը զրկվեց ջրանցքներից օգտվելու լայն հնարավորություններից: Այսպիսով, ԼՂ-ի տարածքում, նրա կապիտալ ներդրումների հաշվին և արցախցի հաշի նարարների ուժերով կառուցված ջրամբարը ոչ միայն չնպաստեց, օգուտ չբերեց երկրամասի գյուղատնտեսության գարգացմանը, այլ ընդհակառակը, չարիք դարձավ Մարտակերտի շրջանի բազմաթիվ կողեկտիվ և պետական տնտեսությունների համար: Նրանք ոչ միայն ընդմիջտ կորցրին ջրամբարի և ջրանցքների տակ մնացած հազարավոր հեկտար հողեր, տասնյակ հուշարձաններ, բազմաթիվ արտադրական և բնակելի շինություններ, այլև, որքան էլ գավելշտական է, գրկվեցին Թարթառի ջուրը թեկուզ նախկին մակարդակով օգտագործելու հնարավորությունից, որի հետևանքով 5,2 հազար հեկտար ջրովի հողեր դարձան անջրդի:

Ժամանակին, 1966 թ., այս ամենը կանխագայով մոսկվաբնակ նախկին մատաղիցի Ա. Մովսիսյանը, որը գրադեցնում էր ԽՍՀՄ գյուղնախարարության առաջատար վարչություններից մեկի պետի պաշտոնը, 1919 թ. կուտակության անդամ մեծշենցի Ջ. Աբրամովը և

ուրիշներ (թվով 11 հոգու ստորագրությամբ) նամակ-բողոք հղեցին երկրի ղեկավարությանը՝ խնդրելով շտկել թույլ տված, հայրենի շրջանին մեծամեծ վնասներ բերող սխալները: Սակայն Մոսկվան այս անգամ էլ արհամարհեց դառաբաղցիներին և «գործը քննելու» համար վերադարձրեց Ադրբեջանի իշխանություններին: Վերջիններս էլ, շուրջ գզալով նման վատաբանությունից, ավելի վախացան և անմիջապես գործի անցան: Դա առաջին երթին արտահատվեց նրանում, որ ինքնավար մարզին հիմնովին զրկեցին տեղական մանր-մունք, կոլտնտեսությունների սուղ միջոցների հաշվին ջրաշինարարական աշխատանքներ կատարելու, այդ թվում, նաև արտեզյան ջրհորներ կառուցելու իրավունքներից: Տեխնիկա, շինանյութեր չէին տալիս, պետական կապիտալ ներդրումներ չէին հատկացնում, հաքլի նախագծային ինստիտուտները ԼՂԻՄ-ի պատվերները չէին ընդունում: Անգործության մատնված ջրաշինարարները, ցալոք, թողնում, հեռանում էին Ղարաբաղից: Սա, արդեն հաքլի սրտովն էր, նրա բուն Բոլառակը:

Ինչևէ, վերադառնանք Սարսանգին: Ի՞նչ են իրենցից ներկայացնում գործող ջրամբարը, ՀԷԿ-ն ու գլխամասային հանգույցը: Ինչպե՞ս կարելի է դրանք ստավեպագույնս ծառայեցնել երիտասարդ հանրապետությանը: Այս ի՞նչ հզոր գործոն է Սարսանգը, ավելի ճիշտ՝ Թարթառը, վաղ թե ուշ կաշանայիք Արցախ-Ադրբեջան միջսլետական, տնտեսական և քաղաքական փոխհարաբերություններում: Ի վերջո, Սարսանգով արդյո՞ք սպասվում է Թարթառի օգտակար գործողության գործակիցը, թե նա դեռ ունի չօգտագործված աղ հնարավորություններ, որոնց նպատակային իրագործման դեպքում ԼՂՀ-ն ոչ միայն ոտքի կենազնի, այլև տնտեսության բնագավառում հրաշքներ կգործի, ինչպես ուզվի դաշտում: Այս հարցերը հրատապ լինելով հանդերձ, ունեն Արցախի հայոց երկրորդ պետության կայացման համար հույժ կարևոր, առաջնակարգ նշանակություն:

Տեղեկանքի համար նշենք, որ Սարսանգի ջրամբարում կառուցումն սկսվել է 1965 թ.: Ծինարարությունը ձգձգվելով տևել է 12 տարի և ավարտվել 1977 թ.: Ջրամբարն ունի 12—14 կմ երկարություն, 1,5—2 կմ լայնություն, ամբարտակի բարձրությունը՝ 125 մետր է, իսկ ջրատարողունակությունը՝ մոտ 0,5 մլրդ. խոր. մ: Սա Անդրկովկասի ամենամեծ ջրամբարներից մեկն է, որի ջրերով ոռոգվում են ավելի քան 150 հազար հեկտար մշակովի հողեր:

Սարսանգիէկը շահագործման հանձնվեց 1976 թ. դեկտեմբերի

24-ին: Ջրամբարից սկիզբ առնող 386 մ երկարությամբ թունելից սկսող երկու տուբբիններով կաշանն արտադրում է շուրջ 50 հազար կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Մինչև արցախյան հզոր շարժման պոթենցիալը, այն օգտագործվում էր հիմնականում ադրբեջանական Միր Բաշիրի, Ադդամի, հարդայի, մասամբ Մարտակերտի շրջաններում:

Հայտնի է, որ ազերի թուրքերը Ղարաբաղի հայոց բանակի հուժկու հարվածներից ճողոպտելու ժամանակ շարքից հանել էին նաև ՀԷԿ-ը: Ծրջափակման, մանավանդ սրտերազմի պայմաններում հայտնված նորաստեղծ հանրապետության համար հրամայական, կենսական անհրաժեշտություն էր շուտափույթ վերագործարկել Սարսանգիէկը և էներգիա մատակարարել մարաբաղաքին ու շրջաններին: Արցախի շինարարներին օգնության ձեռք մեկնած Հայէներգացանցչին, Հայէներգակարգավորում և Հայէներգոյի վարչության փորձառու կոնկրետների համատեղ ջանքերով 1993—1994 թթ. կարգի բերվեց ՀԷԿ-ը, տեղադրվեց 250 հեկտարում, անցկացվեցին ավելի քան 200 կմ երկարությամբ 110 և 40 վոլտանոց գծեր, կարգավորվեց մայր գծից ճյուղավորվող համակարգը և գյուղական բնակչությունը ապահովվեց էլեկտրաէներգիայով:

Այսուհանդերձ, հարկ է նշել, որ ինչպես ջրամբարը, նույնպես էլ ՀԷԿ-ը շահագործման հանձնվեցին կիսատ-պոստ, նախագծից շեղումներով: «Խնայված», իրականում հսկիչտակված միջոցներով (մոտ 80 միլիոն ոտքի), ինչպես վկայում են փաստաթղթերը և ակնառտեսները, կառուցվեցին հաքլի մետրոյի կալաններից մեկը, Միր Բաշիր, Ադդամ, Բերաջար քաղաքներում բազմաթիվ սոցիալական, մշակութային և խրախճանքային բնույթի շինություններ:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչպե՞ս է գոյացել այդքան մեծ գումարը: Նախագծային ինչ աշխատանքներ չեն կատարվել: ՀԷԿ-ի կողապատեղից մեկը գրեթե կյամ է խիստ թեքադիր լանջին, որտեղից թափվող բարերը հասնում են կայանին: Այս տարածքը չի բետոնաբարտվել, հարկ եղածի պես, չի պատնեշվել: Վթարային ջրթողի շրջապատը չի բարեկարգվել, որի պատճառով ջրթողի դիմաց այնքան սպառներ են գոյացել, որ ջուր բացթողնելու դեպքում հեղեղվում է կայանի բակը:

Ջրամբարը չի կարող հավաքել նախատեսված կես միլիարդ խորագարի մետր ջուրը, քանի որ ամբարտակի բարձրության մի մասը չի կառուցվել և ամրապնդվել: Պակաս է կուտակված խնամազաքարը: Չի մաքրվել նաև գետի նախկին հունը, որտեղով հոսում է ամբարտակի սկզբնորոշ ջուրը: Չեն տեղափոխվել հուշարձանները, սևահողային շեր-

տերը: Չեն պատճենվել ջրամբարի ավերի ստանձին հատվածները: Տեղ չեն հասել, ասել կուզի, 'Լարաբաղ չեն բերել ջրամբարի կառուցման միջոցներով գնված մեծ քանակությամբ տեխնիկան, շինանյութերը: Այսպես է «տնտեսովել, խնայվել» 80 միլիոնը:

Ի դեպ, Սարսանգզրշինի ամբողջ համալիրի նախնական նախահաշիվը կազմում էր 70 միլիոն ռուբլի՝ ԼՂԻՄ-ի գրեթե հնգամյա բյուջեի չափ: Սակայն հետագայում այն վերանայվելով, վերահաշվարկվելով, հավելագործումներով, հափշտակելով, վերադասին կաշառելով և ինչ-ինչ մտացածին վթարներ, աննախատեսելի խցանումներ վերացնելու համար կազմած կեղծ ակտերով եռապատկվեց ու դարձավ եռանիշ թիվ՝ 210 միլիոն: Դեռ ավելին՝ այդ գումարը գրչի մի հարվածով հետին թվով մտցվեց ԼՂԻՄ-ի խղճուկ բյուջեի մեջ և ապա շլացնող ցուցանիշ՝ որպես դարաբաղցիների նկատմամբ «Ադրբեջանի դեկալարների հայրական հոգատարության» վկայություն, նետվեց քարոզչական մեքենայի երախը: Սա այն դեպքում, երբ հայկական մարզի՝ ո՛չ իշխանությունները (երանք մեկուսացված էին), ո՛չ էլ որևէ կազմակերպություն կամ ֆինանսական աշխատող, քնավ առնչություն չունեին ոչ շինարարության և ոչ էլ հիշատակված խոշոր կապիտալ հատկացումների հետ: Ինչպես կարող էին դարաբաղցիները տնօրինել Սարսանգզրշինին հատկացված միջոցները, երբ հայտնի է, որ շինարարության, հետագայում նաև շահագործող անձնակազմի դեկալարությունը, նախագծերով նախատեսված Մարտակերտի շրջկենտրոնի փոխարեն իր համար մշտական նստավայր էր ընտրել 20—25 կմ հեռավորության վրա (ԼՂ-ի սահմաններից դուրս) գտնվող Միր Բաշիր քաղաքը և ֆինանսական բոլոր գործառնությունները կատարվում էին տեղում՝ հաքվին ենթարկվող բանկի միջոցով: Եթե սրան էլ ավելացվի նաև այն, որ ԼՂԻՄ-ի տարածքում ծավալված հսկա շինարարության և պատմիրատուն, և պատվերակատարը դարձյալ գտնվում էին ինքնավարության մատուցներից շատ հեռու և իրենց ուզածի պես տնօրինում ու 'Լարաբաղի հաշվին հարստություն էին դիզում, ապա ընդհանուր պատկերն ավելի բան հասկանալի կդառնա:

Սույն հողվածում բերված և նաև չբերված փաստերը միանշանակ վկայում են, որ Սարսանգզրշինի համալիրի օբյեկտների շինարարությունը, շահագործումը զանազան խարդախանքներով, փաստացի, օգտագործվեցին որպես հայաթափման լծակ և միաժամանակ պատժամիջոց, հաքվին շրջանցելով Մոսկվայի օգնությամբ հարցեր լուծելու դարա-

բաղցիների փորձերի և Ադրբեջանի կազմից դուրս գալու նրանց ըմբռնացումների դեմ: Եվ բոլորովին պատահական չէ, որ ոչ ԼՂՀ-ի արխիվներում և ոչ էլ վիճակագրական վարչությունում Սարսանգզրշինի մասին որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն չգրվեցին: Դրանք գտնվում են հաքվում և մինչև վերջերս պահվում էին լոթ փականի տակ:

Հիմա, տեղի սղության պատճառով, ընդհանուր գծերով ներկայացնենք, թե առաջիկա տարիներին ինչ լուրջ ակնկալիքներ են սպասվում Սարսանգի համալիրից:

1. Արդեն կատարվել են տեղանքի որոնողական, նախագծային որոշակի աշխատանքները՝ ջրհան կալանների միջոցով ջուրը ափամերձ լանջերն ու զոգավարությունները բարձրացնելու և ռոտորի դարձնելու շուրջ երկու հազար հեկտար հողահանդակներ:

2. Խոսակցություններ են գնում, և, հավանաբար, լուրջ քննարկման առարկա կդառնան Սարսանգում և գլխամասային հանգույցում ձկնաբուծությամբ զբաղվելու խնդիրները:

3. Որոշակի հաշվարկներ, ուսումնասիրություններ են կատարվում անտառապատ գեղատեսիլ լեռներով պարուրված, իսկ և իսկ աստճո պարզև ջրամբարի ավերին հանգստյան, առողջության և տուրիզմի գոտի ստեղծելու ուղղությամբ:

Սա մոտակա տարիներին, իսկ հեռանկարում, երբ արդեն հաստատուպես կհարատևի, կհարստանա Արցախը, անշուշտ, անհրաժեշտ կլինի ջրամբարի ամբարտակը հասցնել նախագծային միջին, այսինքն բարձրացնել 5 մետրով, սրպեսզի հնարավոր լինի ջրամբարում կուտակել ևս 150 մլն. խոր. մ ջուր, և ապա Թարթառի վրա կառուցել ևս երկու ջրամբար (մեկը՝ հանրահայտ Ջրաբերդի մոտ, մյուսը՝ Գետին գոմեր գյուղակին հարող ձորակում) և չորս ՀԷԿ՝ (Մատաղիսում, Կարավաձորում, Կաթողիկոսասարի ստորոտում և Ջրաբերդի մոտակայքում): Այս դեպքում նախ կսանձվեն Թրդեի ջրերը, ապա կամբարվեն հարևան հանրապետությանը տրվելիք ջրի ամբողջ պաշարը և ջրովի կդառնան Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան հատվածի գրեթե բոլոր (40 հազար հեկտար) հողատարածությունները և կարտադրվի (ինչպես նախանշել էր 1920-ական թթ. ԼՂ-ի բնական պաշարները ուսումնասիրող արշավախմբի ինժեներ Փաշայանը) 250 մզվտ էլեկտրա-Լճերգիա: Այն ժամանակ, կարծում ենք, անհամեմատ հեշտ կդառնա լուրջ խոսակցություն ունենալ նախօրվ հոխորտացող խարդախ հարելվանի հետ: Քանզի նրա 140 հազար հեկտար լավագույն հողերի ռոտգման մենաշնորհը՝ շլյուզների անկիվ դարաբաղցիների ձեռքում կլինի:



Այդպես, վիզայի նախաձեռնումը հնարավոր է հաջողորմորեն կիրառել միայն «Գեներալ Գրանտ» ընդհանուր համաձայնագրի կնքումը և միայն այդպիսով կարելի է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համաձայնագրի կնքման համար: Այս պահին առաջնորդ խոսակցությունները և, որից կախում ունի, համաձայնագրի կնքումը:

«Ազատամարտ», № 20, 10 1994 թ.  
«Գ. Հանրապետություն», 19 10 1994 թ.

Մ ա Ն Ո Ւ Ք Ո Ւ Ա. Սույն հոդվածը տպագրվել է նաև ամսագրերում, ամսաթերթերում և ֆրանսերեն: Հոդվածի նյութերը հավաքելու ընթացքում ինձ արժեքավոր տեղեկություններ է հասարակ ծննդով միջազգային, հայրենասեր, հայրենասեր, հայրենասեր Ազատ ինդիվիդուալներ, որին հաջանում եմ իմ երախտագիտությունը:

### ՏՈՂ. ԱՐՅԱԹԻ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԳԱՐՊԱՍԸ

Տողը ԼՂՀ Հայրության շրջանի ամենամեծ և ամենահինագույն բնակավայրերից մեկն է: Այն հիշատակվում է 9-րդ դարից, ստորագրված բնակավայրերի դեմ հայ ժողովրդի միայն պայքարի ժամանակներից:

Գտնվում է բնության անձեռնակերտ մի չքնաղ հովտում, որը գրավորության մեջ հիշվում է մեր օրվա Իշխանագետի հովիտ, մեր օրվա թիկունքում՝ Տողաձոր: Գողի նշտվածի և հարավային մասնաշրջանում հոսում են Իշխանագետի և նրա վտակը Թաղաձոր: Թիկունքում՝ Տողաձորն է, որը կոչվում է նաև ճգնաժամի լեռ, իսկ գոյություն ունի, արևելյան կողմը համեմատաբար հարթ է: ձգվում է մինչև Արաքսի ակունք: Տողի ձախ մասում՝ ցածրադիր լեռնաշղթայի փեղեղներ են գտնվում Մեծ Թաղեր, Ազոխ, Գրավորիկ, Սարաբա, իսկ աջում՝ Մոխրեղեն, Թաղաձոր, Հակաբու, Ծրուկ, Մաշաձոր և Զրախու հավաքված գյուղերը: Թիկունքում՝ Գուշակների դեմ-դիմաց լաճերի վայր փակված է հրանավոր Տուսի գողը: Հողն արտադրել է, կյանք մեղմ, մարդկանց կրակի տեղությունը երկար: Լեռներն ու նրանց լանջերը աստիճանաբար են անտառներով, հովիտներն ու գոգավորությունները ապրիլներով:

Տողում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ ու բազմազան հուշարձաններ, որոնց մեջ նշանավոր են Գողաձոր (10—13-րդ դար), Ծաղկաձոր (7-րդ դար), Կարեկավանք (12-րդ դար), Ծաղկավանք, Կախարդանք (16—17-րդ դար), Ազոխի քարեդարձան անձեռնակերտ կոթողներ, Գող, Գող, Վանեի բերդ-ամրոցներ (9—18-րդ դար), Հայկազն, Տախ և Ծղուսիսայ գողաձորներն ու նրանց կամուրջները (13—18-րդ դար): Տողաձորի փնակաքանակ հա-

պատ տեղեկությունները վկայում են Տողի պատմահնագիտական և ազգագրագիտական մեծ արժեքը:

Ինչպես նշանակալից մշակույթի հուշարձաններն, այնպես էլ մասնագիտական սկզբնաղբյուրները միաժամուռ վկայում են, որ Տողը 18-րդ դարում բերդաքաղաք է եղել, բաղկացած 1500 ճիվղ, շուրջ 10 հազար հայ բնակչությամբ: Բնակավայրի աստվղ նշանակալից շրջանում, հատկապես Գիզակի Մեղիք Եզանի և նրա քաջ որդի Մեղիք Եսաբու օրը, մեղիքանիտ Տողում միաժամանակ պատարագ է մատուցվել, ռազմաճակատները կործանվել չորս եկեղեցիներում ու մեկ վանքում, որոնք և ամբողջական տեսքով պահպանվում են:

Այն էլ ասենք, որ Տողում էին հաճախակի հավաքվել Արցախի մյուսիք լեռնաստանի մեղիքները, հոգևորականները, խորհրդի նախկին և միջանց աստար կանգնելու հավատարմության երդում տվել: Հարկավ, էթնո Գիզակի մեղիքությունը մեծ հարգանք էր վայելում, այսպես Տողը համարվում էր Արցախի մեղիքությունների միասնությունը դարբնող կախարատելիներից մեկը:

Հայոց պատմության մեջ Տողը հիշատակվում է նաև իր ռազմավարական և ազատագրական պայքարի հարուստ տարեգրությամբ: Հիշենք, որ այստեղ, այս գյուղի Քրիշ բերդում էին 9-րդ դարում սահաղեղ Եսայի իշխանի հրամանատարության տակ գտնվող Արցախի ինքնապաշտպանական ջոկատները և մեկ տարվա ընթացքում 28 անգամ կոտորել արաբ զորավար Բուղայի 200 հազարանոց բանակի գրոհները: Եվ նաև, ինչ դար հետո, այստեղ, այս գյուղում 33 տարի իշխել է Ղաթաբաղի ամենահռչակավոր մեղիքներից մեկը՝ մեղիք Եսային և բազմաթիվ հայրենասերներ տարել թշնամիների, այդ թվում 4 անգամ նաև Շուշի իրրահին իսկի նկատմամբ: Վերջինս երկու անգամ երջանիկ պատմականությամբ փրկվել էր Եսայու սրի անարկու հարվածներից: Այստեղ, այս գյուղի թիկունքից էր 1920-ական թթ. սկզբներին բազմամիջանակ Թախ, Գերեզին Նոգենի զինակիցը, համարձակ հարձակումներով պաշտպանում մատնել Գիզակի և Վարանդայի գավառները՝ հերթում հարձակումներին և վերահաս կործանումից փրկել ամբողջ Հարավային Արցախը: Եվ վերջապես, այստեղ, այս գյուղում է մեկ շարք հյուրընկալել Հայոց կաթողիկոս Արքայապետ Կրետապետ, որը մեղիք Եզանի հետ 1736 թ. գարնանամուտին մասնակցել էր Նադիր շահի ռազմարության արարողությանը:

Այն էլ ասենք, որ Տողը ազգային արժեքների ավանդապահությամբ մի կատարյալ ազգագրական թանգարան է:

Տողաձորում մի գեղեցիկ՝ ընդօրինակման արժանի սովորույթ կար, երբ համագյուղացիներից որևէ մեկը բանակ էր մեկնում, նրա պատվին պապը, կամ նրան փոխարինողը՝ տան մեծը, նախորդ օրը մի թթենի կամ ընկուզենի էր տնկում: Դարերի ընթացքում ծառերը շատանում, այգիներ են դառնում ու ծածկում գյուղամերձ ապաստած դարավանդները, քարքարոտ, լերկ լանջերը, գետափները: Ոչ հեռու անցյալում Տողաձորն ամբողջապես թաղված է եղել թթենու դարավոր այգիների, ընկուզենու պուրակների մեջ:

Իմ հայրենի երկրամասում բանակ ջգնացած տղամարդուն աղջիկ չէին տալիս: Տողաձորում, ինչպես նաև Արցախում հնուց ի վեր զինվորական ծառայության չմեկնած տղայի մասին ասում էին, թե նա ոչ արհեստավոր է, ոչ կարդացած և ոչ էլ բանակ գնացած... պարզապես անգալավոր է՝ թերարժեք տղամարդ: Սա մեկ անգամ ևս հիշեցնում է, որ այս երկրամասում դարեր շարունակ զինվորական ծառայությունը, հայրենիքը պահել-պաշտպանելը մեծ հարգանք է վայելել, տղամարդու համար դառել է կյանքի խնդիր և համարվել սուրբ պատիվ:

Արցախում կարելի է հանդիպել հազարավոր խաչքարեր, տապանական կոթողներ, որոնց վրա պատկերված են զինվորներ, հեծյալներ, հաղթանակից տուն դարձող զինվորներին հանդիսավոր դիմավորելու պատկերներ:

Դարերի ընթացքում հաղթանակով կոփված մարդկանց ժառանգները հավատարիմ մնացին իրենց պապերի ավանդներին: Այդ են վկայում Տողաձորի հերոս պաշտպանների անօրինական սխրանքները, արիությունն ու անկոտորում կամքը: Այս մասին խոսք կլինի քիչ հետո:

Ուրիշ սովորություն էլ կար այս ձորակում: Երբ ծնվում էր երեխան, նրա հարազատները հարսանիքի պատրաստության համար (150, 200, 300 և ավելի լիտր տարողությամբ) կարասները, հորերը կամ տակառները լցնում էին կարմիր գինի և 10—20 տարի հողի տակ պահելուց հետո բացում: Տարիների ընթացքում գինին մաքրվում, պարզվում և դառնում էր «անուշ, անվնաս»: Ահա այսպիսի գինի էր մատուցվում հարսանյաց հանդեսի մասնակիցներին, պատվավոր հյուրերին, տուն դարձած զինվորներին:

Այո, անչափ մեծ է Տողի պատմական, ազգագրական և ռազմավարական նշանակությունը: Տիրել Տողին՝ նշանակում է տիրել ամբողջ Հարավային Արցախին: Ահա թե ինչու այս կարևոր բնակավայրի պաշտպանությունը մշտապես գտնվել է Արցախի տերերի ուշադրության կենտրոնում: Եվ, բնավ, պատահական չէր, որ օտար հորդաները

Արցախի վրա ասպատակելիս, առաջին հերթին գրոհում էին Տողի ուղ-լությունը:

Խորհրդային իրավակարգի տարիներին Տողը հայաթափելու և այն ադրբեջանցիներով բնակեցնելու խնդիրը մշտապես եղել է Ադրբեջանի ղեկավարների հատուկ հոգածության առարկա: Այսամ Միրջափար Բաղիրովից, վերջացած՝ Էլչիբեյով, նրանք բոլորը իրենց պարտքն են համարել բացահայտ ու ծայտյալ այցելել Տող, տեղում թուրքական համայնքի հետ մտքեր փոխանակելու, գյուղն արագորեն թուրքացնելու իրենց դիվային ծրագրերը հնարավորին չափ արագացնելու համար:

Արդյունքն իրեն երկար սպասել չտվեց: Այս փառավոր, պատմական բնակավայրը, որտեղ 1912 թ. ապրում էր 2842 հայ, խորհրդային իշխանության տարիներին, Ադրբեջանի հայահալած քաղաքականության հետևանքով խեղճացել, խոնարհվել և արագորեն հայաթափվում էր: Ինչպես նշեցինք, Բաքվի թելադրանքով Տողը բնակեցվում էր քոչվոր թուրքերով: Բնականաբար, կարող է հարց առաջանալ, իսկ ովքեր, ինչ արդարացուցիչ հանգամանքներով և որտեղից էին բերել Տողի թուրք-ազերիներին: Չէ՞ որ այն եղել է Դիզակի մեյլիքության վարչական կենտրոնը և այնտեղ ընդհանրապես, Տողաձորում մասնավորապես, թուրքերը երբեք ոտք չեն դրել: Տողի այսպես կոչված թուրքերի մի փոքր մասը, 11 ընտանիք (38 հոգի) ինչպես ցավալի է խոստովանել, հավատաստիոս հայեր են, որոնց նախնիները Մելիք Եսայու մահից հետո 1780-ական թվականներին Շուշի Իբրահիմ խանի կողմից բռնությամբ, մահմեդականացվել են: Ըստ որում դրանց մեջ կային նաև Մելիք Եզանյան տան ներկայացուցիչներ: Մնացած գերակշիռ մասը՝ 1943—1953 թթ. դարձյալ բռնի կերպով Խմշիի շրջանի Թալլբխանլու կոչվող ղշաղից բերել բնակեցրել են Տողում: Բնակեցումը կատարվել էր Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Մ. Բաղիրովի նախաձեռնությամբ, ԼՂ կուսմարզկոմի առաջին քարտուղար Ե. Գրիգորյանի եռանդուն ջանքերով, ՊԱԿ-ի հատուկ հսկողությամբ, Ստեփանակերտի սյն ժամանակվա այսպես կոչված «աչքաբաց» մտավորականների բար անտարբերության ու հանդուրժողականության պայմաններում:

Համուն ճշմարտության ասեմք, որ թալլբխանլուցի քոչվորների նկատմամբ կիրառվել է քաղցրաբլիթի և մտրակի տակտիկա: Ազգբուն նրանք, բնավ չէին ցանկանում բնակվել Տողում, քանզի այստեղի քաղաքատիպ, լայն բացվածքով պատշգամբներով երկհարկանի տները և շնդհանրապես գյուղի արդյունաբերական ձեռնարկությունները, սպա-

հատակ փողոցները իրենց համար անսովոր էին և նույնիսկ վախենում էին աստիճաններով բարձրանալ և աներկյուղ մտնել տախտակապատ առաստաղներով սենյակները: Նրանց թվում էր, թե առաստաղը կծափ-վի իրենց գլխին: Դրա համար էլ շատերը իրենց նախնիների սովորույթով վրաններ էին խփում ինչպես բակերում, այնպես էլ պատշգամբներում և երկար ժամանակ բնակվում դրանցում: Եկել էին 43, բայց արագորեն աճելով շատացել և դարձել են 150 ծուխ: Սկզբնական շրջանում դպրոցահատակ երեխաներից միայն 11 հոգի էին հաճախում դպրոց, այն էլ Ֆիզուլի քաղաքում, իսկ դարաքաղցան շարժման նախօրյակին գրեթե զավթել էին Տողի միջնակարգ դպրոցը և ունեին գու-գանեռ դասարաններ: Ոչխարից բացի ուրիշ ոչ մի գործի հետ գլուխ չէին դնում: Անգամ զարմանում էին հայերի համատության վրա, որ այն-քան մեծ աշխատանք են թափում աշգիներ աճեցնելու համար: Մի առան-ձին հաճույքով էին կացնահատում իրենց բակերի և կոտնտեսության այգիների պտղատու ծառերը: Բաղիրովին փոխարինած Ի. Մուստաֆանի օրոք, հայերին տնտեսական ծանր դրության մեջ դնելու և նրանց հայրենի բնակավայրից դուրս սղելու նպատակով սկսեցին ցամաքեցնել տողեցիների ապրուստի լրացուցիչ աղբյուրները: Փակեցին տեղական հումքով աշխատող շահութաբեր մետաքսակարծական ֆաբրիկան, տեղադրվումբինատը, կոմիսիոնի և այլ արտադրական մանր ձեռնարկություններ, որոնցում բացառապես աշխատում էին 250 հայ բանվորներ: Եվ ապա դատաբնկչական մարմինների հսկողության տակ վերացրին հայերի հիմնական գրադմունքի և եկամտի ճյուղերը՝ աչգե-գործությունը և մեղվաբուծությունը: Կտրատեցին և արմատախիլ արե-ցին թթի և պողատու աշգիները: Աչափսով, դարավոր շահութաբեր այգիները վերածվեցին թոբբերի ոչխարների համար արտառլայրերի: Եթե մինչև քոչվորների բնակեցումը Տողն ուներ շուրջ 200 հեկտար շահ թթենու, 150 հեկտար խաղողի և 120 հեկտար այլ պտղատու աշգիներ, ապա այժմ այդ երեքների փարթամ աշգիներից մնացել են հատուկեճու ծառեր: Իզուր չէ ասված. «Թորքը խոց է, որտեղ իր վրանն է խփում, այնտեղ կանաչ խոտը չորանում է»: Նորաբնակները սիրով և մեծ բա-վականությամբ աշխատում էին կոլեկտիվ տնտեսության ոչխարաբու-ձական ֆերմայում: Վերադասի թուրքականում ու հովանավորությամբ թուրք յորաններն իրենց ցանկությամբ, ինչքան կարողանում էին անձ-նական ոչխարներ էին սրահում հանրային հոտի մեջ (կյանելով վեր-ջինիս կերաբաժնի գզայի մասը) և պատկանելի եկամուտներ ստանում:

70-ական թթ. սկզբներին Տողում ծպտուպ հաշտնվում է Հեղաբ

Այլևր: Հավաքում է հակակամ գյուղում արդեն արմատներ գցած թուրք կանոններին (երիտասարդ կանանց) ու մարգարեսար բառքառում. «Ծնե՛ք, ծնե՛ք, ինչքան կարողանում եք շատ ծնեք: Դրանով մենք կկարողանանք նվաճել ոչ միայն Տողը, Ղարաքաղը, Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը»:

Անցնում է մեկ տասնամյակ ևս: Արդեն ԽՍՀՄ կենտկոմի քաղ-բյուրոյի անդամի կարգավիճակով, Հ. Այլևի հանձնարարությամբ Տողում հայտնվում է Ադր. ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Մ. Բագիրովը: Գոհմունակությամբ նա «պարզում է», որ Այլևի պատգամը Տողում հա-ջողությամբ է իրականացվել: Գյուղի ազգաբնակչության մեծ մասը՝ 1412 բնակչից 811 կազմում էին թուրքերը: «Կեցցես... ասեք, ինչո՞ւ կարող եմ օգտակար լինել, որպեսզի թուրք բնակչության աճն սովելի արագացվի Տողում»: Ասացին, որ գյուղում որոշ թվով աղբբեջանցիներ մշտապես զբաղված են «պարապությամբ»: Նրանց լրացուցիչ ապրուս-տի միջոցներ են պետք:

Կենտկոմի առաջին քարտուղարը տեղն ու տեղը հանձնարարու-թյուններ տվեց իր հետ եկած նախարարներին և շատ շուտով 50-ից ավելի թուրքեր տեղավորվեցին «աշխատանքում» հեռակա կարգով: Այսինքն օրվա ցանկացած ժամին գյուղամիջին թափառող անբաններն ապահովվեցին ամենամյա կալում աշխատավարձով: Եվ երբ դրանցից յուրաքանչյուրի օձիքից բռնեիր, կհասներ **ԼՂԽ** սահմաններից դուրս՝ Ֆիզուլի, Հորադիզ, Բաբու, պետական հիմնարկներ, ձեռնարկություն-ներ, որոնց պետերը տասնչակ պատճառաբանություններ կբերեին իրենց հաստիքացուցակով աշխատավարձ ստացող անբաններին ար-դարացնելու համար:

Այս ամենով սակայն, Բաբուն չէր բավարարվում: Տողի հայաթափ-ման գործընթացն արագացնելու համար դիվային նոր խարդալանքի է դիմում: Աչափես, Տողի «խաղաղ» գրավման նպատակով Աղբբեջանի իշխանությունները հանրահաշտ Վեզիրովի անձնական նախաձեռնու-թյամբ այստեղ սկսել էին ինտենսիվ շինարարական աշխատանքներ, «արյունակից» մեխիսթի թուրքերին բնակեցնելու համար: Վեզիրովին փոխարինած Ալազ Մութալիբովը նույնպես ուշադրության կենտրոնում էր պահում Տողում ծավալված շինարարությունը: Թիևարարներին մո-տիկից՝ անհրաժեշտ կուսակցական, քաղաքական աջակցություն ցույց տալու համար Աղբբեջանի ԿԿ կենտկոմը, Պոլյանիչկոյի, Ռադակի և մաֆունովի օգնությամբ Հաղբբություն լուծարված կուսընկերների փոխարեն

Տողում ստեղծում է նոր շրջկոմ, որի առաջին քարտուղար է հաստատվում միջնակարգ դպրոցի տնօրեն, «Գորշ գայլերի» ոմոսակի անդամ Նիլսզ Զահանգիրովը: Ցավոք, Նիլսզ Մուսիմի կուսակցական առաջին նենարկոմների զոհ դարձան Մելիք Եզանի պարատի որոշ շենքերը, դպրոցի նախկին եռահարկ շենքը և մի քանի հայկական տապանական կոթողները, որի պատճառով բնակահարար, ավելի սրվեց հայ-ադրբեջանական համայնքների միջև Եղած լարվածությունը: Մի խոսքով, թուրքերը հարմար ստիթ էին որոնում, որպեսզի իրագործեին Ա. Էլշիբեյի հրամանը. «Տողից հայերին գեների ուժով դուրս քշել և նրանց բնակարանները բաժանել թուրք փախստականներին»: Ընդ որում, տողեցի հայերին իրավունք էր վերապահվել իրենց հետ վերցնելու մինչև 16 կգ բեռ: Մնացածը՝ բնակարանների հետ պետք է մնար ազերի-թուրքերին:

Բայց հո քնած ու թմբած չէին տեղացի հայերը: Գիշեր ցերեկ պարեկում էին: Հոգնած ու անքուն տղամարդկանց փոխարինում էին կանայք, դպրոցականները: Միաժամանակ զգալով վերահաս վտանգի կործանարար հետևանքները, նրանք պաշտպանական լուրջ նախապատրաստություն են տեսնում: Ի դեպ, Տողի (ինչու միայն Տողի) ջոկատի հանդերձավորման և, ընդհանրապես արցախցիներին պարենով, հագուստով և այլ նյութերով օգնելու խնդրում մեծ ներդրում ունի հայտնի բարերար, ծննունդով տողեցի Արտյոմ Առաքելյանը: Այսօր շատ քչերը գիտեն նրա մասին: Սակայն համոզված ենք, որ վաղ թե ուշ կհրապարակվեն փաստաթղթերը և հանրությանը հայտնի կդառնան Առաքելյանի կատարած հայրենակներ գործերը և նա ավելի արժանի գնահատականի կարժանանա իր հայրենակիցների կողմից:

Դառնալից Նիլսզ Մուսիմի կուսընկերին, որի սպասարկման ոլորտը տարածվում էր միայն Տողի թուրքական համայնքի վրա: Հաշվառման մատյանում գրանցված ուներ 57 կոմունիստ, որից 3 շրջկոմի քարտուղար, 17 ապարատի այլ աշխատողներ: Ենթարկվում էր Ադր. կոմկուսի կենտկոմին: Աշխատավարձն էլ ստացվում էր այնտեղից: Թեև այն գույտուկեց մի քանի ամիս, սակայն, այնուամենայնիվ, հասցրեց ապացուցել, որ Տողաձորում դարերի ընթացքում չեն եղել այնպիսի նողկալի մարդիկ, ինչպիսիք Նիլսզ Մուսիմի սպորիների շրջկոմի բյուրոյի անդամներն էին:

Բաքվից ուղարկած 125 զինված օմոնականներով համալրելով տեղական թուրքական ուժերը, շրջկոմը դիմեց բացահայտ ահաբեկչական գործողությունների: Օրը ցերեկով գնդակոծվում է Տումու ավտո-

բուսը, որի հետևանքով զոհվում են 3 հայ ուղևոր, կացնահարվում՝ Միսակ Դանիելյանի ընտանիքի 4 անդամները: Այս երկու անհարկալի դեպքերը սարսափեցրել էին անգամ ադրբեջանցի բնակչությանը, որոնք վախճնալով, այդ ոճրագործության հնարավոր հետևանքներից, ախտոք նեռանում են գյուղից:

Տողում տեղակայված խորհրդային զորքը, թվով 150 զինվոր, որոնց աչքի առաջ կատարվել էին ոճրագործությունները, ինչպես վկայում են տողեցիները, ասես զինվորական համազգեստով ադրբեջանցիներ լինեին: Միշտ նրանց կողմն էին պահում: Դրանից էլ օգտվելով Նիլսզի շրջկոմը որոշում է կայացնում Տողի տնտեսության 7 հազար ոչխարները նվիրաբերել թուրք չորաններին, իսկ խոշոր եղջերավորների՝ նախիրը (այդ թվում 380 կով) քշել, տանել Ֆիզուլու շրջան: Ապա հարց է դնում Տողի կոյտնտեսությունը բաժանել: «Բայց ում միջև և ինչ բաժանել, — զարմանում էին Տողի հայերը, — ուրիշի ունեցվածքը ոնց եք կիսում: Տղոր եկել եք, տեղ ենք տվել, հետո էլ թե՛ մեր բաժինը մեզ տվեք: Ձեր բաժինը հենց դուք եք և ձեր գողացած անասունները»:

Հիրավի, թուրքի մտածողություն, որի սկունքը թուրքական հետևյալ կարգախոսն է. «Երբ հյուր ես լինում, միշիր, առաջին օրը հյուր ես, երկրորդ օրը՝ տան լիիրավ անդամ, երրորդ օրը, տանտեր»: Ինչպիսի վտիություն... Զգալով, որ գյուղի բաժանումը իր խելքի բանը չէ, Նիլսզ Մուսիմ-քարտուղարը հրամայում է իր զորքերին շրջափակել Մոտփանակերտ-Հաղրոթ նորակառուց միակ ճանապարհը, որն անցնում է Տողի տակով: Այնուհետև ռադիոյով հրապարակվում է ադրբեջանցիներին բաժանած հայերին պատկանող բնակարանների ցուցակները: Դեռ ավելին, պատերին փակցվում են «հայեր, ձեր երգը երգված է, քանի ուշ չե՛՝ փախեք» և այլ կարգախոսներով թողոցիկներ:

Այլևս անկարելի է հապաղել: Փառտորեն վտանգված էր Տողաձորի պաշտպանությունը, կաշկանդված Հաղրոթի շրջանը և ընդհանրապես դրված էր Հարավային Արցախի լինել չլինելու կենսական հարցը: Անս այս ճակատագրական պահին Տողի ինքնապաշտպանական ջոկատը, որի ստեղծողներն են եղել Վիգեն Գրիգորյանը, Արմենյո Գապարյանը, Ռուբիկ Բալասանը և Սլավիկ Սարգսյանը, խնդիր դրեցին վերացնել վտանգը, վճռական հակահարված տալ չափ ու ասնման չճանաչող թուրք գրոհակներին և Տողից դուրս վճռել Նիլսզի «Գորշ գայլերի» շրջկոմը:

Տողում «Գորդյան հանգույցին» ծանոթանալու և մարտական գործողությունները դեկավարելու առաջադրանքով այստեղ է ուղարկվում

գեղասպետ (այժմ գեներալ-մայոր) Արկադի Տեր-Թադևոսյանը, որին դարաբարդիները մի բառով կոչումնրոս են անվանում:

Փորձառու հրամանատարը կասեց, որ մարտական ձեռնարկում-ներին կարող է խանգարել ուսական գործառնար, որն իբրև պերեկոթյուն էր անում Տողում: Նրան հաջողվեց չեզոքացնել «սպարեկներին» և կազմակերպել ցուցադրական գործարարություն, որի նպատակն էր «մկաններ» ցուցադրելով ահ ու սարսափ տարածել թուրքական գրոհա-չինների ճամբարում: Ընդ որում, թշնամու քթի տակ անցկացված գո-րաշքերթից այն տպավորությունն էր ստացվել, որ հաշերը հարյուրավոր միավոր գեներ ունեն: Մինչդեռ այդ ժամանակ Տողում կար ընդամենը 64 ինքնաձիգ և հրացան, չորս անգամ քիչ, քան ադրբեջանցիներն ունեին: Սա Արկադի Տեր-Թադևոսյանի հնարամտության և գորավարա-կան տաղանդի մի դրվագ է: Մյուսների մասին առայժմ հարկ չեմ հա-մարում խոսել:

1991 թվականի հոկտեմբերի 29-ի կեսօրին հրամանատարական դիտակետում, որը տեղակայված էր վերոհիշյալ Արտյոմ Առաքելյանի երեք հարկանի առանձնատանը, որտեղից Տողածորը և «ռազմական թատերաբեմը» երևում են ինչպես ափիդ մեջ, հրավիրվում է ջոկատնե-րի հրամանատարների խորհրդակցություն: Այն տևում է կարճ: «Մարտա-կան գործողությունները թեև նախատեսված են ժամը 17-ին, բայց սկսե-լու ենք քիչ ուշացումով, — շեշտադրումով առաջ հրամանատարը: — Ամեն մեկդ պետք է դիրքավորվեք ձեզ հատկացված տեղերում և հատուկ հսկողության տակ պահեք ազերի գրոհաչինների հնարավոր հակահար-ձակման կետերը: Տողը պետք է ազատագրեք առանց արյունահեղու-թյան: Դրա համար էլ հրամայում եմ, չկրակել մարդկանց, այդ թվում նաև օմոնականների վրա: Դա ոչ միայն մարդասիրական նկատառու-մով, այլև ռազմա-բաղաբական իրավիճակից ելնելով: Վաղն ամբողջ աշխարհի իմանալու է մեր մարտական գործողությունների մասին»: — Այսպես եզրափակեց հրամանատարը:

Երեկոյան ժամը 17.13-ին հայկական ջոկատները խստորեն պահ-պանելով մարտական առաջադրանքների տակտիկական նկատառում-ները, աննկատ դիրքավորվում են և հսկողության տակ վերցնում թուր-քական թաղամասը մտնող կաժաններն ու փողոցները, փախուստի հա-մար ազատ թողնելով դեպի Ֆիզուլի գնացող մայրուղին: Եվ ապա հա-տուկ ազդանշանով բոլոր կողմերից սկսած խաչաձև կրակոցները՝ և ջարձրախոսներով հաղորդվող զգուշացումները հակառակորդի ճամ-բարում խուճապ առաջացրին և նրանք համոզվելով, որ ոչինչ անել չեն

կարող, դիմեցին անկանոն փախուստի: Մակայն շուտով հայտնի դար-ձավ, որ օմոնականների թաղանթում և հրդեհում են ադրբեջանցիների բնակարանները և ով ինչ կարողանում էր հետը վերցնելով ճողոպրում է Ֆիզուլիի կողմերը: Ժամը 19-ին Տողն արդեն ազատագրված էր:

Այս պատմական իրադարձության, սկստի առաջին «Թրջողները» եղան իրենք՝ հաղթանակը կող ազատամարտիկները, որոնք հավաք-վեցին սիրելի հրամանատարի մոտ և մասնակցեցին «Տողա միլիաներ Արտյոշայի» (այսպես են նրան հորշորջում տեղացիները) շքեղ պա-լատում հանպատրաստից կազմակերպած խրախուսանքին: Եվ իբրև վա-վերացում այդ ամենի, ներկաները «Տողի ռազմական քարտեզի» վրա դրոշմեցին իրենց ստորագրությունները և ի պատի հանձնեցին պատմու-թյանը:

Տողի ազատագրումը թե՛ հաղթող և թե՛ պարտվող կողմերի համար ունեցավ ռազմա-քաղաքական և բարոյա-հոգեբանական շրջափելի նը-շանակություն և զգալի չափով նպաստեց հետագա ռազմական գործ-ղությունների ընթացքի վրա: Այն իրավամբ հանդիսացավ Արցախյան ազատագրական պայքարի ռազմավարական տեսակետից առաջին խո-շոր հաղթանակը, որին հաջորդեցին՝ Սրխավենդը, Խոջալուն, Ծուշին և այլն: Հանգիստ շունչ քաշեց Տողածորի, Հաղորթի շրջանի հաշու-թյունը, վերականգնվեց Հաղորթ-Ստեփանակերտ մարտավարական ճանապարհի անվտանգությունը և ինչու չստել՝ չարիքը, մահը Տողից հեռացվեց ավելի քան 17 կմ-ով: Հույս ու հավատ ներարկեց ազատա-մարտիկներին և նրանք զգացին, որ իրենք ընդունակ են, կարող են ռազմական ավելի ընդգրկուն գործողություններ ձեռնարկել և հասնել հաղթանակի:

— Մեզ թվում էր, թե թուրքերը Ֆիզուլուց մեծ ուժերով հակահար-ձակման կանցնեն, — հիշում է Տողի ջոկատի հրամանատարի տեղակալ Կ. Միրալեյանը (թեև դա նկատի էր ունեցել հրամանատարը և ան-հրրաժեշտ միջոցներ ձեռնարկել) ,բայց թուրքերը ի վիճակի չէին ուշի գալու և որևէ լուրջ գործողության դիմելու:

Արցախում իրականացված առաջին անարյուն հաղթանակի լուրը ցնծությամբ ընդունվեց ողջ հայության կողմից, իսկ հակառակորդի հա-մար այն հանդիսացավ սատը ցնցող ու քննության առարկա Ադրբե-ջանի խորհրդարանում, որին հետևեց ներքին գործերի և պաշտպանու-թյան նախարարների պաշտոնակն անելու հրամանները: Այսպիսով, թուրքն իր կաշվի վրա զգաց, որ իր կատարած ոճրագործությունների

համար անպատիժ չի մնա, կատանա ավելի հուժկու հակահարված:

Տողի ազատագրումը Տողածորի ազատամարտիկների համախմբվածության, մարտական պատրաստակամության լուրջ հայտ էր և պատահական չէ, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության կանոնադր բանակի առաջին զորամիավորումի կորիզը հանդիսացել է Տողի ջոկատը: Ջոկատը, որը փայլուն կերպով էր պաշտպանել մարտական դիրքերը և արժանի ավանդ ներդրել Լաչինի, Քելլաջարի և Ֆիզուլու ազատագրման համար: Տողի զորամասին էր վիճակված եղել թշնամու համար մեծ կորուստներով ետ մղել նրա տանկային առաջին գրոհը: Դարձյալ պատահական չէ, որ Արցախում թշնամու առաջին տանկր խփվել է հենց այստեղ: Առաջին տանկը և գրահատեխնիկայի խոշոր ավարը թշնամուց խփվել է դարձյալ Տողածորում:

Արցախում թշնամու առաջին տանկը խփվել է տողեցի քաջակորով Կառլեն Միքայելյանի կողմից: Մի անվեհեր մարտիկի, որը հասցրել է ոչնչացնել ազերիների 7 զրահամեքենա և սողափակել 5 միավոր տեխնիկա, այդ թվում 2 տանկ:

Ինչպես հայտնի է, Ծուշիի ազատագրումից հետո թշնամին լայնածավալ հարձակման է անցել Տողի ուղղությամբ, նպատակ ունենալով Տողը, Տումին գրավելուց հետո դուրս գալ Լիսագորի (Ճաղատասարի) լեռնանցքը և թիկունքից հարվածել Ծուշին գրաված հայկական զորամասերին: Տողածորի հերոս պաշտպաններն այս անգամ ևս խափանեցին թշնամու գրոհը և նրան ետ շարտեցին երման դիրքերը: Այսպիսով, նաև արահույժեցին Ծուշի-Լաչին մայրուղու ձախ թևի անվտանգությունը և ասբա, դրանով իսկ արագացվեց Լաչինի միջանցքի ազատագրումը: Փառք ու պատիվ տողեցի 18 ազատամարտիկներին, որոնք զոհվեցին Արցախի ազատության և անկախության համար: Ահա նրանք՝ Արմեն Գասպարյան (1961—1993 թթ.), Վիգեն Գրիգորյան (1951—1993 թթ.), Սրայիկ Գրիգորյան (1953—1994 թթ.), Յուրիկ Հալոյան (1956—1992 թթ.), Անդրեյ Ստեփանյան (1974—1993 թթ.), Կամո Հասանյան (1974—1993 թթ.), Արմիկ Սվանեայան (1947—1992 թթ.), Արմավիր Ավանեայան (1956—1993 թթ.), Վալերիկ Բաղդասարյան (1968—1992 թթ.), Ռուբիկ Մարգարյան (1965—1995), Աշոտ Հայրապետյան (1975—1993 թթ.), Սամվել Մահակյան (1963—1993 թթ.), Արթուր Հարությունյան (1966—1994 թթ.), Կամո Ավագյան (1962—1994 թթ.), Արարատ Ավթանդիլյան (1966—1992 թթ.), Սերյոժա Ավագյան (1954—1993 թթ.), Ռաֆիկ Ավանեայան (1972—1992 թթ.) և Սերժիկ Դանիելյան (1961—

1991 թթ.): Նրանց պայծառ հիշատակը հավերժացնելու համար վերոհիշյալ բարերար Ա. Առաքելյանը ցանկություն է հայտնել հայրենի Տողում ստեղծել մի երևելի հուշահամալիր, որն, անշուշտ, պիտի դառնա մեկիքանհատ սպանի հազարամյա պատմա-նարտարապետական հարուստ ժառանգության օրգանական շարունակությունը:

Հայրենանվեր բարերարն ուրիշ ծրագրեր էլ ունի: Տողեցիներին հարստացնելու, Տողի նախկին փառքը վերականգնելու և հայրենի ուստանն ավելի բարգավաճ տեսնելու մտքերը նրան հանգիստ չեն տալիս: Սակայն, սա, արդեն, այլ խոստովանության թեմա է, որին կանդորատունանք Տողի ներքուժ մասին գրվելիք մեր հոդվածում:

Այժմ Տողում և նրա ընդարձակ ձորահովտում խաղաղություն է տիրում: Մարդիկ նույն համատությանը բուժում են պատերազմի վերքերը և միաժամանակ նախադրյալներ ստեղծում Տողածորի տնտեսական նպաստավոր ներքուժ կյանքի կոչելու համար:

Տողածորի ազատամարտիկները Արցախի փառապանծ բանակի ստորաբաժանումներում, մարտական դիրքերում, մարտական նախապատրաստական առաջադրանքներ են կատարում և ուշի-ուշով հետևվում թշնամու վարքագծին: Նրանք օր-օրի կատարելագործում են իրենց վարպետությունը, ձեռք բերում նոր գիտելիքներ և պատրաստ են հակահարված հասցնելու նենգ թշնամուն, եթե նա հանդգնի խախտելու արցախցիների հանգիստը:

Ծ ա ն ո թ ո թ յ ու ն .— Սույն հոդվածի առաջին տարբերակը տպագրվել է «Լրագիր» օրաթերթի 28 հոկտեմբերի 1995 թ. համարում և երեք անգամ (հոկտեմբերի 30-ին, նոյեմբերի 6-ին և 15-ին) հաղորդվել Հայաստանի ուղիով:

«Ծանեն Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գիրքը 1889 թվականին Մոսկվայում, իսկ 1991-ին Մոսկե Կառլոյում (Ֆրանսիա) մասնակցել է գրքի միջազգային ցուցահանդեսներին, մի հանգամանք, որ ավելի էր զարացրել աղբյուրեջանցի հեղինակներին»:

«Լրագիր», 19 07 1994 թ.

**ԱԶՍԱԳՐՎԱԾ ՔԵԼԲԱԶԱՐԻ, ԼԱՉԻՆԻ, ԱՂԿԱՄԻ,  
ՖԻԶՈՒԼԵԻ, ԶԵԲԲԱՅԻԼԻ ԵՎ ՂՈՒԲԱԹԼՈՒԻ ԾՐԱՆՆԵՐԻ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

Ազատագրված տարածքների հայկական հուշարձանների նրատարակումն, անշուշտ, նրատապ է, հատկապես այսօր, երբ Ղարաբաղյան պրոբլեմը դարձել է անողորմ վեճերի առարկա բոլոր մակարդակներում և նրա կարգավորմանը մասնակից համաշխարհային հասագործախրության բոլոր ստորաբաժանումներում: Միաժամանակ այս հուշարձանները վերստին հաստատում են այն անվիճելի ճշմարտությունը, որ Արցախ-Ղարաբաղի բազմադարյան ելուծական և հուզուր մշակույթը իր բովանդակությամբ և ռեալական առաձևահատկություններով, ամբողջովին առնչվում է համահայկական մշակույթի հետ: Ավելին, Ղարաբաղյան-ադրբեջանական պատերազմի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարակից ազատագրված տարածքները (Աղդամ, Ֆիզուլի, Ջերրախիլ, Չակգեյան, Կուբաթլի, Լաչին, Քելբազար), որոնք ժամանակին մտնում էին Արցախ նահանգի մեջ, համարվում են Արցախի մշակութային տարածաշրջանի օրգանական շարունակությունը, հայ ժողովրդի պատմության մեջ կարևոր տեղ բռնած հայկական մշակույթի և արվեստի օջախներից մեկը:

Այդ շրջանների հայկական ճարտարապետական հուշարձանների թիվը՝ 5000-ից ավելի է: Դրանցից շատերը ադրբեջանցիները հիմնովին ավերել են, մյուսները դեռ մանրազնին հետազոտված չեն, քանի որ ավելի քան 80 տարի դրանք գտնվում էին յոթ փականքների ետևում: Հազարավոր հայերեն արձանագրությունները, հայկական եկեղեցիները, մենատները, իջևանատները, կամուրջները, ամրոցները, հնագույն և միջնադարյան բնակավայրերը, խաչքարերը և այլ հուշակոթողները, անկասկած, վկայում են իրենց իսկական տիրոջը, ում հազարավայկներ շարունակ դրանք պատկանել են: Այսինքն, մինչև այն ժամանակ, երբ 18-րդ դարի երկրորդ կեսից և հատկապես 19-րդ դարում ներկայիս ադրբեջանցիների քոչվորական առաջին ցեղախմբերը սկսել են բնակություն հաստատել բուն կերպով հայաթափված բնակավայրերում: Այս առումով, մասնագետների միասնական համոզմամբ, Ար-

<sup>1</sup> Ազատագրված տարածքների հուշարձանները յուսանկարելու համար ինձ անհրաժեշտ օգնություն ցույց տվեց արցախյան շարժման նկիրյալ, ճննդով ճարտարեցի **Գագիկ Մաֆադյանը**, որին հայտնում եմ շնորհակալություն:

ցախ-Ղարաբաղի հարուստ մշակույթը անհնարին է պատկերացնել համահայկական մշակույթից դուրս, որը իրավամբ, հանդիսանում է ազգային մշակույթի արեալներից կամ մարզերից մեկը: Այն սնվել, զարգացել է նրա ավանդույթներով և իր տեղն ունի հայկական մշակույթի գանձարանում:

**1. ԼԱՉԻՆ, ՔԵԼԲԱԶԱՐ**

Քելբազարի իրադարձությունների ֆունի վրա ակնհայտորեն զգացվում է, որ մենք ինչպես հարկն է չգիտենք Հայաստանի աշխարհագրությունը, պատմությունը, մշակույթը և, որ ամենից ցավալին է, լավ չենք ճանաչում մեր տոկուն ժողովրդին: Խոստովանեմք, որ հայ ընթերցողը ավելի շատ բան գիտի Ալյանկայի, Հավայան կղզիների, քան հին հայկական ճշմարտորդ Վաչկունիք-Ծար, Աղանեճ-Հարճյանք գավառների մասին: Ամբողջական չեն մեր պատկերացումները նաև Գարդման գավառի (Հյուսիսային Արցախ), Մեծ Հայքի 12-րդ նահանգ Ուտիքի և Ադրբեջանի Հանրապետության՝ 1920-ական թվականներին բռնակցված հայկական մյուս շրջանների վերաբերյալ: Դրա պերճախոս վկայությունը Քելբազարում Արցախի քաղաքի ազատամարտիկների տարած փախում հաղթանակի արձագանքներն են: Պարզապես անհանդուրժելի է ադրբեջանական գանգվածային հակահայկական բարոզության հանդեպ մեր պաշտոնական լրատվության երկչոտությունը, մտավորականության, առաջին հերթին հայագետների պատվությունը:

Ասես հայկական պատմական տարածք չի ազատագրվել: Ասես այդ տարածքում չեն կառուցվել հայ ճարտարապետության ճշմարտորդ հուշարձաններ՝ Դաղիվանքի խոշոր վանական համալիրը (5—13-րդ դարեր), Ծիծեննավանքը (5—7-րդ դարեր), Վարազգոմավանքը (7-րդ դար), Մկնատուփ խաչվանքը (12—13-րդ դարեր), Գետամիջի վանքը (14-րդ դար), Ա. Լևտվածածին, Սբ. Ամենափրկիչ վանքերը (12—13-րդ դարեր), բերդ-ամրոցներից՝ Հավարախաղացը, Առնաբերդը, Կողորաբերդը, Բերդաբարը, Խոծորաբերդը (7—13-րդ դարեր): Ասես այդ գավառներում չեն գրի առնվել մեր պատմության քարե վավերագրերը՝ երկաթագիր միմագրեր, չափագրվել ու լուսանկարվել ժողովրդական ճարտարապետության եզակի ստեղծագործություններ հանդիսացող բնակելի տներ, մեղրական իշխանական ասարանքներ: Կարելի է մեկ առ մեկ թվարկել եկեղեցիները, կամուրջները, անձափները, ճշմարտորդ

գերեզմանատները և նշել դրանց կառուցման կամ հիմնադրման ժամանակաշրջանը, մեկնասաների անունները: Կարելի է նաև հրապարակել այդտեղից 60-ից ավելի հայկական բնակատեղիների ցուցակը, այդ թվում նաև Ռուս Ա-ի Ծովինարի ծայրափոր արձանագրության մեջ հիշատակվող Բաղանիք Արքունականը՝ այժմյան Խաղրուն:

Ծար-Քելբաշար և Հարճյանք-Լաչին գավառները հայաթափ են եղել 18-րդ դարի վերջին քառորդում, Ծուշիում բուն դրած օտարածին խաների վայրագությունների հետևանքով: Հայկական գավառները ներթափանցած մահմեդական տարրերին՝ թուրքերին ու քրդերին հրապուրել են խոտառատ արոտավայրերը: Նրանք այդպես էլ ժառանգորդ չդարձան իրենց թողնված հազարամյա հայրուստ մշակույթին: Ավելի քան 200 տարվա ընթացքում «նորարմակները» ավերածություններից զատ նոր քան չկարողացան ստեղծել: Քելբաշարի և Լաչինի շրջաններն հայկական սրատմական այն գավառներից են, որտեղ չկան, չեն գտնի, թեկուզ նմուշի համար, մեկ մզկիթ կամ որևէ այլ հասարակ էջվան՝ աղոթասրահ: Չկան նաև գերեզմանատներ կամ փմնագիր կոթողներ, որոնք կրեին 18, 19, անգամ 20-րդ դարի առաջին կեսին բնորոշ առանձնամատկություններ: Կրկնում ենք, աքթյիսիք չկան և լինել էլ չէին կարող, քանզի հաշտթափ գավառները, ինչպես վկայել են ակաճատեսները, շուրջ 150 տարի գրեթե ամայացած, անմարդաբնակ էին, այգիներն ու պարտեզները՝ կիսավայրենացած: Եկվոր քոչվորները փոքր խմբերով բնակվում էին թաղիքապատ վրաններում և սովորություն չունեին քարը քարի վրա դնել, հանգուցյալի գերեզմանի վրա քար քաշել, մի տեղում 3—4 ամսից ավելի մնալ... սրբավայրեր երկյուղածությամբ մտնել: Այն էլ ասենք, որ 1860 թ. նրանք Ծար-Վաչկունիքում ունեին ընդամենը 9 վրանաշեն դշլաղներ: Հայկական սրբավայրերը օգտագործում էին որպես գոմեր, բնակատեղիները՝ արոտավայրեր: 19-րդ դարի կեսերին, այդ մասին ահա թե ինչ է գրել արքեպ. Սարգիս Զալալյանը. «Այնոթիկ տեղիք դարանս են ավազակաց եւ ասպատակաց Արցախ նահանգի», և նրանք հեռավանդ վանքերում պսոճում էին «գիտոս խաշանց իրոց եւ զզոկս անասնոց»: Սարգիս Զալալյանցից ուղիղ 100 տարի հետո՝ 1940 թ. Ռևազեո Ե. Պշեյնան Լեհինգրադում հրատարակած իր աշխատության մեջ նույնպես նշում է, որ ինքը Քելբաշարի շրջանում տեսել է հայկական «գյուղերի ավերակներ, բերդապարիսպներ, քազմահարկ ծայրափոր կացարաններ, ժամատներ, եկեղեցիներ, որոնք խոտում են վաղեմի կյանքի մասին՝ այժմ համարյա անայի տա-

բածություններում: Դժբախտաբար այդ հուշարձանները ոչ միայն ուսումնասիրված չեն, այլև նույնիսկ չեն էլ նշված գրականության մեջ թեկուզ գրանցման կարգով: Այստեղ ամենուրեք ապում հայերից մնացել են ընդարձակ գերեզմանատները՝ փոխած ինչպես կիսավեր վանքերի շուրջը, այնպես էլ առանձին»: Այսպես նկարագրելով վանքերի զարդաբանդակներն ու գերեզմանական քազմազան կոթողները՝ առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվում վերջինների վրա, որոնք «գիտական խոշոր հետաքրքրություն են ներկայացնում իբրև միջնադարյան հայկական քանդակագործության հուշարձաններ»: Իրավացի եզրահանգում:

Լեհինգրադցի գիտնականը, հավանաբար զգալով մեր անտարբերությունն ու պասիվությունը, մատույլ ցույց էր տալիս տեղը և բարեկամաբար հուշում մեր անելիքները: Բաց ավաղ... Դրանից էլ վստահաբար օգտվեցին թուրք-աղրբեշանցիները: Տարիներ շարունակ անարգել և անպատիժ իրականացրին մշակութային ջարդ: Այստեղ էլ են նրանք քանդել ու ավերել քազմաթիվ հայկական հուշարձաններ, փշրել, շինաքարի տեղ օգտագործել տապանաքարեր, խաչքարեր, քերել, ջնջել փմնագրեր: Այսօր էլ, ինչպես Աղրբեշանի այլ վաւքերում, Քելբաշարում կարելի է տեսնել բնակելի, հասարակական և արտադրական բնույթի շենքեր, որոնց պատերը շարված են ամբողջական խաչքարերով, տապանաքարերով, զարդարում ու արձանագիր քարաքեկորներով: Իսկ այն, ինչ չեն հասցրել քանդել, վերջին շրջանում, գիաբունհատովական պարզունակ սխեմայով ներկայացվում է որպես աղվանական, հիմա աղրբեշանական քաղաքակրթության հուշարձան: Սա թղթի վրա, գիտական և քարոզչական նպատակներով: Իրականում, սակայն, այդ հուշարձանները գտնվում են անմխիթար վիճակում, նրանց պահպանության և վերականգնման ուղղությամբ ոչինչ չի արվել: Ծակատագրի անողորմ կամքին թողնված՝ աստիճանաբար ավերվում են, լուվագույն դեպքում առաջվա պես օգտագործվում իբրև պահեստներ, գոմեր:

Քելբաշարի երկրագիտական թանգարանում պահվում ու ցուցադրվում էին հայ մշակույթի մի շարք արժեքներ: Բացատրագրերում նըշված էր. «Եսաշդաշ՝ աղրբեշանական հին գրությամբ», և որ այն թանգարան է բերել Մամեդովին: Սրանով էլ սպառվում է հուշարձանի մասին հաղորդվող տեղեկությունը: Չկար հուշարձանի արարման ժամանակը, գտնվելու տեղը և որ ամենից կարևորն է, փմնագրության բովանդակությունը: Դրա փոխարեն միայն մերկապարանոց հալոտարավում էր, որ հուշարձանն աղրբեշանական է: Մինչդեռ խաչքարի, տապանա-



քարի վրա հստակ նշմարվում են հայերեն տառերը և դրանք առանց որևէ դժվարության կարդացվում են: Էլ չենք խոսում զարդանախշերի ոճական առանձնահատկությունների մասին, որոնք ի հեռու կեղծարարների՝ հայկական են:

Ընդհանրապես մեր «ամենահաս» հարևանները դատում են տեղի և ժամանակի պարագաներից դուրս: Առատորեն օգտվում են իրենց իսկ առաջ քաշած կեղծ փաստարկներից և շարահյուսում սին պատմություններ: Ասենք՝ փաստերն ինչ նշանակություն կարող են ունենալ այս դեպքում, երբ չկա ո՛չ տարրական բարեխղճություն, ո՛չ գիտական մոտեցում և ոչ էլ բարոյականություն: Ամեն ինչ արվում է թուրքալարի՝ նվաճել, կողոպտել, թալանել ուրիշների ոչ միայն տարածքները, այլև պատմությունը, մշակույթը: Այսքանից հետո հարկ կա՞ գարմաճալու, որ Քելբազարի թանգարանում Դավիթ բեկը հորջորջված է Դավոթ բեյ, Մխիթար Սպարապետը՝ Մուխթար փաշա: Դեռ ավելին, պարզվում է, որ աղբրեջանցի այդ գորավարները եղբայրակից թուրքական բանակի կողմից կովել են գյավուրների՝ հայերի դեմ և ջախջախիչ սարսուռության մատնել նրանց: Թանգարանի ամենաաչքի ընկնող տեղում փակցված էր «Գոշկչա-Չանգեզուրի աղբրեջանական հանրապետության բարտեզը»: Չեն մոռացել նաև երևակայած հանրապետության դրոշակը, զինանշանը, պետական կնիքը: Ահա թե ինչպես են աղբրեջանական բարոզության հաղթարշավի շոշափուկները թափանցել թանգարանային ցուցասրահները:

Կեղծիքը, սակայն սրանով չի ավարտվում: Ինչքան էլ ջանացել են սրբագրել, խմբագրել, քարտեզից ջնջել հայկական հնագույն բնակավայրերի անունները, այնուամենայնիվ պահպանվել են բազմաթիվ հայեցի նախաստեղծ տեղանուններ: Դրանց մի մասը նույնությամբ, մի քանիսը՝ պոչատված կամ հարմարեցված թուրքական արտասանության կանոններին, իսկ մյուսները՝ հայերենից բառացի թարգմանված: Այդ են վկայում Քելբազարի շրջափորտի նախագահի գրասեղանից իբրև «ուսումնասիր» հանված շրջանի բնակավայրերի ցուցակը և հաքվում 1979 թ. տպագրված «Աղբրեջանական ԽՍՀ վարչատարածքային բաժանումը» գիրքը (53—54 էջեր): Ըստ այդ «սկզբնաղբյուրների», Քելբազարի շրջանում կան, գոյություն ունեն Վանք անունով երկու, Աչրում, Չորաթան (աղբրեջանական արտասանությամբ՝ Ծորթան) երեքական գյուղեր: Ծրջանի Գետաշեն-Չալքենո գյուղական խորհրդի տարածքում է գտնվում Խաչ գյուղակը: Մոսը դարձել է Մոզքենո, Կիլիկիայի հաջոց

թագավոր Առնի պատվին անվանակոչված Առնաբերդ միջնադարյան բնակատեղիի պաշտոնական անունը՝ Լև, գյուղաքաղաք Ծարը՝ Չար, հարսեղաշենը՝ հաղբաղ, Կախանը՝ Կախա, հարվանաղը՝ հելլուաջար-հելբաջար: Հայկական Ցրոնոտ, Տաքջուր, Չերմուկ, Թեքդաշո, Տանձուտ, Եղծատեղ տեղանունները թարգմանվել և համապատասխանաբար կոչվում են Մոշուխրուլաղ, Իստիբուլաղ, Իստիսու, Թեքլակաշա, Արմուդու, Քիլսլայի: Հարկ է նշել, որ բոլոր այս գյուղերն իրենց հայեցի անուններով հիշատակվում են Դադիվանքին հարկատու այլ բնակավայրերի շարքում: Ի դեպ, ներկայիս Քելբազարի շրջանի մեծ մասն անցյալում պատկանում էր Դադիվանքին: Վանքապատկան կալվածքները կազմում էին շուրջ 150 հազար դեկատին կամ 800 քառ. կմ: Գտնվել է կալվածքների քարտեզը (1912 թ.): Վանքի հիմնական եկամուտները գոյանում էին փախտեղենի վաճառքից: Այն հիմնականում արտահանվում էր անտառագորկ Սևանի ավազան՝ Նոր հաչագետի գավառ:

Արցախի հոգևոր հայր հաղբասար Հասան-Չալալյան մետրոպոլիտի անդուլ ջանքերի շնորհիվ 19-րդ դարի երկրորդ քառորդում ձեռք էր բերվել պայմանավորվածություն, ասել կուզի՝ իրավունք, որպեսզի նախկին ծարեցիները վերադառնան իրենց նախկին բնակավայրերը: Ցավոք, ինչպես դառնությանբ գրել է պատմաբան Լեոն, ո՛չ վանքի հոգաբարձությունը, ո՛չ էլ նրա կալվածքների կառավարիչները «25 տարվա ընթացքում չկարողացան իրագործել մի շատ պարզ խնդիր՝ բնակեցնել Խութավանքին հարող հսկայական չափերի հասնող անմարդաբնակ գյուղերը: Պատճառը՝ վարչակազմակերպչական անբավարար աշխատանքն է»... իր ողբերգական հետևանքներով:

Ինչպես Լաչինը, նույնպես և Քելբազարը համեմատաբար նոր բնակավայրեր են, որոնք հիմնադրվել են հայկական Սարալանջ և հարվանտ բնակատեղիներում, մեկը 19-րդ դարի սկզբին, մյուսը՝ 20-րդ դարի առաջին քառորդի վերջին: 1930 թ. Լաչինը և Քելբազարը դարձան համանուն վարչական շրջանների կենտրոններ: Քելբազարի աշտոմյան շրջանի տարածքը 2 հազար քառակուսի կիլոմետր է, իսկ Լաչինինը՝ 1800: Առաջինն ունի 122 բնակավայր, երկրորդը՝ 120: Զբաղեցնում են Հայաստանի և ԼՂՀ միջև ընկած լեռն հողաշերտը և համապատասխանում են Վայկունիք-Ծար, Աղահենք-Հարճանք հայկական հիմնավորք գաղափարներին, որոնք դարեր շարունակ կապող օղակ են համարվում Այունիք և Արցախ նահանգների միջև:

Այսպիսին եւ փաստերը, պատմական իրողեան հարկատի փաստերը: Դրանցից չես փախչի: Եվ առաջնորդվել է հարկավոր միայն դրանցով, այլ ոչ թե պատմական քաղաքական պատկերներով, հարևանների տարածքները, հոգևոր ու մշակութային արժեքները սեփականացնելու մտրացկանությամբ: Իզուր են թուրք-ադրբեջանցիները ամենուրեք վայնասուն բարձրացրել, աղտոտել ՄԱԿ-ի ԵՍՀԽ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակները, «Ազատություն» և այլ ռադիոկայաններում տեղագին, լացակումած բողոքարկում, թե իբր Քելբաշարը (ինչու միայն Քելբաշարը) ադրբեջանական հող է, և որ այնտեղ ստեղծված քաղաքակրթությունը՝ մշակութային կոթողները ադրբեջանական են, որ հայերը երբեք չեն բնակվել այդ լեռնաշխարհում: Հետևապես նրանց արածը սգրևախ է: Եկեք, օգնեք, ագրեսորին դուրս վտնդեք: Նրանց հիշեցնել է պետք, որ ստի ոտքերը կարճ են և իզուր են պատմությունը 180 աստիճանով ձևափոխել, փաստերը, իրադարձություններ, դեպքերը նենգափոխել: Քանզի ճշմարտությունը վաղ թե ուշ դուրս է գալու լույս աշխարհ, իսկ կեղծիքը նետվելու է աղբանոց: Դրա անհերքելի ապացույցը Շուշիի, Լաչինի, Քարվաճառի հայկական տարածքների ազատագրումն էր: Մի շատ էական հանգամանք, որ բնավ չէին ենթադրել կեղծարարները:

Քանի դեռ Հարձուճք-Լաչին, Ծար-Քելբաշար լեռնաստանի իսկական տերերը՝ հայերս, նախանձախնդիր համատությանը լուռ ենք, պատմամշակութային մեր իրավունքների հարցը հարկ եղածի պես չենք բարձրացնում և այդ ամենի մասին պատշաճ մակարդակով քարոզչություն չենք ծավալում, կեղծարարները, բնականաբար, կշարունակեն լուտանքներ թափել մեր ժողովրդի հասցեին: Ուստի ժամ է, որ թմրած վիճակից դուրս գան մեր հնազանդները, պատմաբանները, ճարտարապետները, արվեստաբանները, ազգագրագետները, բանասերները և մեր քաջարի ազատամարտիկների համատությանը ու տոկունությանը շեշտակի կրակի տակ առնեն զեղծարարներին, մեկընդմիջտ պատռեն նրանց քարոզչության կեղծիքի պարկը: Այս այն բնագավառն է, ուր մեր հնարավորությունները առավել բան ակնհայտ են, քանզի պատմական ճշմարտությունը, իրողեան նյութերը, արխիվային փաստաթղթերը մեր հզոր դաշնակիցներն են և մնում է միայն անհասպաղ հանդես գալ՝ վճռական ու միասնաբար: Եկել է պահը, որպեսզի հայագետները ցուցադրեն իրենց ողջ կարողությունը, խիզախորեն բացահայտեն այն ամենը, ինչ տարիներ շարունակ արգելված էր: Ժամանակն է,

որ մեկ անգամ ևս ազգովին հիշենք և գործողության ուղենիշ ընդունենք մեծ բանաստեղծի պատգամը.

Իսկ եթե սուտը հերքել ես ուզում,

Պիտի սուլորես ստողի լեզուն՝

Հրածարվելով դատարկ գեղումից:

«Ռեփորթ», № 25 2 07 1998 թ.

«Ypary», № 22 (48) 1993 թ.

## 2. ԱՂԳԱՄ, ՖԻԶՈՒԼԻ

Հայտնի է, որ հայկական Արցախը բնաջնջելու համար Ադրամի՛ն առանձնահատուկ դեր էր վերապահված եղել: Դրա համար էլ այն վերածվել էր ռազմական խոշոր խմբավորումների հանգուցակետի: Ադրամի մարտական կարողությանը, անշուշտ, զգալի նպաստ եղան տեղի նախկին խորհրդային բանակի վիթխարի զինապահեստները, որոնք այնպես հեշտությամբ հանձնվեցին ազերի-թուրքերին: Ադրամում տեղակայված հեռահար հրետանին անզուգար հրետակոծում էր ԼՂՀ Ասկերանի շրջանի բնակավայրերը և մայրաքաղաք Ստեփանակերտը: Գատերազմի դաժան օրենքների թելադրանքով կենսական անհրաժեշտություն էր չեզոքացնել մահաբեր կրակակետերը: Դրա խեղամիտ իրականացումը, բնականաբար, պատերազմում շոշափելի բեկում մտորեց և ունեցավ բավականին ռազմաքաղաքական ու բարոյահոգեբանական նշանակություն հակամարտ կողմերի վրա:

Ադրամի գրավումով ապաշրջափակվեցին Ստեփանակերտ-Մարտակերտ և Ստեփանակերտ-Մարտունի ռազմավարական ճանապարհները: Ինչը հնարավորություն տվեց ԼՂՀ սահմանամերձ գոտու և ռազմանական գծի միջև միջանկյալ գոտի ստեղծելուն: Այլ խոսքով, պատերազմը փոխադրվեց թշնամու տարածքը՝ դրանով իսկ ստեղծվեց կենսագործունեության համար հանգիստ սրայմաններ սահմանափակ հայկական գյուղերում: Դրա հետ մեկտեղ թշնամին գրկվեց ռազմական բազմաթիվ օբյեկտներից, երկաթուղուց, գազամուղի բաշխիչ կայանքից, էլեկտրագծերի հանգուցից և այլ անհրաժեշտ կենսապայմաններից: Դեռ ավելին, Արցախի հայկական բանակը կարողացավ թշնամու Ղարաբաղյան հատվածում կուտակած ռազմական խոշոր ուժերի միասնությունը մասնատել, որի հետևանքով ավելի փոքրացավ հակառակորդի մանկրելու հնարավորությունները: Այսպիսով, անհամեմատ հեշտու-

ցալ Ֆիզուլու-Ջեբրայիլի-Դուրաթլուի ոչ պակաս վտանգավոր կրակակետերի լուծումը:

Ազատագրված Ադդամում ինձ հետաքրքրում էր երկրագիտական թանգարանը, որի ստեղծման մասնակիցներից մեկն էլ ես էի: Տարիներ առաջ այնտեղ տեսել և ուսումնասիրել եմ բազմաթիվ թանգարանային արժեքներ՝ հայկական մշակույթի անկրկնելի ցուցանմունքներ: Ահա թե ինչու շտապում էի նորից հաղորդակցվել մեր մշակույթի քաջասիկ հուշարձաններին, տեսնելու Հարարի բնտիր գորգը, խաչեմակյան բարձրաքանդակները, Շուշիում 1920 թ. մարտին հայերից թալանված արծաթե և ասեղնագործական եզակի իրերը, Աղջկաբերդից բերված ջնարակված թասերը, հայկական միջնադարին բնորոշ զարդանախշերով խոյակները: Բայց, ավա՜ղ, թանգարանը դատարկված էր: Թուրք-ազերիները ժամանակին, նախքան Ադդամի անկումը տեղափոխել էին թանգարանային արժեքները: Մի բան, որ դժբախտաբար չի կարելի ասել Մարտակերտի և Ծախումյանի երկրագիտական թանգարանների մասին, որոնք, ինչպես հայտնի է, իրենց ողջ պարունակությամբ անցել են թշնամու ձեռքը:

Տեղն է համառոտակի ներկայացնել վերոհիշյալ արժեքավոր ցուցանմունքները: 70-ական թթ. սկզբներին Հեյդար Ալիևի նախաձեռնությամբ խնդիր էր դրվել Ադրբեջանի գյուղական բոլոր շրջենտորոններում երկրագիտական թանգարաններ ստեղծել: Տողերիս հեղինակին՝ Լեռնային Ղարաբաղի պետական պատմաերկրագիտական թանգարանի այն ժամանակվա տնօրենին, հրահանգված էր գործուն մասնակցություն ունենալ Ադդամի թանգարանային ցուցադրանքի կազմակերպման աշխատանքներին: Բոլոր կողմերից սատար էին կանգնել թանգարանին և փառագույն էին օր առաջ զեկուցել նրա բացման մասին: Հանձնարարվել էր բոլոր տնտեսություններին և հիմնարկ-ձեռնարկություններին, որ ինչ գնով էլ լինի, ձեռք բերեն ու թանգարանին հանձնեն հնագիտական, ազգագրական և պատմահեղափոխական բնույթի արժեքներ: Երբ արդեն կուտակվել էին զգալի քանակությամբ իրեր, ես դիտեցի դրանք և զարմանքով իմացա, որ հավաքած արժեքների մեծ մասը բարձր գներով ձեռք են բերել Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու շրջանների հայկական գյուղերից: Կազմեցի ցուցադրության թեմատիկ ծրագիրը և նրա հիման վրա ձևավորվեց թանգարանը:

Ադդամի գործընկերներս հաճախ էին դիմում ինձ. «Յողա՛ջ Մը-գորդիչյան, ճի՛շտն ասա, այս նյութերը, պարզ է, ոչ ադրբեջանական են և ոչ էլ մահմեդական: Հո հայկական չե՛ն: Զէ՛» որ դրանք շատ են նման

ձեռ՝ Ստեփանակերտի թանգարանում ցուցադրված արժեքներին»: Կամ «Գարդա՛ջ, ով ինչ ուզում է թող ասի, մենք այս հողի վրա իբրև եկվորներ ապրում ենք 2—2,5 դարից ոչ ավելի: Դեռ կարգին չենք սովորել քարը քարի վրա դնելու ամենահնագույն սովեստը: Ո՛ր մնաց, թե կավից թունգեր, անոթներ ստեղծենք, կարծր քարի վրա զարդանախշեր փորագրենք»: Իրոք թանգարանում եղած բոլոր հնագիտական, պատմաաճրտարապետական, մասամբ նաև ազգագրական նյութերը բացառապես հայկական էին: Ծատերի վրա հեշտությամբ կարդացվում էին հայերեն գրություններ: 1971 թ. գարնանը Ադդամում գրի եմ առել 41 հայերեն արձանագրություն: Դրանցից 6-ը՝ պղնձե սափորներից, 7-ը՝ գորգերից, 11-ը՝ արծաթե զարդերից, իսկ մնացածը՝ ձևավոր և գեղաքանդակ քարաքեկորներից ու տապանական կոթողներից: Ամենահինը 1217 թվակիր վիճագրությունն էր, որը վկայում էր Խաչենի մեծ իշխան Հասան Ջարայանի շինարարական գործունեության մասին: Ամենանորը 1917 թ. հունվարին Հարար գյուղում Սոնա և Աննա քույրերի գործած գորգի գրությունն էր. Խմիջալոց ասենք, որ այդ ժամանակաշրջանում Բաքում դեռևս հստակ դիրքորոշում չուներ հայկական հուշարձանների հետ վարվելու հարցում: Հայկական հուշարձանների ազգային պատկանելության վերաբերյալ «գիտական» հայեցակետ դեռ չէր մշակվել, դրանք սղվանական, իմա՝ ադրբեջանական կոչելու պաշտոնական հրահանգ տակավին չէր արտոնագրվել: Ուստի իրերը ինչ-որ չափով կոչում էին իրենց անուններով: Թեև ակնհայտորեն զգացվում էր, որ գիտական և կուսակցական, մանավանդ կենտրոնական միջավայրում նշարդայնությամբ ու դժգոհությամբ էին հաշտվում հայկական հուշարձանների բուն գոյության հետ: Փաստորեն, որտեղ էլ դրանք գտնվելիս լինեին, նեղսրտություն էին պատճառում մեր հարևաններին, քանզի էլ ի՞նչ թուրքի հայրենիք, երբ նրա բոլոր հին հուշարձանները հայկական են: Ահա թե ինչու հայկական հուշարձանների մասին Ադրբեջանում ոչինչ չէին գրում, պարզապես դրանք փականքի տակ էին պահում: Սեսս չեմ եղել: Մինչդեռ դրանց քանակն անցնում է 20 հազարից:

Այդ լուրջունը հասկանալի էր: Ադդամի և Ֆիզուլու ներկայիս շրջանների տարածքները հայկական քաղաքակրթության օրրաններից մեկի՝ Խաչենի մշակութային միջավայրի օրգանական շարունակությունն են եղել: Բնականաբար դրանք խիստ կարևոր տեղ են գրավում համահայկական մշակույթի պատմության մեջ: Այստեղ՝ Ադդամի և Ֆիզուլու շրջաններում են գտնվում Ֆիզրանակերտ և Վարդանակերտ խոշոր

հնավայրերը, վաղ միջնադարի հայ նարտարապետության մեծարժեք կոթող Վաչագան Բարեպաշտի եկեղեցին, նշանավոր իջևանատուն-համալիրը, Հանգած եկեղեցին, նախաքրիստոնեական հազկական մշակույթը ներկայացնող Կուսպաշտի հանգստարանը, Խաչեհամուտի և Տիգրանաբերդի ավերակները, Սմբատ իշխանի դամբարանը, Համամ Արևելցու տապանաքարը, Ակնը-Աղդամ բնակավայրի ներգոտնչա ջրատարը, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մեկիքների ձմեռանոցները, վաղ հայկական թաղումներով հայտնի մի քանի մեծ ու փոքր դամբարանաբլուրներ:

Այս ամենը մատնացույց անելով՝ ես միաժամանակ սողլամցի իմ գրուցակիցներին հաղտեցի, որ ինչպես Աղդամի, այնպես էլ հարևան Միրբաշիի, Բարդայի, Աղաշաբեդու, Ժդանովի և Ֆիզուլու շրջանների տարածքները հնում վարչականորեն մտնում էին վաղ և միջնադարյան Հայաստանի Արցախ նահանգի Դաշտային կամ Ստորին տախաստանային Առանտու, Մովսանք և այլն գավառների մեջ: Եվ որ դրանք ոչ միջնադարում պատկանել էն Ջրաբերդի, Խաչենի, Վարանդաի և Դիզակի հայ մեկիքներին: Եվ միայն 18-րդ դարի կեսերին աշտեղ՝ Արցախի տախաստաններում պատահականորեն հայտնվել էր մահմեդական ավարտու ավազակապետ Փանահ Ալին: Թեև նա ո՛չ աշխարհագրական, ո՛չ տնտեսական, ո՛չ պատմամշակութային և ո՛չ էլ ազգաբանական ոչ մի երաշխիք չուներ, ժամանակի քաղաքական պայմանների հանկարծահաս փոփոխությունների, նաև գործած մեքենայությունների շնորհիվ պահը գտավ իրեն հռչակելու Ղարաբաղի խան և ապա սկսեց անընդմեջ պատերազմել հայ մեկիքների դեմ: Ծիշտ է, խաներին երբեք չհաջողվեց զԻՏՔի ուժով հարստակեցնել մեկիքներին, այսուհանդերձ նրանք անհաշիվ ավերածություններ ու տառապանքներ բերեցին արցախահայությանը, որոնց հետևանքները մինչև այժմ էլ զգացվում են: Այդ ընթացքում էր, որ տախաստանային Արցախում հիմնադրվեց մահմեդական ցեղային տարրը:

Աղդամ-Մարտակերտ ճանապարհի ձախ կողմում, այժման Ծախբուլաղում է գտնվում հայկական խոշոր հնավայրերից մեկը՝ Տիգրանակերտը: Հայտնի է, որ այն Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95—55 թթ.) հիմնած համանուն չորս քաղաքներից առաջինն է, որ կառուցվել է Արցախում (90-ական թթ. մ. թ. ա.): Անշուշտ, պետք է կարծել, որ Տիգրանակերտը եղել է արցախական հայաշխարհի ամենահին քաղաքը: Այս մասին հիշատակություններ ունեն Մովսես Կաղանկատվացին և Սեբեոսը (7—10-րդ դդ.): Աղդամի շրջանում է գտնվում նաև Վաչագան

Բարեպաշտի եկեղեցին (6-րդ դ.)՝ Աղդամից Մարտակերտ տանող ճանապարհի ձախ կողմում գտնվող Վանքասարի խաչեհամերձ բարձր ժայռազանգվածի կատարին: Հպարտորեն վեր խոյացող խաչաձև և գմբեթակիր հորինվածքով այս տաճարը պատկանում է վաղ միջնադարյան հայկական կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպին: Ծակատի պատերին և խաչքարերի վրա հայերեն վիմագրեր կան, որոնք քարբարոսաբար ջնջվել են, ոչնչացվել: Վանքասարի փեշերին գտնվող հայկական հուշարձանների մեջ առանձնանում են բարձրաքանդակներով զարդարված, անխաթար գրերով միջնադարյան տապանաքարերը, խաչարձանները: Դրանցից մի քանիսը տեղափոխել են Բաքու, Աղդամ և արևելում են այդ քաղաքների թանգարաններում: Դրանք քարեղեն ժանյակներ, անարտաք փորագրություններ, հայկական քարարվեստի բացառիկ ստեղծագործություններ են:

Տարիներ առաջ վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը գիտական մասնույում հանդես եկավ Աղրբեջանի պատմության թանգարան տարված հայկական այդ հուշարձաններից մեկի մասին հրատարակելով: Պարզվում է, որ դա այն հուշարձան-տապանաքարն է, որ դրված է եղել Արցախի Համամ իշխանի մի հարազատի դամբանի վրա: Այն անսուարկելիորեն վկայում է, որ հիշյալ տարածքը՝ Աղդամի շրջանը, 9-րդ դարում գտնվում էր Համամ Արևելցու տիրապետության տակ:

Աղդամի շրջանի նախապետնային գոտում հրաշքով մնացել են մի շարք հայկական գերեզմաններ, ավերակ եկեղեցիներ, բնակատեղիներ, վիմագիր խաչքարեր, բերդ-ամրոցներ, բազմաթիվ դամբարանաթմբեր: Այժմ բավականին նպաստավոր պայմաններ են ստեղծվել դրանք չափագրելու, լուսանկարելու և ուսումնասիրելու համար:

Ինչ վերաբերում է Ֆիզուլու շրջանին, ապա այստեղ, մանավանդ Հադրութի շրջանին սահմանակից աղրբեջանական բնակավայրերի անդատանում գրեթե անաղարտ պահպանվել են շուրջ հարյուր հայկական հուշարձաններ: Դրանցում ուշագրավ է Ֆիզուլուց դեպի Հադրութ ճանապարհի եզրին, բլրի լանջին փոված իջևանատան համալիրը: Այն կառուցվել է ազատ հատակագծման սկզբունքով՝ ելնելով միայն տեղանքից: Նրա գետնափոր, ընդարձակ դահլիճները, եռակտևար սրահը, սրբատաշ քարերով եկեղեցին, թաղակապ պահեստները, ախոռները և հարակից շինությունները հիմք են տալիս ենթադրելու, որ միջնադարյան այդ խոշոր համալիրը ձևավորվել է երկար տարիների ընթացքում, տարբեր քարգործ վարպետների շինարար ձեռքերով: Այդ

հանգամանքը չի իրանգարել, որ պահպանվեն կառույցների միասնությունը, նրանց ճարտարապետական ամբողջականությունը: Հայ ճարտարապետությանը բնորոշ այս գործոնների շնորհիվ Ղարղաբազարի իջևանատունն, անկասկած, իր տեսակի մեջ առանձնահատուկ է: Մասնագիտական մանրագնին ուսումնասիրությունը, անշուշտ, թույլ կտա առավել ասույզ տեղեկություններով որոշելու իջևանատան տեղն ու դերը հայ ճարտարապետության պատմության մեջ:

Ֆիզուլու երկրագիտական թանգարանում դարձյալ ցուցադրված էին երկու տասնյակից ավելի հայկական մշակութային արժեքներ՝ ձեվավոր խոշակներ, տասպանական կոթողներ, խաչքարերի քեկորներ, քարձրաքանդակներ, անգամ Դիզակի քաջ մեկիք եզանի զինանշանը: Բնականաբար, պաշտոնական և գիտական Բաբլի հրահանգով, իբրև կանոն, հայկական ցուցանմուշները ներկայացված էին որպես աղբյուր-չանական հուշարձաններ՝ մոռանալով, որ ո՛չ վաղ միջնադարում և ո՛չ էլ Ֆիզուլու ապրած դարաշրջանում աղբյուրաբանական ժողովուրդը որպես սագ դեռ չէր ձևավորվել:

Ֆիզուլիում մենք հանդիպեցինք նաև 19-րդ դարի վերջերին Ազոխի քարանձավում (ԼՂՀ Հաղրութի շրջան) Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի տեսած և նկարագրած կնոջ մի արձանի: «Արձանս կոխված է քարից, կնոջ զգեստի տարազն ու գլխի շինության ձևը ներկայացնում են Արցախի կանանց հագուստեղենի և փաթաթոցներով շինված գլուխների տիպը»: Այստեղ ցուցադրված են նաև Հաղրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի մատույցներում գտնվող Ծմախաչ քարանձավից հայտնաբերված հնագիտական նյութերը: Սակայն, ինչպես ասվում էր, բացատրագրում նշված է, որ այդ նյութերը ձեռք են բերվել «աղբյուրաբանական» Թաղլար գյուղում (թեև շուրջ մեկ և կես հազար բնակիչ ունեցող գյուղում թեկուզ նմուշի համար երբեք չի ապրել անգամ մեկ աղբյուրաբան) և քարեղարի աղբյուրաբանական բնակարանի կենցաղային պարագաներ են: Պարզվում է, որ աղբյուրաբան հնագետները, խախտելով գոյություն ունեցող կարգը, ԼՂՀ տարածքում կատարած պեղումների ժամանակ հայտնաբերած նյութերը ամբողջովին հետները տարել են՝ ոչինչ չթողնելով արժեքների իսկական տերերին՝ հայերին: Փաստորեն նրանք կողոպտել, թալանել են հայկական մշակույթի հուշարձանները: Ֆիզուլու թանգարանի բացատրագրից հայտնի է դառնում, որ 1968 թ. աշնանը աղբյուրաբանի հնագետները Ազոխի քարանձավում գտել և Բաբու են տեղափոխել Արցախ նահանգի միջնադարյան շատ գան-

ձեր, այդ թվում նաև ձեռագիր հայերեն գրքեր: Ֆիզուլու շրջանում պահպանվել են հայկական գերեզմանատներ, եկեղեցիներ, վանքերի համալիրներ, ժողովրդական ճարտարապետության հրաշալի ստեղծագործություններ թեկուզ ավերված, ոչնչացված, փլատակների վերածված փհակում, շրջանի Հողեր, Գյումուշ, Արեշ, Խաչար, Զարգար, Ղոչահմեղի գյուղերի տարածքներում: Ֆիզուլիում պահպանվել է հայկական Չիման բնակատեղիի աղբյուր-հուշարձանը: Քարակերտ աղբյուրը ունեցել է արձանագրություն, որի առանձին մասերն են հագիվ-հագ նշմարվում, քանզի վիմագրությունը քերվել և աւարտվել է բարբարոս մարդկանց ձեռքով: Սակա՞յն. բարեբախտաբար, ժամանակին՝ 50-ական թթ. այն գրի է առնվել և հրատարակվել Հաղրութի շրջանային «Կոլխուզնիկ» թերթում:

Ադրբայջանի շրջանը ներկայումս ունի 1100 քառ. կմ տարածք, իսկ Ֆիզուլիինը՝ 1400: Առաջինն ունի 120 բնակավայր, երկրորդը՝ 73: Դրանք, ինչպես վերևում նշեցինք, պատմական, հին ու միջնադարյան Հայաստանի Արցախ նահանգի Դաշուային կամ Ստորին հարթավայրային գավառներն են: Իսկ որոշ հողակտորներ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի վարչատարածքային սահմանները վերաձևելու ժամանակ (1923—1938 թթ.) հայկական Զրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ գավառներից պոկեցին ու նվիրաբերեցին Ադրբայջանի և Ֆիզուլու շրջաններին: Ինչպես երևում է ԼՂՀ կտրատված քարտեզից, երկրամասի կարևոր գետահովիտներում ընկած հայկական բնակավայրերի արանքում արհեստականորեն ստեղծված և դեպի Արցախի խորքերը ձգված լեզվակներից ու խոռոչներից այդ հողակտորները պոկեցին այն հաշվարկով, որ Ստեփանակերտը իր տարածքում կապ չունենա գավառների հետ, գյուղերից շրջկենտրոններ հասնելու համար հարկ լինի շրջանցել հայկական մարզի սահմանները: Նսրատակը՝ ԼՂԻՄ-ի վրա ոչ միայն քաղաքական, այլև բնկերային և տնտեսական ճնշում գործադրելն էր, որ սվեյի ակնհայտ դարձավ 1988—1991 թթ. արցախյան իրադարձությունների ժամանակ, երբ Աղբյուրաբանը փակեց այդ լեզվակներով և խոռոչներով անցնող ճանապարհները՝ մարզը զրկելով արտաքին և ներքին հաղորդակցության միջոցներից:

Ադրբայջանի հիմնադրվել է 18-րդ դ. վերջերին հայկական Ակնը (Ակունք իմաստով) բնակավայրի տեղում, իսկ Ֆիզուլին համեմատաբար նոր բնակավայր է հայկական հիմնավորց Չիման գյուղի հարևա-

նորայնված: 1827 թ. հիշվում է որպես ուսական սահմանապահ գործա-  
մասի սպառնալուծի վայր և մինչև 1959 թ. կոչվել է Կարյազինո (ոուս  
գործարարի անունով):

1912 թ. Աղղամն ունեցել է 60 ծովն՝ 260 բնակիչով, Ֆիզուլին՝ 64  
ծովն՝ 400 խաղը բնակչությամբ: Սա այն դեպքում, երբ Աղղամից 38  
կմ հեռավորության վրա գտնվող Շուշին՝ գավառի կենտրոնը, նույն  
ժամանակաշրջանում ուներ 5236 ծովն 42400 բնակիչ, իսկ Ֆիզուլուց  
24 կմ դեպի հարավ, հայկական Հայրություն ապրում էր 407 ընտանիք՝  
2795 հայ բնակչով: Սա՝ «ծողովորդների բանտ» հանդիսացող ցա-  
րիզմի օրոք: 1989 թ. մարդահամարի տվյալներով՝ Աղղամի թուրք բը-  
նակչությունը 1912 թ. համեմատությամբ աճել է 150, Ֆիզուլունը՝ 120  
անգամ, իսկ Շուշիի հայ բնակչությունը պակասել է 240, Հայրութիինը՝  
0,42 անգամ: Նման վիճակագրական տվյալները հարուն հասկանալի  
դրդասպատճաններով լուրջան էր մատնում, իսկ Երևանը միանգամայն  
անհասկանալի պատճառներով չի «շտապում» դրանք հրապարակել:  
Այսպիսին էր ազգային քաղաքականությունն Ադրբեջանում, որի հետե-  
վանքները հանգեցրին Արցախյան շարժմանն ու այսօրվա պատե-  
րազմական իրավիճակին:

Եվ այսպես, ազատագրված Աղղամի և Ֆիզուլու շրջաններում  
հրաշքով պահպանված հուշարձանները անտարակույս վկայում են, որ  
այս տարածքներում հնագույն, անհիշելի ժամանակներից մինչև 18-րդ  
դ. կեսերը ապրել են հայեր, իսկ նրանց թողած հարուստ ժառանգու-  
թյունը տիպաբանորեն որոշակի տեղ ունի հայ մշակույթի, մասնավորա-  
պես ճարտարապետական արվեստի դարերի պատմության մեջ: Այս-  
տեղի ամեն մի միացող հուշարձան թուրք «գիտնականների» ստուն է  
հերքում: Այս հողից հառնող ամեն մի կոթող կամ ձևավոր քար գիտա-  
գաղափարական ճակատում մի գորել կովան է, տարիներ քարոզված  
թուրքի կեղծիքը ճեղքող իրեղեն փաստարկ: Միաժամանակ այդ հու-  
շարձանները արտացոլում են դրանք կառուցած ժողովրդի ազատաբաղձ  
ոգին, գոյատևելու ձգտումն ու ասրելու կերպը: Ուստի այսօր դրանք  
ավելի քան արդիական հնչելություն և ճանաչողական նշանակություն  
ունեն, որոնք հիմնավորապես պետք է ուսումնասիրվեն ու ներկայաց-  
վեն հանրությանը:

«Հայրենիքի ծայն», 1—2 01 1994 թ.  
«Республика Армения», 4 12 94 г.

### Յ. ՋԵՔՐԱՅԻՆ, ՂՈՒԲԱԹՎՈՒ

Հայ և այլազգի պատմագիրների վկայությունները, մշակույթի հու-  
շարձանները և հրաշքով պահպանված վիմագիր արձանագրությունները  
հնարավորություն են ընձեռում պնդելու, որ այժմյան Ջեքրայիյի, Ղու-  
բայիյի և Ջանգելանի վարչական շրջանները հնուց ի վեր եղել են հայ-  
կական տարածք: Վաղ միջնադարյան սկզբնաղբյուրները, մասնավորա-  
պես «Աշխարհացույց»-ը փաստում են, որ հիշյալ տարածքները բա-  
ցատապես բնակեցված էին հայերով և վարչականորեն մտնում էին  
սուաջիևը, Արցախի Պիանք-Պարզկանք, իսկ մյուս երկուսը՝ Սյունիքի  
Բաղք-Քաշունիք ընդարձակ գավառների մեջ: Ասենք, որ Մեծ Հայքի  
Արցախ-Սյունիք հայ աշխարհներն իրար հետ սահմանակցվում էին  
նշված գավառներով, ներկայիս Լաչինի, Ղուբայիյի և Ջանգելանի  
տարածքներով հոսող Աղվան-Հազատու գետով: Ի դեպ, այդ սահմա-  
նագիծը նախանշված, հատուտված էր հաշոց Սարգիս կաթողիկոսի  
1005 թ. կոնդակով:

Արժեքավոր տեղեկություններ է պարունակում Գոշայվանքի եկե-  
ղեցու շինարարական վիմագիր արձանագրությունը (13-րդ դ.): Դեռևս  
ըստ ամենայնի չուսումնասիրված վիմագիր արձանագրության մեջ  
նշված են ոչ միայն վանքի շինարարության հետ կապված տեղեկու-  
թյուններ, այլև վկայակոչված են վանքապատկան տարածքներն իրենց  
որոշակի սահմաններով, բնակավայրերով, գետերով: Դրանք վանքին  
են նվիրել Դիզակի Եսայի, Գագիկ իշխանները, նրանց ժառանգները և  
այլն: Ահա այն հարստությունը, որի սահմաններն անցնում էին «... Ի  
Աղուանոյ գետոյ մինչ ի Երասխն, մինչ-ի Ասազն Գատուհատի, Վակու-  
նիս Վաղազնագետով, ի Քարատնիս եւ Խոզանագետովն, Զստիստը իր  
գետովն, Հաքսոն Հազարագետովն, Քրտագետ իր գետովն, իր սահ-  
մանովն, Դիզակ, Բելուկան իր գետովն եւ հայրենիքն եկեղեցույս տուինք  
Փարախն ու Գոտանոցն, Եկեղեցաձորն իր սահմանովն...»:

Հետաքրքիր է իմանալ, որ նշված տեղանուններից մի քանիսը  
նույնությամբ կամ մասնակի հնչյունափոխված պահպանվել են: Սակայն  
մյուսներն այն աստիճանի են աղավաղված, ձևափոխված և թրքացած,  
որ բացահայտելու համար հարկ կլինի կատարել ուսումնասիրություն-  
ներ: Մյուսյաց աշխարհի մեծ պատմիչ Ստ. Օրբելյանի շնորհիվ մեզ է  
հասել Տարթի նշանավոր վանքին հարկատու բնակավայրերի ցուցակը  
(X-րդ դ.), որի մեջ մեկ առ մեկ նշված են յանդրո առարկա Բաղք-  
Քաշունիք գավառի 93 հայաբնակ գյուղեր՝ իրենց նախաստեղծ անուն-

ներով: Հետագա աղբյուրները ևս բազմաթիվ տեղեկություններ են պարունակում հայաբնակ ու հայկաշեն Պիանք, Պարզկանք կամ Գիզակ և Բաղք, Քաշունիք գավառների և նրանց բնակավայրերի մասին: Ինչքան էլ թուրք-ազերիները ջանացել են խմբագրել, սրբագրել, մոռացության տալ հին հայկական տեղանունները, այնուամենայնիվ թե՛ Ջերբալիլի, թե՛ Ղուբաթլուի և թե՛ Չանգելանի շրջանների այժմյան բնակավայրերի ցուցակներում կարելի է հանդիպել ոչ քիչ թվով հայկական ծագում ունեցող տեղանունների: Բերենք օրինակներ: Ջերբալիլի շրջանի հայկական բնակավայրերից նշենք (փակագծերում տրվում են թարգմանված, ձեվափոխված, թուրքերենին հարմարեցված ներկա անվանումները) Թովմալը (Թումայլու), Տանձուտը (Արմուդու), Խոջիկը (Չոջուկ), Բերդակը (Կարաջոզ), Քարահատը (Դաշքեսան), Քերուկը (Գերտուկ), Քուչակը (Կուչակ), Դոբ՝ Լանօիկի իմաստով (Դոբուլու), Քարիօն (Քարաջանլի), Կոմաբը (Գիումագ), Քարակուտը (Կարիխտու): Կուսնուխթի իրենց հաշեցի անունները պահպանել են Չեքը, Սիրիկը, Մարալանը, Խափիսը, Պատարը, Տոլուսը: Ղուբաթլուի և Չանգելանի շրջաններում ուշադրության արժանի են հին հայկական բնակավայրերից Բարկուշատը (Բարուշաթ), Աթխուրը (Աթխուզ), Ակնը (Ային), Սեթանցը (Սեթաս), Մեդրուտը (Բալուկայ), Քարակերտը (Կարաջանլը), Սրապուներ (Սարըլաթաղ), Փրաջանցը (Փերիջան), Չոռո (Չոբ), Հատտուրը (Հարթիս), Հալոթը (Խաուսջ), Հարալան (Խալլաուս), Եղցուտ (Քիլալը), Մեյիբաշենը (Մեյիբլու), Սպիտակաշենը (Աղքենդ), Քարահովիտը (Կարաեդեն), Չոխանովետ (Չոլլեդեն), Քուրագլուխը (Կարագլուլու), և անփոփոխ մնալով Գետակը, Հաթո, Թեժուկը, Մամարը, Ուխաչը, Խանդիկը, Քոսուսը, Հալը, Կոսականը, Շամբաբակը, Վարդուտը, Քարախաչը և այլն:

Վիճակն անհամեմատ բավարար էր 19-րդ և 20-րդ դարերի սահմանագլխին, երբ Անդրկովկասի քարտեզի վրա արհեստականորեն դեռ չէր ստեղծվել Ադրբեջանը՝ իբրև հանրապետություն: Թեև նշված գավառներում հայերին պատկանող բնակավայրերում հաստատվել էին մահմեդական վաչկատուն ցեղերը, ապոհանդերձ պահպանվել էին բազմաթիվ հայաբնակ գյուղեր, պատմաճարտարապետական հուշարձաններ: Մակար եպիս. Բարխուդարյանը 19-րդ դարի վերջին իր նշանավոր «Արցախ» գրքում գրել է. «Գավառներ կանխավ հառաքնակ եղած են, այժմ մահմեդաբնակ են, որոնց մեջ կան եկեղեցիներ և հանգստա-

րաններ»: Նա ճշգրտել, առանձնացրել է դարերի ընթացքում, մահավանդ նորագույն շրջանում օտարացած տաունյակ հայկական բնակավայրերի նախաստեղծ անունները:

Ինչպես թվարկած, այնպես էլ չթվարկած գրավոր սկզբնաղբյուրներում, նաև այլազգի հեղինակների երկերում, հնագիտական հետազոտություններում այդ տարածքի վրա չի հիշատակվում այլ էթնիկ բնակավայրի կամ թեկուզ մեկ հուշարձան: Այդպիսիք չկան և լինել էլ չլին կարող: Անգամ Բաբվում հրատարակված գրքերը ոչինչ չեն նադորդում: Աղբյուրները լռում են, որովհետև ամենքին հայտնի է, որ միայն 17—18-րդ դդ. է (կապված հայկական մեծ բռնագաղթի և մահավանդ Ծուշիում բնավորված օտարածին Իբրահիմ խանի վայրագությունների ու ոճրագործությունների հետ) հայ բնակչությունը հրով ու սրով դուրս է մղվել վերոհիշյալ գավառներից: Ամաչացած, դատարկված հայկական գավառներում 18—19-րդ դդ. բնավորված խաշնարած ցեղերը գիտական գրականության մեջ հիշատակվում են որպես մահմեդականներ, որոնք բուշնիկների տիրապետության առաջին 15 տարիներին կոչվեցին թուրքեր, ապա ադրբեջանցիներ, իսկ այժմ, նահանգյալ տարվանից՝ թուրք-ազերիներ:

Հայտնի է, որ նորաբնակներն ապրում էին թաղիքապատ վրաններում և հայկական սրբավայրերն օգտագործում իբրև փարախներ: Ինչպես վկայում են նախախորհրդային շրջանի վիճակագրական տեղանունները, արխիվային փաստաթղթերը և պահպանված տապանագրերը, հայկական մի շարք գյուղեր, ինչպես օրինակ՝ Հարարը, Մինքեհդը, Փրաջանցը, Կրախտինը, Մազմազանը, վերջնականապես հայաթափվեցին Արցախը Ադրբեջանին բռնակցելուց հետո:

Հայությունից դատարկված ռազմավարական տեսակետից հույժ կարևոր Հաքատու գետի հովիտով Սյունիք-Արցախ հայաշխարհը փաստորեն մահանտվեց և Արաքս-Սևան նեղ միջանցքում աստիճանաբար սկսեց ստվարանալ օտարածին մի նոր մարմին, որն իր ժանիքները հակաճե-հանվաճե ցուցադրեց ինչպես 19-րդ դ. առաջին քառորդում՝ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, այնպես էլ 1818—1920 և մահավանդ՝ 1988—1993 թթ.: Հայաստանից գողացված այսպես կոչված Լաչինի միջանցքը մնան էր կույր աղիքի, որի վերացումը պատմական անհրաժեշտություն էր: Վիրահատությունը, թեև 2—2,5 դար ուշացումով, փայլուն ձևով կատարեցին մեր փառապանծ ազատամարտիկները:

Նկատենք, որ մեզ հետաքրքրող տարածքներում շրջագայության բնթացքում մեզ չհասցողիկ տեսնել մասնագիտական շխարհի տի ոճով կառուցված որևէ կոթող կամ թեկուզ հասարակ տուրքահաշար, որը կարելի լիներ համարել 17—19-րդ դդ. հուշարձան: Միևնույն ամեն քաղաքային կարելի է հանդիպել ավերակի վերածված հայկական բազմաբնույթ հուշարձանների, որոնց վիճակը ողբալի է: Գերեզմանոցները բուրդոգերների օգնությամբ տակնուվրա են արված: Տաղանաքարերը, խաչքարերը՝ շարդված, կիսով չափ թաղված են հողի մեջ: Քերված ու տաշված են գրեթե բոլոր տապանագրերը: Վաճակյա համալիրների, եկեղեցիների սրբատաշ, ձևավոր քարերով, տապանական կոթողների բեկորներով, փշրված խաչքարերով շարված են հորսկանոց շենքերի պատերը: Ակնհաս էրևում է, որ մի շարք տեղերում հայկական հուշարձանների՝ ինժեներական կառուցվածքների, ժողովրդական ճարտարապետության հետաքրքիր նմուշներ հանդիսացող բնակելի տների, մեղիքական ամսարաթների հարդարանքի մեջ հավանաբար «վերանորոգումների» ժամանակ ներմուծվել են մասունմանականին բնորոշ առանձին տարրեր և ետին թվով հորինված «վիճագիր արձանագրություններ»:

Ջերբայի շրջանում են գտնվում Խոդափիթին հանրահայտ երկու կամուրջները: Պատմական կարևոր իրադարձությունների, դեպքերի, վկա կամուրջները Արցախը Արաքսի վրայով կապել են Պարսկաստանի հետ: Թեև դրանք դարեր շարունակ գրավել են պատմաբանների, ճանապարհորդների ուշադրությունը, այնուամենայնիվ մինչև այժմ կամուրջները չեն ենթարկվել մասնագիտական ուսումնասիրության:

Գիտական գրականության մեջ առաջին անգամ Խոդափիթինի կամուրջների մասին շատ թե քիչ տեղեկություններ տվել է Մակ. Բարխուդարյանը: Վերին փոքր կամուրջն ունի 11 բացվածք, իսկ ներքինը՝ 15: Նրանք իրարից հեռու են 800 մետր: Ափամերձ վիմերը հեծվում են ժառանգի վրա: Բացվածքների թաղերի շարվածքում լափերեն ռոտուգործված են թրձած աղյուսը: 15 աչքանի կամրջի երկարությունը 200 մետրից ավելի է, լայնությունը՝ 4,5, ամենաբարձր աչքը 10 մետր: Փոքր կամրջի երկարությունը կազմում է 130 մետր, իսկ լայնությունը՝ 6, բարձրությունը ջրի մակարդակից՝ 12 մետր: Կամուրջների հարևանական դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ դրանք կառուցված են հայկական կամրջաշինական արվեստի դասական կանոններով և ամենայն իրավամբ համարվում են ինժեներական խիզախ կառուցվածքներ: Ռուս Աշանավոր ճարտարապետ Պ. Ծյուսևի արտահայտու-

թյամբ հայկական կամուրջները պատկանում են համաշխարհային ճարտարապետության ամենաարժեքավոր տեղծագործությունների շարքին:

Ղուբաթլուի շրջանի կարևորագույն հայկական հուշարձաններից առանձնահատուկ նշանակություն ունեն Զինգյանակապ գետի աջափնյա գեղատեսիլ բացառներից մեկում, արաքսյան կաղնիների և նոննիների պարսկում պահպանված հին հարաբցիների ձևաուճանները: Բնական տասնյակ աչքերի կողքին ժամանակին այստեղ կառուցվել են բազմաթիվ կնոյներ, տեփեր և այլ գեղատեսիլ շինություններ: Գետը է կարծել, որ միջնադարում այս խոշոր հնավայրը եղել է իջևանատուն՝ Պարսկաստանից Խոդափիթինի կամուրջների վրայով դեպի Ծար գալստը ձգվող ճանապարհի վրա: Ապարար անունով հնավայրի տարձրում թփերի ու ծառերի արանքում նշարվում են ընդարձակ գերեզմանաքարերը: Մյուս կարևոր հուշարձանախումբը, որտեղ մենք կարողացանք լինել, գտնվում է Թովմասասարի ստորոտում: Բարձունքում քաղաքից ավարտապատերի ներսում կա ավերված մի եկեղեցի, հավանաբար Թովմասի վանքի շինություններից, որը 16-րդ դարում կառուցել է Թովմաս կրոնավորը:

Հաղրութի շրջանի Ամուտուկ և Դոլանլար-Արևշատ գյուղերի արանքում արհեստականորեն ստեղծված խոռոչում (որն այժմ վարչականորեն պատկանում է Ղուբաթլուի շրջանին) արձանագրվել է կիսավեր երեք եկեղեցի, երկու գյուղ, չորս գերեզմանատուն, երկու բերդ և մեկ վանական համալիր:

Ղուբաթլուի շրջանի (Արցախին և Սյունիքին հարող) նախալեռնային ու լեռնային անդատաններում պահպանվել են բազմաթիվ բերդամրոցներ: Այստեղի գրեթե բոլոր լեռնագագաթները պարսպապատված բերդամրոցների են վերածված: Ունեն ազդանշախին և կենտրոնականի մասն կառուցված օժանդակ կառույցներ, որոնք ավելի նշանակալից են դարձրել ամրոցների պաշտպանական համակարգը: Զգացվում է, որ Արցախի և Սյունիքի տերերը ժամանակին հոգացել են իրենց երկրների ուղղակարական տեսակետից խոցելի Հազարուի արանքում տարածքների պաշտպանության մասին: Պաշտպանական համակարգի գոտիներից մեկը գտնվում է աջափնյա՝ Սյունիքին պատկանող հատվածում և ուներ հորտան, Բղեն, Բարկուշատ բերդամրոցները, իսկ հաջորդը տեղադրված էր Արցախի տարածքում Զինգյանակապ գետի ձախարինյա անտառատալատ բարձր և անմատչելի լեռնե-



րում ու անդնդախոր կիրճերում և ներստնում էր Թովմասի, Անուտեղի, Խաչխուսի, Հալքի հզոր բերդերը:

Մեր օրերում թուրք-ազերիները հազկական միջնադարյան ճշված բերդ-ամրոցները դարձրել էին կրակակետեր և ազնուեղից հրթիռակոծում էին Արցախի և Այուրիքի հայկական բնակավայրերը: Ահա թե ինչու անհրաժեշտություն եղավ դրանք լեցնելու ձամար մտնել Ղուրաթլուի շրջանը:

Մենք հնարավորություն ենք ունեցել (թեև հասցենայ) տեսնելու նաև «Աղվերձու խոջա Մովսեսի» դամբարանը (16-րդ դ.): Ծարտարապետական առումով տարվորիչ է ունի սլացիկ հովհարածև գմբեթ: Սակայն վերջին տարիներին բավականին լավ պահպանված դամբարանի մուտքի երեսակալը և բարավորը թուրքաբար «բարեփոխության» են ենթարկվել: Հնի փոխարեն տեղադրված նոր բարավորը բոլորովին չի մերվում կոթողի ամբողջական հորինվածքին: Բացի այդ, համաձայն մեր օրերում նրա վրա կատարված փորագրության, հուշարձանի տարիքը արհեստականորեն մեծացել է ոչ ալել, ոչ պակաս չորս դարով, իսկ Խոջա Մովսեսը դարձել է «Մուհամեդ ալ Խոջայի»: Մեկը լինի հարցնի, թե որտեղի՞ց Մուհամեդի «առաքյալի» հայտնվելը այս կողմերում, այն էլ 12-րդ դարում, երբ հայտնի է, որ առաջին օտարականը, իր հոտով հանդերձ Արաքսից հյուսիս, մանավանդ Հազատուի ձորահովիտը թափանցել է 17-րդ դարում միայն: Ահա թե ինչպես են ազերիները «վերականգնել», ավելի ստույգ՝ չորացրել հայկական հուշարձանը: Եվ ինչ եղանակով են փորձել փոխել նրա ազգային պատկանելությունը: Եվ սա եզակի դեպք չէ:

Փոփոխությունը հարկավ կատարվել է փնթի ձևով, սարգապես ճշացող անգրագիտությամբ: Ա. դուհանդերձ, Խոջա Մովսեսի դամբարանը բնավ չի կորցրել իր հալաշունչ տեսքը: Պարզորոշ երեվում է, որ դիմացը հառնում է հայկական բարարվեստին բնորոշ առանձնահատկություններով հուշարձան: Ինչպես չհիշել ստի և կեղծիքի ակադեմիկոս Ջիս Բունիյաթովին, որը հաւտնի է, պատմագիրների երևերից ջնջել, հանել էր «հալ», «Հարատուն» «քրիստոնեական» բառերը: Էլ ուր մնաց, թե Արաքսի ափին, մի խով անկյունում հուշարձանից չհանգեն, չարկեն վիմագիր արձանագրությունը: Սա արդեն բարոյական անկման ազդանշան է, հարեանների մշակույթը սեփականացնելու վատ վարքագիծ: Ինչևիցե:

Ներկայիս Ջերբայիի շրջանը զբաղեցնում է 1000 քառ. կմ տա-

րածք: Ունի 77 բնակավայր: Ղուրաթլուն՝ 800 քառ. կմ է, Զանգեյանը՝ 700: Համապատասխանաբար ունեն 95 և 83 բնակավայր:

Մոտավորապես այս է, ինչը հնարավոր էր կարճատև գործողման ընթացքում տեսնել, զննել վերջերս ազատագրված հին հայկական տարածքներում: Տարածքներ, որոնք 20-ական թթ. բոլշևիկների «առատաձեռնությամբ» նվիրաբերվեց Արևելքում կարմիր հեղափոխության ջահակիր Ադրբեջանին:

«Ազատամարտ», № 40, 10 1998 թ.  
«Республика Армения», 15 12 93 г.

Մ ա ն թ ու թ յ յ ու ն .— Վերոշարտրյալ հոդվածները սուլագրվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, քուլդարերեն:

Ազատագրված հայկական պատմական գավառներն ուսումնասիրելու և տեղերում նոր նյութեր հավաքելու համար նյութական և բարոյական աջակցություն ցույց տալու համար իմ խորին երախտագիտությունն են հայտնում անվանի բարերար Սլավիկ Ավանեսյանին:

Շ. Մ. Մկրտչյանին  
Երևան

10 հունվարի 1989 թ.  
Սիրելի գործակից,

Ինձ իրավունք սպեցի ձեզ գրել, իմանալով որ դուք Ղարաբաղի մասնագետներից եք: Ձեր երկու հոդվածները շատ հետաքրքրեցին ինձ՝ որոնցից կատարեցի վերլուծումներ Revue des Etudes Armeniennes-ում:

Արդ, Անթրիսի վեհախաղը ինձանից ուղեցավ, որ ես աշխատեմ այդ նյութի վրա: Թեև չորս անգամ այցելել եմ, բայց կարիք ունեմ որոշ վավերագրերի: Կիսնդրեմ ձեզ ինձ ողորկեք սև և սպիտակ ու գունավոր լուսանկարներ, ըստ ձեր վերջին գրքի լուսանկարների համարների՝ 26, 44, 47, 60, 64, 88, 72, 92, 96, 111, 113, 148, 157 կամ 163, 164, 175, 178:

Ինձ համար կարելի է ձեզ վճարել բանկի միջոցով, կամ եթե ցանկանաք ձեզ ուղարկեմ իմ գիրքը Les Arts Armeniens-ի փոխադարձ և վստահաբար Ղարաբաղի մասին գրածս գիրքը:

Հարգանքներով՝

Ջ. Մ. ԹԻԵՐՐԻ

## ԱՐՅԱԽԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ինչպես մեր թերթում նշել էինք, ռուսերեն լույս տեսավ Օսենե Մկրտչյանի «Լեոնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» մեծարժեք գիրքը. մենք խոստացել էինք հարցազրույց ունենալ հեղինակի հետ: Ստորև ներկայացնում ենք մեր աշխատակցի հարցազրույցը **Շ. Մկրտչյանի** հետ:

— **Հայկական ճարտարապետության մեջ ինչո՞վ է առանձնահատուկ արցախյան դպրոցը:**

— 25 տարի է, ինչ զբաղվում են Լեոնային Ղարաբաղի կամ Հարավային Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ: Իհարկե, աննկարագրելի դժվարությունները, արգելափող հանգամանքները շատ էին: Գաղտնիք չէ, որ մինչև վերջերս ԼՂԻՄ-ի հայկական հուշարձանները լրիվ փակի տակ էին, դրանց մասին խոսելը, գրելը դիտվում էր որպես ոտնձգություն, անցյալի «կրոնական տհաճ օջախների» վերակենդանացում և, ինչու չասել, նաև տեղական նացիոնալիզմ: Բացի այդ էլ մեր պատկերացումները դրանց մասին կցկտոր էին, գուտ բանասիրական բնույթի, քանի որ մարզի հուշարձանների գիտական հաշվառումն ըստ օրենքի չի կատարվել: Նույնիսկ խոշոր վանքային համալիրները մասնագիտական, մասնավորապես ճարտարապետական վերլուծության չէին ենթարկվել:

Արցախի հուշարձանները գտնվում են ճանապարհագրով, դժվար մատչելի լեռնածերպերին, անդնդախոր կիրճերում, թավուտ անտառների խորքերում: Այսուհանդերձ, քափական գրկանքներ կրելով, մեզ հաջողվեց ոչ միայն հաշվառման վերցնել մարզի հիմնական հուշարձանները, այլև տեղում հավաքված աղբյուրագիտական, վիմագրական և այլ հարուստ նյութերի քննարկմամբ ցույց տալ հուշարձանների ճարտարապետական արժանիքները, շուրաքանչյուրի հետ կապված այն կարևորն ու մնայունը, որ միաժամանակ արտացոլում է երկրամասի պատմության հերոսական դրվագները:

Տարիների ընթացքում անհրաժեշտություն զգացվեց ճարտարա-

պետական դասեր առնել, հուշարձանների չափագրություններ կատարել, սովորել ոչ միայն սիրողական, այլև ավանդի մակարդակի գունավոր սլադներ նկարել, որոնք պիտի քննություն բռնեին և արժանանային տպագրության պատվին:

Մեր վերջին ռուսերեն գրքում տեղ են գտել ավելի քան 1700 պատմաճարտարապետական հուշարձաններ: Այդ հուշարձանների զգալի մասը կառուցվել է վաղ, միջին և ուշ միջնադարում և բացառիկ դեր են խաղացել հայ ժողովրդի արցախյան հատվածի պատմական ճակատագրում: Դրանց թվին է պատկանում «Հայ ճարտարապետության հանրագիտարան» Գանձասարի վանքը, «Աշխարհում պահպանված քրիստոնեական ամենահին համալիրը»՝ Դադիվանքը, բազում անգամ ավերված, բայց «վերստին վերակառուցված» Ամարասը, քաղաքամայր Անիի «Բագրատունյաց ճարտարապետության ոճով» կառուցված Գոշալվանքը, վաղ հայկական շրջանի եզակի Ավան-Հոյիսիմեի տիպի բազմապսիդ Օխտ դոնի վանքը, Հայաստան երկրում, նաև Անդրկովկասում, երբևիցե կառուցված ամենախոշոր եկեղեցին՝ Շուշիի Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց վեհաշուք տաճարը, աշխարհի մեծագույն քարանձավներից մեկը, Ազոխ կամ Որվան ստորգետնյա անձեռակերտ պալատները, ԽՍՀՄ տարածքում պահպանված ամենատարեց և ամենամեծ տաճարը՝ Մխորաշեն գյուղում:

Այս կոթողները ճարտարապետական այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք են դրել լեոնային երկրամասի դեմքին և զգալի չափով հարստացրել հայկական ազգային մշակույթը և մարմնավորել արցախյան ճարտարապետական դպրոցը: Այն զարգացել է միջնադարյան Հայաստանի ճարտարապետական մյուս դպրոցներին (Անիի, Սյունիքի, Լոռու) բնորոշ ընդհանուր օրինաչափություններով: Ինչպես, օրինակ, եկեղեցիների հորինվածքում գլեխավոր-խաչաձև դահլիճների հարդարումը դեկորատիվ կամարներով, կտիտորական քանդակներով ու ջրամուտքերով, գավիթների ծածկերի իրականացումը փոխանցվող կամարներով: Միաժամանակ առկա են Արցախի ճարտարապետական դպրոցին բնորոշ առանձնահատկություններ. եկեղեցիների հորինվածքներում միանալ դահլիճի (XII—XIII դդ. Հայաստանի այլ մարզերում այդ հորինվածքով կառուցվել են հիմնականում մատուռներ, վանքային համալիրների փոքր եկեղեցիներ) անհամեմատ լայն կիրառումը: Մյուս կարևոր առանձնահատկություններից է եկեղեցիներում ուղղանկյուն բեմի զանգվածային կիրառումը: Հատկանշական են նաև Արցախի խաչքարերն ու մահարձանները, կեն-

ցաղային մոտիվներով արված բարձրաքանդակների առատությունը:

Արցախի հուշարձանների ազգային պատկանելությունը վկայված են հայ և օտարազգի պատմիչների հայտնած տեղեկություններով, հուշարձանների պատերին պահպանված բազմահազար փմագիր հայերեն արձանագրություններով, որոնք վաղուց հայտնի են գիտական աշխարհին և առարկության ենթակա չեն:

— **Մեր երկրի բարձր ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի հանդեպ վերաբերմունքը համարեց պարզապես անմարդկային, հուշարձանների առումով ինչպե՞ս է դա արտահայտվել:**

— Ցավոտ, ես կասեի շատ տխուր հարց շոշափեցիք: Ողղակի մատդ դրեցիր միացող վերքիս վրա: Տեղի տղության պատճառով հրճարավոր չէ այդ հարցին սպառիչ պատասխան տալ: Այսուհանդերձ, կաշխատեմ կոնկրետ փաստերով նշել, թե վերջին երեսուն տարիների ընթացքում ինչքան հայկական հուշարձաններ են ավերվել: Միայն մարզի տարածքում պայթեցվել, քանդվել, ավերվել և ամբողջովին կործանվել են 167 եկեղեցի, 8 վանքային համալիր, 120 հին գերեզմանատուն, 47 բնակավայր, 17 հազար երկհարկանի բնակելի տուն: Չարդվել, անհետ կորել և շինանյութի են վերածվել ավելի քան 1000 տապանաքար ու խաչքար, վիմագրություն, բուրդոզերներով քանդվել, հարթեցվել և վարելատեղի են վերածվել 13 պատմահնագիտական հուշարձան:

Պայթուցիկ նյութեր են օգտագործվել Մեծ Թաղլարի Ծծախոջ, Ագոխի քարանձավներում, Ամարաս և Կաղանկատույք գյուղատեղիներում, տակնուրա է արվել Սբ. Գրիգոր Լուսավորչի թոռան՝ Գրիգորիսի ստորգետնյա դամբարանը: Հորաններ են փորվել Դադիվանքի հրճագույն հուշարձանների հիմքերի տակ, միտումնավոր ստեղծելով հուշարձանն ավերելու բարենպաստ պայմաններ: Պեղումների ժամանակ հայտնաբերված հայկական մշակույթի նյութերը թաքցվել և ստուծախի առարկա են դարձել:

Հայկական հուշարձանների պահպանության ողղույթյանը ցուցաբերված անտարբեր վերաբերմունքը հրապուրում էր հանցագործ տարրերին, որոնք զանախառնության նպատակով ավերում են հուշարձանները, պղծում և թալանում գերեզմանները, այդ նպատակի համար օգտագործելով տեխնիկայի զանազան սարքավորումներ: Նման բարբարոսական թալանի են արժանացել այնպիսի հանրահայտ հուշարձաններ, ինչպիսիք են Գանձատարը, Խաթրավանքը, Գոշավանքը, Հակոբավանքը, Երեմյանեանց վանքը, Կոշիկ անապատը, Եղիշ Առաքյալի վանքը, Ծուշիի Բայկական 6 գերեզմանատները և այլն:

Այս ամենի մասին մանրամասն գրված է իմ կողմից 1972, 1984 թթ. կազմած ընդարձակ տեղեկանքներում, որոնք ժամանակին ողարկվել էին վերադաս մարմիններին:

Եթե մինչև 70-ական թթ. վերջերը հայկական հուշարձանները խրճամքով թաքցվում, տնտեսվում էին տպագրվող տուրիստական բարտեզներում, ուղեցույցներում, Լեռնային Ղարաբաղի տարածքում նշվում էին այնպիսի հուշարձաններ, որոնք ոչ մի առնչություն չուներ ԼՂԻՄ-ի հետ, մեկ-մեկ էլ, երբ նշվում էր որն է հայկական հուշարձան, ապա անսրայման աղավաղված անուններով, աղվանական, ադրբեջանական պատկանելությունը ընդգծելով: Այդպիսիք չկային Ադրբեջանական ԽՍՀ տարածքում գտնվող պետական պահպանության ենթակա պատմամշակութային հուշարձանների ցուցակներում: Դրանք հապշտապ թիպեցին ու կնքվեցին դարաբաղյան հայտնի իրադարձությունների ընթացքում, 1988-ի ապրիլին: Ըստ այդ հակագիտական ոռնացող ցուցակի, ԼՂԻՄ-ում չկա ոչ մի հայկական միջնադարյան հուշարձան: Այդպես են ցանկացել այդ ցուցակը կազմող մոգերը:

— **Ի՞նչ ճակատագիր են ունենալու հուշարձանները:**

— Արցախի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագիրը, ինչպես արդեն մի առիթով ասել եմ, մի կարևոր առաջընթաց քայլ է Ղարաբաղի պրոբլեմի արդարացի լուծման ճանապարհին:

Մարգում ստեղծված կառավարման հատուկ ձևի ներկա պայմաններում որոշ նախարրյակներ են ստեղծվել հուշարձաններն ավելի հանգամանորեն ուսումնասիրելու և պետական խոշոր միջոցներ ձեռնարկելու, դրանք վերականգնելու, ժամանակակից կյանքում օգտագործելու համար: Արդեն Ամարաս վանքը դարձել է գործող: Բանակցություններ են վարում Գանձատարն ու Գոշավանքը նույնպես այդպիսին դարձնելու համար: Համաձայնություն է ձեռք բերվել Ստեփանակերտում կազմակերպել հուշարձանների վերականգնման գիտատարտադրական միավորում, իր նախագծային-նախահաշվային խմբով: Ստեղծման, կազմակերպման ընթացքում է գտնվում «Ամարաս» շինարարական-վերանորոգման կոոպերատիվը, որի հիմնական անելիքն է լինելու հուշարձանների վերականգնումը:

— **Փիրքն ինչպե՞ս ընդունվեց ընթերցողների, հատկապես ձեր հայրենակիցների կողմից:**

— Կարճ ժամանակամիջոցում՝ 1980, 1985, 1988 թթ. լույս տեսած իմ երեք գրքերը բացառիկ չերն ընդունելություն գտան ընթերցող լայն հասարակության կողմից: Պահանջարկն այնքան մեծ էր, որ հուշար-

ձանների պահպանության ընկերությունը հարկադրված էր ցուցակներով ամբողջ տպաքանակը բաժանել հիմնարկ-ձեռնարկություններին: Մեզ մոտ և արտասահմանում տպագրվել են երկու տասնյակից ավելի դրական գրախոսություններ: Ընթերցողներից ստացվել են հազարից ավելի մամուլներ և հեռագրեր: Տպաքանակի մի զգալի մասը ուղարկվել է Լեոնային Ղարաբաղ: Թե ինչպիսի ընդունակության են արժանացել գրքերը իմ հայրենի երկրամասում, ուզում եմ մեջբերում կատարել մի պաշտոնական գրությունից, որը ԼՂԻՄ-ից ստացել է ՀԽՍՀ հուշարձանների պահպանության ընկերությունը. «Ամենայն իրավամբ կարելի է ասել, որ այդ գրքերը հեղափոխիչ նշանակություն են ունեցել մարզի հուշարձանների ճանաչման, ուսումնասիրման, պրոպագանդման, պահպանության և վերականգնման գործում: Ընկ. Ծ. Մկրտչյանի գիրքերը մեծ աշխտծություն և չթուլացող հետաքրքրություն են առաջացրել ընթերցողների շրջանում: Մարզի գրադարաններում, ցուցակներ-հերթեր են ստեղծված դրանք կարդալու համար»:

Գրքոթե այսպիսի բովանդակությամբ նամակներ են ստացվել Մոսկվայից, Բաքվից, անգամ արտասահմանից: Հեղինակի համար բաժնի են այսպիսի նամակները: Իմ երկարամյա տասուպանքի գնով արարված գրքերի այսպիսի գնահատականներն իրոք շատ բան են ասում:

Լավա՞ծ բան է՝ տասը հազար գրքերը առանց գրախանութ մտնելու մի քանի օրվա ընթացքում ընթերցողների սեփականությունն են դարձել: Դա ինձ առաջին հերթին պարտավորեցնում է, նոր աշխատանքի մղում:

#### — Ի՞նչ ծրագրեր ունեք:

— Իմ դավանանքը Ղարաբաղն է: Կլանքի խնդիրը՝ նրա անհաշիվ պատմաճարտարապետական հուշարձանների պրոպագանդումը: Պատրաստվում եմ Մոսկվայում հրատարակել «Արցախ» ծավալուն գունազարդ ալբոմ: Այս տարի կավարտեմ ԼՂԻՄ-ի հուշարձանների համահավաքը: Արդեն արտասահմանից պատվերներ են ստացել մի քանի օտար լեզուներով տպագրել «Արցախի պատմաճարտարապետական հուշարձանները» գիրքը:

Ուզում եմ վերադառնալ Ղարաբաղ, այնտեղ անելիքներ շատ ունեմ:

«Գրքերի աշխարհ», № 4, 1989 թ.

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԴԺՎԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Փոքր խմբագրության հյուրն էր մեր համերկրացի, պատմաբան, արցախագետ ԾԱՀԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԸ

— Ամեն անգամ, երբ Դուք գաղիս եք Արցախ, հայրենիքը տեսնելու ցանկությունից բացի, ունենո՞ւմ եք կոնկրետ գործնական նպատակներ: Այս անգամ ի՞նչ առաքելությամբ եք գտնվում այստեղ:

— Եկել եմ առաջադրանքներով ծանրաբեռնված: Նսիս ասեմ, որ առաջիկայում Արցախի մասին Հայաստանում կհրատարակվի հանրագիտարան: Ամբողջական հանրագիտարան տպագրելը անչափ պատասխանատու գործ է, ուստի՝ ես («ՀՀ» խմբագրության հանձնարարությամբ) անհրաժեշտ եմ համարել գալ Արցախ, խորհրդակցել առանձին մարդկանց հետ, որպեսզի հանրագիտարանի բառացանկում հանգամանափորեն ընդգրկվեն բոլոր կարևորագույն իրադարձությունները, Արցախի պատմա-մշակութային կյանքի հիմնական փուլերը:

Մյուս հանձնարարությունն ստացել եմ Հայաստանի գիտությունների ակադեմիայի «Լրաբեր» հանդեսի կողմից: Ինչպես գիտեք, հաջորդ տարի լրանում է Հայրենական պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 50-ամյակը: «Լրաբեր» հանդեսն իր համարներից մեկը լրիվությամբ նվիրելու է այդ նշանավոր իրադարձությանը, իսկ ինձ հանձնարարված է գրել ծավալուն մի հոդված՝ «Լեոնային Ղարաբաղը Հայրենական պատերազմի տարիներին»: Նախկինում ես գրել էի այդ թեմայով, սակայն խորհրդային կարգերի օրոք գրված բոլոր գիտական աշխատանքների, հոդվածների հիմքում ընկած էր մարքս-լենինյան մեթոդաբանությունը: Կոմունիստական գաղափարախոսության տիրապետության պայմաններում անթույլատրելի էր տպագրել այն ճշմարտությունը, որ Ադրբեջանն այդ պատերազմն օգտագործել է Ղարաբաղը հայաթափ անելու նպատակով: Հարցին նայելով բնակչության թվի տեսանկյունից, պետք է ասել, որ Լեոնային Ղարաբաղից 5—6 անգամ ավելի շատ մարդ է զինակոչվել, քան ադրբեջանական շրջաններից, կամ 2 անգամ ավելի, քան ամբողջ խորհրդային միության մեջ: Այդ ստեղծությամբ ես այստեղ նյութեր պիտի հավաքեմ, որպեսզի վերահիշյալ փաստերը վեր հանենք խորությամբ և բազմակողմանիորեն:

Եվ, վերջապես, գալիք սեպտեմբերին Լու-Անգեղոսի «Մասիս» և Երևանի «Նոր դար» մշակութային կենտրոնները նախաձեռնել են անց-

կացնել Արցախի մշակութային օրերը Ամերիկայում: Ուստի մի առաջադրանք ևս ունեն, պիտի պատրաստեն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» գրքույկ-տեղեկատու, որի մեջ կանոնադատնամ Ղարաբաղի պատմության, մշակույթի, պետականության ձևալորման ու զարգացման հարցերին:

— Այսօրվա դրությամբ մեր հանրապետության պատմության վերաբերյալ առկա է որոշ քանակությամբ փաստական նյութ: Պատերազմն իր հերթին ճնարավորություններ է բացել նոր ուսումնասիրությունների, պեղումների համար, և ինչպես Դոք առաջիք, անհրաժեշտ է այդ ամենը համակարգել, վեր հանել մեր պատմության առանցքային հարցերը, ստեղծել պատմական գրականություն: Այս ուղղությամբ կոնկրետ աշխատանքներ տարվո՞ւմ են:

— Եթե խոսենք Բայազետության կողմից ուսումնասիրվածության աստիճանի տեսանկյունից, ապա Արցախը դեռևս խոսքի տարածք է: Մեր արածները շատ չնչին են, մինչդեռ ուսումնասիրելու շատ բնագավառներ կան: Չէ՞ որ չորս հազար տարի շարունակ հայի ուղքը Արցախից չի կտրվել: Պահպանվել են մեր մշակույթի հուշարձանները, հատկապես վիմագրությունները: Երեք հարյուր տարվա ընթացքում, մինչև մեր օրերը, հավաքվել են ընդամենը 650 վիմագրություններ, որոնք հրատարակվել են Սեդրակ Բարխուդարյանի «Արցախ» սրահում: Հետագայում, երբ շրջում էի իմ հայրենիքում նյութեր հավաքելու նպատակով, հանդիպեցի հազարավոր վիմագրությունների՝ չուսումնասիրված, գիտությանը դեռևս անհայտ: Թեկուզ մի օրինակ. Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի մոտ գտնվող Դարպաստտ տեղամասում տեղադրված է խաչքարերի մի ամբողջ «անտառ», որը Ջուղայից, Նորադուզից հետո երրորդ խաչքար-գերեզմանոցն է: Պահպանված արձանագրություններից պարզվում է, որ դա 12—13-րդ դդ բնակավայր է, որը եղել է Արցախի կաթողիկոսի ժամանակավոր նստավայրը: Մոնղոլ-թաթարների հաճախակի հարձակումների պատճառով կաթողիկոսությունը Գանձասարից տեղափոխվեց համեմատաբար ապահով վայր՝ Դարպաստտ: Ցավոք, այդ խոշոր և հարուստ հնավայրը, ըստ էության, չի գրավել մեր հնագետ-պատմաբանների ուշադրությունը, մինչդեռ այն պարունակում է արժեքավոր նյութեր, որոնք խիստ կարևոր են մեր պատմությունն ընդհանրացնելու համար:

Դժբախտաբար, այս ուղղությամբ շատ պասսիվ են գործում մեր

պատմաբան-գիտնականները, այնինչ պատերազմի ընթացքը ստեղծել է նոր պայմաններ պատմական Արցախի գավառներն ավելի խորը ուսումնասիրելու համար: Քարվաճառի, Ֆիզուլու, Աղդամի, Կուրաթյուի շրջաններում պահպանվել են վանքեր, եկեղեցիներ, գերեզմանաքարեր իրենց վիմագրություններով հանդերձ: Իսկ դրանք մեր պատմության չգրված էջերն են: Ամբողջ ցավը նրանում է, որ այստեղ և Հայաստանում գիտնականները, հատկապես տիտղոսավորները, առաջնորդվում են նախկին ինքնաշարժով, ավելի շատ զբաղվում են «Կաթի-նետային գիտություն» ստեղծելով՝ օգտագործելով ձեռքի տակ եղած պատրաստ ուսումնասիրությունները: Սակայն, այս պահին ճիշտ կլինի այլ մոտեցում ցուցաբերել: Նախկինում կատարված պատմական հայտնագործություններն անընդհատ պետք է հարստացվեն ու լրացվեն նոր նյութերով:

— Պարոն Մկրտչյան, կցանականայի ծանրանալ մի շատ կարևոր հարցի վրա: Պատմության երջանիկ պահի թելադրանքով այս հինավուրց հայկական հողի վրա այսօր պետականություն է ստեղծվում: Արցախում և նրանից դուրս ապրող հայ մտավորականությունն ինչպիսի՞ ներդրում ունի մեր պետականության կայացման գործում:

— Ընդհանրապես, մտավորականությանը հատուկ է կոնյուկտուրային մտածողությունը: Անցյալ տարի, երբ դասախոսություններով հանդես եկա Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի դասախոսների և ուսանողների առջև, նշեցի, որ մանկավարժական ինստիտուտի շենքին նոր ցուցանակ կացնելը դեռևս ոչինչ չի նշանակում: Համալսարանում, որպես կանոն, պիտի աշխատեն հեղինակավոր և տիտղոսներով գիտնականներ: Ծառերն իմ խոսքից նեղացան, բայց ես հիմա էլ նույնը կասեմ: Գյուղական դասատուներին համալսարանում պաշտոնավորելու կամ չկայացված դեկավար որոշ անձանց ժամեր տրամադրելու դեպքում համալսարան չենք կարող ստեղծել: Ես գիտեմ արցախցի երիտասարդ մասնագետների, որոնք գիտության թեկնածուներ ու դոկտորներ են, որոնց չեն հրավիրել համալսարանում աշխատելու, մինչդեռ նրանց կարիքն ավելի շատ է զգացվում, քան՝ տարեց մարդկանց:

Մտավորականության ճնշող մասը պատմիվ, կրավորական դիրքերում է: Պատճառներից մեկն այն է, որ նրա որոշ ներկայացուցիչներ մինչև վերջ մնալով նախկին կոմունիստական կադասպարների մեջ, չեն

հավատացել մեր շարժման հաջողությանը, մի կողմ են քաշվել համագային պայքարից, իսկ հավատալուց հետո էլ արդեն ուշ էր: Մյուս պատճառը, որոշ մտավորականներ ձգտում են միանգամից մի երկու պաշտոն համատեղել ու միաժամանակ հայրենասեր երևալ: Աս ոչնչի չօգնող, ստավել ևս տհաճ երևույթ է:

1888 թվականի ազգային շարժման առաջին փուլում Արցախին օժանդակելու նպատակով Երևանում ստեղծվեցին հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, որոնց նախկին մարտական տրամադրությունները, հայրենիքին օգնելու միտումներն ավելի ուշ վերածվեցին իրար նկատմամբ հակասությունների:

ԸՂՀ պետական մարմինների պատասխանատու աշխատողները բավականին անելիքներ ունեն հրանց խելքը, կարողությունները, եռանդը Արցախի համար օգտագործելու համար: Պակասում են շարժիչ ուժը, նախաձեռնությունը:

**— Որպես գրողների և նկարիչների միության անդամ, հ՞նչ կասեք մեր հանրապետության գրական-մշակութային կյանքի մասին:**

— Արցախի մշակույթը հարստությամբ կարող էնք ներկայացնել միայն մեր նարտարապետությամբ: Իբրև արվեստաբան, գրող, կասեմ, որ այսօրվա դրությամբ Արցախում ստեղծված արվեստի գործերը թեմաստիկ առումով շատ աղքատիկ են: Այսպես, մեր շարժման վեց տարիների պայքարը շարտահայտվեց նկարիչների ստեղծագործություններում, ունիվերսալությունների տակ՝ նկարներում ապրող մարդկանց կյանքը շարտացույցեց հրանց կտավներում: Իսկ եղած գործերով էլ չի կարելի ներկայացնել Արցախը՝ հանրապետությունից դուրս: Նկարիչների աշխատանքի գնահատականին էս և շատ-շատերը հանգել ենք անզույ առեկտերից Երևանում կազմակերպված «ԸՂՀ նկարիչների ստեղծագործությունները» ցուցահանդեսը դիտելիս:

Դրա կողքին, սակայն ունենք ժողովրդական ստեղծագործության հիանալի նմուշներ՝ կարպետներ, խորթիններ, արցախյան տարազներ, փայտից ու կավից պատրաստած գործիքներ, որոնցում արտահայտված են մեր կենցաղը, նիստուկացը, և որոնք արժանի են ներկայացնելու աշխարհի ցանկացած երկրում: Ժամանակն է, որպեսզի մշակույթի նախարարությունը կազմակերպի ժողովրդական ստեղծագործությունների, կիրառական արվեստի լավագույն նմուշների ցուցադրում:

Ինչ վերաբերում է գրողների միությանը, ապա պատեղ անհամեմատ ավելի շատ են տպագրում բանաստեղծների գործերը: Դա և լավ

է, և վատ: Գրական կյանքի աշխուժացման և նոր կարող ուժերի հայտ բերելու իմաստով լավ է, իսկ երբ դա արվում է որակի հաշվին, դառնում է մի տեսակ ինքնախաբեություն:

Ամեն ոտանավոր գրող չէ, որ բանաստեղծ է կոչվում և ամեն մի բանաստեղծություն չէ, որ պիտի տպագրվի: Պատերազմի, շրջակական մեջ գտնվող պետության գրողներն այլ հոգսեր պիտի ունենան, իսկ բանաստեղծների նոր ստեղծագործություններն ավելի հարմար կլինի ներկայացնել ավանախի ձևով:

Ինձ մի հարց է ավելի շատ մտահոգում, որի կապակցությամբ էլ կանեմ իմ դիտողությունը: Խուբը, պետական մրցանակներ շնորհելու մասին է: Ծատ դեպքերում պետական մրցանակներ է տրվում ոչ լիարժեք գործերին, իսկ նրանք, ովքեր տարիների քրտնաջան աշխատանքով Արցախի մասին արժեքավոր, մնացում գործեր են ստեղծել, մնում են ուշադրությունից դուրս: Արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանը 15 տարի անընդհատ զբաղվել է Արցախի միջնադարյան մշակույթի հարցերով, հայտնի դարձել իր մենագրությունով, որը տպագրվել է մի շարք լեզուներով: Այդ գիրքը, չգիտես ինչու, ուշադրության չի արժանացել: Նույն ձևով անտեսվել են Մանյա Ղազարյանի «Արցախի կիրառական արվեստը» կամ «Լարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները» գրքերը, որոնք ունեցել են մի քանի հրատարակություն, այն էլ բազմաթիվ լեզուներով:

Լրագրային մի հոդվածի կամ հապճեպ տարված մի բանաստեղծության համար չի կարելի պետական մրցանակ պարգևել: Վերջապես, պետական լուրջ հարցին պետական մոտեցում է պետք: Հույս ունեմ, որ որոշակի կարգ ու կանոն կմտցվի այս գործում: Աս, արդեն, ուրիշ խոսակցության նյութ է:

**— Մի քանի տարի առաջ հարց էր հարուցվել Արցախի պատմության վերաբերյալ դարոցական դասագրքերի հրատարակման մասին: Այս ուղղությամբ գործընթաց ծավալվե՞լ է, թե ոչ:**

— Ինչ որ բան արվել է, սակայն դա թերի է, ոչ ամբողջական, ուստի օրվա պահանջները չի կարող բավարարել: Պատմության լիարժեք դասագրքեր այժմ հնարավոր չէ հրատարակել, որովհետև Արցախի պատմությունը հանգամանորեն ուսումնասիրված չէ: Այդ ուղղությամբ գիտնականների կոլեկտիվ ջանքերը գործի դնելուց հետո միայն կարելի է հասնել շրջափելի արդյունքի: Ուրիշ բան է արդեն կայացված պետության դասագիրքը, այլ բան է նոր ձևավորվող պետության դասա-

գիրքը: Բոլորովին վերջերս ինձ ասացին, որ Երևանում ձեռնամուխ են եղել Արցախի պատմությանն և աշխարհագրության դասագրքերի հրատարակման գործին:

— Վերջում՝ թերթի մասին: Ինչո՞ւ է կարևորվում նրա դերը մեր օրերում:

— Ես կցանկանայի, որպեսզի դուք թերթում հաճախակի տպագրեք վերջին 70 տարիների ընթացքում Արցախում կատարված կարևորագույն, ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձություններին առնչվող փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Ադրբեջանի հաշտության քաղաքականությունը: Թերթը կարևորություն պիտի տա նաև անցյալի մեր նշանավոր քաղաքական ու պետական գործիչների ելույթներին, որպեսզի ժամանակակից սերունդը ճիշտ պատկերացում կազմի մեր ազատագրական պայքարի ակունքների մասին: Դրանով մենք գիտնականներին կտանք նորանոր փաստեր, դիվանագետներին կզիջենք անհրաժեշտ տեղեկություններով:

Լավ կլինի առաջիկա համարներում տպագրեք 1919—20 թթ. դարաբաղցիների տասնյակ նամակները հասցեագրված գորտլար Անդրանիկին, ինչպես նաև 1917—20 թթ. Ղարաբաղում կայացված ինը համագումարների նյութերը, հոշակագրերը և այլն: Անհրաժեշտ է հրատարակել Ադրբեջանի կոմկուսի ղեկավարների գործունեությունը լուսաբանող փաստաթղթեր: Այն մասին, թե ինչպես էին նախապես ծրագրավորված կարգով մեր երիտասարդությանը քշում մարզից դուրս չհարարական հրատարակները, գործարանները:

Ծառ կարևոր փաստաթուղթ է 1949 թվականին Ադրբեջանի կոմկուսի և ՍՍՀՄ ժողովմխորհի Բերիաչի ապարատի (արտակարգ կոմիտարիատ) որոշումը, ըստ որի 25 հազար մարդ աքտորվեց Ալթայի երկրամաս և այդ ստոր ծրագիրը իրագործվեց մի գիշերվա (հունիսի 14-ի) ընթացքում: Սա դեռ չգրված փաստ է, որի մասին պարտավոր ենք իմանալ:

Դրան հաջորդեց Ադրբեջանի կառավարության 1951 թվականի դեկտեմբերի 20-ի նոր որոշումը Ղարաբաղից 200 տոննա արտապահային բուրդ վերցնելու մասին: Ղարաբաղցի դեկտեմբեր ամսում ոչխար չի խուզում, հետևաբար չէր կարող բախարարել նրանց պահանջը: Ազերիները բռնությամբ մտնում էին տները, քանդում անկողիները՝ ներքնակներից բուրդը հանելու մտադրությամբ: Ծառ կանայք չդիմա-

նալով այդ խալտաակությունը, իրենց թոճրի մեջ այրեցին: Նման բարբարոսական դեպք աշխարհը վաղուց չէր հիշում: Առ այսօր այս վայրագությունը մնացել է չլուսաբանված և չտպագրված:

Դրանց կողքին կան մեր օրերի համար հրատապ նշանակություն ունեցող բաղկանաչափ նյութեր, որոնք արժանի են ուշադրության: Ես խոստանում եմ առաջիկայում խմբագրությանը արամադրել այդ նյութերը, իսկ թերթը դրանք տպագրելով մեծ ծառայություն կմատուցի ճախ՝ նոր պետության կայացմանը, հալազիտությանը, ինչպես նաև կուճեճա դաստիարակչական մեծ նշանակություն:

«ԼՂ Հանրապետություն», № 11, 8 08 1994 թ.

Հարցազրույցը վարեց  
Ռուզան Իշխանյանը

Уважаемый господин МКРТЧЯН Ш.,

Я с удовольствием высылаю вам вашу книгу «Арцах», которую я — как издатель в Жаклии Ячева — как переводчица, выпустила на болгарском языке.

Нам очень бы хотелось, чтобы она познакомила болгарскую общественность с глубокими причинами, лежащих в основе карабахского конфликта, посредством доказательств, собранных вами, о принадлежности населения и территории этой области к Армении. Это будет мотивировать глубже отношение болгаров с той проблеме, независимо от того, что наш народ традиционно питает самые хорошие чувства к армянам и доказывает их в течении многих десятилетий.

Болгарские газеты уже написали много хороших слов об этой книжке и она понравилась многим болгарским интеллигентам и армянам, живущим в разных городах Болгарии.

Конечно, меня радует то, что книжка получалась очень приятной и надеюсь, она покажется вам такой же.

С надеждой встретиться с вами лично в Армении, которую я очень давно мечтаю увидеть!

Самые лучшие пожелания!

ГИНКА БИЛЯРСКА

14. 03. 1994 г.

София 1113, ул. А. Чехова 58 А, ап. II  
«ЛИТТЕРА-Б»

# ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՅՂ ԻՆՉ ԵՔ ԱՆՈՒՄ, ՀԱՐԳԱՐԺԱՆ ԳՈԿՏՈՐ-ԳՐՈՖԵՍՈՐՆԵՐ

Վերջին 4—5 տարիների ընթացքում, արցախյան հուժկու շարժման բարեոսար ազդեցության տակ, հրատարակվել է ոչ քիչ գրականություն: Արժեքավոր գրքերի մասին գրելու հարկ չկա, քանզի դրանք իսկույն կեթ գրավեցին մասնագետների ուշադրությունը և դարձան ընթերցողների սեփականությունը:

Սակայն պիտի խոստովանել, որ այդ ամենի հետ, այդ ամենի կողքին հրապարակվել են Արցախ-Ղարաբաղին վերաբերող այնպիսի գրքեր, որոնց արականության չափը անկարելի է ձևակերպել որևէ հասկանալի բնորոշմամբ: Մեր նպատակը չէ մանրամասն քննել կամ գրախոսել այդ գրականությունը: Բայց, այնուամենայնիվ, անկարելի է աչք փակել կատարվածի հանդեպ: Ուստի պարտք համարեցի առնվազն անաչառությամբ ընթերցողների ուշադրությունը բևեռել որոշ հեղինակների կողմից թույլ տրված անհամոզուծելի պատկերի, արատավոր թերությունների և դրանցից բխող հետևանքների վրա: Առավել ցավալի է, որ նրանց հեղինակները տիտղոսակիր գիտնականներ են, դոկտոր-պրոֆեսորներ, թղթակից անդամներ, պարզապես ինձ համար համակրելի և հոգեհարազատ մարդիկ:

Ինչպիսիք: Սպասվող դժգոհությունով, տողերիս գրողին դատարիետող աղմուկ-աղաղակով հանդերձ հույս է փայփայվում, որ այդ գրքերը, որոնց մասին խոսք կլինի, վերահրատարակելու դեպքում հաշվի կառնըվեն միայն ազնիվ մղումից արված դիտողությունները:

\*\*\*

«Հայաստան» հրատարակչությունը 1991 թ. 20 հազար տպաքանակով լույս է ընծայել ՀՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Խոջաբեկյանի «Արցախը փորձության ժամին» աշխատությունը: Ծանոթանալով նրա հետ, առաջին հերթին զարմանում ես հեղինակի քաղաքական անգիտության ու գիտական անբարեխղճության վրա: Ներածականի կամ հեղինակի

խոսքի փոխարեն, գրքում հենց սկզբից բավական մեծ տեղ են բռնում «Անհատի պաշտամունքի հետևանքները» (էջ 3—20) և «1988 թ. պատմության դասերը» (էջ 20—42), միանգամայն ավելորդ, աշխատությունը աղճատող գլուխները: Ապշում ես, թե ինչպես կարելի է Երևանում 1991 թ. գիրք հրատարակել ու միայն մեկ էջում 9 անգամ հիշատակել, հեղինակի բառերով «տեղին կլինի դիմել Վ. Ի. Լենինին» (էջ 13): Առավել զայրացուցիչ է, որ արև. Վ. Խոջաբեկյանը փորձում է Արցախի հիմնահարցը կարելի անհատի պաշտամունքի, իսկ դարաբաղցիների «հուզումների գաղափարական ակունքը Ադրբեյջանի պատմաքանների կողմից հալ ժողովրդի պատմության և մշակույթի կուպիտ» խեղաթյուրման հետ (էջ 5): Դրանով իսկ, ինչպես պնդում էին շատերը, անցյալի հոռի բարքերի վերացման և կեղծարարների վարքագիծը չափավորելու դեպքում, իբր հարցը ինքնըստիներջան կվերանա, հայերը կհանգստանան, և կյանքը կգնա սովորական հունով: Ինչպիսի՜ մոլորություն:

Խոսելով Լեոնային Ղարաբաղի բնակչության քանակի և ազգային կազմի տոկոսային հարաբերությունների մասին, հեղինակը գրում է. «... մարզում հայ բնակչությունը ավելացավ 18,9 տոկոսով, այսինքն՝ 1926 թ. 111,7 հազարից 1939 թ. հասավ 132,8 հազարի: Նույն տարիներին մարզի բնակչության ընդհանուր թիվը 125,3 հազարից հասավ 159,8 հազարի կամ ավելացավ 20,4 տոկոսով: Դրա հետևանքով հայերի տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվակազմում կրճատվեց և 1930 թ. իջավ 83,1 տոկոսի» (էջ 63): Անհասկանալի է. մի դեպքում հայերն ավելացան, այսքան հազարից հասան այսքան հազար մյուսում՝ կրճատվեցին, այն էլ որտեղից հարուսված 1930 թվականին դարձան 83,1 տոկոս: Այնուհետև Վ. Խոջաբեկյանն իր գրքի հաջորդ՝ 64-րդ էջում գրում է. «Լեոնային Ղարաբաղի բնակչության թվակազմում հայ բնակչության բաժինը զգալիորեն նվազեց և 1959 թ. իջավ 84,4 տոկոսի»: Ըստ նրա բերած տեղեկությունների, եթե 1930 թ. հայերը կազմում էին 83,1, իսկ 1959 թ. 84,5 տոկոս, ապա տարբերությունը դրական է՝ +1,3 տոկոս, որը բոլորովին չի վկայում հայ բնակչության «զգալիորեն նվազելու», այլ ընդհակառակը փաստում է մի փոքր ավելանալու մասին: Մինչդեռ իրականում դա այդպես չէ: Եթե հեղինակը, խմբագիրը ցուցաբերեին տարրական բարեխղճություն, ապա, անկասկած, չէին լինի այս հակասությունները, քանի որ խնդրո առարկա գրքում (էջ 66) զետեղված «Ղ.ԻՄ-ի բնակչության թիվը և ազգային կազմը մարդահամարի տարիներին» աղյուսակը միանշանակ վկայում է,



որ 1923 թ. հայերը կազմում էին մարզի բնակչության 96, 1926 թ.՝ 89,1, 1939 թ.՝ 88,1, 1959 թ.՝ 84,4, 1989 թ.՝ 76,9 տոկոսը: Ճշգրտման կարգով նշենք, որ ԼՂԻՄ-ի բնակչությունը 1939 թ. մարդահամարի տրված լիցենզիայով եղել է ոչ թե 159,8 հազար, ինչպես ներկայացված է գրքում, այլ 150,8 հազար մարդ:

Այժմ տեսնենք ինչպես են կատարվել «կարմիր շարդերի գոն» դարձած հայ փախստականների հաշվարկները: «Բռնագաղթի նեոնալիզմը 1988—1990 թթ. Ադրբեջանից, իրենց բնօրրանից, տուն ու տեղից արտաքսվեցին ավելի քան 500 հազար հայ բնակչություն (արդև՝ քաղաքային հայեր կաշիմ Ադրբեջանում— Շ. Մ.), որի շուրջ 368 հազարը մագապործ փախավ Հայաստան, մնացածը՝ երկրի այլ վայրերը» (էջ 88): Սույն տեղեկությունները վերափոխված ձևով կրկնվում են 1991-րդ էջում. «1988—1990 թթ. Ադրբեջանից բռնագաղթված հարյուր և հազարավոր (ո՞ր մնաց ավելի քան 500 հազարը— Շ. Մ.) փախստականներից 368 հազարը մեկնել են Հայաստան, շուրջ 300 հազարը մնացել են (որ— Շ. Մ.) հանրապետությունում, իսկ մնացածը տեղափոխվել են հանրապետության սահմաններից դուրս»: Սրանով էլ չբավարարվելով՝ մեր պատվական ժողովրդագիրը, հավանաբար իր բերած թվերին չհավաստարով ու նաև թվերից բան չհավանարով, մի արիչ առիթով դարձյալ անդրադառնում է փախստականների թվաքանակը պարզելու հարցին: Բայց ինչպես ասում են, ունքը շինելու տեղը, աչքն է հանում: «Պաշտոնական տվյալներով (ինչ է, վերոհիշյալ թվերն անպաշտոնական էին— Շ. Մ.) 1983 թ. (այո՛, այո՛ 1983 թ. -- Շ. Մ.) նոյեմբերի 22-ից (իսկ մինչև նոյեմբերը՝, չէ որ փախստականների հոսքը սկսվել էր փետրվարից— Շ. Մ.) մինչև 1989 թ. ապրիլ ամիսը հանրապետությունը ժամանեցին ավելի քան 180 հազար բռնագաղթված փախստականներ» (էջ 96): Նախ եթե ընդունենք, որ 1983 թ. պետք է լինի 1988 թ. և, եթե նշվում է՝ նոյեմբերի 22-ից... ապա հասարակ տրամաբանությունը պահանջում է գրել, թե 1989 թ. ապրիլ ամսի ո՞ր օրը, քանզի հրապարակվում են պաշտոնական տվյալներ: Սակայն գրքի 108—109-րդ էջերում ըստ նույն կրկնված մտքի տարբերակի, այս անգամ՝ «տեղական խորհուրդների տվյալներով 1988 թ. նոյեմբերի 22-ից մինչև 1989 թ. հուլիսի վերջը հանրապետությունը ժամանեցին ավելի քան 188898 հայ փախստականներ»: Դե՛, սիրելի՛ ընթերցող, արի ու գլուխ հանիր այս թվերից:

Եթե, իրոք, կես միլիոնից ավելի հայեր էին ապրում Ադրբեջանում, որից «ավելի քան 500 հազարը» բռնագաղթի է ենթարկվել, ապա ի՞նչ

կարիք կար երկու էջ առաջ (ինքնամերկացման համար) գրել, թե 1979 թ. մարդահամարի տվյալներով Ադրբեջանում հայերի թիվը կազմում էր 475,5 հազար: Ավելացման մասին խոսք լինել չէր կարող, քանի որ ինչպես հաշվարկել է մեր հեղինակը, 1970—1979 թթ. հայերը Ադրբեջանում պակասել էին 25,5 հազարով կամ, «տարեկան միջին հաշվով Ադրբեջանը լքել է 4—5 հազար հայ» (էջ 86): Հայտնի է, որ այդ միտումը ավելի մեծ չափերով շարունակվել է հետագա տարիներին: Բերված և չբերված նմանօրինակ բազմաթիվ ու բազմազան երիցս կրկնվող թվաբանական անվույթ հաշվարկներից գրեթե անհնար է լրիվ պատկերացում կազմել, թե ի վերջո ինչքան գաղթական է եկել Հայաստան, ինչքան գնացել այլ հանրապետություններ: Ել ընդհանրապես ինչքան հայ էր բնակվել Ադրբեջանում: Հայտնի չէ նաև, թե հայերը քանի բնակավայր, քանի տուն և քանի հազար քառակուսի կմ հարկական տարածք են թողել: Այս կարևոր հարցերի պատասխանը, ամառ, չես գտնի վ. Խոջաբեկյանի գրքում, թեև աշխատության մեծ մասը նվիրված է գաղթականներին: Եթե Հայաստանի թիվ առաջին ժողովրդագիրը այս այրող հարցերին այսօր պատասխան չի տալիս, ապա ումի՞ց և ե՞րբ պիտի ակնկալի դրանց պատասխանը:

Այնհայտորեն զգացվում է, որ հեղինակը իր աշխատությունը շարադրելիս հիմնականում օգտվել է լրագրային նյութերից: Սակայն, դժբախտաբար, դրանք որոշակի մշակման չեն ենթարկվել, ընդհանրացման պրիզմայով չեն անցել: Կարևորություն չի տրվել առաջնային, հանգուցային հարցերը լուսաբանելու համար անհրաժեշտ թվերի ու տեղեկությունների ընտրության հարցում: Այն տպավորությունն էս ստանում, որ գիրքը ունի տասնյակ հեղինակներ, իրենց ոճով, նախասիրությամբ, արտահայտվելու որոշակի եղանակով հանդերձ: Մի տեղ տեքստը հարթ ու հստակ է, մի այլ տեղում՝ անկազմակերպ ու ձգձգված, երրորդ դեպքում զգացվում են լեզվական, շարահյուսական մեղանշումները, չորրորդում... տասներորդում մեկը մյուսին հակասող անհաշիվ (մեծ մասամբ անտեղի օգտագործված) թվերի հեղեղի մեջ կորչում են միտքը, ասելիքը և այլն, և այլն:

Այսպիսով «ավելի քան 500 հազարը» դառնում է «հարյուր հազարավոր» «շուրջ 368 հազարը»՝ ավելի քան 198898 հայ փախստականներ»: Չանձրացնելու չափ կրկնվում են ոչ միայն թվերը, այլև սրտգունակ ճշմարտությունները:

«Արցախը փորձության ժամին» գրքում ամբողջ 6 էջ նվիրված է անգուսպ փառաբանության, սեղանապետի կեցվածքով գովաբանվում

Է հնդիմակի բարերարը: Այս հատվածը վերջին 30—40 տարիների ընթացքում մեզանում տպագրված եզակի դեպք է՝ քծնամքի մի չգերազանցված օրինակ: Այս այն դեպքում, երբ ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ ՀՀ Գիտությունների ակադեմիան տարիներ շարունակ գրեթե մատնեցված է անգործության: Մի՞թե ակադեմիայի անտարբերության ու անձարակության հետևանքով չէ, որ հայերս չկարողացանք ժամանակին արժանի հակամարտված տալ մեր պատմությունը լկող, մեր մշակույթը յուրացնող, մեր ժողովրդի արժանապատվությունը մրտող բախտախնդիրներին:

«Լույս» հրատարակչությունը 1990 թ. տպագրել է աշխարհագրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սերգեյ Մելքունյանի «Լեռնային Ղարաբաղ» գիրքը: Մի հողվածի սահմաններում անգամ անհնար է մեկ-մեկ թվարկել գրքում տեղ գտած կոպիտ սխալները, որովհետև դրանց քանակը հազարից ավելի է: «Մեհյան» թերթը իր այս տարվա 3,4 և 5 համարներում շարունակաբար տպագրել է պատմաբան Ս. Սարգսյանի «Չիրակնացված մտահոգացում կամ ինչի է հասցրել գիտական անբարեխղճությունը» վերնագրով ընդարձակ գրախոսությունը:

Իրոք, «որտեղից այսքան խանապիրություն», հայկականը աղբյուր-չանական դարձնելու միտումնավորություն, անմիտ մեկնաբանություններ, մերկայարանոց հայտարարություններ, ինքնահնար, երևակայական ստուգաբանություններ: Զարմանալի է, որ անվանի աշխարհագրագետը աղոտ պատկերացում ունի իր փոքրիկ Հայրենիքի՝ Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի քանակի և նրանց տեղագրության մասին: Առավել ցավալի է, որ հայ պրոֆեսորը հայկական գյուղերից մի քանիսը ներկայացնում է որպես աղբյուրական, իսկ մի մասը դուրս թողնում իր տեսադաշտից: Դեռ ավելին, պրոֆեսոր Մելքունյանը մի առանձին եռանդով «նորացնում է» հայկական հիմնախորհրդի պատմությունը, հետ ու առաջ տանում պատմական հուշարձանների կառուցման դարերը:

Մի խոսքով, դժվար է ասել՝ այս գրքի բերած օգո՞ւտն է շատ, թե՞՞ վնասը: Մի բան պարզ է. այն արդեն դարձել է թյուրիմացությունների ու սպակոյմնորոշումների աղբյուր:

Երևանում, 1989 թ. ոտներեն լեզվով տպագրական բարձր մակարդակով լույս է տեսել ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վ. Հարությունյանի «Հայ ժողովրդի բարե տարեգրությունը» աշխատությունը: Ափսո՞ւ, շա՞տ ափսոս, որ հայ ճարտարապետության պատմության երախտավոր մասնագետը իր մեծարժեք մեծագրության մեջ թույլ է

տվել երկու սկզբունքային նշանակություն ունեցող սխալ, որոնք անմիջապես արժանացել են աղբյուրականի վայ գիտնականների դրվատանքին և արդեն օգտագործվում են մեր դեմ: Ահա դրանք. 1) Հայաստանի հնագույն շրջանի հուշարձանները ներկայացված են որպես ուրարտական, 2) Հայաստանի Հյուսիսարևելյան պատմական նահանգները՝ Արցախը և Ոսիքը, դիտարկված ոչ ավելի, ոչ պակաս՝ «համայնք»: Այս հասարակ գոյականը ազեթների դուրը շատ է եկել, և հորթի հրճվանքով վկայակոչում են իբրև սկզբանդյուր, հայ ճանաչված հեղինակից բաղված փաստարկ և դրանով հիմնավորում արցախահայրության եկվորության վարկածը և ապա այն բայնորեն տարածում ամենուրեք:

Բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սմբատ Ավագյանն իր նոր՝ «Արցախը հայ մշակույթի օջախ» գրքով («Գիտելիք» հրատարակչություն, 1991 թ.) գալիս է որերո՞րդ անգամ ասացուցելու, որ գիրք արարելու համար բնավ պարտադիր չէ բայնությանը ու խորությանը բացահայտել թեման, հանգամանորեն ուսումնասիրել աղբյուրագիտական նյութերը: Ասվածի պերճախոս վկայությունը նշված գիրքն է: Արցախի դարավոր մշակույթի և նրա խաղաղացած դերի մասին լուրջ խոսակցություն բացելու փոխարեն հեղինակը գնացել է նյութ շինելու հեշտ ու տրորված ճանապարհով, թերթերում, տարիներ առաջ տպագրված հոդվածներից ու թղթակցություններից կազմելով մի ճապաղ ժողովածու: Հավակնոտ վերնագիրը չի ընդգրկում թեման: Հեղինակը, ինչպես ժողովուրդն է ասում, առաջնորդվել է «մոզին եզան տեղ անցկացնելու» կենսափորձով:

Ընդհանուր առմամբ, գիրքը խիստ թերի է, կիսատ-պոստ, և այս վիճակով չպետք է հրատարակվեր: Ո՛չ գիտական, ո՛չ քաղաքագաղափարախոսական և ոչ էլ ճանաչողական առումով նա չի նպաստում ոչ արցախագիտությանը և ո՛չ էլ արցախյան շարժմանը: Ո՞ւմ է պետք անպատասխանատու ձեռքով կազմած աշխատությունը, որ իր մեջ նոր բան չի պարունակում, նախկինում ասվածի, գրվածի վրա նոր բան չի ավելացնում:

Եվ բացի այդ, ո՞վ է թույլ տվել հեղինակին Արցախի մշակույթի գործիչների ցուցակից ջնջելու միջնադարի մատենագիրներին, ճարտարապետներին, նկարիչներին, գրողներին: Ո՞վ է թույլ տվել նրան անտեսելու, մոռացության տալու գրչության ու դպրության կարևորագույն օջախները, արհեստներն ու արվեստների հայտնի կենտրոնները: Ինչո՞ւ անհասկացողի տեղ դնել ընթերցողին և չթողնել, որ նա գաղափար կազմի, որ Արցախը 4 հազար տարվա բնթացքում շարունա-

կարար եղել է հայկական, և այնտեղ ստեղծված մշակույթը պատկանում է հայ ժողովրդին: Ո՞վ է թույլ տվել հարգարժան պրոֆեսորին, որ Արցախի բազմադարյան մշակույթի պատմությունը սեղմելով, կրճատելով՝ բերի հասցնի նորագույն ժամանակները և սղն տեղալորի XIX—XX դդ. սահմաններում: Այստեղ պրն. Ավագյանը, արդյոք, կամա թե ակամա չի՞ ձայնակցում արքեպիսկոպոսի կեղծարարներին, որոնք, ինչպես նշվեց, արցախահայությանը եկվորներ են համարում՝ XIX դ. երկրորդ քառորդի սկզբներին կազմավորված հանայնք ներկայացնում: Հարկավոր է պահի լինել, լքջորեն մտածել կատարված հետազոտությունների մասին:

Ուրախալի է, երևույթն էլ գովելի, որ հաճախակի տպագրվում են նաև Լեոնային Ղարաբաղի հանրապետության քարտեզները: Դրանք հիմնականում հաշտված գործեր են և, բնականաբար, գրավում են լայն հասարակայնության ուշադրությունը:

Բոլորովին վերջերս ՀՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Ավագյանի և Ա. Գրգևարյանի հեղինակությամբ հրատարակվել է «Լեոնային Ղարաբաղի հանրապետության բնակչության քարտեզը», որը սակայն, ինչպես նկատվել է, թերի է, ունի բազմաթիվ լուրջ սխալներ, և այժմյան ռազմաքաղաքական բարդ իրավիճակում ինչքանո՞վ են նպատակահարմար նրա տպագրությունը, առաքումն ու տարածումը: Աններելի է, որ քարտեզում տեղ չի գտել Արցախի նորընծա հանրապետության շրջաններից մեկը՝ մարտնչող Ծախումյանը: Քարտեզում մի շարք հայկական բնակավայրերի անունները գրված են ադրբեջանական-ռուսական տարբերակով: Զարմանալի է, որ նշված են ազերիներին «պատկանող» տեղանուններ, որոնք գոյություն չունեն, չկան: Բարոյաիրավական առումով որքանով է անհրաժեշտ, երբ Արցախի հանրապետությունում ազերիներ չեն բնակվում, երբ հայկական հիմնավորք երկրամասը մաքրվել է եկվոր տարրերից, Երևանում տպագրվի քարտեզ և մեկ առ մեկ ցույց տրվի արդեն գոյություն չունեցող բնակավայրերը: Սա քաղաքական կարճատեսություն է, եթե ավելին չասենք:

Քարտեզի և նրանում նկատված թերությունների մասին վաստակաշատ արցախագետ Ս. Կարապետյանի գրախոսությունը տպագրվել է «Երկիր» թերթում (20 մայիսի 1992 թ.): Թվում էր, թե պատվարժան պրոֆեսորը՝ Գ. Ավագյանը, ըմբռնումով կրկնում էր լուրջ ընկերոջ իրավացի դիտողությունները և անհապաղ կղաղարեցներ քարտեզի տարածման գործընթացը: Բայց, ախա, այդ չարվեց: Ստացվում է, որ մենք՝ ինքներս առատ նյութ ենք մատակարարում հակահայկական քարոզչությանը:

Ամփոփենք: Որո՞նք են մեր հեղինակների թույլ տված այսքան շատ սխալների հիմնական պատճառները: Առաջինը՝ ավելորդ շտապողականությունը և առաջադրված հարցերի անբավարար իմացությունը: Երկրորդ՝ պակաս դեր չի խաղացել հրատարակչությունների կողմից պահանջկոտության բացակայության հանգամանքը: Այն տպավորությունն էս ստանում, որ Վ. Խոջաբեկյանի, Ս. Մելքունյանի, Ս. Ավագյանի գրքերը և Գ. Ավագյանի քարտեզը բանիմացորեն չեն խմբագրվել, նախնական մասնագիտական կարծիքի չեն տրվել: Այլապես նկատված ցցուն սխալները, թերությունները, անշուշտ, կշտկվեին: Երրորդ պատճառը՝ Արցախի հին ու նոր պատմության, մշակույթի, մասնավորապես հիմնահարցի ու սոցիալ-տնտեսական համալիրի մասին գրելիս համբավավոր մեր դոկտոր պրոֆեսորները, թղթակից անդամները հիմնականում օգտվել են լրագրային, շատ դեպքերում ջրիկ հողվածներից ու պատահական չստուգված տեղեկություններից: Դրանք շատ թերի են, հակասական և հիմնահարցի լուսաբանման համար խիստ անբավարար: Փաստորեն նրանք իրենց ձեռքի տակ չեն ունեցել անհրաժեշտ արխիվային, աղբյուրագիտական հավաստի նյութեր, առանց որի անհնար է ստեղծել պատշաճ մակարդակով աշխատություններ:

Արդյունքը, կատարվածի օգտակար գործողության գործակիցը, թերությունների ու սխալների համեմատությամբ, աննշան է: Արցախի պահագալում սխալվելու իրավունք չունենք: Հենց թեկուզ այն պարզ պատճառով, որ մեր վրիպումները վարպետորեն որսում են մեր հակառակորդները իրենց սուտ ու փուչ տեսակետներն ու եսակետները «ապացուցելու» համար: Չէ՞ որ նրանք հիանալի են տիրապետում արխիվներից գեներ կոելու և մեր դեմ օգտագործելու արվեստին:

«Ավանգարդ», № 50, 28 06 1992 թ.

Մ ա Ն Ո Յ Ո Ւ Թ Յ Ն Ա.— Սույն գրախոսությունը նախատեսված էր «Գրական թերթի» համար, սակայն խմբագիրը վատամարդ չդառնալու համար հրաժարվեց տպագրել: Նույն պատճառաբանությամբ այն չտպագրեց նաև «Հայաստան» թերթի խմբագիրը:

Ուրախալի է, որ վերոհիշյալ հեղինակներից Ս. Մելքունյանը, Վ. Հարությունյանը և Գ. Ավագյանը իրենց հետագա հրատարակումներում հիմնովին շտկել են գրականության մեջ նշված սխալներն ու թերությունները:

«Երկիր» թերթի 1992 թ. հունիսի 4-ի համարում տպագրված Աշոտ Մելքոնյանի և Գևորգ Խողիկյանի թղթակցությունն առիթ հանդիսացավ արտահայտելու որոշ նկատառումներ կապված Արցախի հիմնահարցի թեմաներով գրականության տպագրության ու հարակից հարցերի մասին:

Միանգամից ասենք, որ այս բնագավառում ցավալիորեն քիչ գործ է կատարվել: Լայնորեն տարածելու կամ թեկուզ ներկայացնելու լուրջ բաներ գրեթե չեն ստեղծվել: Սա դատը ճշմարտություն է, որ հաճախակի մատնանշում են նաև օտարազգի մեր բարեկամները, ակտուալ հայ մտախորհակները: Այսբանից հետո սովորաբար տարօրինակ է, որ տեղից է ՀԳԱ-ի պատմության ինստիտուտի «դարսլաք» քննադատությունից, «անխոցելի» պահելու կեցվածքով հանդես եկող վերոհիշյալ պատմաբանների լավատեսության ու բավարարվածության պատճառները: Նրանք ողղակի հաշտնում են, որ «վերջին տարիներին հայ պատմաբանները մեծ ծավալի աշխատանք են կատարել»: Անցյալի հաշվետվությունների չափանիշներով ասենք, ինչ-որ բան արվել է: Իսկ որտեղ են այդ մեծածախ աշխատանքները: Պարզվում է դրանք գրողներով են թղթապահակներում: Համեմատության համար նշենք, որ վերջին 4—5 տարիների ընթացքում ՀԳԱ-ի պատմության ինստիտուտը հրատարակել է միայն «Լեռնային Ղարաբաղ» գրքուկը (1988 թ.): Մինչդեռ հաքվում նույնատիպ ինստիտուտը բազմաթիվ լեզուներով տպագրել և աշխարհով մեկ տարածել է 14 ամուն գիրք և այլոս: Ինչ վերաբերում է գիտական հոդվածներին, ապա այստեղ էլ հաշիվը 1:20 է՝ ճօզոտ ազերիների: Այսպիսով, մեզանում կատարվածը աննշան է, եթե չասենք խիստ անբավարար:

Առնվազն դատարկ գրադմունք է չկայացված, չհրատարակված, արսպես կոչված «մեռած» թղթապահակների մեջ կարած աշխատությունները հաշվել կատարված գործեր: Ընթերցողին, մարտնչող ժողովրդին անհրաժեշտ են ոչ թե թղթապահակներ, այլ տպագրված գրքեր, այլոսներ, փաստարկված հոդվածներ, որոնք պետք է մտնեին գիտալրատվական պատերազմում մղվող պայքարի մեջ:

Հրատարակչություններում կուտակված ձեռագրերի չտպագրության հարցում ակադեմիան, Պատմության ինստիտուտը, արդյո՞ք, պատասխանատվության բաժին չունեն: Պարզվում է՝ ունեն: Սակայն ինչ-

պես վկայում են մեր ընդհիմայտս պատմաբանները, իրենց պաշտպանած հիմնարկությունը անմեղ է: Մեղավորը «քաղաքական ղեկավարությունն» է: Այստեղից էլ հասկանալի է հարգելի Աշոտի և Գևորգի զարմանքն ու տարակուսանքը, երբ նրանք «Երկիր» օրաթերթի մաշիսի 23-ի համարում կարդացին «Ծախեն Մկրտչյանի հոդվածը, որ նա հատու հարվածներ ուղղելով մեր հանրապետության հին ու նոր ղեկավարների հասցեին (հոդվածում նշված են միայն գաղափարական հարցերով սրատասխանատու ղեկավարների ազգանունները— Ծ. Մ.), չգիտես ինչու նրանց մեղքը փորձում է բարդել ԳԱ պատմության ինստիտուտի վրա»: Միանգամից ասենք, որ նշված հոդվածում նման փորձ բնավ չի արված, այլ կոնկրետ փաստերով ցույց է տրված նաև պատմության ինստիտուտի թերացումների բաժինը:

Մեր «դարսլաքայիններին» տեղյակ պահելու նպատակով մեջ բերենք մի փաստաթուղթ, որը վկայում է, որ ցանկության դեպքում ակադեմիան կարող է (ստանց քաղաքական ղեկավարության միջամտության) պատրաստել և որոշակի ժամկետում հրատարակել անհրաժեշտ գրականություն, այդ թվում նաև արցախյան թեմաներով:

ՀԳԱ-ի նախագահության 1990 թ. սեպտեմբերի 4-ի նիստի (տես թիվ 18 արձանագրության 109 կետի 3—4 ենթակետերը) որոշմամբ հանձնարարված է «ՀԳԱ-ի նախագահության անդամ Գ. Ա. Գալոյանին, որպես հեղինակաչին կողեկտիվի ղեկավար մինչև 1/8. Առյեմբերի 1-ը ներկայացնել «Լեռնային Ղարաբաղ, գրքի վերամշակված և լրացված տեքստը, իսկ մինչև Առյեմբերի վերջը ապահովել գրքուկի անգլերեն տարբերակի պատրաստումը»: Միաժամանակ հանձնարարվել է ակադեմիայի «հրատարակչության տնօրեն Խ. հարսեղյանին մինչև 1990 թ. տարեվերջը ապահովել «Լեռնային Ղարաբաղ» գրքուկի (ռուսերեն և անգլերեն) տպագրությունը»: Այս հստակ ու նշանակալից որոշումից անցել է ավելի քան 1,5 տարի, բայց, ավաղ, ինչպես այս, այնպես էլ այսպիսի բազմաթիվ որոշումներ, որոնք կայացրել էին ակադեմիայի մի շարք ինստիտուտներ և պետական հրատարակչություններ, չեն կատարվել և դրա համար ոչ ոքի չեն կշտամբել, մի անմեղ դիտողություն արել: Մինչդեռ ինչպես «Երկիր» թերթի հուլիսի 4-ի համարում իրավացիորեն գրում են մեր ընդհիմայտսները, «Արցախի (ինչու միայն Արցախի— Ծ. Մ.) պատմությունը կեղծող Ադրբեջանի բարոզական մեքենան ավելի ու ավելի է մեծացնում իր շրջապատույունները»: Իրոք, այդ ինչպես եղավ, որ անցյալում «թեև քաղաքական ղեկավարությունը

տասնամյակներ շարունակ արգելքներ էր հարուցում մեր պատմաբան-ների առջև», բայց, այնուամենայնիվ (հիշենք հանրահայտ կեղծարար Զիա Բունյաթովի գրքի մասին Պ. Մեակի, Ա. Մնացականյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի գրախոսությունները) համարձակորեն հեղվածներ էին տպագրվում: Իսկ այսօր մեր պատմաբանները, այդ թվում նաև սկա-դեմիկոսները մի տեսակ անգոր են դարձել և իրենց իսկ ընդունած որոշումը կատարելու փոխարեն ակնհայտորեն անկարողություն են դրսևորում: Ինչպես երևում է մեղքը միայն դեկալարների չկամության մեջ չէ: Պարզապես մեր տիտղոսակիր գիտնականներից շատերը, ինչ-չու շատել, անտարբեր են, անհրաժեշտ վճռակալություն ու հաստատա-կամություն չեն ցուցաբերում: Հավանաբար, նրանք ավելի շատ մտա-նոգված են իրենց զբաղեցրած եկամտաբեր հաստիքները ցմահ պա-հելու հոգսերով, քան ազգամայատ գործեր կատարելու խնդիրներով:

Իրավացի է ընդդիմախոսներին մտամոգությունը. «մեծ թիվ են կազմում այն ուսումնասիրությունները, որոնք տարիներ շարունակ մը-նում են հրատարակչություններում»: Եվ կարծիք են հայտնում, որ Շ. Մկրտչյանը «պետք է բացահայտեր հրատարակչական գործի այժմյան վիճակը»: Նախ հարց է ծագում, ինչու դա չեն անում ակադեմիան, պատմության ինստիտուտը կամ նաև այն հեղինակները, որոնց ձե-ռագրերը փոշու հաստ շերտի տակ պահվում են հրատարակչություն-ների գորոցներում:

Ի դեպ, տողերիս հեղինակը հրատարակչություններից դժգոհելու ստիժ չունի, քանզի վերջին 12 տարվա ընթացքում (թեև մեծ դժվարու-թյունների հաղթահարման և անասելի տատապանքների գնով) հրա-տարակել է 8 գիրք ու գրքույկ (շուրջ 130 հեղինակային մամուլ ծավա-լով, ավելի քան 230 հազար տպաքանակով, այն էլ հայերեն և ռուսերեն: Որպեսզի ցույց տրվի, որ ես բացառություն չեմ, հարկատրված եմ քերել ևս օրինակներ: Անվանի Ասիականագետ Արզամ Ավագ-յանը 13 տարվա մեջ Երևանում և արտասահմանում հասցրել է տպա-գրել 10-ից ավելի գրքեր, իսկ Սամվել Կարապետյանը՝ 150-ից ավելի հոդվածներ, 5 քարտեզ, 3 գիրք և բազմաթիվ բուկլետներ: Այնպես, որ հրատարակիչներին մեղադրելու հարցում պետք է արվի որոշակի վե-րապահություն: Գուցե զգրոցներում դասդասված աշխատությունները ժամանակավրեպ են, գաղափարաքաղաքական հնչելություն չունեն, այսօրվա այրող հարցերին պատասխան չեն տալիս կամ իրենց վրա իբրև «բուրմունք» դեռևս պահում են մարքս-լենինյան անհաղթ ու-

մունքի զարշահոտությունը: Գուցե և կան լավ գործեր, որոնց հեղի-նակներն ու պատվիրատուները, սակայն անհրաժեշտ շահագրգռվածու-թյուն չեն ցուցաբերում տպագրության գործընթացի ժամանակ:

Իսկապես ինչն է պատճառը, որ վերոհիշյալ «դիլետանտների» գրքերը անարգելք տպագրվում են, իսկ տիտղոսակիր որոշ գիտնա-կանների «ուսումնասիրությունները»՝ ոչ: Հարցի պատասխանը, դարձ-յալ ցանկության դեպքում կարելի է ստանալ հրատարակիչներից, գրա-վաճառներից և ինտրիկե նաև ընթերցողներից: Այս կապակցությամբ հիշելի մի տխուր տեսարան, որը մինչև հոգուս խորը ցնցել է ինձ: Արևիկան փողոցի միջնամասում (մետրոյի «Երիտասարդական» կա-սակի մոտ) գտնվող խոշոր գրախանութի մուտքի առաջ կանգնած էր մի հույս քեռնատար: Գրախանութի աշխատողները մեկը մյուսին փո-խանցելով նաչյուրալոր գրքերի կապոցներ էին նետում մերենաչի թափ-քի մեջ: Խոտանված, դուրս գրված գրքերի մեջ թիչ չէին նաև աչնայի-սինթոզ, որոնք տպագրված էին բարձր կարգի թղթի վրա, ունեին պինդ կազմ, սուպեր շապիկ: Եվ որ ցույցի է, դրանց շարքում կալին պատմա-րանասիրական բնույթի աշխատություններ, որոնցից մի քանիսը ժա-նանակին արժանացել էին պետական մրցանակի: Հարց ու փորձից պարզվեց, որ սովորական տպաքանակով հրատարակված գրքերից շատերը բոլորովին պահանջարկ չեն ունեցել և հնչյալս տպարաններից բերվել, նույն քանակությունն էլ ողարկվել է թղթի վերամշակման գոր-ծարան:

Ի՞նչ եք կարծում, դրանց հեղինակներից գոնե մեկն ու մեկը նյու-թանան տուժի է ենթարկվել կամ նրանից հետ է վերցվել կոշումը, որի նստնար նա ստացել է: Միանշանակ կասե՞նք՝ ոչ: Դեռ ավելին, նրանց հեղինակները ստացել են բարձր դրույքներով հոնորար, պատշաճ մակարդակով մեծարվել և այսօր էլ եղանակ են ստեղծում, շարու-նակելով փչացնել մեր պատմաբանասիրական գիտության վաղվա օրը: Իսկ մենք լոռու ենք, աչք ենք փակում, կարծես ոչինչ չի կատարվել: Զայրացուցիչ է, որ որոշ մարդիկ այդ ամենը քողարկելու միտումով աս-պարեզ են նետում «քաղաքական դեկալարության կողմից պատմա-րանների առջև արգելքներ» հարուցելու թափանցիկ շղարշը: Ինչ է վրաց, աղբբեջանցի պատմաբանները արգելափակոցներ չե՞ն ունեցել: Այդ ինչպե՞ս եղավ, որ մեր մամուլը, մասամբ նաև ռադիոհեռուստա-տեսությունը կարողացել են ճեղքել շատ արգելված գոտիներ, իսկ պատ-մաբանները, թող ներվի ասել փարսիսի մեջ գտնվող ոչխարների պես պտուղտ են տալիս: Վաղուց ժամանակն է գգաստանալ, ուշքի գալ, հա-

մոզված եմ կոտեսնենք, որ արգելափակողների իսկական հեղինակները գտնվում են ոչ այնքան քաղաքական դեկադայների շարքերում, որքան ՀԳԱ-ում, այդ թվում նաև պատմության ինստիտուտում:

17 06 1992 թ.

## ՄԵՐ ԵՐԹԻՆ ՎԱՆՁԱՆ ՉԿԱ

Վերջին տարիներին մեզանում և արտերկրներում բազմաթիվ գրքեր, հոդվածներ են տպագրվել Արցախի հզոր շարժման վերաբերյալ: Դրանց մեջ, սակայն, ամենայն իրախամբ շահեկանորեն ստանձնանում է Զորի Բալասանի «Խժոխք և դրախտ» ծավալուն գիրքը, որը միաժամանակ հրատարակվել է երկու լեզվով, հայերենը՝ Երևանում 5 հազար, իսկ ռուսերենը՝ Մոսկվայում 10 հազար տպաքանակով: Պոլիգրաֆիական պատշաճ մակարդակով, հեղինակի գծանկարներով համեմված և նկարչական տպավորիչ ձևավորված գրքերը միանգամից գրավում են ընթերցողների ուշադրությունը:

Հարկավ, ինձ վրա չվերցնելով չափազանց տարուղումա՞յ այս գրքի համակողմանի քննարկումը, այսուհանդերձ, ինձ իրավունք էմ վերապահում հայտնելու իմ՝ դարաբաղյան շարժման բոլոր փուլերով անցած վետերանին կարծիքը: Թեև ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այսօր գիրք կարդալու ո՛չ տրամադրություն, և ո՛չ էլ ցանկություն կա, բայց Զ. Բալասանի հիշյալ գիրքը բացառությամբ է, այն անմիջապես գերում է բնթերցողին: Դա առաջին հերթին պայմանավորված է գրքի ամուր հեղքով, գունագեղ հյուսվածքով, թարմաշունչ ստեղծարվ և ամենին հուզող հարցերի անաչառ պատասխաններով:

Վերջապես արցախյան շարժումը, մանավանդ ազգային-ազատագրական պայքարը, հանձինս ամենահաս, ամենակարող Զորի Բալասանի արարվեց, մարմնավորվեց և գեղարվեստական կերպարանք ստացավ: Այն ակնհայտորեն լրացրեց քարոզչության ասպարեզում ստեղծված դատարկությունը և, անկասկած, զգալի չափով կնպաստի սրդի հազ գաղափարա-քաղաքական և դիվանագիտական մտքի ձևավորմանը: Սրանով, սակայն, չի սանձանալիսկվում, հեշված գրքի քաղաքական նշանակությունը այլ ընդհակառակն՝ սվելի է մեծանում:

Գեղարվեստական գրականության ընձեռած չափանիշները հեղինակին թույլ են տվել ազատ կերպով մանկրել, տեղերում իր անմիջական մասնակցությամբ կատարված դեպքերի, իրադարձությունների մա-

սին արած շաղաթաթախ գրատումները, դիտարկումները տեղադրել գրքի ցանկացած մասում: Սա հիրավի լուրջ խնդիր է, ձեռքի տակ եղած ամենաբազմազան առատ նյութերից ընտրել կարևորը, առաջնայինը, մնայունը և դրանք անցկացնել գրող-հրատարակախոսի քուրաչով և ապա թրծված, համաձուլվածքի տեսքով ներկայացնել ընթերցողին: Գրքի նման անկաշկանդ կառուցվածքն սվելի հետաքրքիր, սվելի լարված դիթմ է ստեղծում, որի շնորհիվ նրա բոլոր էջերը կարդացվում են մեծ հալիշտակությամբ:

Թեմատիկ առումով, արդիական հնչեղությամբ, ասելիքի հատակցությամբ ու պատկերավորությամբ այս գիրքը բացառիկ է, բոլորովին նոր որակի, բազմաժանր, պատմագեղարվեստական, ռազմաքաղաքական, բարոյահոգեբանակն բնույթի երկ: Սվելի ստույգ, հաշ ժողովրդի պատմության ամենանկատագրական ու ամենաբարդազույն ժամանակահատվածի ճշմարտապատում տարեգրություն է, մասենագիտական սրժեքի մատչյան:

Միաժամանակ սա նաև Հայաստանի և նրա մի շատ կարևորագույն հատվածի՝ Արցախի անցյալին, ներկային և ապագային հալացք նետած տաղանդավոր գրողի փիլիսոփայական խիզախ մտորումներն են. հանրահալո փաստերի ու փաստարկների վրա խարսխված, սվելի լայն ռազմաքաղաքական պաստատի վրա նորովի դիտարկված:

Զորի Բալասանը որոշակի պատմափիլիսոփայական սկզբունքներով, ապշեցուցիչ հմտությամբ ու քարեխոնությամբ է մոտեցել կենտոտ նիմնահարցերին, և այն դիտարկել աշխարհում կատարվող մեծ հեղաքեկումների հետ սերտորեն առնչված: Այս առումով խնդրո առարկա գիրքը առանձնահատուկ է, երևույթ, և լուրջ նվաճում, նորագույն շրջանի մեր մշակութային կյանքում: Դա պատիվ է բերում ոչ միայն հեղինակին, այլև ամբողջ հաշ գրականությանը: Եվ ոչ միայն գրականությանը: Մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ Զորի Բալասանն իրեն հատուկ համատությամբ ու հաստատականությամբ մատր դրել է ազգային գերխնդիրների չափացույ վերքերի վրա և դրանք սպաքինելու համար առաջարկում, պահանջում է նոր դեղամիջոցներ: Ընթերցողը (հատկապես ռուսախոս) Զորիի փալուն մատուցմամբ սրբոնիչ պատասխան է ստանում հաշ ժողովրդի ազգային իղձերի, «Հայ դատի» և դարաբաղյան շարժման բուն իմաստի, նպատակի վերախոյալ: Նորովի պատկերացում է կազմում հալի կերտվածքի, խառնրվածքի և ամբողջական կերպարի մասին: Ընդհանրապես նորք ու

զգայուն հարցերին Զ. Բալայանի մտնեցումները ուշադրության արժանի են: Նա համարձակորեն խմբագրում, սրբագրում և միևնույն աչքով հայի մասին տարածված կիսատ-պոստ, ավելի ճիշտ, թերասված կարծիքները: Հեղինակի մտորումները փաստարկված են դարաբաղյան ազատամարտի առանձին հերոսական դրվագներով:

Բնավ սխալված չեմ լինի, եթե առանց վարանելու ասեմ, որ մեր պատմագեղարվեստական գրականության հաջողված, եթե չասեմ լավագույն էջերից են Շուշիի գրավման, Մուսլի լեռան ռազմավարական տեսակետից անչափ կարևոր բարձունքը պաշտպանող ազատամարտիկների, տանկերի մեծամարտի և այլ տարաբնույթ դեպքերի մասին պատմող ակնարկները: Գրքում շատ են հուզիչ, դրամատիզմով հարուստ պատկերները, որոնք հպարտության, հայրենասիրության ըզր ազդակներ լինելուց զատ, գրական անանց արժեքներ են:

Զորի Բալայանն իր երկարամյա ակտիվ քաղաքական, հասարակական, ազգային, գրական-հրապարակախոսական գործունեությանը լայն ճանաչման է արժանացել: Նա կարողացել է համաշխարհային հասարակության ուշադրությունը բերել Դարաբաղի (ինչու միայն Դարաբաղի) հիմնախնդիրների վրա: Միաժամանակ նա Հայաստան և Արցախ է հրավիրել ոչ միայն վիրաբույժներ, դիտորդներ, լրագրողներ և այլ հասարակական-քաղաքական, կրոնական բազմաթիվ գործիչներ և նրանց օգնությամբ լուծել հայանպաստ խնդիրներ: Բավական է հիշատակել, որ նա միայն 24 անգամ Անգլիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Բերոլայն Բոկսին ուղևեցել է Արցախ: Եվ ոչ անհրապարակ ու դատարկաձեռն: Նա կարողացել է սերտ կապ ստեղծել «Միջազգային քրիստոնեական համերաշխություն կազմակերպության» հետ, և որոշակի օգնություն կազմակերպել Արցախի համար: Էլ չենք խոսում Ռուսաստանի պետական, քաղաքական, ռազմական գործիչների և սփյուռքահայ երևելի մարդկանց հետ ունեցած նրա ընկերական, բարեկամական ջերմ հարաբերությունների մասին: Անվիճելի է, որ նա հեշտությամբ կարողանում է մարդկանց հետ լեզու գտնել, և ոչ միայն լուծել այս կամ այն խնդիրը. այլև նրանց Արցախին, հայ ժողովրդին բարեկամ դարձնել: Այդ ամենի մասին շատ ավելի լավ, քան որևէ մեկը գրել է Զորի Բալայանը իր գրքի էջերում:

Առհասարակ Զորի Բալայանը արձագանքում է այն դեպքերին ու իրադարձություններին, որոնք հայագիտության և պաշտոնական գաղափարախոսության տեսարանից դուրս են մնացել: Կարողանում է միջամտել այնպիսի խնդիրների, որոնք իրեն ոչ միայն ենթակա չեն,

այլև նույնիսկ անհնարին էր թվում փոխել դրանց ընթացքը: Կարողանում է արագ, վճռական և սրընթաց կերպով զանազանի առաջնայինը երկրորդականից և հայտնվել այնտեղ, որտեղ իր կարիքն ավելի շատ է զգացվում: Կարողանում է սրտացավությամբ օգնության ձեռք մեկնել թշվառության, դժբախտության մեջ հայտնված մարդկանց: Մի խոսքով, որտեղ ասես որ չի եղել Զորի Բալայանը, և ինչ հարցեր ասես, որոնցով նա չի զբաղվել: Ահռելի գործ է կատարել: Ի դեպ, իրականում գրախոսվող գիրքը նաև Զորի Բալայանի ինքնահաշվետվությունն է հայ ժողովրդին, իր ընթերցողներին, որոնց կրակոտ պատգամախոսը, անխոնջ շեփորահարն է:

Զորին ոչ միայն, Ամենայն Հայց կաթողիկոս Վազգեն Ա-ի դիպուկ բնորոշմամբ «սովորեցնում է մեզ թե ինչպես պետք է սիրել հայրենիք», այլև թե ինչպես պետք է աշխատել փորձության մեջ հայտնված հայրենիքի համար: Սա չափազանց կարևոր հանգամանք է, ընդօրինակման արժանի:

Զորի Բալայանը Գարեգին Նժդեհին կրկնելով՝ Արցախի օրինակով գալիս է հերքելու մեզանում արմատավորված այն սխալ միտումները, թե հայ ժողովրդի դժբախտությունների պատճառը երկրի աշխարհագրական դիրքն է, քրիստոնեական եվրոպայի անտարբերությունը և մահմեդական Ասիայի դաժանությունը: «Բաշարի արցախցիները տանելով հաղթանակ հաղթանակի հետևից, — գրում է Զորի Բալայանը, — ապացուցեցին իրենք իրենց և բոլոր նրանց, ովքեր տառապում են «գոհի սինդրոմով», ովքեր կորցրել են հավատը իրենց հանդեպ, որ անպարտելի է այն ժողովուրդը, որ կուռ շարքերով առաջնորդվում է ոգով, բարոյական արժեքներով: Մի շատ էական հանգամանք, որը տրամաբանորեն միաձուլված դարաբաղյան ասպետական համատարածում ու տոկունության հետ, անտեսել, հաշվի չի առել, ազդրի-թուրքը: Դրա համար էլ տառապանքի է դատապարտել ոչ միայն հային, այլև սեփական ժողովրդին:

Ամբողջ գրքում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ մեր հաջողությունների գրավականը մեր միաբանության, համախմբվածության և իրար սատար կանգնելու մեջ է: Հայրենասեր գրողի մտահոգությունն այն է, որ հանկարծ չլինի թե մոռացվի պատմության դառը դասերը: Զէ որ ազգային պետությունը ո՛չ մեկիքություն է, ո՛չ էլ մարզպետություն: Զէ որ ամեն մի անխոհեմ, անկուրջ քայլ, ինչ քողով էլ այն շղարշված լինի, երբ ասանում է ժողովրդի միասնությունը, հոյ է կործանարար հետևանքներով:

Արցախը իր հերոսական ոգով, ինքնագոհությանը ու ամուր կերպ-  
աբեմաբանությանը մեկ անգամ ևս համոզեց, որ մենք ինքներս պետք է ձեռ-  
ներս դնենք մեր ճակատին և վեր բարձրանանք: Այլ խառնել: Ըստ թեմի-  
քի շահերը ամեն ինչից վեր է, առաջնային: Եվ սա պետք է իր հոգում  
զգա յուրաքանչյուր հաշ, որտեղ էլ նա գտնվելիս լինի: Չորի Բալայանը  
իրեն բնորոշ շիտակությամբ մեկ անգամ ևս ընդգծում է սգն իրողու-  
թյունը, որ ուզվածակալուստում տարած փայլուն հաղթանակի շնորհիվ  
արցախահայությունը ձեռք է բերել որակական նոր հատկանիշներ:  
Առաջին հերթին ազգային պետականության կայացման համար անհրա-  
ժեշտ պետական մտածողություն: Երկրորդ՝ հայրենիքը կրճրով պաշտ-  
պանելու վճռականություն, երրորդ, մեզ պարտադրված անասելի դժ-  
վարություններն ու տատապանքները հաղթահարելու հզոր կամք:

Արդ, սեղանին է դրված, փաստորեն, հայրենիքի պաշտպանության  
համար անձնագրի նվիրվածության և հերոսականության վսեմ ոգու  
արտահայտության տարեգրությունը: Մի տարեգրություն, որի նշանա-  
բանն է. «Մեր երթին վախճան չկա»: Դրա համոզիչ վկայությունը ուզ-  
վի դաշտում, Չորիի հերոսների՝ ասել կուզի՝ ժողովրդի և նրա առյու-  
ծապիրտ զավակների տարած փայլուն հաղթանակն է: Այո, Չորիի  
«զրական» հերոսները իրական են, մեր շարքերում, մեզ հետ քայլող  
հայրենասեր Վարդիկ են, որոնց անդամաբան ողբերգը Չորի Բալա-  
յանն է. բաշերի մեջ բաշ, հայրենասերների մեջ հայրենասեր, տա-  
ղանդների մեջ տաղանդավոր: Ընդհանրապես դժվար է Արցախի հե-  
րոսամարտը պատկերացնել առանց Չորիի, կամ հակառակը, նրան  
առանց Արցախի: Վերջինս նրա համար աշխարհի ամենամոտիկ  
անկյունն է, դրախտավայր, որտեղ երբեմն նույնիսկ թվում է, որ իրենց  
բարեբեր ծիլերն են տվել բոլոր երկրափն գանձերն ու գեղեցկություն-  
ները: Ինչպես մեծն Լեոնիդ Հուրումցը կասեր, փույթ չէ, թե նա փոքր  
է: Մոխակն էլ մեծ չէ, բաց կրգում է. ամբողջ աշխարհն է շնորհակալ:

Կարծում եմք, այս գիրքը պետք է թարգմանվի և նրաստորեն  
նաև անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն, պարսկերեն,  
այո, այո, նաև թուրքերեն, քանզի այն սոխ և կեղծիքի դիմակ պատու-  
յուն մեծ հունար ունի, Արցախի պայքարին նպաստ բերելու բարոզչա-  
կան ոչ պակաս կարևոր գեներ է:

Գիրքը պարունակում է հարյուրից ավելի գծանկարներ, որոնց  
հեղինակը ինքը, Չորի Բալայանն է: Բազմազան ու բազմաբնույթ այս  
նկարները, որոնք բանիբուն ձեռքով արվել են տեղերում, հանդիսանում

են արցախյան հերոսամարտի առաջին պատկերասրահի առաջին ցու-  
ցանմուշները, որոնք մի առանձին հմայք ու բովանդակություն են հա-  
ղորդում «Դժոխք և դրախտ» գրքին: Այդ նկարների շնորհիվ անչափ  
մեծանում է նրա ճանաչողական նշանակությունը:

Չորի Բալայանը իր առջև, բնավ նպատակ չի դրել սպառիչ պատ-  
կերկոմ արցախյան հերոսամարտի ամբողջական պատմությունը: Նա  
ինքն է բազմիցս կոչ արել մեր գիտնականներին, որ դուրս գան լեռա-  
գիական քնից և զբաղվեն գործով, նոր նյութեր հավաքելու նպատա-  
կով մեկնեն Հայաստանի ծայրագավառները, հանդիպեն գոյամարտի  
մասնակիցների, ականատեսների հետ, տեղերում տեսնեն և վերապ-  
րեն պատերազմի արհավիրքները: Իսկ ինքը՝ Չորին նախապատրաստ-  
վում է մեկ անգամ ևս շրջելու Արցախում և հավաքած նոր նյութերի  
նիսան վրա գրել հերթական գիրքը, որն անկասկած աչս գրքի շարու-  
նակությունը կդառնա:

Նրանք, ովքեր արդեն ձեռք են բերել Չ. Բալայանի գիրքը, համոզ-  
ված են՝ իրենց շուրջում են զգում, քանզի այդ հուսկապ նվերը միտված  
է նաև գալիք սերունդին, որը պիտի վայելի իր ապու-պապերի արչամբ  
նվաճած հաղթանակի պտուղները:

«Ավանգարդ», 10 08 1995 թ.

## «ԱՐՅԱՆՅԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ» ԾԱՌՔԻՑ

### Նողկալի է...

Հիմա տեսնենք, թե 1965 թ. հոկտեմբերի 4-ին, երբ ԼՂՀ մարզգործ-  
կոմուն քննում էին ինձ, հրապիրված երիտասարդ մասնագետիս բնա-  
կարան տալու հարցը, ինչպիսի «ակտիվություն» է ցուցաբերել Հեյդար  
Ալիևի՝ Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահի հոգևոր «հայր» Մարգարովը՝  
ՊԱԿ-ի ԼՂ մարզային վարչության պետը և ինչպիսի քաղաքական  
գրաբարտչական մեղադրանքներով նա կարողացավ փիժեցնել հարցի  
դրական լուծումը:

— Ով է այդ վտանգավոր երիտասարդին այստեղ բերել: Դուք գի-  
տեք, որ նա Լարսաբաղ է եկել հատուկ առաջադրանքով: Արդեն հաս-  
ցրել է թանգարանը դարձնել ազգային զգացմունքներ բորբոքելու,  
անցյալի վնասարար հիշողություններ վերականգնելու կենտրոն: Նրան



պետք է դուրս վճարել Ղարաբաղից և ոչ թե տուն տալ: Թեև այստեղ նրան, առանց մեր գիտությամբ նշանակել են թանգարանի տնօրեն, անկաջն Բաքվում՝ մշակույթի նախարարը դեռ չի հրամանագրել, նրան որպես տնօրեն: Հավանաբար չի էլ հրամանագրի:

Այսուհանդերձ, ծերացած, հոգևած, իր կյանքի վերջնագծին հասած Մարգարովը Լ. Բերիայի մարդակույ դպրոցով անցած հին գույլ էր, որի մեջ վաղուց բթացել էր իրողության զգացումը: Նման դեպքում մարդը իրեն թույլ է տալիս իր անմիջական վերադասի, տվյալ պարագայում Հ. Ալիևի առջև ավելի անբասիր երևալու, նրա բոլոր պահանջները «երիտասարդական ավյունով» անթերի ու անվերապահորեն կատարելով ունենաններ անել:

Նողկալի է...

Թեև մարզգործկոմի անդամների մեջ գտնվեցին մարդիկ, մասնավորապես Ստեփանակերտի քաղաքագետ Սերգեյ Ծաբարյանը, որոնք Մարգարովի հայտարարությունը համարեցին «անպատասխանատու» և երիտասարդության նկատմամբ որդեգրած նրա «անվրասահության հերթական դրսևորում», այնուամենայնիվ ես բնակարան չստացա և հարկադրված Յ տարի ապրեցի թանգարանում:

6. 10. 65 թ.

Հ. Գ. Սա, իմիջիայլոց, իմ դեմ ՊԱԿ-ի կողմից ձեռնարկած հայածանքի առաջին բացահայտ արտահայտությունն էր: Այդ օրվանից, եթե ոչ դրանից առաջ ես մշտական գրանցում ստացա ՊԱԿ-ի սև ցուցակում, որը և հանդիսացավ իմ կյանքի, գալիք ցնցող իրադարձությունների խույ ահագանգը:

### Ունջ շինելու փոխարեն...

Երկրի ղեկավարների հասցեով Ղարաբաղից գրված նամակի տակ ստորագրողները հաստատ համոզված էին, որ Մոսկվան դրականորեն կլուծի իրենց բարձրացրած հարցերը և ԼՂԻՄ-ը կմիացնի Հայաստանին: Նույնիսկ հավատացնում էին, որ այդ առնչությամբ գրեթե պատրաստ է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի հրամանագիրը և շատ շուտով այն կհրատարակվի թերթերում: Առավել անհամբեր ստեփանակերտցիները ակնհայտորեն դրած ռադիոընդունիչներին գիշեր-ցերեկ նրանցից չէին պոկվում, փոստի բաժանմունքներում ժամերով սպասում էին օրվա թերթերին, որպեսզի առաջինը իրենք կարդան երջանկաբեր հրամանագիրը: Այնպես որ ղարաբաղցիներն իրենց

օրինական պահանջների մասին գրված նամակին այլ պատասխանի չէին սպասում: Նրանց թվացել է, թե Ադրբեջանի ղեկավարները քնած ու թմբած են... Ահա թե ինչու, երբ Մոսկվան «13-ի» նամակն ուղարկեց Բաքու, այսինքն նրանց, ում դեմ այն գրված էր, պարզ դարձավ, որ ԼՂԻՄ աշխատավորների խնդրանքները այս անգամ էլ քարին քայեցին:

Ստեփանակերտում հանկարծակի եկան, պատրաստ չէին ըստ էության գնահատելու ստեղծված նոր իրադրությունը, ընտրել գործելակերպի ճիշտ տակտիկա: Դեռ ավելին, առանձին ընկերներ խունալի մատնվեցին ու սկսեցին իրար մեղադրել:

Մրտի ցալով պիտի ասեմ, որ այս դեպքում էլ կրկնվեց հալ բազմադարյա իրականության անցանկալի երևույթը, երկպառակտությունը: Դրան էլ սպասում էին Ադրբեջանի ճարպիկ ղեկավարները:

Նամակի տակ ստորագրողներից մի քանիսը ուղղամիտ գտնվեցին, աղայանտորեն դես ու դեն ընկան, ալիքներին նետված տաշեղի պես ծառս եղան և սկսեցին սրան-նրան մերկացնելու, փաստորեն մատնելու ուղի բռնել և դրանով կամա, թե ակամա մասնակից դարձան տեղական կադրերի նկատմամբ գործադրվող հայածանքներին ու հետապնդողներին: Նրանք խոհեմություն չունեցան հասկանալ փոփոխված հանգամանքները: Մի խոսքով, չկշռադատված դիրքորոշումով մեծ փորձանք բերեցին նախ իրենց, ապա և մյուս լավագույն կադրերի գլխին: Նրանք չլսեցին, արհամարեցին ավագ փորձառու ընկերներին և հաշվի չնստեցին այն իրողության հետ, որ դեմագոգիան հղի է յուրջ հետևանքներով և կարող է մեծ աղետներ բերել: Ցավոք, այդպես էլ եղավ, Ղարաբաղը զրկվեց մի շարք հրաշալի կադրերից... Ամեն ինչից երևում էր, որ հետևանքները ավելի տխուր կլինեն, քան կարելի է ենթադրել: Երբ պիտի սովորենք քաղաքականությունից օգտվելու կանոնները:

12. 12. 65 թ.

### «Հայերը ստորագրություն են հավաքում, իսկ մենք՝ փող»

1960-ական թթ. կեսերից ԼՂԻՄ ծավալված ազգային-ազատագրական պայքարը ակնհայտորեն վկայեց, որ ղարաբաղցիները չէին լուել և երբեք էլ չեն հաշտվելու իրենց տխուր՝ Ադրբեջանի ստրուկ դարձած վիճակի հետ: Այդ է վկայում Մոսկվա հղած ավելի քան 50 հազար ստորագրությունները, բազմաթիվ նամակ-բողոքները, որոնցով հայերը

պահանջում էին երկրի ղեկավարներին, որ նրանք վերադառնան անդրադառնան ԼՂԻՄ-ը մայր Հայաստանին վերադարձնելու հարցին: Ասկայն, գրեթե հասունացած հարցի դրական լուծումը փոժեցվեց նաև մեծ ու մեծ կաշառքներով:

Այս առումով հատկանշական է հանրահայտ գրող Մ. Իթյանիմու-փի, Քաջվում արուսագանդիստների հանրապետական հավաքում (որին մասնակցել էր նաև տողերիս ֆեդիակը) ունեցած ելույթի հետևյալ խոստովանությունը. «Հայերը ստորագրություններ են հավաքում, իսկ մենք՝ փողեր: Նրանք Մուկվա ևսմակներ, համախոսակառներ են տա-նում, իսկ մենք՝ տոպրակներով փողեր, կնուններով ոսկի: Մի խոսքով, հայերը մտահոգված են հաղթանակ ձեռք բերելու խնդրով, իսկ մենք՝ հաղթանակը տապալելու հարցով»:

Մեկնաբանություններն, ինչպես ասում են սալեղորդ են՝ կաշառքը բերաններ է փակում, ձեռքեր կաշկանդում... Մենք պետք է հաղթանա-րենք նաև այս պատկերը:

27. 10. 67 թ.

### Շարժման խոցելի տեղը

Իբրև Արցախյան հզոր շարժման ակտիվ մասնակից, կարող եմ ամենայն որոշակիությամբ ասել, որ շարժումը կազմակերպվել է և առնա-կանացվել է 1980-ական թթ. գերազնիվ, հայրենասեր արցախցիների անձնուրաց ջանքերի շնորհիվ:

Իր բնույթով շարժումն ազգայնական էր, քանզի նպատակ էր հե-տապնդվում վերահաս կործանումից փրկելու համար արցախյան հայ-աշխարհը դուրս բերել Ադրբեյջանի հայակուլ երախից: Այն էլ ասեմք, շարժումը հենց այն գլխից չի ունեցել ընդգծված, ընտրված կամ թե-կուզ ինչ-որ առանձնահատուկ հատկանիշներով օժտված ղեկավար կամ ղեկավար մարմին: Աս, թերևս, շարժման ամենախոցելի տեղն է: Աս-կայն պետք է նշել, որ սկզբնական շրջանում ղեկավարի անհրաժեշտու-թյունն այնքան էլ չէր զգացվում, քանզի շարժման կազմակերպիչները փաղուց անհատականություններ էին, կարգապահ ու իրենց անելիքները անթերի կատարող մարդիկ: ԼՂԻՄ-ի այն ժամանակվա պայմաններում գործնականորեն անհնար բան էր, որ չհետապնդեին ու չգտնեին ղեկա-վարին. քանզի հայկական մարզը, հատկապես նրա կենտրոնը՝ Ստե-փանակերտը, ստանձնահատուկ հսկողությամբ ասկ էր գտնվում, ՊԱԿ-ի

լրտեսները և նաև կուսապարտը կոմսոմոլներով հանդերձ իրենց տեսադաշտում էին պահում ամեն մի մետր տարածք, անգամ մանկա-պարտեզները, գերեզմանատները: Փաստորեն դարաբաղցի յուրաքանչ-յուր հային հետևում էին: Դրա պատճառով էլ մենք գրեթե հավաքներ չէինք գումարում, նախօրոք որոշակի ծրագրեր չէինք ընդունում, այլ աշ-խատում ու գործում էինք անհատապես, ամեն մեկս մեր բնագավառում, իհիստ կանոնակարգված, կոնսպիրատիվ պայմաններում: Հաճախակի, շատ դեպքում տեսակցում էինք սգս կամ այն լծակից բնկերոջ մետ, ուղի վրա մտքեր փոխանակում ու որոշ տեղեկություններ, նաև, հանձ-նարարություններ ստանալով շարունակում մեր գործը: Ամեն մեկս ոչ միայն անթերի կատարում էինք մեր հիմնական պարտականություննե-րը, այլև հայրենասիրական մեր պարտքը՝ ինչ-որ հարմար էինք գտնում, ինչ-որ հնարավոր էր անել հիմնական աշխատանքին գուգախեռ: Ար-բեյն էլ հարկ էր լինում որոշակի ինֆորմացիա ստանալ սու կամ ամ բնագավառի մեծ ու փոքր պաշտոնյաներից: Ստանում էինք տե՛ղ, ինչ անհրաժեշտ էր: Ամենակարևորն այն է, որ մենք կարողացել ենք հաս-նել նրան, որ մարզի ղեկավարները ուշադրության կենտրոնում պահեն հաշագիտական այնպիսի կարևոր օջախներ, ինչպիսին են մարզային թանգարանը, գրադարանը և թատրոնը, որոնց դերն անչափ մեծ է:

14. 09. 68 թ.

### Ց-րդ ֆոնդը

Մարզային թանգարանի նոր ցուցադրությունը կազմակերպումից հե-տո որոշ չափով ազատվել էի ամենօրյա լարված աշխատանքներից և արդեն կարող էի շուրջել ժամանակս ու գբաղվել դիսերտացիայով: Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում հրա-մանագրված էի որպես դիսերտանտ: Միանիմումները հանձնել էի: Դի-սերտացիայի թեման էր «Հեղափոխական շարժումները Արարաբաղում»: Իսկ գիտական ղեկավարը՝ նշանավոր պատմաբան Մատուր Պավելի Աղալանը:

Արխիվային նյութեր ձեռք բերելու համար կուսմարզկոմի հատուկ գրությամբ մեկնեցի Քաբու: Ուզում էի կենտկոմի կուսակցական արխի-վում ծանոթանալ դարաբաղցի հին կոմունիստների, կարմիր պարտի-զանների և հեղափոխական գործիչների անձնական գործերին:

Արխիվի տնօրենը, Շուշի վալրագ խաների շտաբիլդներից թեթե-

վամիտ, ընդգծված հայաստաց Մեհթիկն էր: Ինձ ընդունեց բավականին չոր, հարցուփորձ արեց և առանց թաքցնելու իր էությունն, ասխտաց, որ ես ավարտել եմ Երևանում և դիսերտացիան էլ պիտի պաշտպանեմ այնտեղ:

Կուսմարզկոմի գրության վրա ինչ-որ բան մակագրեց, իր մոտ կանչեց աշխատակիցներից մեկին ու ձեռքով, ոտքով հասկացրեց նըրան, որ հետևի ինձ, որպեսզի ես դուրս չգամ ինձ հատկացված «փարախից»։ Դժբախտաբար, ես միամիտս սկզբում չկարողացա կռամել, որ Մեհթիկը մի փոքրիկ առիթի է ման գալիս, որպեսզի ինձ գրկի արխիվից օգտվելու իր իսկ տված «մեծ իրավունքից»:

Պահանջում եմ Արմենակ Ղարազոզյանի, Սուրեն Ծաղունցի, Սաբո Համբարձումյանի, Սերո Մանուցյանի, Հակոբ Կամարու, Թևադոս Դանիելյանի անձնական գործերը: Բերում եմ: Ակնհայտորեն զգացվում էր, որ բերված գործերի պարունակությունների մեծ մասը հանված են: Արագ թերթում եմ մնացած փաստաթղթերը, որոնք, սակայն, բավարար տեղեկություններ չեն տալիս ոչ Ղարաբաղի հեղափոխական շարժումների և ոչ էլ հեղափոխականների վերաբերյալ: Մոտեցա ընթերցարանում ինձ ստեպ-ստեպ հետևող թուրք կնոջն ու հարցրի, թե որտեղ են այն նյութերը, որոնց ցուցակները կացված են թղթաուպանակներին: Նա մի պահ այլայլվեց, ապա հայտնեց, որ ինքը չգիտի ու վերկացավ գնաց տնօրենի մոտ: Այդ պահին ինձ մոտեցավ ընթերցարանի նոր մտած, լազուրագույն խալաթով մի շիկահեր կին և բավական ցածր ձայնով հայտնեց, որ ես պահանջեմ 8-րդ ֆոնդը:

— Հայերի գործերը հիմնականում պահում եմ այդ ֆոնդում, — ասաց և արագ դուրս եկավ:

Թրքոսիին վերադարձավ և բավականին լրջացած հայտնեց, որ ուրիշ նյութեր չկան և ես պետք է բավարարվեմ միայն եղածով: Գնացի տնօրենի մոտ: Նրա փառասիրությունը շոյելու համար ասացի. «Յուդաշ Մեհթիկ, դուք փառավոր խաների գարն եք, խորապես հասկանում եք արխիվի բարդ ու դժվարին գործը և հաճախակի օգնության ձեռք եք մեկնում ինձ պես անփորձ երիտասարդներին: Եթե հնարավոր է, բուլ տվեք օգտվել 8-րդ ֆոնդից»:

Մեհթիկը իսկույն մոայլվեց, գույն տվեց, գույն առավ ու անմիջապես հարձակ մեզ անցավ. «Ո՛վ է քեզ ասել 8-րդ ֆոնդի մասին: Պիտի ասե՞ս, այդպես, ես քեզ կգրկեմ արխիվից օգտվելու հնարավորությունից: Առա, Աբակումովա՞ն է ասել, թե՛ Ամիրջանովը»: Ես հասկացա, որ արխիվում աշխատողների մեջ հայ էլ կա, բայց նրա երեսը չէի տեսել:

Նշանակում է 8-րդ ֆոնդի մասին ինձ տեղեկությունը տվողը Աբակումովան է եղել: Հետո իմացա, որ նա ազգությամբ բելոռուս է, որի անմիջական պահպանության տակ էին գտնվում հայագիտական բնույթի փաստաթղթերը:

Ես մի պահ զայեցի ինձ ու գազազած Մեհթիկին լիցքաթափ անելու, նշված աշխատակիցների վրայից կասկածը վերցնելու համար հայտնեցի, որ 8-րդ ֆոնդի մասին հայտնողը իմ գիտական ղեկավար ակադեմիկոս Ծատուր Աղաջանն է, որը երկար տարիներ աշխատել է Բաքվում, հիանալի գիտի նաև կուսարխիվի ֆոնդերը:

— Դաշնակ Անդրանիկին մեծարող Աղաջանը: Ադրբեջանում մարդ դառած, Ադրբեջանին դավաճանած Աղաջանը:

Երբ արդեն զգացի, որ Մեհթիկը համը հանում է, ոտքի կանգնեցի և վճռական տոնով ասացի, ինչ պատահեց ձեզ, ինչու եք արևերից դուրս եկել, և ով է ձեզ իրավունք տվել անվանի մարդկանց պիտակավորել:

Արխիվից դուրս եկա և գնացի Լենինի թանգարան: Կատարվածի մասին պատմեցի թանգարանի տնօրեն՝ իմ վաղեմի ծանոթ Մ. Բաղիրովին: Նա կառավարական հեռախոսով կապվեց Մեհթիկի հետ: Իմ ներկայությամբ հանդիմանեց Մեհթիկին, իսկ թե վերջինս ինչ ասաց հեռախոսով, ես չլսեցի: Խոսափողը ցած դնելով Բաղիրովին, որն ինձ իր բարեկամն էր համարում, հասկացրեց, որ Մեհթիկը մեղք չունի, 8-րդ ֆոնդը հայ ուսումնասիրողներին չեն տալիս կենտրոնի ցուցումով: Հավանաբար այդտեղ պահվող նյութերը կարող են մերկացնել մի շարք «չալանչի» հետազոտողների գեղծարարությունները, դրա համար էլ դրանք պահում եմ փակի տակ:

Վերադարձա Ստեփանակերտ: Մեհթիկը, Ադրբեջանի ԿԿ գաղափարական բաժնի և մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ղեկավարներն արդեն հասցրել էին մարզկոմի առաջին քարտուղարին հայտնել իմ բաղաբական «վարքագծի» մասին, որ իբր ես ուղեգրություն եմ կատարել փակ, գաղտնի ֆոնդի նյութերը ձեռք բերելու և արտատահմանում հրատարակվող դաշնակցական թերթերին տրամադրելու համար:

Այդ և այլ պատճառներով ես մեկընդմիջտ հրաժարվեցի դիսերտացիա պաշտպանելուց, թեև հասցրել էի գրել և հրատարակել նրա երկու գլուխները:

## Մարդահամարի տվյալները

Հենց նոր վերադարձա ԼՂԻՄ փնակագրական վարչության պետի՝ Ա. Զախարյանի մոտից: Օտտ մեծ դժվարությամբ կարողացա նրանից կորզել մի քանի ամփոփիչ տեղեկություններ մարզի բնակչության և ազգային կազմի վերաբերյալ.

1970 թ. հունվարի 15-ի մարդահամարի տվյալներով ԼՂԻՄ-ն ուներ 150,3 հազար բնակիչ, այդ թվում՝

հայեր՝ 121 հազար

ադրբեջանցիներ՝ 27,2 հազար

ռուսներ՝ 1300

այլ ազգիներ՝ 800

Ստեփանակերտ քաղաքի բնակչությունը այդ նույն մարդահամարով կազմում է 30,3 հազար, որից հայերը՝ 26,511, ադրբեջանցիները՝ 2777, այլ ազգիները՝ 1089:

Միաժամանակ Զախարյանը հայտնեց, որ իրեն անհասկանալի պատճառներով կենտրոնական թերթերում, տպագրված մարդահամարի նախնական տվյալներում ԼՂԻՄ-ի բնակչությունը 1000 մարդով պակաս է ցույց տրված: Թյուրիմացությունը, զուցեև Բաքվի խարդավանքով արված «սխալը» շուկեյու համար, Զախարյանը անմիջապես հեռագրել է Մոսկվա:

Ինչևիցե, տասը տարվա ընթացքում Ղարաբաղի բնակչությունն ընդհանուր առմամբ ավելացել է 19,9 հազարով: Ցավոք, հայերի տեսակարար կշիռը նախորդ մարդահամարի համեմատ պակասել է 3,9%-ով կամ 84,4%-ից իջել հասել է 80,5%-ի: Միևնույն ժամանակ զգալիորեն 4,3%-ով ավելացել են ադրբեջանցիները, կամ նրանք նախօրոք մարդահամարի 13,3%-ից աճել և հասել են 18,1%-ի:

Ախտուղով-Ալիխանով սրիկաների հայատյաց քաղաքականությունը ԼՂԻՄ-ում շոշափելի է:

14. 01. 71 թ.

## Առանց փամփոշտի ավերակ գյուղեր

Երեկ Արիագյաղուկում էի, այսօր, անս' Թեգխարաբում: Վաղը կլիներ Պետրոսաշենում: Հայկական գյուղեր են, որոնցում 1939 թ. համապատասխանաբար աչքում էին 353, 219, 284 հայ բնակիչ և ունե-

ին 230, 144 և 136 հեկտար հացահատիկի ցանքատարածություններ, այժօր սրդեն ստանց փամփոշտի ավերակների են վերածվել: Խորհրդրդային Տ անիվ լուսնագնացը 2930 մետր ճանապարհ է անցել լուսնի վրա, ամիսը չորս անիվ ավտոմեքենան դեռ անկարող է մտնել այդ բնակավայրերը, ճանապարհները գոնե այժմպես չեն, ինչպիսիք կային պատերազմից առաջ: Ավերվել, քարուքանդ են եղել նույնիսկ երբեմնի նշանավոր կառույցները:

Իշխման գյուղերում ազգաբնակչությունը պակասել է 10 անգամ: Եղածներն էլ սպրտմ են անցյալի կեցցաղով: Մարդիկ նման են կերպարանքների, որոնք, կարծես իջել էին ազգագրական թանգարանի նկարներից:

18. 09. 71 թ.

## Մաշակաի ինտերնացիոնալիզմ

Ադրբեջանի կոմունիստական կուսակցության 28-րդ համագումարի պատգամավորները, ընտրվել են 260 կոմունիստներից մեկը: Սակայն, չգիտես ինչու այդ միջին չափանիշը չի կիրառվել հայ կոմունիստների նկատմամբ: Այսպես, եթե յուրաքանչյուր 235 կոմունիստ ադրբեջանցիներից մեկն է ընտրվել համագումարի պատգամավոր, 220 ռուս կոմունիստներից մեկը, ապա հայերը համագումարում ունեցել են 371 կոմունիստներից մեկը: Այս թվերը ավելի ու ավելի են խորացել ԽՄԿԿ 24-րդ համագումարի պատգամավորներ ընտրելու ժամանակ:

Այսպես, հայ կոմունիստներն, որոնք Ադրբեջանի կոմունիստական կուսակցության շարքերում կազմում են 13,7%, բայց ընտրված պատգամավորների մեջ նրանք կազմել են միայն 4,2%:

Այս աղաղակող փաստերը չեն խանգարել համագումարի մանդատային հանձնաժողովի նախագահ ընկ. Ռ. Մամեդզադեին, որպեսզի բռուն ծափահարությունների տակ նա հայտարարի. «համագումարի պատգամավորների ազգային կազմը վատ վկայությունն է այն բանի, որ Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունը հավատարիմ էր հիանալի ինտերնացիոնալ ավանդույթներին»:

14. 08. 71 թ.

Մենք գիտենք, որ խորհրդային իրավակարգի ամբողջ ընթացքում Ադրբեջանի ճարտիկ ղեկավարները միշտ գործել են իրենց օգտին, իհարկե ի վնաս ուրիշների: Միաված են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե Ալիևը Ղարաբաղի հարցում իր նախորդներից ինչ-որ բանով տարբերվում է: Ընդհակառակը, Ալիևի օրոք հայ բնակչության դեմ հաշմանքը չտեսնված և չլսված մաշտարների էր հասել: Երբ բռնության և հետապնդման քաղաքականություն է գործադրվում, ապա հարկ չկա մտածել արդարացի, խելացի մտտեցման մասին:

Հակահայկական քարոզչությունը, որ մղվում է Ադրբեջանում, բազմամպատակ բնույթ ունի: Դրա խնդիրներից մեկն է մտացածին «հայկական նացիոնալիզմով» ահաբեկելու միջոցով Մոսկվայի ուշադրությունը շեղել Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնությունների դեմ հանդիման կիրառվող քիրտ ճնշման դիմաց պատասխանատվություն կրելուց: Մեկ էլ Ղարաբաղի պրոբլեմի արդար լուծումը նենգափոխել կիսատ-սրատ աննշան միջոցառումներով, որոնք արոպագանդիստական սպեկուլյացիայից այն կողմ չեն գնում, և ընդհանուր ոչինչ չուճեն հայ բնակչության ազգային իղձերի հետ:

Ղարաբաղի դեպքերի կապակցությամբ Ադրբեջանի ղեկավարները ամեն տեսակի ստեր, զրպարտություններ են տարածել՝ այն համարել «Դաշնակցության կողմից հրահրած բողոքներ», «Բայկական նացիոնալիզմ», «Երևանի գործ», «ատանձին տարրերի կազմալուծություններ» և այլ ցնդաբանություններ: Սակայն, նրանք զարմանալի համառությամբ չեն ուզում ասել ճշմարտությունը, որ Ղարաբաղի հայությունը գայրացած ու զգված է իրենց կողմից տասնամյակներ շարունակ վարվող հայատյաց քաղաքականությունից, հաճախակի կրկնվող տնտեսական տեղորից, ազգային հաստատությունների նկատմամբ հաշմանկան և խտրական վերաբերմունքից: Նա՛ Ղարաբաղի հայ բնակչությունը այլևս անկարող է տանել Ադրբեջանի ծանր, դաժան, քիրտ լուծը և դրա համար էլ նա միահամուռ ձգտում է վերամիավորվել մայր Հայաստանին:

Ղարաբաղցիների՝ ոչ միայն նրանց բողոքները, խնդրանքները, թախանձագին աղերսանքները նախանձելի անտարբերությամբ մնում են անհետևանք, նաև այն պատճառով, որ Ալիևը վերևում մեծ համարում ունի (ինչպես կենտրոնում ասացին. «Алиев у нас на большом

щите»): Միթե իր ժամանակին մեծ համարում չեն ունեցել Բաղիրովը, Մուստաֆանը, Ախունդովը կամ թեկուզ՝ Նարիմանովը:

Մի ամբողջ ժողովրդի մի հատված թողնել ստրկության, տառապանքի և կործանման մեջ նաև նրա համար, որ Նարիմանով-Ալիևները «на большом щите»: Միայն զարմանալ կարելի է այսպիսի տրամաբանության վրա: Նրանք, ովքեր կոչված են կուսակցության ազգային քաղաքականության դիրքերից, մարդասիրական մղումից և վերջապես իրենց իսկ հոշակած հավասարության, եղբայրության սկզբունքներից և ընդունված օրենքներից ելնելով կարգի հրավիրել ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող բացահայտ հալածական կամպանիա կազմակերպողներին, իրենց լուռությամբ փաստորեն հովանավորում են այդ չարամիտ տարրերին, դրանով իսկ ավելի ազատություն տալիս նրանց կեղտոտ ձեռքերին:

Այս անմիտ խաղը, որ նկատել են անգամ դպրոցականները, պատիվ չի բերում ոչ կուսակցությանը, ոչ պետությանը, և ոչ էլ հասարակարգին, որը հանդուրժում է այս ամենը: Բայց չէ որ այդ բողոքների տակ դրված են հազարավոր կոմունիստների, կադրային աշխատողների, հայրենականում վիրավորված, արյունաքամ եղած մարտիկների, հեղափոխության բարիկադների վրա կանգնած հեղափոխականների, արտադրության առաջավորների, գիտության և արվեստի գործիչների ստորագրությունները: Ինչու վերևում այդ մարդկանց բանի տեղ չեն դնում: Միթե վերջիններիս կուսակցական տոմսերը այն արժեքը չունեն, ինչ հաքվում նստածներինը:

Մոսկվայում հավանաբար շատերը այն կարծիքին են, որ ստեղծված ստատուս քվոյի կամ ժողովուրդների կարգավիճակի որևէ փոփոխություն երկրում անցանկալի երևույթների պատճառ կդառնա: Սակայն շատ շուտով կզգացվի, որ ազգային հարցի ստալինյան քաղաքականությունը խախտու է, խաբուսիկ և նրա բունի սրահպանումը հոյի է տուրջ հետևանքներով, որը կհանգեցնի ընդհուպ մինչև ԽՍՀՄ քայաքայաներ և վերկամվի դաժան բախումների:

Դժվար է արդարության ուղին

«Դուք ձեր գործին անսահման նվիրվածությամբ և կատարած հիմնալի գործերով պետք է, որ վերադասի սիրուն ու հոգատարությամբ

արժանանալիք: Մինչդեռ մեր մեջ ամենաշատ հայաձանք, տառապանք, տևեռեսական տեղոր քեզ է վիճակված եղ'ր»: Իրենց խոստովանությունն աչտպես են արտահայտել բոլոր նրանք, ովքեր ճանաչում են ինձ և շատ թե քիչ տեղյակ են իմ գործունեության հետ: Միշտն ասաց, սկզբում ես էլ էի դժվարանում հասկանալ այս դառը ճշմարտության իսկական պատճառը: Բայց հետագայում, երբ ծանոթացա մի շարք պաշտոնական փաստաթղթերի հետ, որոնց մի մասի վրա հաստ տատերով նշված է. «Խիստ գաղտնի» ազդու գրիֆը, լրիվ համոզվեցի, թե ինչու համար եմ «պատանդ» դառել:

Իմ տխուր վիճակը բացատրվում է երեք հիմնական հանգամանքով: Առաջինը՝ պետք է տեսնել մեր մտավորականների մի սովոր մասի մոտ արմատավորված գեշ, հիմար սովորության մեջ: Մարդ երբ տեսնում է, որ ինքը ի վիճակի չէ հասնելու, անցնելու իրենից կարող ընկերոջը, նախանձում, վիրավորվում և չարամտորեն զրպարտում, խանգարում է նրան: Ոչ ոք չի փորձի ժխտել մարդկային ամենապարզ և ամենահասարակ այս մտցիան, որը հաշերիս մոտ չարիք է դարձել: Թերևս մասամբ սրանով կարելի է բացատրել, որ հայերը վերջին 60 տարում չունեցան Նարիմանով, Բաղիրով, Ախունդով, Այիև, այլ ունեցան՝ Կապան, Աթարբեկյան, Առուշանյան, Դեմիրճյան, Սարկիսով և նրանց նման շատ-շատերը:

Հայկական միջավայրում տխուր է ազգի այն լավագույն զավակների ճակատագիրը, ովքեր գտնվում են առաջին շարքերում, ովքեր ամենից շատ են նորարար, ովքեր բոլորից շատ են ներդրում սեփական ժողովրդի ձգտումները իրականացնելու համար, ովքեր իրենց գործունեության մեջ համարձակ են, ինչ-որ տեղ նաև ազատ:

Մյուսը՝ պայմանավորված է հասարակական և քաղաքական հանգամանքներով: Նաև ազգահայած այն կամրանիսներով, որ Բաքուն ժամանակ առ ժամանակ անց է կացնում Էտնոլոգիա Դարաբաղում: Նաև «քաժանիր և տիրիր» ցարիզմի հանրահայտ այն քաղաքականությամբ, որ մինչև այսօր էլ իր-կենսունակությունը դեռ չի կորցրել:

\*\*\*

Եվ ընդհանրապես, միշտ դժվար է արդարության ուղին: Առավել դժվար, որ այդ ճանապարհի վրա լեռ քարի պես ընկած են հազար ու մի հանցանք գործած, բայց անպատիժ մնացած տիտղոսավոր ու պաշտոնավոր սրիկաներ: Նրանք անհրաժեշտության դեպքում գործողու-

թյան մեջ են դնում իրենց մութ կապերը, կառավարական հեռավանդները: Միաժամանակ ասպարեզ հանում կեղծիքի, շանտաժի մեջ որոշակի փորձառություն ունեցող վարձու բանասրկուներ: Թերևս դա է պատճառը, որ «թոնադատված» արդարությունը կամ երբեք չի հաղթանակում, կամ էլ հաղթանակում է ուշացած, այն էլ միայն այն դեպքում, երբ սուպարեզում այլևս չկան շնագայլերը:

25. 05. 77 թ.

### «Կարգադրված է...»

Իմ «Էտնոլոգիա Դարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (երկրորդ լրացված հրատարակությամբ լույս տեսած) գիրքը աննախադեպ ընդունելության արժանացավ: Հաշված ամիսների ընթացքում ընթերցողներից, կազմակերպություններից հարյուրավոր նամակներ, հեռագրեր, գրություններ ստացա, որոնցում ցանկություն է հայտնվում գիրքը տեսնել ռուսերեն լեզվով հրատարակված, այն էլ մեծ տպաքանակով:

Անհրաժեշտություն զգացվեց, նորից լինել տեղերում, լրացուցիչ նյութեր հավաքել և, որ ամենից կարևորն էր, հուշարձանները լուսանկարել պայրով:

Օգոստոսի սկզբներին մեկնեցի Դարաբաղ: Սկսեցի Մարտակերտի շրջանից: Շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանը ինձ համար հոշակապ պայմաններ էր ստեղծել և ես մեկ շաբաթվա ընթացքում գրեթե սանրեցի շրջանը, նկարեցի բոլոր երևելի հուշարձանները, առավել տեսարժան վայրերը, բնակավայրերը: Ասկերանի և Մարտունու շրջկոմների առաջին քարտուղարներ Վաչագան Գրիգորյանը և Ստախո Պետրոսյանը նույնպես զորեղ աջակցություն ցույց տվեցին ինձ: Հաջողությամբ ավարտելով անելիքս նշված շրջաններում օգոստոսի 20-ին մեկնեցի Հաղրութի շրջան: Կեսօրին մոտ հասա Հաղրութ: Շրջկոմում քարտուղարներից ոչ ոքի տեղում չգտա: Մեկնել էին տընտեսությունները՝ մասնակցելու բերքահավաքի աշխատանքներին: Այնուամենայնիվ Հաղրութի խորհրդակցության մշակույթի նորակառույց սլաշատը դիտելիս, հանդիպեցի որտեղից հայտնված 3-րդ քարտուղարին՝ տիկին Նուշիկ Ավանեսյանին: Հրավիրեց ելքոր տուն՝ միասին ճաշելու: Հետո տարավ հյուրամեղ, կարգադրեց, որ ինձ տեղավորեն «կառա-

վարական» համարում: Այնուհետև տրամադրեց ավտոմեքենա, որպեսզի առանց ժամանակ կորցնելու եւ լուսանկարեմ Հաղորդի և նրա շրջակայքի հուշարձանները: Պայմանավորվեցինք երեկոյան նորից հանդիպել և առաջին քարտուղար ընկ. Վ. Ջաքիյանի հետ միասին նախանշելու իմ հետագա անելիքները:

Ժամը 9:30-ին վերադարձա հյուրանոց: Հերթապահը ամոթխած, երկշտո հայտնեց, որ ինձ «կառավարական» համարից տեղափոխել են չորս տեղանոց մի սենյակ: Դեռ չէի հասցրել հասկանալ, թե ինչն ինչոց է, երբ ինձ մոտեցավ հյուրանոցի վարիչը և հայտնեց, որ իրեն հենց նոր հրահանգել են, որ ինձ դուրս գրեն հյուրանոցից, որովհետև «վերեփից կարգադրված է, ձեզ Յ ժամվա ընթացքում դուրս վճարել Հաղորդի շրջանից»:

— Ինչպես թե... սա իմ հայրենի շրջանն է, այստեղ եմ եւ ծնվել, մեծացել, դպրոցն ավարտել, կոմսոմոլի շարքերը ընդունվել: Այստեղ են ինձ ընտրել բանգյուղօթյակիցների 2-րդ համագումարի պատգամավոր, ԼԿԵՄ կենտկոմի մրցանակներ հանձնել: Եվ վերջապես, այստեղից եմ եւ մեկնել խորհրդային բանակ: Անակնկալի գալով, մի քիչ էլ շփոթության մեջ ընկնելով էլի ինչ-որ բաներ ասացի:

— Զգիտեմ: Ինձ կարգադրված է...

— Ծառ բարի, տիկին եւ ձեզ հասկացա, ինձ մեկ ժամ ժամանակ տվեք իրերս հավաքեմ: Անպայման կթողնեմ ու կհեռանամ հյուրանոցից:

Մի պահ ետքի մեջ ընկա, որոշեցի ինձ օգնել հյուրանոցին կից գրտնրվող կուսշրջկոմ, բայց անմիջապես փոխեցի մտադրությունս, քանզի համոզված էի, որ կարգադրությունը վերկից է, իսկ շրջկոմը և նրա առաջին քարտուղարը տառապում են վերադասին ենթարկվելու կույր հնազանդությանը: Բացի այդ էլ, շրջկոմի առաջին քարտուղարը չէ՞ Հաղորդի իմ գտնվելու մասին հայտնել ՊԱԿ-ին, մարզկոմին, Բ. Կևորկովին:

Նայեցի պաշտասկիս, որը լիքն էր լուսանկարված գունավոր ժապավեններով: Փաստորեն նրանց վրա պատկերված էին ԼԳԽՄ-ի տարածքի ճնշող մասի հուշարձանները, գեղատեսիլ վայրերը, բնակավայրերը, շուրջ 15 հազար կադր, պարզապես իմ 20 օրվա աշխատանքը: Սրանք կարող են ինձանից խլել... Մի պահ մարմնովս սարսուռ անցավ և եւ մոռացա ինձ ու որոշեցի անհապաղ արս գանձերը դուրս բերել ապահով տեղ: Պաշտասկով հյուրանոցի երկրորդ հարկից աննկատ ցատկեցի ցած և թփերի ու ծառերի արանքով ծկեցի:

Առանց ինձ հետ պատահածի մասին որևէ ակնարկ անելու, պաշտասկա ի պահ տվեցի իմ վաղեմի ծանոթ Գրիգոր Մարդանյանին և նույն «կածանով» շտապ վերադարձա հյուրանոց:

Երբ եւ իջա հյուրանոցի սպասարահը, նկատեցի, որ հերթապահի մոտ երկու հոգի սպասում են ինձ: Ժամը 11-ին հեռացա հյուրանոցից: Կրկնկակոխ ինձ հետևում էին նշված երկու անձնավորությունները, որոնց, դժբախտաբար եւ չկարողացա ճանաչել:

Բախտս բերեց, թեյարանի մոտ կանգնած «Վոլգա» ավտոմեքենայի վարորդը, որը պատրաստվում էր մեկնել, հոժարությամբ վերցրեց նաև ինձ և աչքախով եւ թողեցի Հաղորդը: Գիշերեցի շրջկենտրոնից ոչ այնքան հեռու գտնվող Նորշեն գյուղում: Առավոտը վերադարձա Հաղորդ, վերցրի պաշտասկա և առաջին պատահած թուրքի մեքենայով հասա Ֆիզուլի:

Հետո իմացա, որ ՊԱԿ-ի և շրջկոմի լրտեսները, որոնք ինձ տեսել էին Հաղորդում տեղն ու տեղը հայտնել էին իրենց «տերերին»: Մինչև սրանք կհայտնեին միլիցիային, որ ինձ գտնեն ու ձերբակալեն, նույնիսկ ճանապարհին կանգնեցրել և ստուգել էին Հաղորդ-Ստեփանակերտ երթողային ավտոբուսը, բայց, բարեբախտաբար, այդ ժամանակ եւ արդեն գտնվում էի Տողանոբում:

27. 08. 87 թ.

Հ. Գ. Ահա թե ինչու, իմ «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» ռուսերեն գրքերում բացակայում են Հաղորդի շրջանի Էդիլուի, Բանագորի և Խծաբերդի ենթաշրջանի գյուղերի հուշարձանների լուսանկարները:

## Լիտիություն

1987 թ. սեպտեմբերի 8-ին Ադրբեջանական ԽՍՀ նախարարների խորհրդին կից կրոնի գործերի խորհրդի լիազոր Աբդուլակի ստորագրությամբ, 158 թվահամարով մի շրջաբերական է իջեցվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի բոլոր գյուղական հինգ շրջանների գործադիր կոմիտեների նախագահների հասցեներով: Բաքուն հապշտապ պահանջում էր, որ վերջիններս, այսինքն հայկական շրջանների տեղական իշխանությունների հաշվեկալվարները իրենց անվանաթերթիկների վրա նույնությամբ արտագրեն Բաքվում կազմած և հիշյալ շրջաբերականին կցված Ղարաբաղի հուշարձանների ցուցակները: Այդ ցուցակներում ընդգրկված հուշարձանների հայկական անունները լրիվ անտեսված և արբանական, ադրբեջանական «խլամ», «գամոկ», «կալա»

հնարովի անուններով են կոչված: Ըստ այդ ցուցակների Արցախ-Ղարաբաղում կա հայկական հինգ եկեղեցի, որոնք ըստ բաբվեցի «հայագետների» կառուցվել են միայն 17—19-րդ դարերում: Իսկ մնացած հայկական վանքերը, եկեղեցիները, բերդ-ամրոցները պիտակավորված են այբանական, իմա՝ աղբյուրանական անուններով:

Տեսեք, Ադրբեջանի կառավարության անունից ոմն Աբդուլսևր պահանջում է, որ հայկական շրջանների ղեկավարները իրենց բլանկների վրա արտագրեն հաքվից պարտադրված սուտ ու կեղծ ցուցակները և ստորագրություններով ու կնիքներով հաստատեն այն և շտապ ուղարկեն հաքու: Հավանաբար նրա համար, որ այդ հակահայկական խզբզանքին պաշտոնական բնույթ տրվի և որտեղ հարկն է ներկայացվի որպես իրական, պաշտոնական փաստաթուղթ՝ ստորագրված կղնքված տեղական հայ իշխանավորների կողմից: Ինչպիսի վտիություն: Եվ ոչ միայն վտիություն...

Օրինական հարց է ծագում՝ ինչ կաս ունի կրոնի գործերի խորհուրդը պատմաճարտարապետական հուշարձանների հետ, երբ հալոնի է, որ հուշարձաններով զբաղվում են Ադրբեջանի սջակույթի նախարարությունը, հուշարձանների պահպանության հանրապետական կամավոր բնիկությունը: Ինչո՞ւ է Ադրբեջանական ԽՍՀ նախարարների խորհրդի անունից, պահանջներ ներկայացնող Աբդուլսևր շրջանցել Ղարաբաղի կուսմարզկոմը, մարզգործկոմը: Ինչո՞ւ այդ ցուցակներում չեն ընդգրկված մարզի հարյուրավոր մեծարժեք հուշարձանները: Եվ որ ամենից կարևորն է, ինչո՞ւ հուշարձանները չեն կոչվում իրենց իսկական անուններով:

15. 09. 87 թ.

«Մարզգործկոմի կուլտուրայի վարչության կողմից մարզային պատմա-երկրագիտական թանգարանի նախկին դիրեկտոր ընկ. Ծ. Մկրտչյանի հետ կնքված պայմանագրի համաձայն, վերջինս նախապատրաստել և վարչությանն է ներկայացրել Լեռնային Ղարաբաղի կուլտուրայի հուշարձանների մասին գիրք-ալբոմի ձևագիրը, որի հրատարակումը կհենր միայն ազգային սնույթարծություն ու կխանգարեր աշխատավորների իմտերմացիոնալ դաստիարակությանը:

Բնականաբար, մենք վճռականորեն դեմ արտահայտվեցինք նման, թույլ տվեք ասել «ստեղծագործության» հրատարակմանը<sup>1</sup>:

<sup>1</sup> Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Ս. Բ. Վերկովի 1975 թ. մարտի 21-ին տեղի ունեցած մարզկոմի պլենումի գեկուցումից, (Տես «Սովետական Ղարաբաղ», 23 մարտի, 1975 թ. № 69):

ՍՄԿԿ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՆԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿԵՐ  
Լ. Բ. ԲԵԺՆԵՎԻՆ

Մենք՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հաղորդի շրջանի, Արփազ աղուկ (Քարինգ), Պետրոսաշեն, Խրծաբերդ, Հին Թաղլար, Դոլանլար, Աղաջաբենդ (Խանձաձոր), Ծամձոր, Բանագոր, Մուլքուդարա (Հայրենաստեր), Ցոր և մյուս գյուղերի անասնապահներս, մեխանիզատորներս, այգեգործներս մեր ծովածակատագիրն ուղղելու հարցով դիմում ենք Ձեզ:

Ադր. ԽՍՀ ղեկավար մարմինների կողմից ցուցաբերվող անտարբերության, անհոգության և խտրական վերաբերմունքի հետևանքով մեր, երբեմնի շեն գյուղերը վերածվել են ավերակների, պետական և կոլեկտիվ տնտեսությունները ետադիմելով քայքայման եզրին են հասցվել:

Թեև բնակչության մեկ շնչի հաշվով մեր հայկական շրջանում 10—20 անգամ ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ են արտադրվում, քան հարևան ադրբեջանական շրջաններում, բայց մենք 100—1000 անգամ քիչ նյութեր, հատկացումներ, ֆոնդեր, կապիտալ ներդրումներ ենք ստանում, քան նրանք:

Ծուրպտերագնաց 41 տարվա ընթացքում հայկական բնակավայրերում չի ստեղծվել ոչ մի սոցիալական ինֆրաստրուկտուրա, չի ավելացել ոչ մի հեկտար ջրովի հող, կառուցվել ժամանակակից պահանջով անասնագույն, բացվել արդյունաբերական ձեռնարկություն, կամ մասնագնոր: Ավելի ծանր դրության մեջ են գտնվում Լեռնային տնտեսությունները, գուղերը: Ծանապարհագուրկ, տեխնիկական օգտագործելու հնարավորությունից զրկված, անհամեմատ պակաս աշխատուժ ունեցող տնտեսություններում աշխատանքները կատարվում են բացառապես նահապետական ձևով, որի պատճառով արտադրվող մթերքները թանկ են, մըթերումներից ստացած եկամուտները չեն փակում արտադրական ծախսերը: Այդ ամենի պատճառով գյուղացիները իրենց լարված, ծանր աշխատանքի դիմաց ստանում են չնչին վարձատրություն՝ 10—15 անգամ քիչ, քան երկրի, հանրապետության գյուղացիների միջին աշխատա-



վարձն է: Մարդիկ հարկադրված թողնում են հայրենի գյուղերը, փակվում են դպրոցները, վերանում են բնակավայրերը: Դա էլ իր հերթին հոգեցնում է այն բանին, որ հրաշալի արոտավայրերը վատ են օգտագործվում, հազարավոր հեկտար բերրի հողեր մնալով անմշակ խոպանի են վերածվում, այգիները վայրենանում են:

Շրջանի, մարզի բնակավայրերի մեծ մասը տրասնպորտի՝ ավտոբուսային միջոցներով կապված չեն շրջկենտրոնների, և ոչ էլ մարզկենտրոնի հետ: Վերջին 30 տարում մեր բնակավայրերում չեն կառուցվել կուլտուր-կենցաղային բնույթի ոչ մի շենք, չի բարեկարգվել ոչ մի կիրումետր ճանապարհ, չի ստեղծվել կապի ոչ մի երբ միջոցներ: Արտավայրերը, անասնապահական ֆերմաները էլեկտրաֆիկացված չեն: Վատ, շատ վատ է բնակչության բժշկական, կուլտուրական սպասարկումը: Սպորտի մասին խոսք լինել չի կարող, որովհետև շրջանի ոչ մի բնակավայրում չի ստեղծված տարրական սրահներով մարզադահլիճ կամ հրապարակ: Մանրածախ ապրանքների վաճառքը կատարվում է ընդհատումներով: Հաճախակի խանութներում չես գտնում ստաջին անհրաժեշտություն ապրանքներ, մթերքներ: Հասարակական սննդի մասին նույնպես խոսք լինել չի կարող, որովհետև պատերազմից հետո այդ ուղղությամբ ոչինչ չի արվել: Տնտեսություններին չեն հատկացվում անհրաժեշտ շինանյութերի ֆոնդ: Հարկադրված, անթույլատրելի միջոցներով ու ճանապարհներով դրանք տասնամարտիկ բարձր գներով ձեռք են բերվում հարևան ադրբեջանական շրջաններից:

Մեծ չափերի են հասել անասնազոդության դեպքերը, ավտոմթարները, մթերքները հանձնելու հետ կապված տհաճ դեպքերը: Ամեն տարի տասնյակ ավտոմթարների հետևանքով մեռնում են տնտեսությունների ղեկավարներ, մասնագետներ, շարքային աշխատողներ: Ծարբից դուրս են գալիս ավտոմեքենաները, տրակտորները, փչանում են հազարավոր տոննա գյուղատնտեսական մթերքներ:

Մենք զրկված ենք մայրենի լեզվով հաղորդումներ լսելու, ներկայացումներ դիտելու հնարավորությունից: Մեզ չեն թողնում, որպեսզի շփման մեջ լինենք մեր ժողովրդի նշանավոր արվեստագետների հետ: Դեռ ավելին, հաճախակի են մեզ հրամցնում այնպիսի գրականություն, ուղիտ-հեռուստահաղորդումներ, որոնցում բացեիբաց նենգափոխում են մեր պատմությունը, պղծում մշակույթի հուշարձանները, դրանով իսկ կոպիտ, թուրքավարի վիրավորում մեր ազգային արժանապատվությունը: Պարզ առած, մեր հանդեպ կատարվող ազգահալած գործողու-

թյունները հակասում են լեճիկյան ազգային քաղաքականության սկզբունքներին:

Բողորովին չի գգացվում, թե այստեղ հոգ է տարվում տեղերում ամրապնդելու կադրերը, զարգացնելու տնտեսությունները, բարեկարգելու ճանապարհները, բնակավայրերը, այլ ամեն կերպ ձգտում են, որպեսզի մենք՝ արմատական բնակիչներս, թողնենք մեր պապենական օջախները:

Ահա թե ինչու, մենք թախանձագին խնդրում ենք Ձեզ, որպեսզի դրական մի լուծում տաք մեր պահանջին՝ Լեռնային Ղարաբաղը միավորենք Հայկական ԽՍՀ-ին, դրանով իսկ վերջ կդրվի մեր տասնամյակներից, կհաղթանակի բանականությունը, ազգերի հավասար ծաղկման լեճիկյան քաղաքականությունը:

Սույն նամակը, նշված գյուղերի բնակիչների անունից գրեց **Ծանեճ Մկրտչյանը**: Նամակի տակ դրված է 108 ստորագրություններ՝ **Գրիգորյան, Մանասյան, Բաղդասարյան, Հակոբյան, Ալթունյան, Զախարյան, Ղահրամանյան, Գալստյան, Ալավերդյան, Մարգարյան, Աղաջանյան, Գրիգորյան, Եգանյան** և այլն:

28 02 80 թ.

**Москва, ЦК КПСС,  
члену Политбюро ЦК КПСС, секретарю  
ЦК КПСС товарищу Яковлеву**

Уважаемый Александр Николаевич! Мы вынуждены обратиться к Вам через Ереванскую почту, потому что из Нагорного Карабаха наши письма и телеграммы не доходят до Москвы. По приказанию первого секретаря ЦК Компартии Азербайджана решено крохотный Мардакертский район разделить на две части, с тем, чтобы в одном районе все руководство состояло только из азербайджанцев. А район всего состоит из сорока тысяч человек. Делить хотят так, чтобы в одном из вновь созданных районов остались восемь тысяч азербайджанцев, которые по мнению панисламистов в скором времени должны размножиться и заполнить армянские земли.

С этой же целью решено в областном центре Степанакерте, где проживает девяносто шесть процентов армян, создать так называемый учебный центр, в котором должны проходить усовер-

шенствование специалисты для семи азербайджанских районов. Делается это для того, чтобы ускорить прилив азербайджанских специалистов в армянский город.

Руководство Азербайджана в срочном порядке рассылает по Карабаху своих уполномоченных, которые переписывают все армянские христианские памятники в так называемые Албанские. Такая дискриминация проводится среди бела дня, прикрываясь позунгами перестройки. Нас заставляют развивать виноградарство, чтобы через центральное правительство обвинять армян в нарушении антиалкогольной политики партии. Хотя каждому известно, что лично Алиев, а затем и Багиров насаждают в горном крае виноградарство в ущерб животноводству.

Убедительно просим помочь и спасти армянское население Нагорного Карабаха от преступных деяний панисламистов и пантюркистов, считающих, что Карабах— это стратегический форпост Турции, направленный против России. Так было в веках, так сейчас продолжается. Мы обязаны подумать о нашем будущем. И делать это нужно под знаменем ленинизма и перестройки.

Шаген Мкртчян, всего девяносто две подписи  
Адрес: Ереван: Пушкина, 62/7

8 12 1987 г.

### ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՄԱՐԶԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. Բ. Ս. ԿԵՎՈՐԿՈՎԻՆ

#### Հարգելի Բորիս Սարկիսովիչ

Տաք տարուց ավելի է, ինչ էս գրադվում եմ Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ: Այդ կապակցությամբ հանախակի լինում եմ Ղարաբաղում: Սակայն, սխալ կլինի կարծել, թե հնություններից բացի, մենք ուրիշ բան չենք տեսնում: Ասենայն անկեղծությամբ խոստովանում եմ, որ մեզ ուրախացնում են վերջին տարիներին մարզում կատարված տնտեսական բարեփոխությունները: Այն վիստաղ, որ կարճ ժամանակում Ստեփանակերտում կառուցվել է 5 հուշարձան, ինքնին շատ բան է ասում: Հիմնականում դրանք ճարտարապետական, դեկորատիվ լուծումներով գոր-

ծեր են: Օգտագործված հրաշալի քարատեսակների շնորհիվ զգալիորեն ընդգծված են հուշարձանների մոնումենտալությունը:

Դրա հետ մեկտեղ բազմաթիվ հուշարձաններ են կառուցվում մարզի գյուղերում՝ Մեծ հայրենականում զոհված մարտիկների հիշատակը հավերժացնելու համար: Սակայն պետք է ասել, որ հիանալի հուշարձանների կողքին քիչ չեն նաև այնպիսիները, որոնք հուշարձան կոչվելու իրավունք չունեն: Մակերեսայնությամբ և շտապողականության կնիք կրող թույլ գործեր են, որտեղ կերպարային-պրաստիկական լուրջ խնդիրների լուծումը փոխարինված է անտեղի, անհոռի ոճավորումներով: Քանի որ այդ «հուշարձանները» հեղինակները ինքնուս, կերպարվեստի հետ կապ չունեցող պատահական մարդիկ են, ուստի իրենց «զլուխ-գործոցները» ստեղծում են նաև ցեղեն-քետոնից՝ կաղապարով պատճենահանման եղանակով:

Նման խոսանի առաջը փակելու համար անհրաժեշտ է, որ նոր կառուցվելիք բոլոր հուշարձանների էսքիզները, մակետները նախօրոք քննարկվեն: Ես համոզված եմ, որ Դուք այս կարևոր հարցում հանդես կբերեք նույն պահանջկոտությունն ու խստությունը, ինչպես որ դրանք դրսևորվել են Ստեփանակերտում կառուցված հուշարձանների նկատմամբ:

Կուսմարզկոմի բյուրոյի որոշմամբ Մեծ-Թաղլարում և Կուսապատում պետք է բացվեն ավիացիայի մարշալ Խուդակովի և պրոֆեսորուհուհու հեղափոխական Բեկզադյանի տուն-թանգարանները: Քիչ գործ չի կատարվել այդ ուղղությամբ: Այդուհանդերձ, այն ցուցադրությունները, որոնք արդեն արված են, բայց դեռ այցելուների առջև չեն բացված, խմբագրման, սրբագրման, տեղ-տեղ վերափոխման կարիք են զգում: Հավանաբար, այդ պատճառով էլ նշված տուն-թանգարանները չեն բացվում: Եթե տեղում դժվարանում են, ապա օգնության կարգով էս պատրաստ եմ կատարելու նշված թանգարանագիտական աշխատանքները:

Բորիս Սարկիսովի, տապ տարի առաջ, երբ ստեղծում էինք Բ. Կնունյանցի տուն-թանգարանը, մեր ձեռքի տակ չկային անհրաժեշտ քանակությամբ նյութեր: Սակայն հետագայում էս Լեռնհզրաղի արխիվներից պատճենահանել և Ստեփանակերտ եմ բերել տասնյակ նոր նյութեր: Կնունյանցի հեղափոխական գործունեության վերաբերյալ այդ նյութերը պահվում են մարզային թանգարանում: Եթե ընկերները դժվարանում են իրենց տրամադրության տակ գտնվող նյութերի հիման

վրա փոփոխության ենթարկել Ննգի գյուղի թանգարանը, ապա ես իմ պատրաստականությունն եմ հայտնում օգնել նրանց:

Բարևներով

Ծ. Մկրտչյան

19 02 1930 թ.

Մ ա ն ո թ ո յ ո Ւ Ա.— Թե՛ն բազմաթիվ անգամ փորձեցի հանդիպել Բ. Կևորկովին հետ, անգամ միջնորդի դերում հանդես եկան կուսմարզկոմի գաղափարական գծով քարտուղար՝ Ե. Սարգսյանը, ազիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Լ. Մկրտչյանը, Բ. Կևորկովի կողմից արտոնված բանաստեղծները: Բայց ապարդյուն, նա համառորեն հրաժարվեց և չընդունեց ինձ: Նույնիսկ, ինչպես վկայում են կուսմարզկոմի նախկին պատասխանատու աշխատակիցներ Լ. Աղամյանը և Վ. Հարությունյանը, ԼՂԻՄ-ի բնակավայրերի մասին «Հայաստանի հանրազինության համար նյութեր հավաքելու նարցով կուսմարզկոմ մտնելս մի մեծ և տհաճ խոսակցության նյութ դարձավ: Բ. Կևորկովը սպառնացել է Լ. Աղամյանին, որի աշխատանքակրում մի քանի րոպեով կախել էի «հայկական նացիոնալիզմով վարակված» գլխարկս:

Դեռ ավելին, 1937 թ. օգոստոսի 20-ին, երեկոյան ժամը 10-ին, Կևորկովի կարգադրությամբ, Հաղորթում, ինչպես արդեն նշեցիք, ինձ հյուրաբնոցից դուրս գրեցին և պահանջեցին, որպեսզի ես Յ ժամվա ընթացքում թողնեմ իմ հայրենի շքուշանը (որտե՛ղ՝ գնացել էի լուսանկարելու հուշարձանները) և հեռանամ:

10 11 1937 թ.

**ՀԱԳՐՈՒԹԻ ԿՈՒՍՇԲՋԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ԸՆԿ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

**Հարգելի Վիլա Ներսեսովիչ**

Լեռնային Ղարաբաղի կուլտուրայի մարզային վարչության պետի խնդրանքով մի քանի օր առաջ ես եղել եմ Մեծ-Թաղլարում: Մարշալ Խամփերյանցի տուն-թանգարանի, ավելի ճիշտ հուշաթանգարանի անհաջող, աղքատիկ, ոչ մասնագետի, թանգարան ձևավորելու կարողությունից գուրկի արած էքսպոզիցիան մի կերպ հարմարեցրինք շենքին: Ես գրել եմ բոլոր էտիկետները, բացատրագրերը, ուղղել առավել աչքի ընկնող սխալները: Այսուհանդերձ, հուշաթանգարանը այդպիսինը կո-

չելու էրախոնքն առաջին կարելի է տալ ավանտյ, հետագայում նոր նյութերով հարստացնելու հույսով:

Ծիշոն սաաց ես ուզում էի տեսնել Ձեզ, բայց ինձ ասացին, որ Դուք Բաբու եք գնացել:

Եթե իրոք Ադր. ԿԿ կենտկոմի ցուցմունքով բոլոր շրջաններում թանգարաններ են կազմակերպվում, ապա հավանաբար այդ կարևոր միջոցառումից դուրս չի մնա նաև Հաղորթի շրջանը: Ձեզ մոտ, իմ հայրենի շրջանում մի հարուստ և հետաքրքիր թանգարան ստեղծելու դժվար և պատասխանատու գործում ես պատրաստ եմ օգնել Ձեզ: Նախ այն պարզ պատճառով, որ ես Դիզափաշտ լեռնաստանի զախակն եմ, հետո էլ այդ շրջանի գրեթե բոլոր անցողարձերին քաջատեղյակ: Եվ, որ ամենից գլխավորն է մոտիկից գիտեմ տեղացի պաշտառ մարդկանց: Բացի դրանից, թանգարանի կազմակերպումը շրջանի կուլտուրական կյանքում անզնահատելի նշանակություն կունենա: Ձեզ լավ ճանաչելով, Ձեր կազմակերպչական թափին ծանոթ լինելով, հուսով եմ, որ Հաղորթի թանգարանը նոր կազմակերպվելիք նմանատիպ թանգարանների մեջ լավագույններից մեկը կլինի: Այդ հարցում ես պատրաստ եմ ձեռք մեկնելու Ձեզ, որպես հին ծանոթի, մի հողի, մի ջրի զավակի, Զինգյանակապի հովտից հոռ ընկերոջ, առավել ևս, որ ես բազմիցս հյուրընկալվել եմ Ձեր տանը՝ Ներսես քեռու կողմից:

Խնդրում եմ ինձ լավ հասկանալ և որի՞չ բաներ չմտածել: Պարզապես ես ուզում եմ օգնած լինել Ձեզ այդ ծանր, բայց վերին աստիճանի պատվաբեր գործը հաջողությամբ գլուխ բերելու համար:

Բարևներով

Շահեն Մկրտչյան

25 08 1930 թ.

**ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՆՈՐԵՆ  
ԸՆԿ. Ս. ՄԱՄՈՒՆՅԻՆ**

**Հարգելի Սամվել**

Վերջերս եկա Մարտակերտ և ուզում էի Ձեզ տեսնել, բայց այդ օրերին Բաբվում էիք գտնվում:

Ինձ ցույց տվեցին ձեր նախկին վարչական շենքը: Անգամ երկրորդ

հարկի հատակագիծը գծել են: Շատ հարմար շենք է: Մի փոքր, չնչին նորոգում կատարելուց հետո կարելի է աչնտել ստեղծել հույակապ թանգարան: Այնպիսի թանգարան, որ արտացոլի Ձեր տնտեսության նվաճումները, նրա հիանալի մարդկանց հերոսական գործերը: Միշտն ասած Պատիվներ այդ մասին ինձ հետ խոսել է: Եթե Գուր օգնեք, ոչադրություն դարձնեք, մենք կարճ ժամանակամիջոցում կստեղծենք թանգարանը:

Առաջին հերթին հարուստ նյութերի լեզվով ցույց կտանք Մարտակերտի տնտեսության պատմությունը, վերջին շրջանի հսկայական ձեռքբերումները: Գեղարվեստական, թանգարանագիտական նորագույն պահանջներով կստեղծվի բոլորովին նոր ցուցադրություն՝ լույսի, պլայդի՝ գույնի, թեթև և գեղեցիկ նյութերի օգտագործումով: Մի խոսքով թանգարանը իր բովանդակությամբ և գեղարվեստական արտահայտչականությամբ սազական կլինի Մարտակերտի հզորությանը:

Եթե իրոք այդպիսի թանգարան ստեղծելու մտադրություն կա, ապա խնդրում եմ հաշտնել, որ ես կազմեմ և Ձեր հաստատմանը ներկայացնեմ ապագա թանգարանի թեմատիկ ցուցադրական պլանը: Պահին հավանության տալուց հետո միայն կարվեն էսքիզները, կհավաքվեն թանգարանային նյութերը: Այդ պլանը համարյա թե նոր կառուցվող շենքի նախագծա-նախահաշվի հման մի բան է:

Քանի որ պլանի կազմումը բավականաչափ աշխատանքների հետ է կապված, և նրա որակից է կախված թանգարանի ցուցադրության մակարդակը, ուստի այդպիսի պատասխանատու գործը ես կարող եմ սկսել Ձեր համաձայնությունից հետո միայն:

Բարևներով

Շահեն Մկրտչյան

27 08 1980 թ.

**ВЫПИСКА**

Из решения бюро Нагорно-Карабахского обкома  
КП Азербайджана

24 января 1967 года в республиканской газете «Коммунист» (на армянском языке) № 20 (12993) было опубликовано сообщение АзТАГ-а под заголовком «Выявлено древнее поселение», в котором говорится о беседе корреспондента АзТАГа с сотрудником института истории Академии Наук Азербайджанской ССР, кандидатом исторических наук Р. Геюшевым.

Тов. Геюшев давал корреспонденту неверные сведения о новонайденном поселении. Лично не побывав на месте находки и не обследовав найденные археологические материалы, тов. Геюшев это поселение называл «Амарас», что не соответствовало действительности.

Осенью 1965 года в местности Алибали, близ села Чартар Мартунинского района Нагорно-Карабахской автономной области, во время корчевки (глубина вспашки 70 см) открылось древнее поселение, которое занимает более 60 гектаров. Из-под земли были изъяты множества каменных и керамических изделий, большие кувшины (карасы) и пр.

На место прибыли научные сотрудники Государственного историко-краеведческого музея Карабаха.

Из Алибали доставлены в музей 250 археологических материалов, которые обрабатывались с помощью специалистов. Эти материалы принадлежат X—VIII векам до н. э. и IX—XIII векам н. э. Там же найдены образцы цветной керамики, стеклянные браслеты, бронзовый колокольчик, жженые кирпичи, светильники и много другого. Об этом были опубликованы сообщения в областной газете «Советакан Карабах» (26 декабря 1965 г. № 305 (8419) и в республиканской газете «Коммунист» (на армянском языке) № 34 (12715) от 10 февраля 1966 года).

Местность, где обнаружены эти археологические предметы, называется по-разному: «Алибали», «Шошва ял», «Кызыл кала» и т. д. Каким древним поселением является обнаруженное поселение, трудно сказать, потому что этим вопросом пока никто не занимался и нет научных выводов.

Тов. Геюшев Р. сообщил корреспонденту АзТАГа, что с полной уверенностью можно сказать, что найденное поселение является остатком древнего городка Амарас. Это мнение, конечно, неверное. Во-первых, найденные предметы принадлежат не IV—VII вв., как утверждает Р. Геюшев, а X—VIII вв. до н. э. и IX—XII вв. Во-вторых, Амарас фактически находится около 30 км вдали от Алибали. Далее, тов. Р. Геюшев объясняет, что находящийся здесь монастырь и стены замка относятся к более поздним временам, потому и ученые долгое время сомневались, «Куда же исчезло поселение?». Такое заявление тов. Геюшева вызывает, по меньшей мере, удивление. Откуда он взял это? Ведь в обнаруженных на месте материалах нет никаких следов о существовании когда-либо в Алибали монастыря и замка. Очень жаль, что кандидат исторических наук не знает, что Амарас не безывестен науке. Начиная с IV века до наших дней Амарас упоминается в истории.

Ссылка тов. Геюшева на произведение автора книги «Арцах» — епископа Маркара Бархударяна по существу правильна. Однако, он упускает из виду, что автор упомянутого произведения, относящегося к XIX веку, не говорит о том, что монастырь «Амарас» и замок были в Алибали. Точно также высказались об Амарасе Мовсес Каланкатуйский (VII век) и Киракос Гандзакеци (XIII век). Кстати, там похоронен св. Григорис. Монастырь с могилой св. Григориса находится около древнего городка Амарас. Мимо монастыря протекает речка Амарас. Так же известно, что прежде чем похоронить св. Григориса, его труп держали на вершине горы Проветителя, которая находится напротив монастыря Амарас.

Приведенные факты достаточны, чтобы сказать, что обнаруженное поселение не является бывшим городком «Амарас». Как известно, монастырь Амарас был построен в 489 году на могиле св. Григориса. В V веке здесь основал школу создатель армянской письменности Месроп Маштоц. В 1387 году во время похода

Ленктемур монастырь был разрушен. В 1555 году престол католика Агванского был переведен в Гандзасар. В 1791 году князь Варанды Мелик-Шахназар перестроил монастырь. В 1858 году монастырь Амарас был снова реставрирован. Следует отметить, что после установления Советской власти в Карабахе в Амарасе была организована коммуна, которая существовала 6 лет.

Как показывают факты, Амарас как поселение, давно известно науке. Что заставило кандидата исторических наук давать корреспонденту АзТАГа подобные безответственные сведения?

В течение ряда лет Р. Геюшев, без ведома местных властей производил в нашей области раскопки, разрушая исторические памятники.

Недавно корреспонденты АзТАГа Сурен Мирзоян и Андрей Никольский были в Государственном историко-краеведческом музее Карабаха. Они попросили рассказать об обнаруженном в Алибали поселении. Мы им показали многочисленные материалы из Алибали. Как признался С. Мирзоян, первую часть опубликованного сообщения он сам написал. По-видимому А. Никольский, желая «уточнить» полученные у нас сведения, обратился к Геюшеву, который считает себя «знатоком» Карабаха. А последний искал исторические факты и появилась информация в газете. Научные сотрудники вышеуказанного института около 5 лет производили раскопки в 200 метровой пещере близ с. Азох Гадрутского района. Причем без ведома местных органов.

Как принято, найденные в древних поселениях археологические предметы должны экспонироваться в музее данного края. Однако, руководители экспедиций не передали нашему музею ни одну из найденных вещей. Раскопки и экспедиции института истории АН республики производят удручающее впечатление. Как иначе объяснить тот факт, что из несколько десятков каменных инструментов, имеющих 150-тысячелетнюю давность, найденных в Азохской пещере, хотя бы одну-две не оставили музею Карабаха?

Плохо, когда во время раскопки применяют взрывчатные вещества. Как утверждают колхозники, такие вещества применялись в Азохской пещере. Динамитом был поднят в воздух оставшийся с V века монастырь Дади-ванк в Мардакертском районе. Таким же образом без угрызения совести, были разрушены остатки де-

ревни у подножия горы Мравасар, где родился историк VII века Мовсес Каланкатуйский.

Директор Государственного историко-краеведческого музея Карабаха

Мкртчян Ш. М.

Մարզկաթի տիրիվ, փ. 1, օր. 1, ց. 105, ԺԵՄ 1300, Ե. 16—18.

Մ ա ն ո թ ո թ յ ո Ւ Է . — Կուսմարզկոմ տղարկված իմ այս նամակը քննարկվեց բրտրոյուն (23 մայիսի 1967 թ.) և պատճեն ուղարկվեց Արք. ԽԱՀ ԳԱ-ի նախագահություն: Տեսական ժամանակով Գեորգյեղ Ղարաբաղում չեղևաց, սակայն այդ ընթացքում Հայաստանի հնագետների գործունե աջակցությամբ նա նույնպես կաշտպանել դակտրական դիտարկում:

### ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՃԱՐՆ ՈՒ ՆՐԱ ՇԱՐՏԱՐԱԳԵՏՁ

#### Հարգելի խնդրություն!

Թեև ինձ համար մեծ պարբեր է Ձեր թերթը ձեռք բերելը, այդուհանդերձ կկամենայի ասել, որ միշտ հաճույքով եմ կարդում նրանում տեղ գտած բոլոր նյութերը: Հարկավ, ղարաբաղյան թեմատիկան Ձեր թերթին մի առանձին հմայք ու բովանդակություն է տալիս: Ապրեք: Դուք գտել եք թերթին բնորոշ գիտական, ճանաչողական և գաղափարաբաղաչական հետաքրքրություն ներկայացնող նյութեր և ճաշակով մատուցել ողոսախոս լինթերցողներին: Դա շատ կարևոր աշխատանք է, Արցախի հերոսական գոյամարտին նպաստ քերող սննդահաստեղի գործ:

Ինձ՝ նախկին կուսակցական աշխատողին, ղարաբաղցու համար առաջին հերթին հետաքրքրում է Ղարաբաղի հետ առնչվող բոլոր նյութերը: Իրանց մեջ իրենց հրատապությամբ, թարմությամբ, անմիջականությամբ, այդ, նաև ճշմարտացիությամբ ստանձնանում են հայտնի արցախագետ Շահեն Մկրտչյանի հոդվածները:

Ես նրան ճանաչում եմ 60-ական թվականներից: Նա ղարաբաղյան շարժման կարկառուն դեմքերից մեկն է, այն բացստիկներից, որ միշտ

Ի նամակը հասցեագրված էր Մոսկվայում հրատարակվող «Армянский вестник» ամսաթերթին:

պետք են հայրենիքին: Ճշմարիտ հայրենասեր, անանձնական կյանքով ապրող: Ինձ ծանոթ են նրա ազնիվ հոգին ու նրա խիզախ պրոթոկումները: Ես տեսել եմ նրա վիթխարի աշխատանքը Արցախում թանգարաններ ստեղծելու ժամանակ: Երկրամասի պատմության և մշակույթի հարուստ ժառանգության առաջին հետազոտողն է, բազմաթիվ մեծագրությունների, հոդվածների հեղինակ:

Կցանկանայի, որ Ձեր թերթում տպագրեք նրա հետ կապված մի շարք կարևոր փաստագրական, արխիվային նյութ, որն ես իբրև կուսմարզկոմի բաժնի վարիչ, ժամանակին տպագրել, պատրաստել և երկար տարիներ պահել եմ իմ անձնակրան արխիվում: ,

Հարգանքներով՝

Ք.Ն. Մոսայելյան

Լեոնային Ղարաբաղի պետական պատմա-երկրագիտական թանգարանի շտրջը 1966—1972 թթ. ստեղծված քաղաքական ձեռնածությունների մասին.

1960-ական թթ. կեսերին Լեոնային Ղարաբաղում Շահեն Մկրտչյանի հայտնվելը և մանավանդ նրան մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն ճշանակելը շատերիս համար անսպասելի էր: Արդրեջանին 20-ական թթ. սկզբներին բուն կերպով ենթարկեցրած Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) պարագայում բացստիկ դեպք էր, կթե չասենք քաղաքական «անհուսալիության» դրսևորում, կրք Երևանում կրթություն ստացած ղարաբաղցի շրջանավարտին հրավիրեն Ստեփանակերտ և անմիջապես պաշտոնավորեն մարզային մասշտաբի գիտալուսավորչական և գաղափարաբաղաչական բնույթի հիմնարկությունում: Ամենայն իրավամբ այստեղ որոշակի դեր է խաղացել նրա ոչ սովորական կենսագրությունը: Որք մեծացել է, դպրոցում սովորելու տարիներից ակտիվ թղթակցել է շքրջանային, մարզային և հանրապետական թերթերին, ուղիղյին: Դեռ դպրոցական էր, երբ Տող գյուղում դեկավարում էր թթահավաքի և խոտհնձի աշակերտական արտադրական բրիգադները և որպես պատգամավոր մասնակցել էր բանագրողթղթակիցների հանրապետական համագումարին ու կոմսոմոլի շրջանային ու մարզային կոնֆերանսներին: Բազմիցս պարզևատրվել է ՀամԿԵՄ կենտկոմի կողմից: Բանակում ծառայելու ժամանակ, 20 տարեկան հասակում, ընդունվել է ՍՄԿ

շարքերը և թղթակցել զինվորական թերթերին, անգամ «Կոմսոմոլսկայա պրավդային»: Ուսումնասիրության տարիներին ընտրվել է ֆակուլտետի կուսբյուրոյի առաջին քարտուղար, ինստիտուտի կուսբյուրոյի անդամ, փայլուն առաջադիմության համար եղել է անվանական թոշակառու և կարմիր դիպլոմով վերադարձել հայրենի Ղարաբաղը: Այս ավագները, անշուշտ, վճռորոշ դեր են խաղացել: Սակայն 29-ամյա երիտասարդին մարզային թանգարանի տնօրենն ճշանակելիս այն ժամանակ՝ 60-ական թթ. ըմբռնումով շատերին, հատկապես Բաքվին և նրա տեղական «մագիստրոսներին», ոչ միայն տարօրինակ և չմիմնադրված այլև անթույլատրելի թվաց, որովհետև նրանց կարծիքով Շ. Մկրտչյանը դեռ շատ երիտասարդ էր, անփորձ և Հայաստանից նոր եկած: Զորավոր գործոճներին, հատկապես վերջինս Ադրբեջանում, ինչու չէ նաև Ղարաբաղում առանձնահատուկ ճշանակություն էր տրվում: Սակայն, ի պատիվ կուսմարզկոմի առաջին քարտուղար Գ. Մկրտչյանի և գործին առնչություն ունեցած մյուս ղեկավարների, բարեբախտաբար Շ. Մկրտչյանի հարցում ղեկավարվել էին ոչ որոշակի ձևական՝ Բաքվի կողմից սահմանված քաղաքական հատկանիշներով, այլև թեկնածուի իրական արժանիքներով: Նրանք հավատացած էին, որ Ծախենը կարողարացնի և մեկ էլ ուզում էին երիտասարդ կադրերով ուժեղացնել մրջակայթի բնագավառը: Եվ որ նա հուսախաբ չարեց: Բառացիորեն հաշված ամիսների ընթացքում պահեստի, գյուղական խոճուկ ցուցարարի տպավորություն թողնող թանգարանը դարձրեց երկրի նույնատիպ լավագույն թանգարաններից մեկը: Պարզվեց, որ նա իսկ և իսկ փայլուն թանգարանագետ է:

Ուզում եմ ընդգծել մի կարևոր հանգամանք ևս: Երբ տարաբախտաբար, աններելի ու նաև ամոթալիորեն շատ տեղացիներ լքում էին հայրենի Ղարաբաղը, շատերն էլ ուժ ու միջոցներ չխնայելով հիմնավորվում Երևանում, Բաքվում, Ծախեն Մկրտչյանը մայրաքաղաքում առաջարկած խոստումնալից պաշտոններից հրաժարվելով, մի կիսատ կանչով, վերադառնում է Ստեփանակերտ և իր ստեղծած թանգարաններով, կրակոտ ելույթներով ու թարմաշունչ հողվածներով միխթարում, կորով, եռանդ, հույս ներարկում՝ չխնայելով չոր ողջ էությունը, կյանքը, առողջությունը և բնականաբար չէր կարող չհայտնվեր անհրաժեշտ ամբաստանությունների հորձանուտի մեջ, հազար ու մի հոգեկան խոշտանգումների ենթարկվելով: Հանգի տեղացի ապիկարներից և մանավանդ ոչ տեղացի հայակույ «գորշ գայլերին» ոչ միայն ձեռնառու չէր

նրա ներկայությունը Ղարաբաղում, այլև շատ փոսագավոր: Ստորև բերվող փաստաթղթերը դրա պերճախոս վկայություններն են:

\* \* \*

1968 թ. մայիսի 14-ին կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն Ադր. ԿԿ կենտկոմի պարտադրմամբ քննարկեց մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանի հարցը: Նիստը տևեց 4,5 ժամ, ելույթ ունեցան 15 հոգի: Բյուրոյի ընդունած 11 կետանոց որոշման մեջ միակ կոնկրետը՝ 9-րդ կետն է, որտեղ նշված է. «Անհաշտվողականության, անակգրունքայնության և թանգարանի ցուցադրության մեջ գաղափարապես քննություն չբնող էքսպոնատներ ցուցադրելու համար թանգարանի տնօրեն ընկ. Ծախեն Մակիչի Մկրտչյանին հայտարարել խիստ նկատողություն՝ գրանցելով անձնական քարտի մեջ»: Մնացած կետերը բարձրաշունչ բառամթերքից կաղապարված շարլոն հանձնարարություններ են, որոնք մեծամասամբ կապ չունեն թանգարանի և նրա առջև դրված խնդիրների հետ: Ըստ էության, դրանք «Պրավդայի» խմբագրական առաջնորդող հողվածների ամբողջական տարբերություններից քաղած շարադրանքներ են, և ասես գրված լինեն կուսակցական թերթերի համար: Օրինակի համար, նույնությամբ մեջ բերենք 4 և 6 կետերը:

4. Երրորդամբ, բովանդակալից ցույց տալ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը, մարզի աշխատավորների աշխատանքային հերոսությունը արդյունաբերության զարգացման, կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության իրականացման գործում կուսակցության ղեկավար դերը, սոցիալիստական վերափոխումները և դարաբաղցիների աշխատանքային և մարտական սխրանքը՝ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:

6. Նպատակահարմար գտնել ստեղծելու ցուցափեղկերի հատուկ համալիր, որը ցույց կտա ժողովուրդների բարեկամությունը և պրոլետարական ինտերնացիոնալիզմ. դիտողական պարագաներով ցուցադրել ԽՍՀՄ ժողովուրդների օգնությունը Ադրբեջանին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղին: Միաժամանակ նաև մեր մարզի և հանրապետության ներդրումը կոմունիզմի կառուցման ընդհանուր գործում:

Սակայն, քանի որ ստորև հրապարակվող Շ. Մկրտչյանի բյուրոյում ունեցած ելույթում մեկ առ մեկ նշված չեն իրեն վերագրված մեղա-

դրանքները, ուստի նպատակահարմար է թվարկել դրանցից առավել բնորոշները:

**Քր. Պետրոսյան.** — Ստեփանակերտի թիվ 3 ռուսական դպրոցի տնօրեն, **Հեղար Ալինի բնորոշմամբ «Բաքվի աչքն ու ականջը ԼՂԻՄ-ում»:**

«Բյուրոյին տեղյակ եմ պահում Շահեն Մկրտչյանի կատարած գաղափարաքաղաքական տեսանկյունից անհանդուրժելի և հանցավոր մի շարք գործերի մասին: 1) Պարզվել է (երբ և ում կողմից չառաց—Քն. Մ.), որ թանգարանի մշտական ցուցադրությունը կազմակերպելու համար կպահանջվեր առնվազն 150 հազար ռուբլու աշխատանք: Մինչդեռ փաստաթղթերով ծախսվել է 12 հազար: Մնացած 138 հազարը որտեղի՞ց է: Արդյոք օվկիանոսի մյուս կողմի՞ց է, թե հայ եկեղեցականներն են տրամադրել: Եվ 3-րդ, բացի այդ, թանգարանում տնօրենը մարզկոմի և ՊԱԿ-ի քթի տակ թուխ և ստոսծ հայկական, դաշնակցական նացիոնալիզմով վարակված ճտեր է տարածում ամբողջ մարզում: 3-րդ, Շահեն Մկրտչյանը թանգարանում հաճախակի կազմակերպում է նացիոնալիստական, հակաադրբեջանական կրթեր բրոքթերու նարտակ հետապնդող ժողովներ, հանդիպումներ, խորհրդակցություններ: 4-րդ, ի վերջո, Շահեն Մկրտչյանը հաճախակի դասախոսություններով հանդես է գալիս մարզի աշխատավորության տարբեր խավերի առաջ և նրա խոսակցության նյութը Ղարաբաղի ատելի անցյալի պատմությունն է, կրոնական վնասարար, անպետք եկեղեցիները, վանքերը և Հայաստանի ու Ափյուրքի նվաճումները:

**Հ. Գասպարյան.** — **ռադիոհաղորդումների մարզային էոմիտեի նախագահ:**

Առաջին, անելիքս այն է, որ ադրբեջանական ժողովրդի պատմության մեջ բացառիկ դեր խաղացած ադրբեջանական Շուշի բաղաքին տնօրենը թանգարանում քիչ տեղ է հատկացրել: Եվ ապա մեզ համար անհասկանալի է, թե ինչ նպատակով թանգարանի նախաներդախոխական բաժնի ցուցավաճանակների վրա ուրվագծված են լիններ, վանքեր, եկեղեցիներ: Եվ 3-րդ, թանգարանում չկան հատուկ ցուցափեղկեր,

որոնցում արտացոլված լիներ, թե ինչպես հնագույն ժամանակներից ի վեր հայ և ադրբեջանցի ժողովուրդները համատեղ երջանիկ կյանքով ապրել և հարուստ մշակույթ են ստեղծել:

Վերը հիշատակված գրպարտիչները Բաքվի թելադրանքով ընդգրկված են եղել թանգարանը ստուգող կուսմարզկոմի հանձնաժողովի կազմում: Դրա համար էլ նրանք բյուրոյի սկզբնամասում իրենց զգում էին ինչպես ձուկը ջրում:

Սակայն նշված մեղադրանքները դեռ բոլորը չէին: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանի «առավել կարևոր փաստաթղթերի» թղթապանակի մեջ էր «խիստ զաղտնի» գրիֆով Ադր. ԿԿ կենտկոմի 1967 թվականին, ԼՂԻՄ վերաբերյալ կայացրած ընդարձակ որոշումը, որտեղ թանգարանի մասին գրված էր. «Լեոնային Ղարաբաղի մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարանի ցուցադրությունը չի համապատասխանում մարքս-լենինյան մեթոդոլոգիային»: Դե, Շահեն Մկրտչյան, դիմացիր... Կուսակցության մարզկոմի բյուրո, արի էջը ցեխից հանիր:

Այն էլ ասենք, որ Ղարաբաղի թանգարանը ադ նույն ժամանակաշրջանում, կենտկոմի հիշյալ որոշումից բառացիորեն երեք ամիս հետո և կուսմարզկոմի բյուրոյից վեց ու կես ամիս առաջ պարզաևսորվել էր ԽՍՀՄ մշակույթի նախարարության դիպլոմով և ճանաչվել երկրի 40 լավագույն թանգարաններից մեկը: Մասնագետները, այդ թվում նաև ադրբեջանցիները Ղարաբաղի թանգարանի ցուցադրությունը միահամուռ գնահատել էին որպես խորհրդային թանգարանագիտության մեջ նոր երևույթ՝ «էտալոն» երկրի մյուս թանգարանների համար: Ավելին, երաշխավորված և համաձայնեցված էր, որ 1968 թ. աշնանը Ղարաբաղում, մարզային թանգարանի բազայի վրա հրավիրվեր թանգարանների աշխատողների համամիութենական խորհրդակցություն:

Սակայն ընած ու թմրած չէին Ադր. ԿԿ կենտկոմը, հանրապետության գիտությունների ակադեմիան, ՊԱԿ-ը և անձամբ նրա նախագահը՝ Հեղար Ալինը: Շահե ու կրակ թափեցին թանգարանի և նրա հիմնադիր տնօրենի գլխին: Ստեղծված ծանր մթնոլորտում վերջինս իրեն դրսևորեց իբրև մարտիկ, կայուն սկզբունքներով ու հալաքքներով թանգարանագետ, որին փնակված էր Արցախում՝ դժնդակ պայմաններում աշխատելու ևս չորս տարի: Ադ ժամանակահատվածում Շ. Մկրտչյանը հասցրեց ստեղծել հայտնի հեղափոխական Բ. Կնունյանցի, հրետանու գեներալ-գնդապետ, Խորհրդային Միության հերոս Մ. Պարսեղովի, ալիազիայի մարշալ Ա. Խանիերյանցի (Ա. Խողյակով) հուշաթան-



գարանները և աննկարագրելի տառապանքների գնով պաշտոնական, գիտական հիմքերի վրա դնել Արցախի հուշարձանների պահպանության, ուսումնասիրության ու մատչելիության անլուծելի թվացող խնդիրները: Եվ ապա՝ ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանի դիպուկ գնահատմամբ Ծառեն Մկրտչյանին է վիճակված եղել «բացելու հայ ճարտարապետության մի առանձին՝ արցախյան դպրոցի մինչև այժմ փակ վարագույրը»: Սա հայագիտությանը, արցախագիտությանը շոշափելի նպաստ բերող խիզախ աշխատանքի արդարացի գնահատական է, որին արժանանում են շատ բլեթերը: Նա գրել և հրատարակել է բազմաթիվ գրքեր, հոդվածներ և դրանով իր դեմ ավելի գրգռել, շնացրել Արցախում «հայի բյուրը» արմատախիլ անելու տենդով տառապող «գորշ գայլերին»:

Երբ արդեն ճնշիչ օղակը նրա շուրջն ավելի սեղմվեց, ԼՂԻՄ-ի դեկավարներն էլ անգոր գտնվեցին դիմադրելու Բաքվի խարդապանքներից և երբ որոշակիորեն հայտնի դարձավ նրան ֆիզիկապես վերացնելու ՊԱԿ-ի հրեշավոր մտադրությունների մասին, բարի մարդիկ խորհուրդ տվեցին քանի դեռ ուշ չէ, թողնել ու հեռանալ Ղարաբաղից: Եվ ահա 1972 թ. օգոստոսին, իր դիմումի համաձայն, Ծ. Մկրտչյանը ազատվում է աշխատանքից և տեղափոխվում Երևան:

Ստորև բերվում է նրա դիմումը, որը գրվել է այն ժամանակ, երբ դեռ չէր հասցրել ճշելու իր 35-ամյակը:

**Կուսակցության ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար  
ընկ. Գ. Ա. Մելքոնյանին**

**ԼՂԻՄ-ի պետական պատմա-երկրագիտական թանգարանի  
տնօրեն Ծ. Մ. Մկրտչյանին**

**Գ Ի Մ Ո Խ Մ**

Իմ և թանգարանի շուրջը ստեղծված տևական անվստահությունը, կասկածամտությունը, հետապնդումներն ու հալածանքները ինձ անտանելի վիճակի մեջ են գցել և ես պարզապես չեմ կարողանում աշխատել: Ուստի խնդրում եմ ինձ ազատել աշխատանքից:

Հարգանքներով՝

**Ծառեն Մկրտչյան**

18. 06 1972 թ.

140

Սույն դիմումը առաջին քարտուղարը «Հարությունյանին» մակագրությամբ ուղարկել էր երրորդ քարտուղարին: Սա էլ իր հերթին պահանջեց, որ դիմումը գրվի իր անունով և ուսեւրեն: Գրվեց՝ ահա այն:

Секретарю НК обкома КП Азербайджана

тов. А. Арутюняну

от директора Государственного историко-краеведческого

музея НКАО Мкртчяна Ш. М.

Заявление

Несмотря на то, что мне жалко и трудно оставлять музей, особенно в период рэкспозиции, однако созданная вокруг меня обстановка недоверия и подозрительности, ни в чем не помогающая в работе, долгие и продолжающиеся «проверки» и преследования, довели меня до невыносимого состояния. Вследствие всего этого мое здоровье ухудшилось, поэтому прошу освободить от занимаемой должности.

17 07 72 г.

Шаген Мкртчян

\*\*\*

**Ստորև անփոփոխ ներկայացվում է թանգարանի հիմնադիր-  
տնօրեն Ծառեն Մկրտչյանի բյուրոյում ունեցած ելույթը**

Պարտիայի մարզկոմի բյուրոյի հարգարժան անդամներ, իմ խոսքը վերելքի ուղին բռնած մարզային թանգարանի կամ նրա հիմնադիր տնօրենի պաշտպանության մասին չէ: Թեև, չեմ թաքցնում, դա էլ կա: Խոսքը բուն թանգարան-ֆեոնտենի շուրջը արհեստականորեն ստեղծված գաղափարաքաղաքական ածիտաժի մասին է: Նպատակը, ցավոք բարի չէ, թանգարանին օգնելը կամ նկատված թերությունների շրտկումը չէ, այլ, անշուշտ, այն կազմալուծելու, ավերելու մարմաջն է, որ հանգիստ չի տալիս չափից ավելի տաքացած գլուխներին: Քանզի թան-

141

գարանը ԼՂԻՄ-ի համար և՛ ակադեմիա է, և՛ գանձատուն, և՛ հիշողության, հայրենասիրության և հայրատության տաճար: Այնտեղ հավաքված հազարավոր եզակի հուշանունները ամենայն իրավամբ համարվում են պատմության անհերքելի խոսուն վկաները, մեր ժողովրդի հանճարով արարված արվեստի անանց արժեքներ և ունեն ոչ միայն գիտական, պատմական, գեղագիտական, այլև ճանաչողական մեծ նշանակություն: Այն էլ ասես, ինչպես նշեց զեկուցողը, միայն անցյալ տարի թանգարան է հռճախել ավելի քան 50 հազար այցելու: Մեր պայմաններում աս մեծ թիվ է: Փաստորեն մարզի յուրաքանչյուր Յ-րդ բնակիչ այցելել է թանգարան: Միաժամանակ աս նաև մեծ լսարան է, որը բանիմացորեն օգտագործվում է:

Հանի որ թանգարանը համարվում է ԼՂԻՄ-ի կարևոր մասնիկը, ապա պետք է, որ նա էլ կրի մարզին պարտադրված դառն ճակատագրի իր բաժինը: Ինքնավարության, այդ թվում նաև թանգարանի շուրջը ձգված օղակը ավելի սեղմվեց 1967 թ. հուլիսյան դեպքերից հետո, երբ մեզ վրա մատ թափահարող բարձրատեխնիկական ղեկավարներին հաջորդեցին բազմաթիվ ու բազմազան ստուգող, խրատող, «բարոյական, ինտերնացիոնալիստական» դասեր տվող և մեր գաղափարախոսությանը խորթ իզմերով պիտակավորող «հանձնաժողովները», որոնք մեկը մյուսին փոխարինելով, լրացնելով ամեն տեսակի ստահող բաներ վերագրեցին մեզ: Դրա վկայությունը այն վիճեզրեռն է, որ հուլյաներին պետական, կուսակցական, պաշտոնական կերպարանք ստացավ ու կենտրոնի որոշում-հանձնարարականի տեսքով դեմ տրվեց Մոսկվային Ստեփանակերտին: Հո դուք ինձանից լավ գիտեք, թե ինչ է նշանակում ցենսորայիզմ ասած բանը մեր օրերում, մանավանդ Ադրբեջանում: Այն ունի միայն մի ուղղություն՝ վերևից-վար: Ահա ամբողջ պարտոքսը... այն բուք գեները, որով տասնևյակ տարիներ ի վեր կատվաթակի են ենթարկում մեր կադրերին, խափանում մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը, խեղդամահ անում մեր ազգային մշակույթը: Փոխանակ բռնեին, պատժեին շարագործներին, ընդհակառակը, ավելի ազատություն տվեցին նրանց ավերիչ ձեռքերին: Փաստորեն գիտակցարար խառնեղին պատճառն ու հետևանքը, անմեղն ու մեղավորը, կրան ինչպես դարաբաղցին կաներ՝ չորն ու թացը: Մի խոսքով, պարզագույն պարագաներում ջուրը պլտորեցին, որպեսզի հեշտությամբ սրբ կատարեն: Այդ ավարի մեջ է հայտնվել նաև մեր «ուկե ձկնիկ» բանգարանը:

Հարկադրված եմ անկեղծ լինել և մեկ անգամ ևս շեշտել իմ գաղափարաբաղաբական համոզմունքները, քանզի իմ դեմ հերչուրված բոլոր մեղադրանքները սերտորեն առնչվում են դրանց հետ: Ես ավելի քան օրթոդոքս պարտիական եմ, երդվյալ աթեիստ, եղբայրության և ինտերնացիոնալիզմի կրքոտ քարոզիչ, կոմունիզմի լուսաշող փառչից խանդավառված խորհրդային քաղաքացի, քան այստեղ գտնվողներից որևէ մեկը: Սակայն, բանից պարզվում է, որ և ես, և դուք մոլորված ենք, խաբված: Իրական կյանքը մեր շրջապատում, մեր մարզի դեմ կատարվող ցնցող ոճրագործությունները, դժբախտաբար, հակադարձ համեմատական են մեզ մատուցվող պաշտոնական ինֆորմացիային: Եվ բացի այդ, բանից պարզվում է, որ չափից ավելի մեր նվիրվածությունը, անասհման հավատը, գերլարված պլանների գերակատարումը ինչ-որ տեղ բթացրել են մեր զգոնությունը, կամա թե ակամա թուլացրել ժողովրդի դիմադրողականությունը:

Անհերքելի դառն իրողություն է, որ Անդրֆեդերացիայի վերացումից հետո մարզի Ն ճրա բնիկ հայ բնակչության նկատմամբ հետևողականորեն տարվել և տարվում է մի այնպիսի քաղաքականություն, որը միտված է մեզ օտարելու, դուրս մղելու մեր հայրենիքից: Այլելի պարզ՝ հայաթափելու Դարաբաղը: Այս դիվային պլանները չեն թաքցրնում նույնիսկ պաշտոնական շրջանակներում, մտավորականության ստավել ազգայնական խավերի կողմից: Այս հրեշավոր ազգասպան քաղաքականությունից ստաջացած մեր իրավացի դժգոհություններն անենուրեք խղճի ժաշոն են հանդիպում: Նման պայմաններում որոշակի ուժեր վարպետորեն քոչարկում են իրենց կողմից նյութվող դավերը, նենգափոխում մեր բողոքների իմաստը, նպատակը և արդարությունը քարին տալով ջարդում մեր լավագույն կադրերին: Ահա թե ինչու ԼՂԻՄ-ի դեմ օրեցօր ծավալվող արշավը իր հորձանուտի մեջ է ասել նաև թանգարանը, գրադարանները, նույնիսկ գյուղական խղճուկ խորհրդ-բնթերցարանները: Թանգարանից հանում են Տիգրան Մեծի պատկերով արծաթե դրամը, գրադարանների պատերից պոկում են հայ գրողների նկարները, խորհրդ-բնթերցարաններից՝ հաշերեն տառերով գրված պլակատները, Գանձասարից՝ Ամենայն Հայոց վեհափառ Վազգեն Առաջինի դիմանկարը... պատճառաբանելով, թե «դրանք վարակված են երևանիզմով, դաշնակցական գաղափարախոսությամբ»: Այնևս հանդուրժել չի կարելի: Արդեն անգեմ աչքով երևում են վերանաս աղետի հետևանքները, որոնք ահռելի չափերի են հասել: Դրա պերճախոս օրինակներից մեկն էլ սլաօրվա բյուրոն է: Ինչ պատահեց, ինչու ժողու-

վրդի՝ այցելուների, մանավանդ, մասնագիտական հասուկ հանձնա-  
ժողովների կողմից այդքան բարձր գնահատականի արժանացած և  
ամբողջ երկրի մասշտաբով լայլագուններից մեկը նախաշված թանգա-  
րանը հանկարծ հայտնվեց ու ցուցակում և վերածվեց Ադր. ԿԿ կենտ-  
րոնի հարձակման թիրախի և, այսպես, դարձավ մարզկոմի բնակարկուհի  
առարկա: Էլ չես խոսում անտեսանելի գործի իրավունքներով օժտված  
ԳԱԿ-ի մարդկանց կողմից իմ նկատմամբ կիրառվող անմարդկային  
կոտանքի և հալածանքի մասին: Ինչու թանգարանի «խոր պարտիա-  
կանության ոգով ներծծված» ցուցադրությունը գրչի մի հարվածով պի-  
տակավորվեց որպես «մարքսիզմի մեթոդոլոգիային չհամապատաս-  
խանող»: Եվ կենտրոնի կողմից հարուցված այս գաղափարաբարդաբա-  
կան լուրջ մեղադրանքից հետո, բնականաբար, մարզկոմի բյուրոն  
պետք է դժվարին ընտրություն կատարի և կաշայցի իր անողորմ վճիռը:

Մեծապես սրանով են պաշմանալորված մեր ընդդիմախոսների  
անմխտ ինքնավստահությունը, խանդավառ տգիտությունը և գավառա-  
կան թշվառությունը: Ասես թանգարանը կործանելու, նրա երիտասարդ  
տնօրենին մերկացնելու, կոցահարելու համար մրցանակ է նախատես-  
ված և նրանք ինչպիսի ստոր մեղադրանքներով փորձում էին մեկը  
մյուսին գերազանցելով շահել այդ մրցանակը:

Այնուամենայնիվ, ինչ է պատահել: Որոնք են այս ամենի ակնա-  
ռու նախադրյալները: Իրականում կատարվել է այն, ինչ վերապահված  
էր կատարելու մարզային թանգարանին: Ցուցադրաբար ներկայացվել  
են երկրամասի պատմության առավել կարևոր հերոսական դրվագները:  
Իրոք մեծ դեր է վերապահված թանգարանին: Նա զգալի չափով նսրա-  
տել է մարզի քաղաքական, մտավոր կյանքին նոր լիցք ծաղրողելու,  
ազգային ոգին բարձրացնելու հույժ կարևոր գործին: Գրքեր, բրոշյուր-  
ներ տպագրելու, գիտահանրամատչելի հաղորդումներ տալու հնարա-  
վորությունից իսպառ գրկված մարզի միակ գիտալուսավորչական  
օջախը՝ թանգարանը, ինչ-որ չափով վերականգնել է ժողովրդի խաթար-  
ված հիշողությունը, միացրել հանիրավի ընդհատված թելերը և գունդ  
կորսված կապն անցյալի հետ:

Ահա սրանք են թանգարանի կատարած հիմնական խնդիրները,  
որոնք ոչ միայն դուր չեն եկել, այլև զարմացրել ու զայրացրել են քոլոր  
այն չար ուժերին, ովքեր տարիներ շարունակ զառանցում են «հաշի  
քյոբը» Արցախ-Ղարաբաղում արմատահան անելու մասին: Այդ առըն-  
չությանը ուզում են բյուրոյին տեղյակ պահել թանգարանը ստուգող

խմբի ղեկավար, Ադր. ԿԿ կենտրոնի ազիտացիային և պրոպագանդա-  
յի բաժնի վարիչի առաջին տեղակալ Սխունդովի արտահայտած միտ-  
քերի մասին: Բառացի կրկնում եմ նրա ասածները. «Յոլոլաջ Մեջբրիչ-  
յան, մենք ուզում ենք հաշի քյոբը պոկել, հանել այս աղբրեջանական  
ուլից, իսկ դու թանգարանում ցուցադրել ես Տիգրան Մեծի արծաթե  
դրձանը (մ. թ. ա. 1-ին դար), Դիզակի Գազիկ իշխանի աղջկա վիմա-  
գիի արձանագրությունը (10-րդ դ.), Մեղիք Եզանի հրովարտակը (17-րդ  
դ.), ոռու գեներալների դարաբաղջի հայերիդ քաջագործությունները  
փառաբանող կոչերը (19-րդ դ.): Դրանով դու քո հայրենակիցներին  
մտոնացույց ես արել, որ Ղարաբաղը երեք, երկու, մեկ հազար, հինգ,  
երկու հարյուր տարի առաջ հայկական է եղել և պետք է պաշարել այ-  
սուհետ էլ հայկական պահելու համար: Դրա համար էլ քեզ չենք ների»:  
Այնի պարզ, թվում է, չես ասի: Միայն տարակուսում ես, թե ինչու  
տոնացող շուրիմիզմը, պանթոքսիզմը նույնացվում է մարքսիզմ-լենի-  
նիզմի գաղափարախոսության մեթոդաբանության հետ: Կա արդյո՞ք  
կապ դրանց միջև: Եթե կա, նշանակում է իմ մնալը լենինյան սպարտիայի  
շարքերում անիմաստ է:

Քիչ առաջ մեր լսած ելույթները կարելի է գնահատել որպես թան-  
գարանի և, ինչու միայն թանգարանի, նկատմամբ պաշտոնական հաք-  
վի որդեգրած ազգայնամոլական դիրքորոշման ընդհանուր պատրան-  
քային երևույթի մասնավոր դրսևորումներ: Եվ, սակայն, ավելի գունդիկ,  
ավելի լսիրձ, ավելի նողկալի, այն էլ համեմատված քաղաքական անզուսպ  
չարախոսություններով: Քաղաքականացված, ապականված մթնոլոր-  
տում մեր կրիտիկոսները եթերային ճախրանքում, ոտներն ամպոտի  
կերպարանքի մեջ մտած, ինչ լուտանքներ ասես, որ հեղեղի պես շթա-  
փեցին գլխիս: Մի պահ մարմնովս սարսուռ անցավ ու քիչ մնաց սիփերից  
դուրս գալի: Բայց դա լուկ մի պահ էր: Ես տեսել, գործ եմ ունեցել  
բազմաթիվ պրոֆեսիոնալ գրպարտիչների հետ, սակայն մեղքս ինչ  
թաքցնեմ, սրանք ուրիշ, սրանք մտազարությանը տառապող շաման  
կլլավուզնիկներ են հա: Խեղճ Ղարաբաղ, ոնց էլ դիմանում ես...

Միայն անհասկանալի է, թե ինչու նրանք փորձ չարեցին իրենց  
«գորավոր» մեղադրանքները համակարգել, երկրպիսին դարձնել: Ադ-  
քան անպարտ հերքումները գոնե ինչ-որ չափով տեղայնացնեին,  
փաստարկեին: Այլապես ինչի նման է «օվկիանոսի մյուս ափից նյու-  
թական աջակցություն ստանալու» վարկածը, երբ կարելի է խելքին  
մոտ քաներ հնարել: Ասենք, թանգարանը և բանկը իրար շատ մոտ են:

Թանգարանի տնօրենը իր փորձած գաղտագողի անցքով ամեն գիշեր մտնում է բանկը և վերցնում մի կապ 25-սնոց և այդ փողերով իրականացնում իր հայրենասիրական, կրիտիկոսների բնորշմամբ՝ ազգականությունը միջոցառումները: Սա ավելի տրամաբանական, ավելի հավանական կլիներ: Թե չէ, աշխարհում դեռ չի ծնվել մի հիմար կասյիտայիտ կամ նրան ձայնակցող որևէ անպաղ կազմակերպություն, որը ֆինանսավորի մի ինչ-որ գավառական թանգարանի, որպեսզի վերջինս կազմակերպի «խոր պարտիական», իմա՝ բուլշևիկների գաղտնիարձեքով հազեցված ցուցադրություն: Որպեսզի այն ներկայացվի Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 50-ամյակի պատվին կազմակերպված թանգարանների համամիութենական ստուգատեսին և պարգևատրվի խրախուսական դիպլոմով:

Ինչևհից: Իրականությունը, նշմարտությունը եթե ուզում եք իմանալ, հետևյալն է. եթե մի օր մանրամասնի, կերևա, թե ինչ զոհողությունների գնով են աշխատել, և աշխատում են թանգարանի փոքրիկ կողեկտիվի երիտասարդ, խանդավառ անդամները: Հաճախ մեկը կատարել է մի բանի մարդու գործ, ստանց վարձատրության: Ծառ հաճախ մեր իսկ ստացած չնչին աշխատավարձից որոշ գնումներ ենք կատարել թանգարանի համար անհրաժեշտ իրեր, նյութեր ձեռք բերելու համար: Հաճախ թանգարանում օգտագործել ենք մեր քարեկամներից, ծանոթներից, բնկերներից, մասնագետներից դարձյալ ստանց որևէ կոպեի ծախսեր կատարելու: Թանգարանի պարագայում կարևորը ֆինանսական կողմը չէ, այլ ոգին, նվիրումը, բանիմացությունը, գիտական բարոյական կայուն սկզբունքները, կազմակերպչական ունակությունները. որոնք և վճռորոշ են թանգարանի գործունեության մեջ: Երեք տարի են աշխատում են ստանց հանգստի և արձակուրդի: Իմ աշխատանքային օրը տևում է 15—17 ժամ: Կատարում են 4—5 աշխատողի գործ:

Մի՞թե այդպես չեն աշխատել և աշխատում մեր կոլտնտեսականները, բանվորները, մասնագետները: Այլապես մենք չէինք կարող մեկ տարում՝ 1967 թ. աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 130 տոկոսով, արտադրել ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ: Զէ՞ որ մարզը ստանում է անհամեմատ քիչ նյութատեխնիկական միջոցներ, ֆինանսական կասպիտայ ներդրումներ, իսկ աշխատավարձը մարզում ամենացածրն է Խորհրդային Միությունում: Մի՞թե այսպիսի պայմաններում, հայրենասիրելի աշխատանքով չէ կերտվել Սոսիալիստական երազը, ստեղծվել մեր տնտեսական հսկայական ներուժը: Սա սիրանք

է, հայրենիքի ճակատագրով մտահոգված մարդկանց անձնորայնության վկայություն:

Հիմա ուզում եմ անդրադառնալ Հայկ Գառայրյանի առաջ բաշած քաղամտիկ բարբառանքներից միայն մեկին: Ի վերջո, մինչև և ընդ այդ տի թողթակի նման կրկնել մեր ազգի «քարեկամների» և վանքերը, եկեղեցիները համարել «կոռնական վնասարար օջախներ, անարժեք հենդություններ»: Բայց չէ՞ որ նրանք շատ վաղուց ևն դատարի այդպիսի լիներաց: Երկրում Լեյկնի՝ հուշարձանների մասին հայտնի դեկրետից հետո պահպանում, վերականգնում և պրոպագանդում են հուշարձանները և պրանք ներստում ժառանգականից կյանքում, մասնավորապես ժառանգներով աշխատավորության գեղագիտական, հայրենասիրական դաստիարակության և հանգստի կազմակերպման նպատակով: Մի նուսացել, որ մեր մարզի հուշարձանները կոռնական օջախներ լինելուց զատ, ինքնապաշտպանության և գոյատևման համար մղված պայքարի մեջ իրենց անգնահատելի դերն ևն ունեցել: Բա չէ՞ որ վանքերում, եկեղեցիներում անգամ, խալարի և մղձավանջի պայմաններում, անմար կրակի պես բոցկլտացել է ազգայահայանության անշեջ կրակը: Դրանք մեր լեռնաստանի վանքերն ու եկեղեցիները երկրամասում բուսավորության, կրթության տարածման նշանակալից օջախներ էին և հովանի էին եղել գրչության և ձեռագրերի ծաղկմանը: Բա չէ՞ որ այդ հուշարձանները միաժամանակ քարե վկաներն են, քարակերտ գրքեր, որոնք գալիս ևն դարերից, պատմության ակունքներից և արտացոլում ենրունդների նյութական ու հոգևոր կյանքը, երկրամասի քաղմադրյան պատմությունը: Բա չէ՞ որ այդ կոթողները պատմության, ճարտարապետության այն հուշարձաններից են, որոնք իրենց սքանչելի արվեստով անջնջելի կնիք դրեցին լեռնոտ երկրամասի դեմքին և զգալի չափով հարստացրին ազգային մշակույթը:

Ցավում եմ, որ մեր պատմաբան կրիտիկոսները (որոնցից մեկը՝ Քր. Պետրոսյանը դպրոցի տնօրեն է, իսկ մյուսը՝ Հ. Գառայրյանը — ուսոյոհադորոտների կոմիտեի նախագահ) չգիտեն, պատկերացում չունեն այդ ամենի մասին, այլապես նրանք վանքերի, եկեղեցիների մեջ ազգայնամոլություն կամ անցյալը իդեալականացնելու փորձ չէին անի և անմտորեն չէին կառչի որոշ վայ-գիտնականների կողմից տարածած կեղծիքներից և մեզ պարտադրվող «անցյալի վնասակար կոռնական օջախներ, նորերուկ սնանկ գարափարից: Դրան գումարած «կրոներ հաշիչ է» Լեյկնի տվյալ խնդրում բոլորովին կապ չունեցող արտահայտությունը: Անա նրանց գորախոր փաստարկները: Անա նրանց դիր-

քորոշումը: Մեկը լինի հարցնի, ի՞նչ է, մեջիդները անցյալում մարքսիզմի գաղափարների տարածման քաղյուստնե՞ր էին, թե՞ հեղափոխության շտաբներ:

Բյուրոյի հարգարժան անդամներ, ինձ առաջել անհանգստացնում է մի բան. արդյո՞ք Քր. Պետրոսյանը, Հ. Գասպարյանը զգում են իրենց կերպը, իրենց «գորավոր» փաստերի անհեթեթությունները, իրենց կապածելի մտավարժությունների հետևանքները: Ի՞նչ է ստացվում. երեկ նրանք նույն ամբոխավարությամբ «հայկական նացիոնալիզմի» մեջ մեղադրեցին Բ. Ուլուբաբյանին, Ս. Ծաբարյանին, Բ. Ջանյանին, Ս. Ասլանյանին, Ի. Խաչատրյանին, Լ. Գասպարյանին, այսօր՝ Ծահեն Մկրտչյանին, վաղը հավանական հերթը կհասնի Ժան Անդրյանին, իսկ մյուս օրը...

Բայ՛ է, այդ ում գրած սցենարով եք պատվերներ կատարում և ինչի համար: Մի՞թե դուք չեք զգում, որ դարձել եք Ղարաբաղի դեմ սարքած անքարո մեծ խաղի բորխներ: Մի՞թե դուք այնքան տարվել եք ձեր դերով, որ չեք նկատում, տեսնում, թե ինչ է կատարվում ձեր շուրջը: Իսկ կատարվում են ահաբեկչական բռնություններ, անմեղ մարդկանց սպանություններ, պետական և սեփական ունեցվածքի համատարած գողություններ, հայկական տասնյակ գյուղերի բռնագաղթեցումներ, արտադրական կարողությունների ավերումներ, շահութաբեր այգիների զանգվածային կտրտումներ, ազգային մշակույթի և լեզվի դեմ հալածանքներ, պատմության կեղծումներ, հուշարձանների ոչնչացումներ, կադրերի ջարդարարություններ: Եվ այդ ամենը ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների լենինյան բարեկամության բողի տակ: Սա է վիճակը: Սա է, որ պիտի լուրջ անհանգստացնի բոլորիս: Սրա դեմը պիտի առնվի, այլապես վաղը ուշ կլինի:

Եկեք մեկ անգամ ևս հիշենք և ուրիշներին էլ հասկացնենք, որ նույնիսկ այն ժամանակ, երբ Ղարաբաղն ինչ-ինչ քաղաքական հաշվարկներով ենթարկեցրին Ադրբեջանին, սակայն լրիվ չենթարկեցրին, լրիվ չսովեցին Ղարաբաղը ադրբեջանցիներին, այլ ստեղծեցին ինքնավարություն: Նրա համար ստեղծեցին, որ դա եղել է հայկական հող և այնտեղ ապրել և ապրում են հայեր և, բնավ ոչ նրա համար, որ Ղարաբաղը Լեոնային է կամ Ադրբեջանի անքակտելի մասը:

Ի վերջո, ելույթս ավարտելով, ուզում եմ բյուրոյի ուշադրությունը բևեռել ևս մեկ կարևոր խնդրի վրա: Խոսքը քաղաքական կեղծ, շինծու, ստահող մեղադրանքներով արհեստական գործիչներ, հայրենասերներ կաղապարելու գեշ սովորության մասին է: Դժբախտաբար, այդ

գործընթացին ինչ-ինչ ամբիցիոզ նպատակներով նպաստում են որոշ պատասխանատու ղեկավար ընկերներ:

Ի սեր Աստծո, ձեր սուտ ու փուչ «լուրջ քաղաքական մեղադրանքներով» ինձ կոռք, առաջել ևս ազգային և գաղափարական այլադավ գործիչ մի դարձրեք: Որոշ մարդիկ անբասիր երևալու, պաշտոնական աստիճանով վեր բարձրանալու, նաև Ղարաբաղին վնասելու համար ուզում են, որ ես այդպիսին լինեմ, որ սսեև՝ տեսեք, թե ինչպիսի խոշոր ու վտանգավոր արմատ ենք Ղարաբաղում գտել և այն արմատախիլ անում: Բայց ես կրկնում եմ՝ այդպիսինը չեմ: Ես ընդամենը մի շարքային մահկանացու եմ, որը բազմակողմանի գիտի իր գործը, դերը և անթերի կատարում է իր պարտականությունները: Մի՛նչդեռ կենտկոմը, նրա այստեղի «հսկիչները» այնպիսի քաղաքական, գաղափարական մեծ մեղքեր են վերագրել ինձ, որ անտեղյակ մարդուն կթվա, թե այս Ծահեն Մկրտչյանը խոշոր, անհաշտ անհատ է, իր գործը կապերով պայքարի է դուրս եկել մարքսիստական մեթոդաբանության դեմ: Ինչպիսի հիմնարություն և ոչ միայն հիմնարություն:

Կարելի է քննադատել, շարադրել սեփական (եթե այդպիսիք կան) սկզբունքները: Բայց կարելի է դա անել արժանապատվորեն և փաստարկված, այլ ոչ թե «տատիկի լամ» հեքիաթաբանությամբ, 30-ական թթ. մակարդակով աչ ու ձախ քաղաքական պիտակներ կայցնելով հայադրբեջանական ժողովուրդների փոխհարաբերությունների լայրերի վրա խաղալով:

\* \* \*

Ծահեն Մկրտչյանի ելույթից անմիջապես հետո, բառացիորեն տեղից պոկվեց բնավորությամբ շատ հանգիստ և հավասարակշռված Ժան Անդրյանը՝ Կուլտուրայի մարզկոմի վարչության պետը: Խանձեց, սյրեց, պող թափեց զրպարտիչների գլխին: Մասնավորապես ասաց. «Ի հայտ եկած տղայամիտ թանգարանագետիկները 30-ական թթ. չեկիստկան կեղտոտ մեթոդներով լրտեսում են Ծահեն Մկրտչյանին, թե նա ում հետ հանդիպեց, մի կտոր հաց կերավ և ինչու Հայաստանի մասին գովեստով խոսեց: Ելքայր, թանգարանը հո Գերագույն խորհրդի ազգությունների պալատը չէ, որ տեղերը համամասնորեն բաժանվի քաղաքների, թեմաների»: Ժանի փայլուն ելույթից հետո բյուրոյում բեկում կատարվեց: Նախ մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ Եր. Բաղդասարյանի առաջարկությամբ հայտարարվեց ընդմիջում և ապա այս-

պես կոչված կուլիաների ևսևում բյուրոյի անդամները իրար հետ կարծիքներ փոխանակելով եկան այն համոզման, որ որոշման նախագծում (Ադր. ԿԿ կենտկոմի պահանջով) նշված՝ Շահեն Մկրտչյանին աշխատանքից և պարտիայից հանելու փոխարեն պետք է հայտարարվի խիստ նկատողություն՝ անձնական քարտում գրանցելով: Դրանով, նախ «կըփըրկվի թանգարանը և, իհարկե, մեր երիտասարդ խոստումնալից կադրը»: Ահա բյուրոյականների միանշանակ կարծիքը:

Այժմ մի քանի բառերով անդրադառնանք կուսմարզկոմի առաջին քարտուղար Գ. Մելքունյանի բռնած դիրքորոշմանը: Իր ամփոփիչ ելույթում նա ասաց. «Շ. Մկրտչյանը շնորհաշատ, եռանդուն աշխատող է: Երբ նրա առաջ դուրը փակում ենք, ներս է մտնում լուսամուտով, իսկ վերջինիս փակման դեպքում գտնում է մեկ այլ նեղքվածք և լուծում իր մտահոգացումները իրականացնելու համար անհրաժեշտ հարցերը: Ընդհանրապես նա համոզելու բացառիկ կարողությունների տեր անձնավորություն է, ինչը և երևաց խորիմաստ և բազմանշանակ ելույթում: Մեր մարզի համար անհրաժեշտ կարևորություն ներկայացնող աշխատանք է կատարում: Մենք նպատակն ունենք, որ մեր շարքերում ունենք նման ոսկի հերթափոխ: Մա, սակայն, հարցի մի կողմն է: Մյուսն այն է, որ նա դուրս է մնացել մեր հսկողությունից և ընկել որոշ անատողջ մարդկանց տրամադրության տակ»: Այնուհետև քարտուղարին վայել խրատներ է տալիս ում որ հարկն է և պահանջում է, որ «ըջորեն գրավեն Շ. Մկրտչյանի դատարարական հարցով»:

Բյուրոյի մյուս անդամները գրեթե նույն ոճով ու բովանդակությամբ հանդես եկան:

ՔՆ. Մ.

\*\*\*

2. Գ. Հաջորդ օրը, առավոտյան ինձ կանչեցին մարզկոմ: Առաջինի մոտ էր նաև երկրորդ քարտուղարը՝ Կասարովին: Բարև առնելուց հետո հրավիրեցին մոտ նստել: Խոսքը բացեց երկրորդը: «Գուրգեն Ալավերդյովիչ, ամբողջ գիշերը չեմ քնել: Բա որ այսպիսի հրաշալի, գեղեցիկ, խելոք, համարձակ, և բանիմաց երիտասարդին էլ չսրահենք, մեզնից վանենք, այս պարտիան, երկիրն ում ենք հանձնելու: Հինա լսիր ինչ եմ ասում. կենտկոմը պահանջել էր, որ քեզ հանենք և պարտիայից և աշխատանքից, բայց մենք, նկատի ունենալով քո ծառայությունները, Ղարաբաղի համար քո անձի կարևորությունը, բավարարվեցինք

խիստ նկատողություն հայտարարելով: Դա քեզ համար պարզ է: Համոզված եմ, որ դու մեզ կհասկանաս: Քիչ հետո ես մեկնում եմ Բաբու, կենտկոմում պատմելու բյուրոյի ընթացքի մասին և հիմնավորելու քո նկատմամբ մեր մեղմացուցիչ վարմունքի պատճառաբանությունները: Այժմ կարող ես գնալ: Ծարունակի քո հայրենամկեր գործունեությունը»:

Ես, որ բյուրոյից հետո դեռ լրիվ ուշքի չէի եկել, կոքի մեջ էի, ներքին բավարարվածություն զգացի և մեկ անգամ ևս համոզվեցի, որ ես մենակ ու անտեր չեմ: Ամենայն հավանականությամբ կրկու քարտուղարներն իրար հետ պայմանավորվել և հարմար են գտել ինձ հանել ծանր հոգեվիճակից: Ինձ համար պարզ դարձավ, որ առաջինը իմ թիկունքին կանգնած է:

Մարզկոմից ուղիղ գնացի մշակույթի մարզային վարչություն: Ժանին հայտնեցի քարտուղարների հետ իմ հանդիպման մասին: Իրար շնորհավորեցինք, վերհիշեցինք մեր ելույթները, մի լավ ծիծաղեցինք և ապա կանխանշեցինք իմ նոր ձեռնարկումների, մասնավորապես անվանի հեղափոխական Բ. Կոնյանցի և հրետանու գեներալ Մ. Բարսեղովի հուշաթանգարանների ստեղծման ու պատմաճարտարապետական հուշարձանների մասին մի քան մտածելու մասին:

Մայիսի 17-ին ինձ մոտ է գալիս մարզկոմի ընդհանուր բաժնի վարիչ ԲՆ. Մուսայելյանը: Նախ իմ ելույթի համար համբուրում է հակասու և ցույց տալիս ելույթիս տպագրությունը: Միասին նշտում ենք առանձին հատվածներ:

Շ. Մ.

բ. Ստեփանակերտ

18 05 1968 թ.

Ծ ա ն ո թ ո լ յ ո Ւ Ն.— 1965 թ. Երևանի Խ. Արուսյանի անվան մանկավարժական ինստիտուտի շրջանավարտներին (որոնցից մեկն էլ ես էի) աշխատանքում տեղավորելու պետական հանձնաժողովը ինձ առաջարկեց՝ ա) մնալ ինստիտուտում և ուսումը շարունակել ասպիրանտուրայում, բ) աշխատել Երևանի Օրշոնոկիձեի կուլտուրային կենտրոնում որպես նրահանգի (կար Սրբադկոմի գրասենյակում համաձայնությունը) և գ) ԼՂԽՄ-ի մշակույթի վարչության հրավերով մեկնել Ղարաբաղ՝ վերականգնվող մարզային թանգարանում աշխատելու: Ընտրեցի վերջինը:

Ռոստոմի 30-ին ինձ նշանակեցին թանգարանի տնօրեն: Հաջորդ օրը իմ առաջին հրամանով վերականգնվելուց հետո նպատակով թանգարանը փակեցինք, քանդեցինք հին ցուցադրարանը, որը գրավեցնում էր 4 փոքրիկ սենյակ և թափով գործի առջակը:

Իմ գործունեության սկիզբը, բարեբախտաբար համընկավ թանգարանի կյանքում ճշմանակալից երեք կարևոր իրադարձությունների հետ: 1) Թանգարանին էր տրամադրվել շենքի երկրորդ հարկաբաժինը, որտեղ տասնյակ տարիներ բնակվում էին մարզի ղեկավարները, 2) 1965 թ. թանգարանների մասին ընդունված ԱՄԿԿ կենտրոնի և ԽՍՀՄ նախարարների խորհրդի հասցիի որոշումով երկրի մարզային մյուս թանգարանների թվում բարձրացվել էր նաև Ստեփանակերտի գավառագիտական թանգարանի կարգապահակը և այն վերանվանվել Լեոնայից Կարաբաղի մարզային պետական պատմա-երկրագիտական թանգարան: Աշխատակիցների քանակը 3-ից հասել էր 10-ի: 3) Այդ ժամանակ ԼՄԽՄ-ում ծայր առած ազգային-ազատագրական շարժումը ( որը՝ ինչպես հայտնի էր սկզբնաժամանակում գրավել էր Մոսկվայի ուշադրությունը) մի տեսակ խոստովի էր մասնակցի Արթրեսյանի ղեկավարներին և ապա զգալի չափով ակտիվացրել, համարձակ դարձրել տեղական ղեկավարներին:

Քանի դեռ ադրբեջանցիները գրաված էին ԼՄԽՄ-ի հիմնախորհրդը օրակարգից հանելու, այն բարձրացրած դարաբաղի հայրենասերների հետ հաշվեհարդար տեսնելու և շարժման հունը փակուղի մտցնելու խնդիրներով, մենք կարողացանք բարեհաջող ավարտել թանգարանի վերանորոգման, ընդարձակման և նոր ցուցադրության կազմակերպման բարդ ու դժվարին աշխատանքները: Պարզապես թանգարանի երիտասարդ կողմերի վր, մարզի ղեկավարների և ամբողջ բնակչության աջակցությամբ հրաշք է կատարել:

Միշտն անած սկզբում ո՛չ էս՝ նորություն, անփորձ թանգարանագետս, ո՛չ մյուս աշխատակիցները և ո՛չ էլ հաջվի «աշխարհ» լրտեսները չէինք պատկերացնում, թե հնարավոր կլինե՞ր այդքան կարճ ժամանակամիջոցում ստեղծել մի այնպիսի թանգարան, որը մեծ հետաքրքրություն կառաջացներ և անմիջապես կգրավեր ոչ միայն բազմահազար այցելուների, այլև մասնագետների ուշադրությունը:

Ողջակի սասցել էր կյանք, հասակ, իրեղևն նյութերով հարուստ և ճաշակով ձևափոխված թանգարան:

Սենք սկզբում նույնիսկ չունեիք թանգարանի նոր ցուցադրության էքսպոզիցիոն, գիտական թեմատիկ պլան: Այն արարվել է ոտքի վրա, սևետոն հալաքներով ինձ հայող մարդկանց ներկայությամբ: Տվյալ պահին ավելի շատ դեր են խաղացել ոչ այնքան ինստիտյունը, որքան զգացողությունը, հոտատությունը և համարձակությունը:

Փորձառու նկարիչ-ձևավորող Ռոմանոս Սարգսյանը, շրջելով թանգարանի դատարկ ցուցադրահները, հարցնում էր. «Այս արահուն, պատին կամ փրահարաններում, փեղկերում և պատվանդանների վրա ի՞նչ և ինչպիսի՞ հերթականությամբ պետք է ցուցադրվի»: Ես հենց այնպես, համարադասարկ թեյադրում էի. նույնիսկ չզգալով, որ նոր ցուցադրության թեմատիկ պլանը դա է, որ կա: Այո՛, այո՛, ենթադիտակցորեն, բնագործին թեյադրեցի էքսպոզիցիոն պլանը: Այդ օրը՝ 25. 02. 1966 թ. առաջին անգամ ես հասակորեն պարբերացրի նաև Արցախի բազմադարյան պատմությունը ժամանակագրությունը, որ մինչև այժմ գրեթե փոփոխության չի ենթարկվել:

